

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA

ԿԱՆԹԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

КАНТЕХ
НАУЧНЫЕ ТРУДЫ

KANTEGH
ARTICLES

1 (62)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015

ՀՏԴ 001

ԳՄԴ 72

Կ 203

Կ 203 Կանթեղ: Գիտական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.:
Ասողիկ, 280 էջ:

Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան, ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ, ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն, ՄԵԼԲՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ), ՅՈՒՐԵՎԱ Տատյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ, ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ

Главный редактор Анна Г. АСАТРЯН

Редакционная коллегия

ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԱՍՏՐՅԱՆ Մուրադ, ԳԱՍՔԱՐՅԱՆ Սեդա, ԶԱԿԱՐՅԱՆ Անուշավան, ԿԱԶԱՐՅԱՆ Վիգեն, ՄԵԼԿՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (заместитель главного редактора), ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ, ՕԳԱՆԵՏՅԱՆ Գենրիկ, ՕԳԱՆՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Նադեժդա, ՍԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՏՅԱՆ Լևոն, ԽԱՐԱՏՅԱՆ Ալբերտ, ԵՐԵՎԱՆ Կադժիկ

Editor-in-Chief Anna G. ASATRYAN

International Editorial Council

ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԳԱՍՔԱՐՅԱՆ Սեդա, ԳԱԶԱՐՅԱՆ Վիգեն, ԿԱՏՐՅԱՆ Մուրադ, ԿՈՎԱՆՆԻՍՅԱՆ Գենրիկ, ԿՈՒՐԱՏՅԱՆ Ալբերտ, ՄԵԼԿՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (Deputy Editor-in-Chief), ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ, ՕԿԱՆՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Նադեժդա, ՍԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՏՅԱՆ Լևոն, ԵՐԵՎԱՆ Կադժիկ, ԿՈՒՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա, ՍԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՏՅԱՆ Լևոն, ԿՈՒՐԱՏՅԱՆ Անուշավան

ՀՏԴ 001

ԳՄԴ 72

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«ԳՈԹԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԷԴԳԱՐ ԱԼԼԱՆ ՊՈՅԻ ԱՐՁԱԿՈՒՄ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

«Մարդկության հնագույն և ամենաուժեղ արտահայտված զգացողություններից մեկը վախն է, իսկ դրա ամենաուժեղ դրսևորումը՝ վախը անհայտից», - գրում է Հովարդ Ֆիլիպս Լավքրաֆթը՝ նկատելով, որ «Սարսափ պատմությունները, սերտ առնչվելով մարդու նախնական աշխարհընկալմանը, նույնքան հին են, որքան մարդկային միտքը և խոսքը»¹: Քսաներորդ դարի գրականության ստվերում մնացած այս հսկան, ում արձակը բարձր էր դասում անձամբ Խորխե Լուիս Բորխեսը, և որ Բորխեսի պես մեծ ընթերցող է համարվում, նրա նման հայտնաբերել է անհայտ ու քիչ հայտնի բազմաթիվ հեղինակների, որոնց այսօր փնտրում կամ ճանաչում են ըստ «Լավքրաֆթի ցանկի»: Սարսափի գրականության պատմության համար առանցքային նշանակություն ունեցող «Գերբնական սարսափը գրականության մեջ» ծավալուն էսսեում նա սարսափի գրականության ակունքները գտնում է հնագույն պատումներում՝ հիշատակելով էպոսները, Դանթեի «Աստվածային կատակերգությունը», Թոմաս Մելլորիի «Արթուրի մահը», Գյոթեի «Ֆաուստը», Շեքսպիրի «Մակբեթը»՝ հասնելով մինչև տասնութերորդ դար՝ անգլիացի Հորաս Ուոլփոլի «Օթրանյաթ ամրոցը» (1764) վեպին, որից էլ, ըստ էության, սկիզբ է առնում այսպես կոչված գոթական գրականությունը: Սարսափի գրականության այս տեսակը կոչվում է գոթական (gothic fiction), որովհետև Ուոլփոլի և այնուհետև այս ուղղության պատկանող մյուս խոշոր հեղինակների՝ Մեթյու Գրեգորի Լյուիսի, Թոմաս Լաֆ Փիքոքի, Աննա Ռադքլիֆի, Մերի Շելլիի հոր՝ Ուիլյամ Գոդվինի, Չարլզ Ռոբերտ Մեթյուրինի, Կլարա Ռիվի և այլոց վեպերում դեպքերը ծավալվում են գոթական մոայլ ամրոցներում և մենաստաններում, ավերակներում և նկուղներում²: Ուոլփոլն իր վեպի առաջին հրատարակության առաջաբանում հանդես է գալիս որպես իր երկի՝ այսպես կոչված «պսևդո»

¹ H. P. Lovecraft, Supernatural Horror in Literature, <http://www.hplovecraft.com/writings/texts/essays/shil.aspx>.

² Տե՛ս <http://www.britannica.com/EBchecked/topic/239776/Gothic-novel>.

կամ կեղծ հեղինակ. նա իբրև թե գտել է գոթական տառատեսակով գրված մի ձեռագիր, որն էլ հրատարակում է: Մարգրիթ Դրեբլի կարծիքով Ուոլփուրդ գոթական բառը գործածել է միջնադարի իմաստով³: Ինչևէ, Ուոլփուրդ սկսած՝ սարսափի գրականության այս ոճը կոչվում է գոթական: Ուսումնասիրողները նկատել են, որ գոթական վեպում գործողությունների կատարման վայրը, անտուրաժը (entourage)՝ շրջապատող իրականության իրերի ամբողջությունն ու մթնոլորտը (պասսիվ տարր), ավելի առաջնային են, քան հերոսները (ակտիվ տարր), հերոսների հոգեբանական ապրումների պատկերման կամ խորության մասին խոսելն ավելորդ է: Այդ վեպերին հատուկ են անբացատրելի տագնապ, լարվածություն, սարսափ ներշնչող խորհրդավորության ու առեղծվածի մթնոլորտը, խավարով պատված և ուրվականներով լի մռայլ իրականությունը: Այս ուղղության առաջին ստեղծագործությունների ներկայացուցիչների գործերին հաջորդեցին բազմաթիվ նմանակումներ, ի հայտ եկան գոթական գրականության բազմաթիվ միջակ հեղինակներ: Ուոլփուրի վեպի հիմնական արժանիքը Լավթրաֆթը համարում է այն, որ նրանում ներկայացված էր միջավայրի, սյուժեի, խառնվածքների սկզբունքորեն նոր տեսակ, և «այդ տեսակը, որ խելքահան էր արել գերբնականի առավել սուր հոտառություն ունեցող հեղինակների, գրականությունը հեղեղեց գոթական դպրոցի բուռն ծաղկմանը հաջորդող բազմաթիվ նմանակումներով, բայց որն էլ իր հերթին ներշնչեց տիեզերական սարսափի իրական վարպետներին, փայլուն գրողների իսկական մի աստղաբույլի, որոնց գլուխ կանգնած էր Էդգար Պոն»⁴: Այս ոճին իրենց հարգանքի տուրքն են մատուցել նաև այնպիսի մեծություններ, ինչպիսիք են Չարլզ Դիկկենսն ու Վալտեր Սքոթը, Օնորե դը Բալզակն ու Վիկտոր Հյուգոն, Վաշինգթոն Իրվինգն ու Նաթանիել Հոթորնը, քսաներորդ դարում Ջոն Ռուալդ Թոլքինը, Ռեյ Բրեդբերին, Գուստավ Մայրինկը, Հանս Էվերսը, Ժան Ռեյը, Գաբրիել Վիտկոպը, Ժյուլիեն Գրակը և ուրիշներ:

Գոթական գրականության ավանդույթներն իսկական վերածնունդ ապրեցին հասկապես տասնիններորդ դարի ռոմանտիզմի գրականության մեջ: Ամերիկյան ռոմանտիզմի գրականության մեջ այս ոճին են հարել Վաշինգթոն Իրվինգը, Նաթանիել Հոթորնը, Էդգար Ալլեն Պոն, Ամբրոզ Բիրսը, Չարլզ Բրոքդեն Բրաունը:

³ The Oxford Companion to English Literature, 1985, 2000.

⁴ **H. P. Lovecraft**, Supernatural Horror in Literature, <http://www.hplovecraft.com/writings/texts/essays/shil.aspx>.

Էդգար Պոյի արձակը, մասնավորապես նրա «սարսափի նովելները», անշուշտ գոթական վեպի ավանդույթներն են շարունակում, բայց արձակագիրը, խորապես յուրացրած լինելով այդ ավանդույթները, մեծ նորարար է, իսկ նրա նորարարությունն առ այսօր արդիական է. գրողի հայտնագործած և մշակած հնարքներն արդեն չարչրկվել են զանգվածային բելետրիստիկայի կողմից: Պոյի գլխավոր նորարարությունը, անշուշտ, ինչպես Լավքրաֆթն է նկատում, հոգեբանական խառնվածքների մշակման մեջ էր: Հետաքրքիր է ուսումնասիրել, թե արձակագիրն ինչ փոխաձևման ենթարկեց գոթական գրականության ավանդույթը: Այսպես, մինչև Պոն գոթական արձակում ամրոցներն ավելի կարևոր էին, քան կերպարները, ուրվականներն ավելի կարևոր էին, քան իրական, կենդանի մարդն ու նրա հոգեբանությունը: Ուսումնասիրողներից մեկը գոթական վեպը բնորոշել է որպես «աֆեկտացված»⁵: Պոն, որ գրականության մեջ տրամաբանություն, ճշգրտություն և նույնիսկ մաթեմատիկա ներմուծելու խնդիր էր հետամտում, ինչն իրականացրեց իր տրամաբանական նովելներում⁶, չէր կարող հանդուրժել այս ոճի արձակին հատուկ սարսափի այնպիսի պատկերումը, որը հոգեբանորեն անապացուցելի, անորոշ, տարտամ, անորսալի ու անբացատրելի լիներ. նա գոթական արձակ է ներմուծում հենց սարսափի հոգեբանական հիմնավորումը: Մեկնաբանությունը և բացատրությունը, ինչպես մի առիթով նկատել է Անդրե Բրետտոնը պյուրոեռալիզմի մանիֆեստներից մեկում, ոչնչացնում են արվեստը: Այդուհանդերձ Պոյի վարպետության գաղտնիքն այն է, որ սարսափի հիմնավորման և բացատրության շնորհիվ սարսափը գերբնական բնույթ է ստանում:

Գրողի արձակում կարելի է գտնել և՛ մեկուսի ու լքված ապարանքներ, և՛ մուգ նկուղներ, որոնք միջնադարում զնդաններ են եղել, և՛ գոթական ավերակներ. ընդհանրապես գոթական անտուրաժն անչափ կարևոր է նրա նովելներում: Այսպես, «Կարմիր մահվան դիմակում» նկարագրվում է իսկական գոթական մի դղյակ, որտեղ Կարմիր մահվան ուրվականը գտնում է իշխան Պրոսպերոյին: Գոթական ապարանք է հիշեցնում նաև «Աշըրի տունը»՝ «մոայլ մի շինություն», որ առաջին իսկ հայացքից «անդարմանելի թախիծ է ներար-

⁵ **Ладыгин М. Б.** Английский «готический» роман и проблемы предромантизма, Дис. ... канд. филол. наук., М., 1978, տե՛ս նաև http://www.zpu-journal.ru/e-zpu/2012/4/Lukov_Suggestion-Radcliffe-Walpole/#_ftn19.

⁶ Այս մասին տե՛ս մեր հոդվածը՝ «Ճշգրիտ երևակայությունը. Էդգար Պոյի տրամաբանական նովելը», Երիտասարդ գրականագետների գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ, Երևան, 2013, էջ 206-212:

կում» հերոսի հոգուն: Դժվար չէ նկատել Պոյի՝ իր նովելներում պատկերած շինությունների ճարտարապետությունը գոթական ճարտարապետության ոճին նմանեցնելու միտումը: Ահա Աշըրների տոհմական ապարանքը նկարագրող երկու հատված. «...ոտք դրի կամարակապ գոթական մի դահլիճ» կամ «անհասանելի բարձրության վրա փորված էին երկար ու նեղ գոթական լուսամուտներ»⁷: «Ձվածն դիմանկարը» պատմվածքի հերոսներն ապաստանում են լքված մի ամրոցում, որը համեմատվում է գոթական վեպի հիմնադիրներից մեկի՝ Աննա Ռադքլիֆի վեպերի ամրոցների հետ. «Այն դղյակը, որտեղ, իր վիրավոր տիրոջն անօթևան չթողնելու համար, ներխուժեց իմ սպասյակը, ճոխության ու մաղձի այն կուտակումներից մեկն էր, որոնք դարերով խոժոռվում են Ապենինյան լեռներում ոչ միայն տիկին Ռադքլիֆի* երևակայության մեջ, այլև իրականում»⁸: Պոյի ապարանքները նույնպես ուրվականներ են թաքցնում, բայց դրանք այլ ուրվականներ են: Եթե գոթական վեպի համար ուրվականների «գոյաբանական» ապացույցը խնդիր չէր, ապա Պոյի թափառող հերոսների (թափառող հերոսը, որ հանգրվանում է որևէ ամրոցում, միջնադարյան ասպետական վեպերից գոթական վեպ անցած տարր է, որ առկա է նաև գրողի նովելներում) հանդիպած «ուրվականները» ոչ թե անհամոզիչ տեսիլքներ են, այլ գերբնական իրողությունների հետ հաղորդակցված իրական մարդիկ: Եթե գոթական վեպի ուրվականները գերծ են մարմնականությունից, ապա Պոյի ուրվականները մի ոտքով նյութական աշխարհում, մյուսով անդրաշխարհում են գտնվում. ընդ որում մեկից մյուսն անցնելու միջանցքը մնում է բաց:

«Աշըրի տան անկումը» պատմվածքում այսպես է նկարագրվում հերոսի հանդիպումն իր մանկության ընկերոջ՝ Ռոդրիք Աշըրի քրոջ՝ լեդի Մեդլլայնի հետ. «Այդ պահին լեդի Մեդլլայնը դանդաղ անցավ սենյակի խորքով և հեռացավ, առանց նկատելու իմ ներկայությունը: Չեմ կարող բացատրել, թե ինչու էի ես վախեցած ու ապշահար նայում նրան: Ինչ-որ բան ճնշում էր ինձ, երբ ես փայտացած հետևում էի նրա քայլերին: Երբ դուռը վերջապես փակվեց նրա հետևից, հայացքս ակամա դարձավ եղբորը, բայց նա դեմքը թաղել էր ձեռքերի մեջ, և ես տեսա միայն հյուծված մատների արանքից կաթող դառը

⁷ **Էդգար Պո**, Անուրջներ և մղձավանջներ, Երևան, «Սովետական գրող», 1983, էջ 98:

* Աննա Ռադքլիֆը, որ հեղինակ է «Իտալացին», «Ուոլֆոյի առեղծվածները» վեպերի, մեծ ազդեցություն է գործել Էդգար Պոյի վրա, «Ձվածն դիմանկարը» պատմվածքում Պոն օգտագործել է «Ուոլֆոյի առեղծվածները» վեպի սյուժետային գծերից մեկը:

⁸ **Էդգար Պո**, նույն տեղում, էջ 41:

արցունքները»⁹: Ուշադրություն է պետք դարձնել այն մանրամասնություններին, որոնք այդ կնոջը նմանեցնում են ուրվականի. հերոսը նրան մինչև «մահանալը» ընդամենը մեկ անգամ է հանդիպում, ուշադրություն է պետք դարձնել նաև լեդի Մեդլլայնի դանդաղ քայլվածքի վրա, նա կարծես ուրվականի պես «սահում» է (Մոնթեգյու Սամերսը գոթական վեպին բնորոշ սխեմատիկ տարրերի թվում առանձնացնում է նաև «սահող ուրվականը»¹⁰), և այն հանգամանքի վրա, որ նա չի նկատում հերոսին, և ապա այն վախի, որ ապրում է հերոսն այդ կնոջը թիկունքից տեսնելով: Այլևս հերոսը չի հանդիպում նրան, մինչև որ նկուղ են իջեցնում մի դագաղ, որի մեջ ամփոփված է Աշըրի քույրը: Կարևոր է նաև այն հանկարծակի բացահայտումը, որ դագաղում պառկած կինը կրկնում է Աշըրի դիմագծերը. նրա երկվորյակն է. այս նույնացումը նույնպես գործում է որպես նրա իրական գոյության յուրօրինակ մերժման հնարք: Եվ վերջապես այն, որ Ռոդրիք Աշըրը օրերից մի օր կռահում է, թե դռան հետևում կանգնած է իր քույրը, որին ողջ են թաղել: Անշուշտ լեդի Մեդլլայնը ողջ է, բայց նրա վերադարձը փոխանցում է մեռյալի վերադարձի ամբողջ սարսուռը, ինչը չէր հաղորդվի, եթե լեդի Մեդլլայնն իսկապես մահացած վերադառնար:

Պոյի նովելը չի տեղափոխվում ֆանտաստիկայի ոլորտ, մնում է համոզիչ ու սարսափազդու: «Աշըրների տունը» փվում է, և այդ տան հետ կործանվում են նաև Ռոդրիք Աշըրն ու նրա քույրը: «Աշըրների տունը», որ կատարելության աստիճան հղկվածությամբ և համաչափությամբ ակնհայտորեն գերազանցում է գրողի մյուս ստեղծագործություններին, հոգեցունց ակնարկներ է պարունակում անօրգանական մատերիայի զգայնության և կենդանության վերաբերյալ՝ պատմելով գերբնական կապի մեջ գտնվող եղբոր, նրա երկվորյակ քրոջ և նրանց չափազանց հին տան մասին, որ զարմանալի երրորդություն են կազմում միասին, ընդհանուր հոգի ունեն և մեռնում են միաժամանակ»¹¹: Գրողը երկակի, փոխապայմանավորված արդյունքի է հասնում. մի կողմից Աշըրի տունն է շնչավորվում, քանի որ Ռոդրիք Աշըրը, նրա քույրը և տունն «ընդհանուր հոգի» ունեն, մյուս կողմից Ռոդրիք Աշըրն ու նրա քույրն ընկալվում են ուրվականներ: Գոթական անտուրաժի և ուրվականների այս փոխաձևումը գոթական վեպի ավանդույթի մեջ արձակագրի բերած

⁹ Նույն տեղում, էջ 101:

¹⁰ Augustus Montague Summers, *The Gothic Quest: a History of the Gothic Novel 1938*, p. 58.

¹¹ H. P. Lovecraft, *Supernatural Horror in Literature*, <http://www.hplovecraft.com/writings/texts/essays/shil.aspx>

խոշոր նորույթն է. գոթական վեպի պասսիվ տարրը՝ միջնադարյան տոհմական ամրոցը, նրա արձակում վերածվում է ակտիվ տարրի: Սարսափի գրականության մեջ շնչավոր տան թեման սկիզբ է առնում Պոլի հենց այս նովելից և իր լավագույն արտահայտությունն է գտնում քսաներորդ դարի գոթական արձակի գլուխգործոցներից մեկում՝ Շիրլի Ջեքսոնի «Բլրի տան ուրվականը» վեպում:

Եթե «Աշըրի տան անկումը» նովելում ուրվականը կենդանի մարդ է, ապա «Ձվածն դիմանկար»-ում կենդանություն է առնում մարդու ֆիզիկական գոյությունից մնացած անկենդան հետքը՝ նկարը: Այս նովելի հիմքում ևս անկենդան մատերիայի շնչավորման գաղափարն է: Ռադքլիֆի ամրոցները հիշեցնող տոհմական դոլակի հեռավոր աշտարակներից մեկի փոքր ու անշուք սենյակում հանգրվանած հերոսը ոչ թե զոյաբանորեն անապացուցելի ուրվականների է հանդիպում, ինչպես գոթական վեպերում, այլ մոմի լույսով բացահայտված խորանում տեսնում է մի դեռատի կնոջ դիմանկար, որ սարսափ է հարուցում. «Նկարի հմայքը նրա կատարյալ շնչավորության մեջ էր, որը սկզբում ցնցեց, ապա շփոթեցրեց, ընկճեց ու ահաբեկեց ինձ»¹²: Եթե ուրվականը հոգին է, ապա Պոլի արձակում այդ հոգին նյութականացված է. ընդ որում սարսափելի է հենց հոգու և այն նյութի համադրությունը, որի մեջ այդ հոգին ապրում է. եթե «Աշըրի տան անկումը» նովելում այդ նյութը քարն է, ապա այստեղ՝ ներկը: Այստեղ պատմվում է նկարչի մասին, որ ժամանակին պատկերել է իր կնոջը՝ առանց նկատելու, որ «կտավին դրած իր երանգները նա խլում է դիմացը նստած էակի այտերից»¹³, իսկ նկարն ավարտելուց հետո կնոջը մեռած է գտնում: Իր հանրահայտ վեպի հրատարակությունից հինգ տարի առաջ Օսկար Ուայլդը հիացմունքով է խոսել արձակագրի ստեղծագործության մասին¹⁴: Պոլի նովելում արժարժված արվեստի և կյանքի փոխհարաբերության խնդիրը ևս Օսկար Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպի՝ Պոլի «Ձվածն դիմանկարը» նովելից կրած անառարկելի ազդեցության մասին է խոսում:

¹² **Էդգար Պոլ**, Անուրջներ և մղձավանջներ, Երևան, 1983, էջ 43:

¹³ Նույն տեղում, էջ 44:

¹⁴ **Sova, Dawn B.** Edgar Allan Poe: A to Z. New York: Cooper Square Press, 2001, p. 178.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Երիտասարդ գրականագետների գիտաժողովի նյութեր, Ա. Գալստյան, Ճշգրիտ երևակայությունը. Էդգար Պոյի տրամաբանական նովելը, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Ե., 2013, 278 էջ:
2. Էդգար Պո, Անուրջներ և մղձավանջներ, Ե., «Սովետական գրող», 1983, 154 էջ:
3. H. P. Lovecraft, Supernatural Horror in Literature, <http://www.hplovecraft.com/writings/texts/essays/shil.aspx> Տե՛ս <http://www.britannica.com/EBchecked/topic/239776/Gothic-novel>
4. The Oxford Companion to English Literature, 1985, 2000.
5. H. P. Lovecraft, Supernatural Horror in Literature, <http://www.hplovecraft.com/writings/texts/essays/shil.aspx>
6. Ладыгин М. Б. Английский «готический» роман и проблемы предромантизма: Дис. ... канд. филол. наук., М., 1978, տես նաև http://www.zpu-journal.ru/e-zpu/2012/4/Lukov_Suggestion-Radcliffe-Walpole/#_ftn19
7. Augustus Montague Summers, The Gothic Quest: a History of the Gothic Novel 1938. p. 58.
8. H. P. Lovecraft, Supernatural Horror in Literature, <http://www.hplovecraft.com/writings/texts/essays/shil.aspx>

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության ենթ առել «գոթական արձակին» բնորոշ տարրերը, ցույց տվել դրանց արտացոլումը Էդգար Պոյի նովելներում: Ուսումնասիրել ենք, թե ինչ փոխաձևման է ենթարկվել գոթական արձակի ավանդույթը գրողի նովելներում, և ինչպես են պասսիվ տարրերը փոխակերպվել գործուն տարրերի: Գոթական արձակի ավանդույթի խնդիրները քննելուց բացի, անդրադարձել ենք նաև Պոյի նորարարական հնարքներին և դրանց հետագա ազդեցությանը:

Բանալի բառեր - գոթական արձակ, թափառող հերոս, նովել, անտուրաժ, հոգեբանական հիմնավորում, գերբնական սարսափ, փոխաձևում, ավանդույթ, նորարարություն, ազդեցություն:

ТРАДИЦИИ ГОТИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЫ В НОВЕЛЛАХ ЭДГАРА АЛЛАНА ПО АНИ ГАЛСТЯН

В этой статье нами были исследованы типичные элементы готической прозы, отраженной в романах Эдгара Аллана По. Мы проанализировали традицию готической прозы, новаторские методы и их дальнейшее влияние на творчество писателя.

Ключевые слова - готическая беллетристика, блуждающий герой, роман, окружение, психологическая территория, сверхъестественный ужас, традиция инновации, влияние.

GOTHIC FICTION TRADITION IN EDGAR ALLAN POE'S NOVELS

ANI GALSTYAN

In this article, the traditional elements of gothic fiction have been taken into consideration. The reflection of these elements in Edgar Allan Poe's novels has also been shown. The kinds of transformations that these traditional elements of gothic fiction have undergone in Poe's novels are investigated. How the passive elements have transfigured into active ones in his novels are investigated as well. Besides considering the issues concerning the tradition of gothic fiction, the innovatory creativeness and its further influence on world literature is also considered.

Key word - Gothic fiction, wandering hero, novel, entourage, psychological grounds, supernatural horror, metamorphosis, tradition, innovation, impact.

ПРОБЛЕМЫ АМЕРИКАНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В КНИГЕ С. ХАНТИНГТОНА “КТО МЫ? – ВЫЗОВЫ АМЕРИКАНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ”

АНГЕЛИНА ГАСПАРЯН

Цель данной статьи – обратить внимание на проблемы **американской национальной идентичности** в последнем труде Самюэля Хантингтона. Само название книги С. Хантингтона “Кто мы?” – по форме риторический, а по сути судьбоносный вопрос, которым задаются во всех частях света. Научный труд автора вызывает много вопросов и споров, и сам по себе вопрос - “Кто мы?” - сопровождает человечество на протяжении всей его истории. Однако проблема национальной идентичности оказалась одной из актуальных в начале XXI века. Вслед за окончанием “холодной войны” вопрос “С кем вы?” потерял свою значимость, выдвинув проблему национальной идентичности - “Кто мы?”.

В хорошо известной книге Патрика Бьюкенена¹ приводится картина краха государственности США. В менее известной книге Френсиса Фукуямы² дан общий вывод о том, что Америка все же выкрутится. Книга **Томаса Читтама**³ стала бестселлером в США в конце девяностых годов, но вскоре была запрещена властями. Тем не менее она уже издана в России. Ее автор – военный аналитик, ветеран войны во Вьетнаме научно обосновал неизбежный распад самой могущественной державы в мире – Соединенных Штатов Америки.

Среди этих публикаций самой известной сегодня является книга С. Хантингтона. Определяя замысел своего исследования, С. Хантингтон пишет: “В нашей книге предпринимается попытка пролить свет на возникновение и формирование американской национальной идентичности, а также проанализировать факторы, которые определяют ее будущее. То, как американцы воспринимают эту идентичность, влияет на их отношение к собственной стране,

¹ См. **Бьюкенен Патрик**, Смерть Запада, М., 2003.

² См. **Фукуяма Френсис**, Великий разрыв, М., 2008.

³ См. **Читтам Томас**, Крах США. Вторая гражданская война 2020 (Civil War Two: The coming Breakup of Amerika), М., 2010.

на то, какой они ее видят – космополитичной, имперской или националистической – в отношениях с остальным миром”⁴.

Приоритет общенационального сознания особенно важен для США, страны, которую принято называть “плавильным тиглем (котлом) народов”. В главе “Дебаты об ассимиляции”⁵ эмигрантов были выдвинуты три концепции ассимиляции, которые можно охарактеризовать как концепции “плавильного тигля”, “томатного супа” и “салата” соответственно. Согласно автору книги, в Америке начала двадцатого столетия наблюдалось стремление к реализации концепции плавильного тигля – при том, что фактически нация оставалась тем самым томатным супом англо-протестантской культурной идентичности.

Изначально предполагалось, что хорошим примером гармоничного сосуществования разных культур может служить Америка. Долгое время в США был популярен праздничный ритуал, который символически отражал процесс мирной ассимиляции разных культур. На площади соорудился огромный плавильный котел. К нему со всех сторон в национальных костюмах представители разных культур поднимались на помост, входили вовнутрь сооружения и выходили с другой стороны, облаченные уже в сюртуки, жилеты, шляпы. В такой форме выражалась идея плавной американизации разных этносов. Находясь на стыке цивилизаций, Америка пыталась найти теоретическое обоснование проблемы сосуществования разных этносов. Порой оно виделось в виде многообразия самодостаточных культур, в других случаях – в виде “плавильного котла”.

Глобализация изменила традиционные символы самоидентичности. Для многих народов вопрос – “*Кто мы?*” – стал мучительным, сложным, противоречивым. Казалось бы, США давно определились с этим вопросом, реализовав национальную мечту, создав массовую культуру для всех стран и народов мира и в итоге обозначив себя как лидера человечества. Даже явные притязания США на роль “единственной сверхдержавы” и упорные попытки формирования мировой системы “*Rex Americana*” не обошлись без тревоги, опасений утраты самоидентичности в национальном сознании. Как рассуждает американский социолог Самюэль Хантингтон (он скончался в 2009 году),

⁴ С. Хантингтон, Кто мы? – Вызовы американской национальной идентичности, Москва, 2008, с. 17.

⁵ С. Хантингтон, указ. соч., с. 203.

дезинтеграционные процессы в общечеловеческой культуре ставят под сомнение сам факт дальнейшего существования феномена американской идентичности, и оттого, в какую сторону качнется маятник, зависит будущее не только Соединенных Штатов, но и всей мировой системы в целом. Причина кризиса, утраты веры в национальный идеал или миссию национального государства кроется в целом комплексе факторов. Среди них ключевое место занимает глобализация важнейших сфер общественной жизни. Глобализация создает все условия для дробления единой национальной идентичности на несколько или множество идентичностей – наднациональной, транснациональной, субнациональной, этнической и конфессиональной. В этих условиях распада национальной идентичности одновременно наблюдается тенденция к возрастанию культурных различий в обществе. Об этом свидетельствует феномен **мультикультурализма**, в результате чего для многих народов западного мира весьма трудным становится ответ на сакраментальный вопрос – “Кто мы?”

Каждый год в США прибывает почти миллион официальных иммигрантов – плюс почти полмиллиона нелегальных. Подавляющее большинство всех иммигрантов – это выходцы из стран Азии и Латинской Америки. В настоящее время в этой стране насчитывается примерно 45,5 млн. латиноамериканцев, что составляет 15% от общей численности населения. Вторым по численности меньшинством являются чернокожие – 40,7 млн. (13,5%), далее – выходцы из Азии – 15,2 млн. (5%). Таким образом, как отмечает американский публицист и политический деятель П. Бьюкенен, Америка стала менее западной, менее белой и менее англосаксонской, и все эти процессы не могут не отразиться на американской национальной идентичности, что неминуемо ведет к закату Запада в лице США. Патрик Бьюкенен пишет: “Неуправляемая иммиграция грозит уничтожить страну, в которой мы выросли, и превратить Америку в хаотическое скопление народов, не имеющих фактически ничего общего между собой – ни истории, ни фольклора, ни языка, ни культуры, ни веры, ни предков”⁶.

Для правильного понимания феномена мультикультурализма К.С. Гаджиев, ссылаясь на рассуждения С. Хантингтона, пишет: “Разработку и введение политики мультикультурализма по сути дела следует рассматривать как

⁶ Бьюкенен К.С., Закат Запада, М., 2003, с. 14.

признание неэффективности политики ассимиляции, направленной на гомогенизацию в культурном, языковом и конфессиональном отношении многосоставного населения соответствующих стран”⁷. Тем не менее С. Хантингтон пытается рассматривать свою страну как полиэтническое многосоставное общество: “если на протяжении американской истории жители США определяли свою идентичность в терминах “раса, “этнос” и “культура”, то сегодня первые два понятия (“раса” и “этнос”) потеряли значимость”. Известно, что Америку отличает от остальных стран особая вера – “американское кредо” на основе англо-протестантской культуры отцов-основателей. Ее ключевыми элементами являлись английский язык, десять библейских заповедей, английские представления о верховенстве права, а также протестантские ценности – индивидуализм, трудовая этика, убежденность в том, что люди могут и должны создать рай на земле.

Как пишет Збигнев Бжезинский, “секрет устойчивой исторической притягательности Америки – сочетание идеализма и материализма, которые одинаково служат мощными источниками мотивации для человеческой психики”⁸. Бжезинский, выделяя идеализм и индивидуализм как движущую силу к свободе и обогащению, считает Америку единственной в гражданском и предпринимательском плане страной со своими просторами и безграничными возможностями, в отличие от Европы и остального мира,.

Как отмечает К.С. Гаджиев, другая угроза американской национальной идентичности коренится в таких факторах, как новая волна иммигрантов из Азии и Латинской Америки. В частности, обращает внимание на доктрину мультикультурализма, которая выражается в распространении испанского в качестве второго языка на территории США, испанизации американского социума; в утверждении групповых идентичностей на основе понятий “раса” – “этнос” – “пол”; растущем влиянии диаспор; в приверженности элит космополитизму и транснациональным идентичностям⁹.

⁷ Гаджиев К. С., О кризисе национальной идентичности, журнал “Политика и культура”, 07.02.2014, flickr.com/progressili

⁸ Бжезинский З., Стратегический взгляд Америки и глобальный кризис, М., 2012, с. 61.

⁹ Гаджиев К. С., указ. соч., 07.02.2014, flickr.com/progressili

Другой ученый, философ П.С Гуревич считает, что концепция мультикультурализма зародилась в конце XIX – первой половине XX века, когда американские и латиноамериканские исследования в основном рассматривали влияние европейской культуры на культуры других народов. Обратное воздействие фиксировалось формально и почти без особых аргументов. Однако концепция мультикультурализма сохранила свою значимость до сих пор. По мнению П.С. Гуревича, ***в основе любой цивилизации, любой мировой державы лежит определенный четко сформулированный идеал, идеология, которые призваны обеспечить ее место и статус в мировом сообществе. Именно эти составляющие дают основу для формирования национальной идентичности, воли к самосохранению и поискам ответов на внешние и внутренние вызовы.*** Таким образом, как отмечает Гуревич, ответом на вопрос “Кто мы?” может быть ***только национальная идея, понятная всему обществу, народу и тем самым способная обеспечить необходимый духовный прогресс.***¹⁰

Мультикультурализм (многонациональная культура) старался удержать позицию расового и этнического разнообразия в США (уместно вспомнить о “создании” советского народа и многообразии культур в СССР, многонациональной советской литературе народов СССР – интернациональной по содержанию и национальной по форме). И в США, и в бывшем СССР некоторые исследователи ставили вопрос о неизбежном существовании доминирующей культуры, другие – считали ее излишней. В американском сознании начался процесс пересмотра представлений о расовой и этнической иерархии. Одна из важнейших целей политики мультикультурализма – создание и поддержка социокультурного равновесия в обществе. Тем не менее этнокультурный конфликт между Мексикой и США нарастает все с большей силой. Мексиканцы своим домом считают Мексику, а не США, невзирая на то, что здесь они имеют собственные радиовещание и телевидение, фильмы, газеты и журналы. Одним словом, мексиканские американцы создают в США испаноязычную культуру, отличную от американской. Иначе говоря, они становятся нацией внутри нации.

¹⁰ Гуревич П.С., Проблемы идентичности человека в философской антропологии, Вопросы социальной теории, 2010, том IV, с. 63-87.

У других национальных меньшинств США сложилась убежденность в тезисах расовой справедливости и этнического равенства. Эти тезисы поддерживает и их культурная элита, которая отказалась от идеи “плавильного котла”. В результате этого наблюдается резкий всплеск национализма, но это вовсе не национализм “во имя нации”, появившийся лишь в 18 веке, а скорее актуальные проблемы этнопсихологии, требующие отдельного разговора.

Само **понятие нации**, как считает П.С. Гуревич, **может предполагать этнический или гражданский смысл**. Как пишет С. П. Гуревич, само понятие идентичности представляет собой: 1) психологический механизм, рождающий чувство тождественности человека самому себе, 2) ощущение целостности человека. Этот механизм действует и при восприятии людьми образа своей страны, своей культуры. По мнению Гуревича, С. Хантингтон указывает на три основных фактора, объединяющих американскую нацию и отличающих ее от других народов. Во-первых, по мнению С. Хантингтона, осознание американцами собственной национальной идентичности менялось на протяжении всей истории США. Во –вторых, население США всегда определяло свою самоидентичность в терминах “раса”, “идеология” и “культура”. Однако первые два термина вышли из обихода, никто в Америке не пытается сопоставлять расы. Американцы рассматривают свою страну как **мульти-народное и мультиэтническое общество**. В-третьих, на протяжении трех столетий стержнем американской национальной идентичности **была англо-протестантская культура**.

П.С. Гуревич считает, что в труде С.Хантингтона патриотические стереотипы принижают значимость честного теоретического размышления социолога, который субъективно ощущает разлад между присущим ему патриотизмом и добросовестностью исследователя. В работе С. Хантингтона нет попытки рассмотреть” кризис идентичности”. П.С. Гуревич пишет по этому поводу: “Автор в основном отмечает лишь смену культурных парадигм, но не вскрывает драматичной сущности того, что обнаруживается за этими социальными преобразованиями, за этим преобразованием национальных символов”¹¹. Но это вовсе не означает, что в книге С. Хантингтона нет обсуждения острых проблем. Он вполне понимает, что в конце минувшего столетия американской культуре был брошен серьезный вызов. Появилась новая волна иммигрантов

¹¹ Гуревич П.С., указ. соч., с. 84.

из Азии и Латинской Америки, возросла популярность доктрин мультикультурализма и диверсификации в интеллектуальных и политических кругах, утвердились новые групповые идентичности, связанные с понятием расы, этноса и пола. Одним словом, окрепла приверженность элит космополитизму и транснациональным идентичностям. «Американский исследователь не учитывает, что логически возможно различать два понятия идентичности. Формальная идентичность является качеством каждого объекта. Реальная же идентичность присуща только эмпирическим (реально существующим) объектам и имеет разные формы в зависимости от познания конкретного объекта»¹². Хантингтон считает, что дебаты по поводу национальной идентичности давно превратились в неотъемлемую черту нашего времени

Однако эта проблема существует не только для Америки. **Кризис идентичности** равно затронул все страны и человечество в целом. Например, японцы не могут решить, относятся ли они к Азии (вследствие географического положения островов, истории и культуры) или к западной цивилизации, с которой их связывают экономическое процветание, демократия и современный уровень развития высоких технологий. Иранцы, Южная Африка также находятся в поисках своей идентичности. Если же говорить о России, то предстоит ответить на вопрос: Россию можно отнести к Европе или Азии? Одним словом, кризис идентичности в разных странах имеет различные формы и сулит разные последствия.

Что же привело к кризису американской национальной идентичности?

Несомненно, рано еще говорить об утрате **американской национальной идентичности**, но наличие серьезного кризиса – факт налицо. Можно привести много причин – рождение мировой экономики, грандиозный скачок высоких технологий, нарастающая миграция населения, распространение демократических ценностей по всему миру. Американский исследователь считает, что американская идентичность основывается на двух положениях, каждое из которых правдиво лишь отчасти, но регулярно принимается за истину в последней инстанции. Первое положение гласит, что Америка является государством иммигрантов, второе – что американская идентичность

¹² Гуревич П.С., указ. соч., с. 85.

определяется комплексом политических принципов, то есть так называемым американским кредо. В отличие от других народов, американцы не идентифицируют себя со страной в целом. Конечно, они восторгаются размерами и красотой Соединенных Штатов. Но насколько американцы отождествляют себя с политическими идеями и институтами? В Америке, как и в других странах, наблюдается деполитизация в противоположность постсоветскому пространству. В условиях кризиса миллионы людей ищут возможность выжить, а отношение к политическим ценностям воспринимается либо равнодушно, либо негативно.

В прошлом ассимиляцию иммигрантов в американском обществе обеспечивали многие факторы. Большинство иммигрантов прибывало из Европы, их культура была с ней совместима. Сегодня иммиграция значительно отличается от прошлых лет. В конце XX столетия ассимиляция перестала быть синонимом американизации. “Для некоторых иммигрантов это вылилось в частичную ассимиляцию, то есть во внедрение не в базовую американскую культуру, а в субнациональные, зачастую и в маргинальные сегменты американского общества”¹³.

На протяжении более двухсот лет **либерально-демократические ценности** “американской веры” являлись ключевыми для определения американской идентичности. Американские и европейские исследователи часто указывали на эти ценности, которые составляют сущность “американской исключительности”. Но ведь сегодня эти ценности присущи не только Америке. Одним словом, американская исключительность обернулась универсальностью. “Хантингтон обращает внимание, что в современном мире уменьшилась роль идеологии. Зато возросла роль культуры как источника идентичности. Выходит, что уменьшение значимости национальной идентичности по сравнению с идентичностями транснациональными имеет принципиальное значение для определения национальных интересов и внешней политики Америки в XXI веке”¹⁴.

Итак, **кризис идентичности** – одна из взрывоопасных глобальных проблем современного человечества. Бурный *общественно-политический дискурс* вокруг книги С. Хантингтона вызван *озабоченностью утраты ис-*

¹³ Хантингтон С., указ. соч., с. 345.

¹⁴ Гуревич П.С., указ. соч., с. 87.

торической памяти, разрушения культурного наследия. Как видим, проблема идентичности актуальна не только для развивающихся стран, уязвимых в условиях глобализации, но и для таких ведущих держав мира, как США. Устами американского ученого С. Хантингтона звонит несмолкаемая колокольня – *обеспокоенность судьбой американской нации.* Как патриот своей страны он пытается представить и отстоять базовые ценности американской идентичности. Но именно благодаря выдвинутым проблемам и выявляется **отсутствие нравственного фундамента этих же базовых ценностей.** Послушаем автора: «Поначалу его (имеется в виду Новый Свет) заселяли вольные охотники, трапперы, искатели приключений, старатели и торговцы, на смену которым пришли поселенцы. Они не представляли населения их родной страны в целом; они были представителями фрагментов этого населения. Они покидали родину и стремились за море в поисках лучшей доли или потому, что дома подвергались преследованиям»¹⁵.

На наш взгляд, профессор Хантингтон обрисовал достаточно колоритный портрет новых хозяев Америки, чтобы понять, чего лишился Старый свет, потеряв такие «драгоценные фрагменты» своего населения. Именно они определили нравственные ценности, изложенные в «американском кредо»: **«свобода, равенство, ценности отдельной личности, уважение прав граждан, репрезентативное правительство и частная собственность».** Таким образом, как нам кажется, *«американское кредо» - это своего рода охранная грамота от того, чтобы новоселы не перестреляли друг друга при дележе награбленного, грамота, узаконивающая награбленное как стартовый капитал института «частной собственности».* Здесь трудно понять, о каких «ценностях отдельной личности» говорится в «американском кредо». Если понимать это в буквальном смысле, рассматривая личность как денежный мешок, то американцы знают в этом толк. Если рассматривать духовные ценности личности на американской «духовной» почве религии - то они, мягко говоря, ущербны. «Американское кредо» - это протестантизм без Бога, а американская гражданская религия – христианство без Христа.

«К 1790 году население Соединенных Штатов, исключая индейцев, насчитывало 3929 000 человек, из которых 698 000 были рабами и не воспринимались американцами в качестве полноправных членов общества. Индейцев

¹⁵ Хантингтон С., указ. соч., с. 79-80.

отогнали, их вождей перебили, большое количество мужчин, женщин и детей обратили в рабов и отправили на плантации Вест-Индии»¹⁶. Фактически, **поселенцы пришли к выводу, что единственная правильная политика в отношении аборигенов – это их полное истребление.** Одновременно с преследованием и истреблением индейцев белые ввозили в страну чернокожих рабов, которых потом отправили назад в Африку, создав из них в 1891 г. страну Либерию.

Люди стремятся объединиться с теми, с кем они схожи и с кем делят нечто общее. Что же общего может быть у людей, портреты которых так ярко нарисованы американским профессором, кроме награбленной и ставшей «частной» собственности? В итоге, у Хантингтона «нация возникает лишь в результате «политического контракта» между отдельными личностями, но, как продолжает профессор, история и психология учат, что на одном «политическом контракте» нация долго не продержится. Америка, основанная только на американском кредо, «быстро превратится в слабую конфедерацию... групп, у которых общим будет разве что проживание на определенной территории». Однако возразим профессору его же словами: «изначально американцам не было свойственно привязываться к конкретным местам. Тяга к скитаниям, как представляется, заложена в самой их природе. Между мартом 1999 г. и мартом 2001 г. 43000 000 американцев сменили место проживания»¹⁷.

Профессор, будучи патриотом своей страны, остается верным своей сущности ученого, признавая, что в отличие от других народов, американцы не идентифицируют себя со страной в целом, и для большинства из них связь с землей часто выражается в понятиях принадлежности и обладания, но не отождествления. Потомки первых поселенцев и последующих эмигрантов, несмотря на весь свой патриотизм, не могут назвать Америку родиной.

Тогда что может объединить граждан США, если не «образ врага»? Для США наличие внешнего врага или хотя бы его образа является движущей силой новых хозяев Нового Света. Образ внешнего врага становится средством манипуляции в политических целях. Еще со времен Линкольна Америка озабочена поисками внешнего врага. *Убедившись в том, что внешняя угроза миновала, американцы могут обратить свою ненависть, ревность,*

¹⁶ Хантингтон С., указ. соч., с. 81.

¹⁷ Хантингтон С., указ. соч., с. 91.

зависть и алчность друг на друга и тем самым ступить на дорогу, которая, в конце концов, приведет к гражданской войне. “Единственная из всех государств мира, – пишет профессор, – Америка регулярно публикует списки своих врагов: это террористические организации (36 на 2003 год), страны, поддерживающие терроризм (7 на 2003 год)”, **“страны-изгои, “ось зла – Ирак, Иран и Северная Корея, к которым Государственный департамент присовокупил Кубу, Ливию и Сирию.**¹⁸ Профессор Хантингтон пишет: “В 1987 году Георгий Арбатов, советник Михаила Горбачева, предостерегал американцев: “Мы осуществляем нечто действительно ужасное для вас – мы отбираем у вас врага. Избавив от врага Америку, СССР и сам лишился врага... Когда борьба неожиданно завершилась, СССР утратил идентичность, смысл существования и быстро распался...”¹⁹.

Фундаментальным положением американского кредо является положение о неизблемости частной собственности. На этом фундаменте и держится американское общество с иллюзиями о стране равных возможностей. Здесь, как нам кажется, следует обратить внимание на то, что общество, построенное на потребительской идеологии и психологии, не может стать благополучным и справедливым, поскольку благополучие одних строится за счет других. Как справедливо отмечает Николай Бердяев, “высшие цели жизни не экономические и не социальные, а духовные. Величие народа, его вклад в историю человечества определяется не могуществом государства, не развитием экономики, а духовной культурой”²⁰. Именно духовной культуре принадлежит проблема восстановления исторической справедливости.

К сожалению, на наш взгляд, ***поднятый Самюэлем Хантингтоном вопрос “Кто мы?” все же остался без ответа не только на уровне частной собственности, но и на уровне современных процессов глобализации.*** “Америка ныне существует в недружелюбном мире” - *как понять это утверждение, когда Америка господствует на всем земном шаре. И это вовсе не смешно, если не печально, в особенности, когда читаем:* “Америка становится миром. Мир становится Америкой. Америка остается Америкой. Космополитическая? Имперская? Националистическая? Американцам пред-

¹⁸ Хантингтон С., указ. соч., с. 412.

¹⁹ Хантингтон С., указ. соч., с. 405-406.

²⁰ Бердяев Николай, Судьба России, М., 1990, с. 274-275.

стоит сделать выбор, который определит и судьбу нации, и судьбу всего мира”²¹.

Автор, выражая свою концепцию мира и национальной идентичности личности американца, сам того не замечая, **помог понять и осмыслить истинные ценности США, которые по сути далеки от общечеловеческих ценностей - критериев добра и зла.** Глубокую признательность профессору нужно выразить хотя бы за неоценимую услугу в том, что благодаря ему нам стала понятна его родина и в нас еще больше окрепла уверенность в неизблемости нравственных устоев - наших базовых традиционных ценностей, которые помогли армянскому народу выстоять на протяжении веков.

Выводы:

1. Весь дискурс американской национальной идентичности нацелен на выявление конфликта между американским кредо и базовыми традиционными ценностями жизни. Именно эти ценностные различия и определяют отсутствие нравственного фундамента базовых ценностей американского кредо - утрата исторической памяти и разрушение культурного наследия.
2. Общество, которое зиждется на потребительской идеологии, не может, на наш взгляд, стать благополучным и справедливым, поскольку благополучие одних строится за счет других. И не только. Не случайно в западной идеологии запущен закон природы (“выживает сильнейший”), где имеется в виду материальная и физическая сила или безнаказанность. Любая сила или мощь, лишенная в своей основе духовности и нравственности, рано или поздно обречена. Этому не требуется доказательств. Отказавшись от базовых, традиционных, общечеловеческих ценностей, западные либерально-демократические ценности со своей “обязательной толерантностью” привели к распаду традиционных семейных ценностей. Но это – другая тема для разговора.

Сила государства или общества – в его базовых ценностях и национальной идеологии, в основе которой должны быть три составляющие: **Право, Правда и Сила.**

²¹ Хантингтон С., указ. соч., с.572.

РЕЗЮМЕ

В статье представлен контент – анализ дискурса книги С. Хантингтона “Кто мы? - Вызовы американской национальной идентичности”. Фундаментальным положением американского кредо является положение о незыблемости частной собственности. На этом фундаменте и держится американское общество с иллюзиями о стране равных возможностей. Однако, общество, которое зиждется на потребительской идеологии, не может стать благополучным и справедливым, поскольку благополучие одних строится за счет других.

Весь дискурс американской национальной идентичности нацелен на выявление конфликта между американским кредо и базовыми традиционными ценностями жизни. Именно эти ценностные различия и определяют отсутствие нравственного фундамента базовых ценностей американского кредо - утрата исторической памяти и разрушение культурного наследия.

Ключевые слова: - кризис национальной идентичности, мультикультурализм, либерально-демократические ценности, англо-протестантская культура, американское кредо, историческая память, культурное наследие.

ԱՄԵՐԻԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ Ս. ՀԱՆԹԻՆԳՏՈՆԻ «Ո՛Վ ԵՆՔ ՄԵՆՔ. ԱՄԵՐԻԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ» ԳՐՔՈՒՄ

ԱՆԳԵԼԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հոդվածում ներկայացված է Ս. Հանթինգտոնի «Ո՛վ ենք մենք. ամերիկյան ազգային ինքնության մարտահրավերները» գրքի մասին դիսկուրսի /խոսույթի/ կոնտենտ-վերլուծությունը: Ամերիկյան կրեդոյի /հավատամքի/ հիմնարար դրույթը «մասնավոր սեփականության անձեռնմխելիության» սկզբունքն է: Այս հիմքի վրա էլ խարսխված է ամերիկյան հասարակությունը «հավասար հնարավորությունների» պատրանքներով: Սակայն հասարակությունը, որն ապրում է սպառողական գաղափարախոսությամբ, չի կարող լինել արդար, բարեկեցիկ, քանի որ մի մասի բարեկեցությունը ձեռք է բերվում մյուսների հաշվին:

Ամերիկյան ազգային ինքնության դիսկուրսը նպատակաուղղված է ամերիկյան կրեդոյի և կյանքի հիմնական ավանդական արժեքների բախումը /կոնֆլիկտը/ բացահայտելուն: Հենց այդ արժեքների տարբերության բացահայտման շնորհիվ ի հայտ է գալիս ամերիկյան կրեդոյի հիմնական արժեք-

ների բարոյականության բացակայությունը, որի հետևանքով առկա են պատմական հիշողության կորուստը և մշակութային ժառանգության ոչնչացումը:

Բանալի բաներ - ազգային ինքնության ճգնաժամ, մուլտիկուլտուրալիզմ, ազատական-ժողովրդավարական արժեքներ, անգլո-բողոքական մշակույթ, ամերիկյան կրեդո /հավատամք/, պատմական հիշողություն, մշակութային ժառանգություն:

AMERICAN NATIONAL IDENTITY ISSUES IN ACCORDANCE WITH THE BOOK "WHO ARE WE?" BY SAMUEL P. HUNTINGTON

ANGELINA GASPARYAN

This article presents a content analysis of the treatise *Who Are We? The Challenges to America's National Identity* by S.Huntington. The core principle embodying the "American creed" is the principle of "private property". This is the basis of American Society with the illusion of a "country with equal opportunities". However, a market- driven society or a society having a consumer ideology cannot be prosperous because the prosperity of some is attained on account of the others'. The treatise is aimed at discerning the conflict between the American creed and the basic traditional values of life. Due to the identification of these differences in values, the absence of the core ones in the American identity is established, which lead to the fading or complete destruction of historical memory and cultural legacy.

Key words - crisis of national identity, multiculturalism, liberal-democratic values, the Anglo-Protestant culture, the American Creed, historical memory, cultural heritage.

**ԱՄԵՐԻԿԱՆ ԴՐԱՄԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 20-ՐԴ ԴԱՐԻ 30-60-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (ՅՈՒՋԻՆ ՕՆԻԼ, ԹԵՆՆԵՍԻ ՈՒԻԼՅԱՄՍ, ԱՐԹՈՒՐ
ՄԻԼԼԵՐ, ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻ)**

ԽՈՍՐՈՎ ԽԱՆՄՈՐԱԴԻ ԴԱՐԱՔԻ (ԻՐԱՆ)

Ամերիկյան դրաման բեմական կատարման համար նախատեսված անգլալեզու գրականություն է, որը սկզբնավորվել է դեռևս 17-րդ դարի ամերիկյան գաղութներում: 18-19-րդ դարերի ամերիկյան պիեսներն իրենց վրա բացահայտ կրում էին բրիտանական ազդեցությունը¹: Ամերիկյան դրամայի անջատումը բրիտանականից սկիզբ առավ 1800-ական թվականների սկզբին: Չնայած այդ բաժանումը աստիճանաբար խորանում էր, բայց և այնպես ամերիկյան պիեսների մեծ մասը շարունակում էին կրկնօրինակել բրիտանական մոդելները մինչև 20-րդ դարի սկիզբը: Այդ պատճառով որոշ քննադատներ պնդում են, որ բուն ամերիկյան դրաման ձևավորված չէր մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը (1914-1918թթ.): 19-րդ դարի վերջին ամերիկյան դրաման հստակ գնում է դեպի ռեալիզմ՝ լուսաբանելով կյանքի դաժան կողմերը, ստեղծելով ավելի իրական կերպարներ: Ամբողջ 20-րդ դարի ընթացքում ռեալիզմն այստեղ մնում է որպես գերակա ուղղություն թե՛ ռոբերտայան և թե՛ կատակերգության ժանրերում: Ռեալիզմը 20-րդ դարում շարունակում է լինել դրամատիկ դրսևորման առաջնային ձևը, անգամ, երբ փորձարարությունը դրամայի ոլորտում ավելի ու ավելի էր կարևորվում²:

20-րդ դարում ամերիկյան դրաման միջազգային ճանաչում է գրանցում՝ շնորհիվ Յուջին ՕՆԻԼի պիեսների, որոնք իրենց հոգեբանական խորքերով, մարդու ներքին կյանքը կերպարների միջոցով հետազոտելու տեսանկյունից ուշագրավ են: Այնպիսի անվանի ամերիկյան դրամատուրգներ, ինչպիսիք են՝ Յուջին ՕՆԻԼը, Թեննեսի Ուիլյամսը և Արթուր Միլլերը, հասնում են հոգեբանական ռեալիզմի նոր մակարդակի՝ անհատի, կերպարների և նրանց իրավիճակների միջոցով ներկայացնելով ամերիկյան հասարակությունն ընդհանրապես: Քանի որ դարն առաջընթաց էր ապրում, երևան էին գալիս մի շարք թեմատիկ խնդիրներ: Դրաման արձագանքում էր ավելի լայն սոցիալական խնդիրների, ինչպես, օրինակ, մարդու իրավունքները, նրա օտարացումը

¹ **Krasner, David,** A Companion to Twentieth-Century American Drama, USA, 2006, p. 28.

² Նույն տեղում, էջ 39:

հասարակությունից, տիրող բազմաբնույթ ճգնաժամերը, ինչպես նաև անհատի դիրքորոշումն այդ խնդիրների նկատմամբ:

Հետաքրքիր զարգացում է արձանագրում դրաման Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում (1914-1938թթ.): Առաջին աշխարհամարտի սկզբից ի վեր եվրոպական արդի դրամատուրգիայի զարգացումը և միտումները կանոնավոր կերպով դրսևորվում և ամրապնդվում են ամերիկյան բեմի վրա: Ամերիկյան դրամատուրգները միտված էին դեպի փորձարարությունը թե՛ դրամայի ոճի և թե՛ ձևազոյացման ոլորտներում՝ դրա հետ մեկտեղ պահպանելով սոցիալ-քաղաքական թեմատիկան: Եվ այդ փորձարարության արդյունքում արդեն սկզբնավորվեցին բուն ամերիկյան ավանդույթներն ու հիմքերը, որոնք ամրապնդվելով աստիճանաբար սկսեցին դուրս մղել բրիտանական ազդեցությունը³:

Առաջին խմբերից մեկը, որը նպատակադրվել էր զարգացնելու բուն ամերիկյան դրամատուրգիան, «Փրովինսթառնի թատերգակներ» խումբն էր՝ հիմնված 1915թ. Մասաչուսեթս նահանգի Փրովինսթառն քաղաքում: Սյուզան Գլասպելի «Մանրուքներ» (1916) պիեսն այդ խմբի առաջին գործերից է: Այստեղ ամենավառ անհատականությունը Յուջին ՕՆիլն էր՝ 1920-ականների ամենից ավելի փորձարար ամերիկացի դրամատուրգը: ՕՆիլի «Մազոտ կապիկ» (1922) պիեսը Ամերիկայում համարվում է առաջին էքսպրեսիոնիստական գործերից մեկը: «Մազոտ կապիկը» պատմում է աշխատանքից կրճատված նավաշինարար բանվորի կյանքի մասին, ով իրեն անպետքական է զգում: Նա իր ինքնության փնտրտուքի մեջ է: Եվ երբ գազանանցում մի մեծ անպոչ կապիկ է տեսնում, որոշում է ազատել նրան վանդակից միայն այն բանի համար, որ կործանվի կենդանու կողմից: 1920-30-ականները պիեսների առումով ամենաբեղմնավոր ժամանակաշրջանն է համարվում: Այսպես կոչված «փառավոր օրերի» ընթացքում 1920-30-ականների հանդիսատեսը դարձավ խորաթափանց և հուզիչ ամերիկյան դրամայի ականատեսը: Այդ շրջանում էր, որ Յուջին ՕՆիլը մեծ համբավ ձեռք բերեց իր հինգժամանոց պիեսներով՝ հագեցած հերոսների թաքնված հոգեբանական խնդիրների ցուցադրմամբ: 1936թ. ՕՆիլը առաջին ամերիկյան դրամատուրգն էր, ով արժանացավ Նոբելյան մրցանակի⁴:

³ **Bigsby, C.W.E.**, A Critical Introduction to Twentieth-Century American Drama, Vol.2, 1985, p.79.

⁴ **Dowling, R.M.**, Eugene O'Neill (A life in four acts), Yale University press, 2014, p. 369

Մեծ դեպրեսիայից առաջացած տնտեսական ճգնաժամի հետևանքով 1930-ականներին ստեղծված իրավիճակն ամերիկյան դրամայում առաջ բերեց ծայրահեղական միտումներ: Նկատվում էին աջաթևյան ուժերի գաղափարախոսական արտահայտություններ, ֆաշիզմի դրսևորումներ, մեկ այլ համաշխարհային պատերազմի վտանգ: Եվրոպական քարոզչամեքենան, որը գրականությունն ու արվեստն օգտագործում էր քաղաքական պրոպագանդայի համար, կյանքի կոչեց բանվոր դասակարգի մասին մի շարք պիեսներ: Այդ պիեսներից ամենահայտնին Քլիֆֆորդ Օդեթսի «Ձախլիկին սպասելիս» (1935) պիեսն է, որտեղ դիտարկվում է վերացական մտորումը կապիտալիզմի դրական և բացասական կողմերի մասին: Օդեթսը նաև գրել է 1930-ականների մտահոգություններն արտահայտող մի նուրբ պիես՝ «Արթնացիր և երգիր» (1935), որտեղ ներկայացնում է մարքսիստ պապիկի ինքնասպանությունը՝ ի նպաստ իր ընտանիքի նյութական բարօրության⁵:

Հետաքրքիր դրսևորում ունեցավ նաև հետպատերազմյան դրաման (1945-1960-ական թթ.): Երկրորդ աշխարհամարտի ընթացքում (1939-1945) դրաման աշխատում էր միևնույն ժամանակ խույս չտալ պատերազմական թեմայից, բայց ոչ էլ քարոզել այն: Պատերազմի ավարտից հետո թերևս երկու դրամատուրգներ իրենց գերիշխող տեղը գրավեցին հաջորդող 15 տարիների ընթացքում: Նրանք էին Արթուր Միլլերն ու Թեննեսի Ուիլյամսը: Ա.Միլլերը միավորեց ռեալիստական կերպարներն ու սոցիալական խնդիրները: Նրա հայտնի «Վաճառականի մահը» (1949) պիեսը ներկայացնում է մի շարքային աշխատավոր մարդու՝ Վիլլի Լոմանի կյանքի և մահվան պատմությունը: Միլլերի «Ծանր փորձություն» (1953) պիեսը պատմում է 17-րդ դարի Սալեմ վիուկի դատի մասին: Սա կարծես մի ինքնատիպ ակնարկ էր՝ ուղղված 1950-ականների «վիուկների որսի» դեպքերին, երբ սենատոր Ջոզեֆ Ռ.Մըք Քարթիի գլխավորությամբ հալածվում էին կոմունիստները: Թ.Ուիլյամսը Ամերիկայի ամենաքնարական դրամատուրգներից մեկն է, ով մեծ ներդրում ունեցավ պիեսների մեջ սոցիալական խնդիրներ առաջ քաշելու գործում: «Ցանկություն տրամվայ» (1947) պիեսում Հարավի կինը պայքարում է մարդկային վեհանձնության վերաբերյալ իր պատրանքները պահպանելու համար: Սակայն բանվորական դասին պատկանող նրա քրոջ ամուսինը պատռում է այն շղարշը, որով կինը թաքցնում էր իր կյանքի մասին ողջ դրամատիկ ճշմար-

⁵Abbotsen S.C.W., Masterpieces of 20th-Century American Drama, London-Greenwood press, 2005, p. 17.

տությունը: Ուիլյամսի «Կատուն շիկացած տանիքի վրա» (1955) պիեսը, որն արժանացավ Պուլիտցերյան մրցանակի, քննարկում է մի դժբախտ ընտանիքի կյանքն ու նրա կործանման պատճառները⁶:

Ռեալիզմը գերիշխող գրական ուղղություն մնաց նաև 1950-ականներին, երբ ուշադրության կենտրոնում հայտնվեց հասարակության «կորած մարդը»: Յ.Օ՛Նիլի ինքնակենսագրական պիեսը, որը վերնագրված է «Երկար օրվա ուղևորությունը դեպի գիշեր» (1956), շատ քննադատների կողմից գնահատվում է որպես գլոխգործոց, որն առաջին անգամ ներկայացվեց արդեն հեղինակի մահից հետո: Պիեսը ժամանակագրական սկզբունքով պատկերում է Թիրոն ընտանիքի մեկ օրվա իրադարձությունները, երբ ընտանիքի անդամներն անընդհատ բախվում են միմյանց հետ, անհույս պայքարում իրենց թերությունների և ձախողումների համար:

Իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում դարի երկրորդ կեսին մեկ այլ դրամատուրգ՝ Էդվարդ Օլբրին, որի՝ 1950-ականների վերջին գրված կիսաաբսուրդիստական գործերը՝ սկսած «Գազանանոցային պատմությունը» (1959) պիեսից, ճշգրիտ արտացոլում են ամերիկացիների հոգեբանական ներքին լարվածությունը: Օլբրի «Ռ՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» (1962) պիեսը պատկերում է մի ամուսնական զույգի լարված հարաբերությունները, ովքեր մշտապես միմյանց հանդիմանում են փոխադարձ մեղադրանքներով և վիրավորանքներով:

Քաղաքացիական իրավունքների համար մղված շարժումները և 1960-ականների հակապատերազմյան իրադարձությունները զարկ տվեցին ամերիկյան դրամայի զարգացման մի նոր փուլի, երևան եկան նոր տաղանդավոր դրամատուրգներ: Փորձարարական թատերական ընկերությունները, այդ թվում՝ «Կյանքի թատրոնը» և «Բաց թատրոնը», փորձարարությունն իրականացնում էին շարժուն խմբերի միջոցով, երբ դերակատարներն ու հանդիսատեսը գործում են նույն ֆիզիկական տարածքում: Ժան-Կլոդ Վան Իթալիի «Օձը» պիեսը (1968), որտեղ վերացվում են ֆիզիկական բաժանարար «գծերը» դերասանների և հանդիսատեսի միջև՝ մարմնավորելով աստվածաշնչյան պատմությունները, պատկերելով դրանք արդի իրադարձությունների միջոցով: Մեգան Թերրիի պիեսները, ինչպես, օրինակ, «Հանդարտվի՛ր, մայրի՛կ»-ը (1965), փորձարարություն էր անում ավանդական դրամատիկական կառուցվածքով: Երբ դերասանը փոխակերպվելով խաղում էր պիեսում մի

⁶ Նույն տեղում, էջ 76-77:

քանի տարբեր դերեր՝ կապակցելով դրանք, անցնելով մեկից մյուսը: 1970-ականների սկզբին ամերիկյան թատրոնում հաստատվեց պոստմոդեռնիզմը: Դա ավելի շուտ բեմական արտահայտչամիջոց էր, քան պիեսների բովանդակային նյութ, երբ թատերագրության մեջ առաջնայինը դառնում է պիեսի բազմաթիվ ենթաշերտերի բացահայտումը: Մասնավորապես նման մոտեցումն արդյունավետ կիրառվեց ֆեմինիստ դրամատուրգներ Մարիա Իռեն Ֆորների և Վենդի Վասերշտայնի կողմից: 1980-ականներին ստեղծագործող մի շարք ամերիկյան դրամատուրգներ արդեն ամբողջովին առնչվում էին արդի խնդիրներին, այդ թվում՝ ՁԻԱՀ-ով հիվանդ մարդկանց խնդիրներին, Արևմուտքի քաղաքակրթությունը ֆեմինիզացնում է Արևելքը, ընտանեկան դրամաներ և այլն: Այս ժամանակաշրջանի շատ պիեսներ պսակվեցին հաջողությամբ՝ արժանանալով բազմաթիվ մրցանակների, այդ թվում՝ Պուլիտցերյան պարգևների:

Այսպիսով, 20-րդ դարի 30-60-ականների ամերիկյան դրաման գրանցեց իր զարգացումը՝ շնորհիվ այնպիսի խոշորագույն և անվանի ամերիկյան դրամատուրգների, որոնց թվում իրենց փայլուն ստեղծագործական մոտեցումներով հանդես եկան Յուջին Օ՛Նիլը, Թեննեսի Ուիլյամսը, Արթուր Միլլերը, Էդվարդ Օլբին: Երանց պիեսներում ներկայացվում են միջակայի ու հոգեբանական ասպեկտները, սոցիալական, հասարակական ու քաղաքական տեսանկյունները, օտարացման խնդիրները և անհատի դրաման ընդհանրապես: Իրենց պիեսների կերպարների և իրավիճակների միջոցով վերոնշյալ դրամատուրգներին հաջողվել է ներկայացնել ու բացահայտել քննվող ժամանակաշրջանի ամերիկյան հասարակությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

19-րդ դարի վերջերին ամերիկյան դրաման հստակ կերպով շրջվում է դեպի ռեալիզմը՝ լուսաբանելով կյանքի դաժան կողմերը, ստեղծելով ավելի իրական կերպարներ: 20-րդ դարի ընթացքում ռեալիզմն այստեղ գերիշխող ուղղություն մնաց թե՛ ողբերգության և թե՛ կատակերգության ժանրերում: Ամերիկյան դրաման նվաճեց միջազգային ճանաչում՝ շնորհիվ այնպիսի անվանի ամերիկյան դրամատուրգների, ինչպիսիք են՝ Յուջին Օ՛Նիլը, Թեննեսի Ուիլյամսը, Արթուր Միլլերը, Էդվարդ Օլբին, որոնց պիեսներում ներկայացվում են միջակայի, հոգեբանական ասպեկտներ, սոցիալական, հասարակական ու քաղաքական տեսանկյուններ, օտարացման խնդիրներ և անհատի դրաման ընդհանրապես: Իրենց պիեսների կերպարների և իրավիճակների միջոցով

դրամատուրգներին հաջողվել է ներկայացնել ու բացահայտել քննվող ժամանակաշրջանի ամերիկյան հասարակությունը:

Բանալի բաներ - ամերիկյան դրամա, դրամատուրգ, զարգացում, պիեսներ, կերպարներ, ռեալիզմ, միֆական ու հոգեբանական թեմաներ, սոցիալական, հասարակական ու քաղաքական տեսանկյուններ, օտարացման հիմնահարց, անհատի դրամա, Յ. Օ'Նիլ, Թ. Ուիլյամս, Ա. Միլլեր, Է. Օլբի:

РАЗВИТИЕ АМЕРИКАНСКОЙ ДРАМЫ В 30-60 ГОДАХ 20-ГО ВЕКА (Ю. О'НИЛ, Т. УИЛЬЯМС, А. МИЛЛЕР, Э. ОЛБИ)

ХОСРОВ ХАНМОРАД ДАРАБИ

В конце 19-го века американская драма обращается к реализму, освещающая жестокие стороны жизни, создавая более реальных героев. В течение 20-го века реализм оставался лидирующим направлением и в трагическом и в комедийном жанрах. Американская драма завоевала всемирное признание благодаря таким известным драматургам как: Юджин О'Нил, Тенниси Уильямс, Артур Миллер, Эдвард Олби, в пьесах которых представлены мифические и психологические аспекты, социальные общественные и политические ракурсы, проблемы отчуждения и драма личности в целом. Посредством персонажей и ситуаций драматургам удалось представить американское общество данной эпохи.

Ключевые слова - американская драма, драматург, развитие, пьесы, персонажи, реализм, мифические и психологические темы, социальные, общественные и политические ракурсы, проблемы отчуждения, драма личности, Ю. О'Нил, Т. Уильямс, Э. Олби.

AMERICAN DRAMA FROM 1930 TO 1960
(E. O'NEILL, T. WILLIAMS, A. MILLER, E. ALBEE)

KHOSROW KHANMORAD DARABI

By the end of the 19th century American drama was moving steadily toward realism, elucidating the cruel sides of life and creating more credible characters. Realism remained the dominant trend of the 20th century in both comedies and tragedies. American drama achieved international recognition thanks to such well-known towering american playwrights as Eugene O'Neill, Tennessee Williams, Arthur Miller, Edward Albee. In their plays they present and reveal different mythical and psychological aspects of life, varying views on social, public and political matters, they also expound on issues concerning the theme of the subconscious, of alienation, and the high drama of individuals in general. These playwrights with the help of characters, settings, incidents and so on depict various facets of American society of their time.

Key words - American drama, playwright, development, plays, characters, realism, mythical and psychological aspects, social, public and political issues, theme of alienation, drama of individual, E. O'Neill, T. Williams, A. Miller, E. Albee.

ԱՐՄՈՒՐԴԻ ԵՎ ՕՏԱՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԷԺԵՆ ԻՆՆԵՍԿՈՅԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅՈՒՑ

ՖԱՐՆԱԶ ՍԵՅԵԴ ՄՈՂԱՄՄԱԴՇԱՐԻՖ ԹԱՀԵՐԵԶԱԴԵՆՈՋԱԹԻ (ԻՐԱՆ)

«Աբսուրդի թատրոն» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է թատերական քննադատ Մարտին Էսլինը՝ այն դարձնելով իր գրքի խորագիրը: Վերջինիս կողմից առաջարկված «Աբսուրդի թատրոն» եզրույթը բնութագրում է առավելապես 1950-ական թվականների ֆրանսիացի դրամատուրգների¹: Այսպիսով, Աբսուրդի թատրոնը կամ Աբսուրդի դրաման 20-րդ դարի 50-ականների արևմտաեվրոպական թատրոնի և դրամատուրգիայի աբսուրդիստական ուղղություն է համարվում:

«Աբսուրդ» հասկացությունը, որը գալիս է էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունից (Ալբեր Բամյու, Ժան Պոլ Սարտր), աբսուրդի դրաման դարձնում է իրականության հիմնական հատկանիշը, որը հանրային ճգնաժամի պատճառով զրկված է ներքին իմաստից և պատճառահետևանքային կապերից: Տվյալ ուղղության պիեսներում աշխարհը ներկայացված է անիմաստ, տրամաբանությունից զուրկ փաստերով, գործողություններով և ճակատագրերով լի: Այս եզրույթը ծագել և ամենավառ արտահայտությունն է գտել ռումինա-ֆրանսիական դրամատուրգ Էժեն Իոնեսկուի «Ճաղատ երգչուհին» և իռլանդացի գրող Սեմուել Բեքքեթի «Գոդոյին սպասելիս» պիեսների փարիզյան առաջին ներկայացումներից հետո: Դրանցում դրսևորվել են աբսուրդի դրամայի հիմնական գծերը՝ զրոտեսկային կոմիկական միջոցներով արտաքին ձևերի (նաև լեզվական) կեղծության ու անիմաստության պատկերումը, որոնց մեջ է ընթանում «միջին մարդու» առտնին կեցությունը, և որոնցով նա փորձում է մեկուսանալ մարդկային ճակատագրի անելանելի ողբերգությունից, ինչպես նաև այնպիսի շոկային վիճակների մետաֆորիկ պատկերումների, որոնք առաջանում են մահվան ու դաժանության նկատմամբ կյանքի արժեքների անիմաստության գիտակցումից²:

Աբսուրդը դրամատուրգիայում կյանքի իմաստազուրկ և զավեշտական

¹ **Esslin M.** The Theatre of the Absurd. London: Penguin/Pelican, 1968. p. 2-3.

² **Vaughan J.** Drama A to Z: A Handbook. Ungar Pub co. New York, 1980, p. 42.

իրավիճակների պատկերումն է: Շեշտադրելով մարդկային վարքի ու կենսափորձի չպատճառաբանվող և անտրամաբանական դրսևորումները՝ այս ուղղության դրամատուրգներն իրենց ստեղծագործություններում հաճախ իրադարձությունների պատկերման մեջ միտումնավոր չափազանցնում են անտրամաբանականն ու զավեշտականը, դիմում լեզվի միտումնավոր աղճատումների: Սակայն արսուրդը նաև էկզիստենցիալիզմի գրականության հիմնական մոտիվներից է, ուստի փորձել ենք այստեղ այդ հասկացությունը մեկնաբանել էկզիստենցիալիզմի այլևայլ մոտիվների համատեքստում: Մարդու օտարում հասարակությունից, ինքնաօտարում, անհատի ազատություն, կյանքի՝ որպես մահվան սպասում: Ահա այս մոտիվների համատեքստում կեցության արսուրդի էկզիստենցիալիստական ընկալումը թվում է օրինաչափ: Էկզիստենցիալիզմի գրականության մեջ այս մոտիվներն արտահայտվում են միասին՝ բացահայտելով մեկը մյուսին: Էկզիստենցիալիզմն արսուրդն ընկալում է իբրև մարդու գոյության անիմաստության ու անհեթեթության վերապրում, որն արտահայտվում է մարդկային հոգու տազնապներով և սարսափի զգացումով³:

20-րդ դարի սկիզբը համաշխարհային ճգնաժամի, պատերազմների ու հեղափոխությունների ժամանակաշրջան էր, այն ցնցել, տեղաշարժել էր գոյության հիմքերը, իմաստագրկել կյանքը: Այդ իմաստագրկումը՝ որպես արսուրդ, դրսևորվում է նաև 20-րդ դարի գրական այլ ուղղություններում, ինչպես օրինակ, դադաիզմի գրականության, մասամբ նաև սյուրռեալիզմի գրականության մեջ: Այս ուղղությունները, ինչպես և էկզիստենցիալիզմը, գոյության համընդհանուր իմաստագրկման դրսևորումներ էին: Արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ձևավորված արսուրդի գրականությունը սկիզբ է առնում դարասկզբի գրական ուղղություններից և էկզիստենցիալիզմի գրականությունից, բայց, ի տարբերություն էկզիստենցիալիզմի, արսուրդի թատերգությունը բացարձակացնում է արսուրդը՝ չափազանցնելով և արսուրդի վերածելով էկզիստենցիալիզմի մոտիվները:

Էկզիստենցիալիզմի փիլիսոփայության և գրականության առանցքային խնդիրը գոյության և էության խնդիրն է: Մարդը լքված է, նա հենարան չունի ո՛չ իր ներսում, ո՛չ էլ արտաքին աշխարհում: Այդ լքվածությունն ազատություն է տալիս նրան: Մարդն ազատ է կամ ավելի ճիշտ՝ դատապարտված է ազատ լինելու: Հենց այդ լքվածությունն է, որ ուղղորդում է մարդու ընտրությունը:

³ Esslin., M., The Theater of the Absurd, CA, Vintage (3rd edition), 2004, p. 201.

Այսպիսին է ազատության էկզիստենցիալիստական ընկալումը: Էկզիստենցիալիզմի մյուս մոտիվը դեպի ոչինչը տանող վախն է, տագնապը կամ ահագնացող անհանգստությունը: Կիերկեգորը դրանք համարում է մարդկային գոյի ամենից էական, ազդեցիկ և ամենաբնորոշ տարրերը: Մարդը լքված է և ազատ, քանի որ Աստված գոյություն չունի. Աստծո բացակայությունը կեցությունը լցնում է դատարկությամբ, այն դարձնում արքայազնի:

Էկզիստենցիալիզմի կարևորագույն մոտիվները հենց կեցության անիմաստությունն ու անհեթեթությունն են: Մարդկային գոյությունը, ըստ էկզիստենցիալիզմի, անբացատրելի է և անիմաստ: Մարդն աշխարհ է նետված պատահականության բերումով: Այստեղից էլ բխում են էկզիստենցիալիզմի մյուս մոտիվները՝ հուսալքությունը, արքայազնի ու նիհիլիզմը: Ըստ էկզիստենցիալիստների՝ մարդն օտարված է հասարակությունից, բյուրոկրատական հաստատություններից, քաղաքական կուսակցություններից, խոշոր առևտրային ընկերություններից, կրոնական կազմակերպություններից, որոնք անսահման իշխանության անդամ աղբյուրներ են: Մենք մեզ դրանց մասնիկը չենք զգում, ոչ էլ կարող ենք տեղեկանալ դրանց գործունեության մասին: Օտարումն իր ներգործությունն է թողել սոցիալական ու աշխատանքային հարաբերությունների վրա, թափանցել անձնային և սիրային հարաբերություններ⁴:

Էկզիստենցիալիստական այս հիմնադրույթներն իրենց դրսևորում են գտել նաև արքայազնի թատերգության մեջ: Էժեն Իոնեսկոն արքայազնի թատերգության հիմնադիրներից և խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է: Նա ևս իր էսսեներում խոսում է Աստծո բացակայության, գոյության անիմաստության ու անհեթեթության մասին: Մարդկանց օտարվածության մոտիվը վերածվում է մարդկային համակեցության արքայազնի, մարդկային հաղորդակցման անհնարինության, իսկ կյանքը՝ որպես մահվան սպասում, բացարձակ իմաստազրկվում է: Արքայազնի թատերգությունը չափազանցում, սրում է էկզիստենցիալիզմի գաղափարները: Էժեն Իոնեսկոյի ստեղծագործական ուղին սկսվում է 1950 թ., երբ գրում և բեմադրում է իր առաջին՝ «Ճաղատ երգչուհին» պիեսը: Սա ըստ էության արքայազնի թատերգության առաջին ստեղծագործությունն է: Իոնեսկոն ինքը համաձայն չէր «արքայազնի թատրոն» բնորոշման հետ և այն անվանում էր «պարադոքսի թատրոն»՝ նկատի ունենալով, որ իր պիեսներն

⁴ Sartre J.P., Being and Nothingness, Hazel E. Barnes (Translator), Washington DC, (Washington Square Press.Reprint edition), 1993, p. 87-88.

⁵ Sartre J.P., Essays In Existentialism, NY. Citadel Press, Reissue edition, 2000, p. 149.

արտահայտում են կյանքի պարադոքսալ կողմերը: Ստեղծագործության հերոսները երկարատև զրույցից հետո պարզում են, որ ամուսիններ են: Այստեղ նա ծայրահեղ սրում է միջանձնային, սիրային հարաբերություններում մարդկանց օտարվածության էկզիստենցիալիստական մոտիվը: Իոնեսկոյի հայտնի պիեսներն են՝ «Դասը», «Աթոռները», «Նոր վարձակալը», «Ռնգեղջյուրը», «Արքան մեռնում է»: «Արքան մեռնում է» պիեսում արքայի հետ մեռնում է նաև ամբողջ աշխարհը. ահա և էկզիստենցիալիզմի մահվան՝ որպես միակ ճշմարտության, մոտիվի մի չափազանցում⁶:

Մարդը Իոնեսկոյի պատկերած հասարակության մեջ առանձնանում է համակերպությամբ, որն աբսուրդի է հասնում: Դրամատուրգն այդ համակերպումը պատկերում է իբրև աբսուրդ: Դրա լավագույն օրինակը «Ժակ կամ հպատակություն» պիեսն է: Սակայն պետք է նշել, որ Իոնեսկոյի պիեսները զուրկ են գաղափարախոսությունից: Այդ տեսանկյունից ոչ ոք չէր կարող քննադատության ենթարկել նրան, սակայն հենց այդ գաղափարախոսության բացակայության պատճառով էլ նրան անվանում էին անարխիստ:

Իոնեսկոյի պիեսները քննադատության են ենթարկում բուրժուական հասարակության միջանձնային հաղորդակցման սպառողական վիճակը: Մարդկային փոխհաղորդակցումն Իոնեսկոյի դրամաներում բավական բարդացված է, նույնիսկ անհավանական: Կարևոր է նկատել, որ դրամատուրգի պիեսների գործող անձինք անհատականություններ չեն, նրանք չունեն բնավորության կայուն և խառնվածքի անհատական գծեր, ուստի հետևողական չեն իրենց արարքների և պահվածքի մեջ: Հեղինակի կարծիքով պատմությունը մարդուն արմատապես փոխել է, ուստի պետք է վերանայել գործող անձանց ասպարեզ հանելու ավանդական եղանակները: Իոնեսկոն ասպարեզ է բերում հակասական, իրապես պարադոքսալ կերպարներ՝ մարդ արարածի անկանխատեսելիությունն ընդգծելու միտումով: Նրա պիեսները հաճախ համարվել են դասական, հոգեբանական թատրոնի և նույնիսկ էկզիստենցիալիստական թատրոնի ծաղրանմանակումներ: Իոնեսկոյի հերոսները խորապես միայնակ են, նրանց շրջապատում է անհեթեթությունը, որին նրանք արձագանքում են ջղագրգռությամբ ու տագնապներով, քանի որ գտնվում են բացարձակ անիրազեկության մեջ: Նրանց մտահոգում է իմացության պակասը: Նրանք չունեն ներքին վստահություն, քանի որ չունեն արտաքին կողմնորո-

⁶ Ionesco E. Notes and Counter Notes: Writings on the Theatre. Watson D, trans. New York: Grove, 1964, p. 29.

շիջներ: Նրանք բացարձակապես օտարված կերպարներ են, որոնք որևէ առնչություն չունեն ոչ մեկի և ոչնչի հետ: Գործող անձինք զուրկ են մտքերից, տրամաբանությունից, ուստի չեն կարողանում նաև հաղորդակցվել: Այսպես, «Դասը» պիեսում ուսուցիչն ունակ չէ սովորեցնելու իր աշակերտին, իսկ աշակերտն ունակ չէ սովորելու, քանի որ չկա անցյալ, և չկա հիշողություն, ուստի գիտելիքն ապարդյուն է, իսկ ուսուցման պրոցեսը՝ որպես հաղորդակցում անհնար: Իոնեսկոյի պիեսների հերոսները չեն կարողանում արտաքին աշխարհի հետ որևէ կապ հաստատել⁷:

Դրամայի գործող անձինք մարդիկ են, որ չունեն որևէ բնութագիր, ծագում, նրանք միայնակ են, և նրանց մահը բացարձակ անհետացում է, դատարկության հանգող վիճակ: Կերպարները զուրկ են նաև կրոնական աշխարհայացքից: Իոնեսկոյի երկնքում Աստծո համար տեղ չկա: Դրամատուրգի կերտած հերոսները զուրկ են զգացմունքներից, չեն դրսևորում ո՛չ անբարյացակամություն, ո՛չ եռանդ, ո՛չ վրդովմունք: Նրանք ոչ թե պիեսի գործող անձինք են, այլ մասնակիցներ, նույնիսկ կարելի է ասել՝ դիտորդներ, սոսկ մարդկային ձայնի արձագանքներ կամ անգիտակից պատասխանողներ: Տպավորություն է ստեղծվում, որ նրանք՝ որպես գեղարվեստական կերպար, անճանաչելի են: Նրանք զրոյական կերպարներ են⁸:

«Աթոռներ» պիեսում որպես գործող անձ Իոնեսկոն ասպարեզ է հանում մարդկային բացակայությունը: Դռները բացվում են, և ներսուղուրս են անում մարդիկ, որոնք իրապես անտեսանելի են, նրանց համար էլ տարեց ամուսինները հենց բեմում աթոռներ են շարում: Հետաքրքիր է, որ ստեղծագործության գործող անձինք՝ ծերունի ամուսինները, անհեթեթություններ են դուրս տալիս և արտաքին աշխարհից փորձում են որսալ ինչ-որ ձայներ: Դրամատուրգը, միտումնավոր աղճատելով կերպարի ֆիզիկական նկարագիրը, նրա գոյությունը դարձնելով թերի, նպատակ ուներ պիեսի գործող անձանց դարձնել անիրական և դրան հակառակ իրական դարձնել անձանց, ովքեր իրականում գոյություն չունեն: Այս եղանակով Իոնեսկոն ստեղծում է նաև ձայնային կերպարներ⁹:

Դրամատուրգը կերտել է ոչ միայն սոցիալական նշանակության տեսակետից անկարևոր, այլև պիեսում որևէ գործառույթ չկատարող կերպարներ՝

⁷ **Lista G.** "Ionesco, Eugene." In: Le Dictionnaire Encyclopedique du Theatre. Corvin M, ed. Paris: Bordas, 1991, p. 47.

⁸ Նույն տեղում, էջ 49:

⁹ Նույն տեղում, էջ 51:

հրշեջի, սպասուհու, դոնապանի. նրանք պիեսում կանգնած չեն որևէ խնդրի առաջ, նրանց ներկայությունը բովանդակակազմում է անհեթեթ, տրամաբանությունից զուրկ դատողությունների միջոցով: Նրանք կարծես տիեզերքից էլ դուրս են: Այսպիսով, Իոնեսկոյի պիեսներում ներկայացված են փոփոխական կերպարներ, այլ կերպ ասած՝ դրամատուրգի պիեսներում գործող անձի ստեղծման իրողությունը բարդ մեխանիզմին զուգընթաց միանգամայն նորարարական է, և կերպարները նման չեն դասական դրամատուրգիայի կերպարներին, որոնք ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական բնութագրի տեսանկյունից հստակ են¹⁰:

Լեզուն Իոնեսկոյի պիեսներում միտումնավոր աղավաղված է այն աստիճան, որ չի կատարում մարդկային հաղորդակցման իր գործառույթը: Էժեն Իոնեսկոն այս առումով անգերազանցելի է. նրա լեզվական զարգացումները փայլում են սրամտությամբ ու նորարարությամբ: Իոնեսկոյի դրամաների ոճական առանձնահատկություններից մեկն էլ անմտությունների, անտեղի գործածվող դարձվածքների ու ասացվածքների անհեթեթ մեջբերումներն են: Դրանով հեղինակը ծաղրում է լեզվական կաղապարները. լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլև իմաստ բովանդակող իրողություն: Հետևելով Անտոնեն Արտոյին՝ նա իր պիեսներում լեզուն հասցնում, հավասարեցնում է սյուժեի, նրան «հանձնարարում» սյուժեի գործառույթ և դարձնում կերպար: Լեզուն և մարդը գտնվում են կիրառվող և կիրառող հարաբերության մեջ, Իոնեսկոն շրջում է այդ հարաբերությունը¹¹:

Այսպիսով, Իոնեսկոյի դրամատուրգի նպատակն էր ստեղծել հակազաղափարական, հակազեղազիտական, հակահոգեբանական, հակաթեմատիկ թատրոն: «Տուցադրող» թատրոնը պատկերում է մարդկային իրավիճակներ, գոյության խնդիր, պայքար ու մահ և չի խուսափում նաև այնպիսի երկրորդական գործոններից, ինչպիսիք են սոցիալական փաստերը: Իոնեսկոյի աբսուրդի թատրոնը նպատակ ուներ ցույց տալու գաղափարախոսությունների, փիլիսոփայական համակարգերի և մարդուն բացատրել փորձող հոգեբանության անկարողությունն ու անիմաստությունը:

¹⁰ **Vikandra M.**, Eugene Ionesco. Hashemi.P.(translator).Tehran.Mandegar Press, 2004, p 60.

¹¹ **Coe, R. N.**, Eugene Ionesco, NY, New York Press, 1976, p. 246.

ԱՄՓՈՓՈՒՄ

Էժեն Իոնեսկոն արսուրդի թատերգության հիմնադիրներից և խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է: Իոնեսկոյի հերոսները խորապես միայնակ են, նրանց շրջապատում է անհեթեթությունը, որին նրանք արձագանքում են ջղագրգռությամբ ու տագնապներով, քանի որ գտնվում են բացարձակ անիրազեկության մեջ: Նրանք չունեն ներքին վստահություն, քանի որ չունեն արտաքին կողմնորոշիչներ: Նրանք բացարձակապես օտարված կերպարներ են, որևէ առնչություն չունեն ոչ մեկի և ոչնչի հետ: Գործող անձինք զուրկ են մտքերից, տրամաբանությունից, ուստի չեն կարողանում նաև հաղորդակցվել: Իոնեսկոն իր էսսեներում խոսում է Աստծո բացակայության, գոյության անիմաստության ու անհեթեթության մասին: Մարդկանց օտարվածության մոտիվը վերածվում է մարդկային համակեցության արսուրդի, մարդկային հաղորդակցման անհնարինության, իսկ կյանքը՝ որպես մահվան սպասում, բացարձակ իմաստազրկվում է:

Բանալի բաներ - Էժեն Իոնեսկո, դրամատուրգ, արսուրդ, արսուրդի թատրոն, պիես, օտարացում, լքվածություն, կերպարներ, հաղորդակցման բացակայություն:

ПРОБЛЕМЫ АБСУРДА И ОТЧУЖДЕНИЯ В ДРАМАТУРГИИ ЭЖЕНА ИОНЕСКО

ФАРНАЗ СЕЙЕД МОХАММАДШАРИФ ТАХЕРЕЗАДЕХОДЖАТИ

Эжен Ионеско является основателем и одним из крупнейших представителей театра абсурда. Герои Ионеско совершенно одиноки, их окружает абсурд, на который они реагируют напряжением и тревогой, поскольку находятся в абсолютном неведении. У них нет внутренней уверенности, так как они не имеют внешних ориентиров. Это отчужденные персонажи, у которых нет связи ни с кем и ни с чем. Действующие лица лишены мыслей, логики, поэтому не могут общаться. Ионеско в своих эссе говорит об отсутствии Бога, бессмысленности существования. Мотив человеческого отчуждения превращается в абсурд человеческого сосуществования, в невозможность человеческого общения, а жизнь как ожидание смерти абсолютно лишается смысла.

Ключевые слова – Эжен Ионеско, драматург, абсурд, театр абсурда, пьеса, отчуждение, отверженность, персонажи, отсутствие общения.

ABSURDITY AND ALIENATION ISSUES IN EUGENE IONESCO'S DRAMA

FARNAZ SEYED MOHAMMADSHARIF TAHEREZADEHOJATI

Eugene Ionesco is one of the foremost playwrights associated with the creation of the Theatre of the Absurd. Ionesco's characters are extremely lonely, confined to absurdity. Being completely ignorant of this, these characters respond to it with stress and anxiety. They lack inner confidence, as they have no external landmarks. They are absolutely alienated characters having nothing to do with anyone or anything. These characters cannot communicate as they are deprived of thoughts and logic. Ionesco writes about the non-existence of God and the meaninglessness and absurdity of human existence in his essays. The motive of human alienation becomes the absurdity of human existence and the impossibility of human communication, moreover life summons to nothing but waiting for death, and thus turns up to be absolutely meaningless.

Key words - Eugene Ionesco, playwright, absurd, the theatre of the absurd, play, alienation, abandonment, characters, absence of communication.

**ԿԱԼՎԻՆԻՍԱԿԱՆ ՊՈՒՐԻՏԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ
ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ. ՆԱԹԱՆԻԵԼ ՀՈԹՈՐՆ
(1800/4-1864)**

ՄՈՎԱՄՄԱԴ ՄՈՒԹԱՐԻ ՇԱՀԲԱԶԻՌԱԴ (ԻՐԱՆ)

16-17-րդ պուրիտանական դարաշրջանները համարվում են կրոնական բարեփոխական շարժումների ժամանակաշրջան: Պուրիտանիզմն արագ տարածվող կրոնական շարժում էր, որն ամրապնդվել էր բրիտանական կղզիներում, անգլիական ակերից դուրս՝ անգլիական գաղութներում: Պուրիտանական ներգաղթյալների ներթափանցումն Ամերիկա առաջ բերեց նոր իրավիճակներ ու հանգամանքներ: Վերջիններս հիմնադրեցին Ամերիկյան կալվինիստական պուրիտանիզմն իր բոլոր դոգմաներով ու նախապաշարումներով, որոնք ենթադրում էին խիստ, կրոնական վարքագիծ և պահվածք: Նոր Անգլիայի պուրիտաններն Ամերիկայում սկսեցին լայնորեն տարածել կալվինիստական-պուրիտանականության ուսմունքներն ու դրույթները, որոնք տեղ գտան կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում և ամերիկյան գրականության մեջ:

Կալվինիստական-պուրիտանականության ուսմունքների ազդեցությունն ամերիկյան գրականության վրա ակնհայտ է, և այն առանցքային տեղ է զբաղեցնում ամերիկյան գաղութարար գրականության մեջ, որի ազդեցությունը կարելի է գտնել մշակույթին ու գրականությանն առնչվող գրեթե բոլոր դրսևորումներում: «Երբ պուրիտանները ներթափանցեցին Ամերիկա, նրանց գաղափարները մի շարք գորղների համար դարձան գեղարվեստական ստեղծագործություններ կերտելու խթաններ ու ազդակներ»¹:

Իրավամբ, անվիճելի է պուրիտանականների ունեցած խոր ազդեցությունն ամերիկյան մշակույթի և գրականության վրա: Պարզ խոսքը համարվում էր բարձր գրական արժեք պուրիտանական հասարակության համար: Պերճախոս և գովերգող-փառաբանող ոճաբանությունը կասկածելի էր, ինչպես նաև կեղծը, խարդախը և գունազարդումը: Զգայական փոխաբերություններից և պատկերներից զգացվում է, որ գրական անալոգներն ընկալվում և բխում են անգլիականականների և կաթոլիկների կոապաշտությունից ու ծիսական պեր-

¹ **Queen, Edward, L., III.** “ Calvinistic Puritanism” Encyclopedia Of America Religion History. Rev.ed. Ed.Edward L. QueenII, Stephen R. Prothero, and Gardiner H. Shattuk, Jr.Vol.II. New York: Facts on File, 2001, p. 211.

ճանքներից: «Նկարագարոված կամ պատկերավոր քարոզները» զգվանք էին առաջ բերում, քանի որ նման էին ներկված պատուհանների, որոնք ստվերում էին թափանցիկության ու ճշմարտության իրական լույսը, իսկ «իմաստության խոսքերն» արտոնյալ էին «խոսքերի իմաստության» նկատմամբ: Այս պարզ ոճը հստակ էր, պատշաճ, համաչափ և ազդեցիկ: Մինչդեռ գործի էին դրվում հռետորական միջոցներ՝ Աստվածաշնչի արտոնված օգտագործմամբ, ինչպես նաև այլաբանությունների և անալոգների, համեմատությունների և մետաֆորների կիրառմամբ, ռիթմիկ և ձևական շարահյուսությամբ»: Այնուամենայնիվ, պուրիտանական շատ գրողներ կիրթ ու գրագետ էին, ունեին պարզ գրելաոճ, զուսպ էին, հմուտ ու բանիմաց²:

Կալվինիստական-պուրիտանականության գաղափարական ու բարոյախրատական դրույթներն իրենց ազդեցությունն են ունեցել Նաթանիել Հոթորնի (1800/4-1864) ստեղծագործական ուղու և գրական ոճի վրա: Մեծ է նրա դերն ամերիկյան գրականության ոլորտում, և նրա թողած ժառանգությունն ունի իր արժեքավոր և առանձնահատուկ տեղը համաշխարհային գրականության էջերում:

Ն.Հոթորնը լույս աշխարհ էր եկել և դաստիարակվել Սալեմում՝ Մասաչուսեթսում, պուրիտանական միջավայրում, հետևաբար դրանով են պայմանավորված նրա ստեղծագործությունների վրա կալվինիստական-պուրիտանական ազդեցությունները: Կալվինիստական-պուրիտանիզմի ուսմունքները, պուրիտանական ժառանգությունն ու ավանդույթները, գաղափարախոսություններն ու մտքերը, այդ թվում՝ բուն մեղքի և հավատքի հիմնավորման դոկտրինան, թվում են անհարմար պարադոքսալ: Նման պարադոքսները Հոթորնի վեպերի ու պատմվածքների համար թեմա են ծառայել՝ դրսևորվելով նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում:

Նա իր ստեղծագործություններում դիտարկում էր պուրիտանական գաղափարների ու մտքերի և մարդկային էության միջև կապի ստեղծումը: Կիրառելով մարդկային բնավորության մի շարք հատկանիշներ ու դրսևորումներ, ինչպիսին էր մենությունը, այդ կերպ նա ի ցույց էր դնում իր զգայական վերաբերմունքը պուրիտանականության նկատմամբ: Հոթորնին մեծապես հետաքրքրում էր Սալեմի պատմությունը, և թե ինչ էր տեղի ունենում այնտեղ պուրիտանների ղեկավարության՝ նրանց գերակայության օրոք: Նա փորձում

² Miller, Perry. "The Puritan Way of Life." *The Puritans: A Sourcebook of Their Writings*. New York: Harper, 1938. Rpt. in Waller, p. 35.

էր իր գրական ստեղծագործությունների միջոցով ներկայացնել պորիտանականների պատմությունը: Այն, ինչ նրան հաջողվում էր անել, դա իր իսկ սեփական պորիտանական արմատների ժառանգականության օգնությամբ էր: Ասվածի վառ օրինակներն են երկու հիմնական փաստարկները. առաջինն այն է, որ նա եղել է պորիտանական ընտանիքի շառավիղ, ով ականա ապրում էր այդ պայմանների ներքո և դրոյթներով: Իսկ երկրորդն այն էր, որ գրողն ունեցել էր մի պապիկ, ով անվերապահորեն ծառայել էր պորիտանական ավանդույթներին: Այս խնդիրներին անդրադառնալու պատճառներից մեկը, որ Հոթորնը պորիտանական թեմաներ էր ընտրում իր ստեղծագործությունների համար, կարող է համարվել նաև այն հանգամանքը, որ վերջինս պատասխանատվություն և մեղքի զգացում էր ապրում այն ամենի համար, ինչ իր նախնիներն արել էին³:

Հոթորնն այնպիսի գրող էր, ով կրել է նաև մարդկային կյանքի այլ ոլորտների հետ կապված շատ ազդեցություններ: Այդ բոլոր ազդեցությունների թվում պետք է նշել նաև Ջոն Կալվինի և նրա ուսմունքի ազդեցությունը գրողի վրա: Ջոն Կալվինը ֆրանսիացի աստվածաբան և կրոնական ռեֆորմատոր էր (1509- 1564), քարոզիչ, ում ուսմունքների հիմքում ընկած էր փիլիսոփայությունը, որն ավելի ուշ կոչվեց Կալվինիզմ:

Ն. Հոթորնը համարվում է ամերիկյան գրականության խոշորագույն ներկայացուցիչներից, ինչպես նաև հակատրանսցենդենտալ շարժման կենտրոնական դեմքերից մեկը, ով կասկածի տակ էր առնում այն հայեցակարգը, թե մարդն ի բնե լավն է: Հոթորնը տարված էր այն գաղափարով, որ մեղքը մարդու մեջ բնական տարր է և հետևաբար անխուսափելի է: Նրա ստեղծագործությունները լի են այլաբանական փոխաբերություններով, իսկ նրա պատմվածքներից շատերը պարունակում են կրոնական դասեր, ինչպես օրինակ՝ մարդու մեղսավոր էությունը, և որ բոլորը պետք է լինեն հանդուրժող և խուսափեն կողմնակալ վերաբերմունքից ու դատողություններից: Օգտագործելով այս փոխաբերություններն ու խորհրդանիշները, նա կարողանում էր ցույց տալ հոգեբանության և մարդկային էության խնդիրները:

Ընդունված է ասել, որ ժամանակակից ամերիկյան գրականության բարելավումը մեծամասամբ պատկանում է Նաթանիել Հոթորնին՝ որպես վաղ ամերիկյան խոշորագույն ստեղծագործողի: Իր հոր մահից հետո նա մեծ ու խոր հետաքրքրություն է ցուցաբերում վերջինիս ծովային արկածների նկատ-

³ Bloom Harold. Nathaniel Hawthorne. New York. Chelsea House, 2007, 280 p.

մամբ: Նա կարդում էր հոր օրագրերը, որտեղ արտացոլվում էին վերջինիս արտասահմանյան արկածները: Որպես պորիտանական ժառանգության հետևորդ՝ նա հետաքրքրություն էր ցուցաբերում կալվինիստական-պորիտանական ապրելակերպի, ինչպես նաև մտածողության հանդեպ:

Նաթանիել Հոթորնի գրական ոճը հետաքրքրական է, երբ դիտարկում ենք այն ժամանակակից գրականության համատեքստում: Նա ներկայացնում էր նոր թեմաներ, գաղափարներ ու կոնցեպցիաներ, որոնք կապված էին մարդկային հոգեբանության և տրամադրությունների հետ, ինչպես նաև կրոնական ազդեցությունների դրսևորումները մարդկության և հասարակության վրա: Նրա միակ գործիքն այս թեմաները ներկայացնելն էր ոչ այնքան շատ ազատ 19-րդ դարի գրականության մթնոլորտում՝ իր նպատակներին հասնելու համար օգտագործելով խորհրդանիշներն ու փոխաբերությունները:

Նաթանիել Հոթորնն ամերիկյան գրականության մեջ սկիզբ դրեց մի կարևոր գծի: Գրելաոճը և այն ամենը, ինչը դիտարկվում է նրա ուշադրության շրջանակներում, լուսաբանվում էին թեմաների և մոտիվների միջոցով, որոնք նա ընտրում էր՝ ցույց տալու համար այս կամ այն երևույթը: Այս մոտեցումն էր, որ նրան դարձրեց ու որակեց որպես 19-րդ դարի ականավոր գրող: Հոթորնը ստեղծագործում էր սոցիալական մեծ ձևափոխությունների պայմաններում: Նա փորձում էր առաջ քաշել իր մենտալ կոնցեպցիաներից շատերը՝ մեծապես ուշադրություն կենտրոնացնելով իր գաղափարների ձևերի վրա, որոնք ներկայացվում են իրադարձությունների կերպով, և հիմնահարցերը, որոնք ներկայացվում են իր ստեղծագործություններում՝ առանձնակի մոտեցումներով: Այն ամենը, ինչ նա փորձում էր անել, մի փոքրիկ ճեղք էր անցյալից՝ հիմնված կալվինիստական-պորիտանական կրոնի ավանդույթների վրա, ներկայացնելով տիրող իրականությունը: Այլ կերպ ասած, նա կիրառում էր այն գրելաոճը, օգտագործում էր այնպիսի իմաստային կոնցեպցիաներ, որոնք իրադարձություններին ու երևույթներին հաղորդում էին հետաքրքիր և ինքնատիպ հնչերանգ: Նա ձգտում էր տարբեր հեռանկարներ՝ աշխարհը և մարդկանց այլ կերպ տեսնելու համար: Նա ներկայացնում, քննարկում ու դիտարկում էր կալվինիստական-պորիտանական թեմաները՝ մեղքի, քավության, բարոյախոսական, անձնական, կրոնական, բարոյախրատական հիմնահարցերի ազդեցությունը մարդու սոցիալական շփման ու փոխհարաբերությունների վրա, և խոշոր իմաստով, թե ինչ է պատահում համայնքի հետ, երբ նրա անդամները խախտում են հիմնական կրոնական սկզբունքների սահմանները: Նա խստորեն ընդդիմանում ու դատապարտում էր պորիտանական դրույթներն ու վար-

քազիծը՝ համաձայնելով միայն «անբարոյականություն» կոնցեպտին: Ասվածի վառ օրինակն է Հոթորնի հետևյալ դիտարկումը, թե յուրաքանչյուր մարդկային արարածի մեջ, նրա սրտում կա չարություն: Նա իր ստեղծագործությունների ու կերպարների միջոցով ընդգծված ներկայացրել է իր վերաբերմունքն ու համոզմունքը պուրիտանական վարչակարգի ու հասարակության վերաբերյալ՝ մերժելով մարդկային հասարակության նկատմամբ պուրիտանիզմի բռնատիրական մոտեցումը, դատապարտելով վերջիններիս գործադրած կարգապահական վայրագ մեթոդները, ի ցույց դնելով նաև իր նախնիների առաքինությունն ու արատները:

Հոթորնն իր գործերում լավագույնս ներկայացրել է սեփական մոտեցումն ու համոզմունքը «ընդհանուր կամ համընդհանուր անբարոյականության» վերաբերյալ: Նրա ստեղծագործությունների առանցքում վերցված են 19-րդ դարի մարդու և նրա անհատական բարոյական վարքագծի պատմությունը, նրա սոցիալական-բարոյական անկումը: Այնուամենայնիվ, գրողը հավատում էր բարոյական հասարակության տեսլականին, որը բաղկացած կլիներ բարոյապես առողջ անհատներից, որոնք պիտի կերտեին բարոյական առողջ միջավայր և անձնական բարոյականությամբ աճ գրանցեին:

Այսպիսով, իր ստեղծագործություններում Հոթորնը ներկայացրել է բազում բարոյախրատական թեմաներ, ինչպիսիք են՝ մեղքը, զղջումը և բարոյական դիլեման (երկընտրանքը): Նա անդրադարձել է նաև կանանց ու երեխաների սոցիալական իրավունքներին առնչվող թեմաներին, իր կերպարների միջոցով ընդգծել օտարացման, սոցիալական մեկուսացման խնդիրները, որոնք անհատի արատների կամ թուլությունների արդյունքն են, և որ վերջիններս չեն կարողանում հարթել ու հաղթահարել դրանք: Այս գաղափարները, թեմաներն ու խնդիրները տեղ են գտել նրա «Երիտասարդ բարի Բրաունը», «Հեզ տղան», «Մերի լեռան մայիսյան ծառը», «Ալ տառը» և այլ ստեղծագործություններում, որոնցում լավագույնս արտացոլվում են կալվինիստական-պուրիտանականության ազդեցությունները գրողի վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պուրիտանները լայնորեն տարածում էին կալվինիստական-պուրիտանականության ուսմունքներն ու դրոյթներն Ամերիկայում՝ կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում և գրականության մեջ: Կալվինիստական-պուրիտանականության գաղափարական ու բարոյախրատական դրոյթներն իրենց ազդեցությունն են ունեցել Նաթանիել Հոթորնի ստեղծագործությունների վրա, որոնցում լավագույնս դիտարկվում, ներկայացվում ու դատապարտվում են

դրանք: Իր գործերում Հոթորնը դիտարկում է նաև անբարոյականության կոնցեպտը՝ մարդու և հասարակության կտրվածքով:

Բանալի բառեր – կալվինիստական-պուրիտանականություն, ազդեցություն, Նաթանիել Հոթորն, ամերիկյան գրականություն, գաղափարներ, դրոյթներ, բարոյախրատական դրոյթ, անբարոյականության կոնցեպտ:

ВЛИЯНИЕ КАЛЬВИНИСТСКОГО ПУРИТАНИЗМА НА АМЕРИКАНСКУЮ ЛИТЕРАТУРУ: НАТАНИЭЛЬ ГОТОРН

МОГАММАД МОХТАР ШАХБАЗИРАД

Пуритане в Америке широко распространяли учение и положения кальвинистского пуританизма во всех сферах жизни, в том числе и в литературе. Идеологические и моральные постулаты кальвинистского пуританизма оказали огромное влияние на творчество Натаниэля Готорна. В своих произведениях Готорн рассматривает концепцию аморальности в контексте человек – общество.

Ключевые слова – кальвинистский пуританизм, влияние, Натаниэль Готорн, американская литература, постулаты, моральный постулат, концепция аморальности.

THE IMPACT OF CALVINISTIC PURITANISM ON AMERICAN LITERATURE: NATHANIEL HAWTHORN

MOHAMMAD MOKHTAR SHAHBAZIRAD

The puritans widely spread the calvinistic puritan religious thought, doctrine and cultural patterns in North America. They had a profound influence on all spheres of American life and on literature as well. Their impact on Nathaniel Hawthorne and writings was great. Many of Hawthorne's works feature ideas, postulates and moral allegories associated with Puritanism, they often have moral messages and are of deep psychological complexity. In his works, Hawthorne, beside other issues, centers on the inherent evil, sin of humanity, and also on the concept of immorality of an individual and of society.

Key words – Calvinistic Puritanism, impact, conditions, Nathaniel Hawthorne, North American literature, ideas, postulates, moral postulate, concept of immorality.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒ

ՇՈՒՇԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Խոսքի կիրառական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ զբաղվում է գործաբանական լեզվաբանությունը. ուսումնասիրության նյութը անհատի գործարկած խոսքն է, որը հասարակական գործունեության և համագործակցության միջոց է: Լեզվագործաբանական վերլուծության առարկան ոչ թե լեզվի կայուն կառուցվածքն է՝ լեզվական նշանների օրինաչափ համակցություններով, այլ նրա ընթացական դրսևորումը՝ խոսքային գործունեությունը:

Գործաբանությունը լեզվական երևույթները քննում է գործածության մեջ՝ չզատելով դրանք այլ լեզվական իրողություններից: Այն նպատակաուղղված է պարզելու լեզվական երևույթների՝ խոսքում իրացվող գործառական հնարավորությունների սահմանները: Մեծ նշանակություն ունեն նշանային տարրերի և արտալեզվական գործոնների փոխհարաբերությունները, ձևի և բովանդակության հարաբերակցությունները¹: Յուրաքանչյուր ոճի առանձնահատկությունները բխում են հաղորդակցման տվյալ ոլորտում լեզվի ունեցած գործառույթներից: Լեզվագործաբանական ոճը, կապված լինելով խոսքային իրականության հետ, բացահայտում է գործուն լեզվական համակարգերի առանձնահատկությունները: Ուսումնասիրում է գործող լեզուն, խոսքային այն գործունեությունը, որն իրականանում է մարդկային իրական հաղորդակցման ընթացքում: Գործառական ոճերի սահմանազատումը կատարվում է զուտ տեսական նկատառումներով: Լեզուն իրական խոսքաստեղծման գործընթացում լայն հնարավորություն է տալիս ըստ էության բոլոր ոճերի փոխներթափանցման համար: Ուրեմն փոխկապվածությունը բոլոր գործառական ոճերին բնորոշ խոսքային առանձնահատկություն է: Ոճական միավորների ու գործառույթների նույնիսկ ամենասերտ փոխկապակցության դեպքում առանձնանում

¹ Տե՛ս **Շուշանիկ Պարոնյան**, Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Երևան, 2011, էջ 4: **Shushanik Paronyan**, Lezvachanachoghutjun jev diskurs, Yerevan, 2011, ej 4.

են ոճական տարրեր, որոնց ընդհանուր առանձնահատկություններով էլ բնութագրվում է այս կամ այն գործառական ոճը: Հաղորդման գործառույթը բնորոշ է գիտական ոճին, քանի որ լեզվական միավորները չունեն գնահատողական կամ զգացմունքային (հուզական և արտահայտչական) երանգներ, որոնք հատուկ են գեղարվեստական խոսքին: Լեզվագործաբանական ոճում ուշադրության կենտրոնում է այն փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների ուսումնասիրությունը, որոնք առկա են լեզվի ու լեզվակիրների միջև: Այս գործառական ոճում բացահայտվում են նաև լեզվական միավորների առանձնահատկությունները տարբեր խոսքային իրավիճակներում. առանձնացվում են այն բազմազան լեզվական տարրերը, որոնք իրականացնում են լեզվագործաբանական գործառույթը: Երբեմն խոսքային ակտում կարևորվում է լեզվի գործառության նպատակայնությունը. խոսքային ակտի իրացումը կապվում է խոսողի, լսողի և հաղորդվող տեղեկության հետ: Ըստ դրա՝ տարբերակվում են երեք գործառույթներ՝ իրավիճակների նկարագրության, արտահայտման և դիմելու. ըստ դրանց էլ կարող է քննվել լեզվական ցանկացած երևույթ:

Լեզվագործաբանական ոճը խարսխված է հաղորդման և ներգործման գործառույթների վրա: Արտալեզվականի և ներլեզվականի փոխազդեցության հիմքի վրա առանցքային է լեզվական նշանների և խոսողի ու լսողի հարաբերակցությունը: Գործառական ոճերի համակարգում առանձնանում են երկու կարևոր ոճ՝ գեղարվեստական, որն ուղղված է ներգործման գործառույթի իրացմանը, և ոչ գեղարվեստական (որի մեջ՝ նաև խոսակցականը), որտեղ հիմնական գործառույթը տեղեկատվության փոխանցումն է: Խոսակցական լեզուն բանավոր հաղորդակցման ժամանակ գործածվող հանպատրաստից, անկաշկանդ խոսքն է. որը ձևավորվում և դրսևորվում է խոսելու պահին: Այն մարդկանց հաղորդակցման հիմնական միջոցն է, ունի կիրառության մեծ բնագավառ: Լեզվական որոշակի համակարգ է, որը հակադրվում է պաշտոնական, գրքային խոսքին իր անմիջականությամբ և ոչ պաշտոնական բնույթով: Խոսակցական լեզվի ոճական կարևոր առանձնահատկություններից մեկը լեզվական միջոցների խնայողությունն է՝ խոսքի սեղմությունն ու հակիրճությունը: Խոսակցական լեզուն արագ է փոփոխվում, ինքնաբերական է. հոմանիշները սակավ կիրառություն ունեն. հաճախակի են բառային կրկնությունները: Երբեմն սխալ բառեր են գործածվում: Շարահյուսական կառույցները

պարզ են: Խոսքն ամբողջական չէ. անավարտ է²: «Խոսակցականը համաժողովրդական է իր հասկանալիությամբ, գործածականությամբ, ազգային լեզվամտածողությամբ, որոշ իմաստով գրական լեզվի հենարանն է, հիմքը և դրանով իսկ լեզվի ժողովրդայնությունն ապահովող հիմնական միջոցն է»³: «Խոսակցական լեզվի համար հատկանշական է մեկ գործառություն ունենալը, այն է՝ առօրյա հարաբերություններում հաղորդակցմանը ծառայելը: Գրական լեզուն դրսևորման բազմաթիվ ոլորտներ ունեցող հաղորդակցման միջոց է: Դա գործադրվում է գիտության, տեխնիկայի տարբեր բնագավառներում, քաղաքական-պաշտոնական հարաբերությունների մեջ, մամուլում, դպրոցում»⁴: «Ժողովրդական լեզվամիջոցները, լեզվամտածական կառույցները, պայմանավորված ժողովրդի հասարակական կյանքի, նրա մշակույթի ու հոգեբանության զարգացման պատմությամբ, խոսք են բերում անմիջականություն, հյուսթելություն, բնականություն ու բազմազանություն: Այսպիսի խոսքը արվեստակյալ չէ»⁵: Առանձնացվում են արտասանական երկու ոճեր՝ բարձր (ընտիր) և խոսակցական⁶: Խոսակցականում հաճախ կրճատվում են բառերը: Օրինակ՝ *հաջողություն-հաջող*: Որոշ կենսունակ **ածանցներով՝** *ան-, չ-, փոխ-*, մինչև օրս էլ կազմվում են նորանոր բառեր՝ *անփորձանք, անկրթություն*: Վերջածանցներից շատերն առաջացել են հենց խոսակցական լեզվում, հետագայում անցել գրական լեզվին: Օրինակ՝ *ան-կթան, փոխան, անոց-շնանոց, անց-զիխանց, ացու-շորացու*: Խոսակցական լեզվին բնորոշ են հարադրավոր բայերը՝ *աչքով անել, երգ ասել*, կրկնավոր **բարդությունները՝** *դիրք-դիրք, կես-կես*, զուգադրական բարդությունները՝ *էփել-թափել*, պատճառական բայերը՝ *բռնել փայլ, սիրել փայլ* (նաև՝ *կանգնեցնել փայլ, զգացնել փայլ*): Խոսակցական լեզվին բառապաշարի շերտերից հատուկ են դարձվածքները, բարբառայնությունները, ժար-

² Տե՛ս Разговорная речь в системе функциональных стилей современного русского литературного языка. Под редакцией О. Б. Сиротининой, Саратов, 1992, ст. 312:

³ **Հարությունյան Հ.**, Գեղարվեստական խոսք, Երևան, 1986, էջ 252: **Н. Harutjunyan**, Gegharvestakan khosq, Yerevan, 1986 t., ej 252.

⁴ **Մելքոնյան Ս.**, Հովհաննես Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Երևան, 1986, էջ 29: **S. Melqonyan**, Hovhannes Tumanyany jev arevelahaj gegharvestakan grakanutjan lezun, Yerevan, 1986, ej 29.

⁵ **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գիրք երկրորդ, Երևան, 1991, էջ 220: **P. Poghosyan**, chosqj mshakujti jev vochagitutyany himunqnerj, girq II, Yerevan, 1991, ej 220.

⁶ **Ղարազյուլյան Թ.**, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1974, էջ 80-81: **T. Gharagjulyan**, Dzamanakakic hajereni ughachosutjuny, Yerevan, 1974, ej 80-81.

գոնային բառերը, հասարակաբանությունները, փոխառություններն ու օտարաբանությունները: Դարձվածքները ստեղծվում են հիմնականում բանավոր ճանապարհով: Օրինակ. *-Հը՛, սիրտդ չորե՛րդ ընկավ: Դե խոսա՛, ի՞նչ ես բերանդ ջուր առել. էշի ականջում քնա՛ծ էիր:* Կարևոր են բարբառայնությունները՝ *պեծ, պաչպչորել, տկլոր:* Ժարգոնային բառերը կիրառվում են որոշակի ոլորտներում ու գործածական են տվյալ հանրության որոշակի խմբերի կողմից՝ *մալադոյ, սպարիկ, դեմբել:* Խոսակցական լեզվի բառապաշարային շերտերից են փոխառություններն ու օտարաբանությունները: Օրինակ՝ *ազապ, ախմախ, զիբի:*

Միօրինակացման միտումը դրսևորվում է առաջին հերթին խոսակցական լեզվում: Ձևաբանական տարբերակներ առաջանում են հենց այդ միտումի ազդեցությամբ. լեզվում գործող անկանոն շատ ձևեր կամ կադապարներ դուրս են մղվում, օրինակ՝ *սիրունին հրավիրեց, չորսը մնացին:* Գոյականի ի հոլովումը, շատ դեպքերում զուգահեռաբար գործածվելով մյուս հոլովումների փոխարեն, աստիճանաբար լայն տարածում է ստանում, և դա, անշուշտ, սկիզբ է առնում խոսակցական լեզվից: 1. Միաժամանակ և՛ ի, և՛ *ան, ոջ,* ա(ներքին) հոլովումներին պատկանող բառերի զուգածներից խոսակցականը նախապատվությունը տալիս է առաջիններին՝ *ծագումի, ուսումի, սկեսորի, անկյունի, սյունի:* 2. Ավելի շատ գործածվում են հոլովական ձևերի անհնչյունափոխ տարբերակները՝ *բջիջի, արճիճի, հովիտի, թռչունի, ուսուցիչի, բլուրի, պտուղի, նարինջի, խորհուրդի, մութի:* 3. *Տալ, պապ, տղա, երեխա* ձևերը սովորաբար ու հոլովմամբ են հոլովվում՝ *տալու, պապու, տղու, էրեխու:* 4. *Վա* հոլովմամբ են գործածվում նաև *երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ* բառերը *շաբաթ* բառի համաբանությամբ՝ *երկուշաբթվա, երեքշաբթվա* և այլն: Խոսակցական լեզվում ավելի հաճախակի են **բայերի** կիրառությունները: -2- սուկածանցով բայերը խոսակցականում հաճախ կիրառվում են -ն- սուկածանցով կամ առանց սուկածանցի՝ *փախչել-փախնել, թռչել-թռնել, սառչել-սառել, հանգչել- հանգել* և այլն: **-եցն-** ածանցով պատճառական բայերում որոշ դեպքերում տեղի է ունենում **ե>ա** հնչյունափոխությունը՝ *վազեցնել-վազացնել, ուրեցնել-ուրացնել, սովորեցնել-սովորացնել:* Սա առկա է նաև *ե* խոնարհման մի քանի բայերի կիրառության ժամանակ՝ *խոսել-խոսալ, գովել-գովալ: Գնալ, կանգնել, ելնել* բայերն ունեն իրենց զուգածները՝ *էթալ, կայնել, հելնել:* Եզակի երրորդ դեմքում է-ի փոխարեն կիրառվում է *ա* օժանդակ բառը (*ասում ա*):

Խոսակցական լեզվի շարահյուսական ամենաբնորոշ հատկանիշը կառուցվածքի համեմատական ազատությունն է: Գերակշռում են պարզ կառուցվածք ունեցող շարահյուսական միավորները. նախադասությունները մինչև վերջ չեն կառուցվում և չեն ավարտվում: Կարևոր դեր է խաղում խոսքային հնչերանգը, որը հիմնականում արտահայտվում է տրամաբանական շեշտի միջոցով: Հաճախ հուզականությունը, զգացմունքների բազմազանությունը խոսակցական լեզվում արտահայտվում են միայն հնչերանգով: Խոսակցական լեզվում հաղորդակցական մեծ դեր ունեն շարժունները (ժեստերը): Նշանային ժեստերը լինում են դիթամային ու զգացական⁷: Ռիթմային ժեստերն ընդգծում են տրամաբանական շեշտերը՝ խոսքի կազմակերպման մեջ կատարելով հնչերանգի դեր: Զգացական ժեստերը, ուղեկցելով ձայնարկություններին կամ խոսքին, ուժեղացնում են խոսքի արտահայտչականությունը:

Խոսակցական լեզուն ունի ընդգծված հուզարտահայտչական երանգ. դրանով խոսողն ուզում է ներազդել խոսակցի վրա: Ունի որոշակի պատկերավորման համակարգ: Լայն կիրառություն ունեն փոխաբերությունները (*-հ'նչ ես դապարկ-դապարկ խոսում*), փոխանունությունը (*Թումանյան շար եմ սիրում*), չափազանցությունը (*գիշեր-ցերեկ աշխատում էր*), համեմատությունները (*էջի պես*), մակդիրները (*դդում գլուխ, անհամ մարդ*) և այլն:

Խոսակցական լեզուն հիմնականում երկխոսական բնույթի է: Որպես հասարակական էակ՝ մարդն անհրաժեշտություն ունի շփվելու, մտքեր փոխանակելու, ներգործելու շրջապատի վրա, իր տեղեկատվական պահանջմունքները բավարարելու և այլն. դա կատարվում է երկխոսության ձևով, որի ժամանակ տեղի է ունենում հաղորդակցական նպատակի ընդհանրությամբ, ինչպես նաև զրույցի թեմայի միասնականությամբ պայմանավորված մտքերի փոխանակում: Խոսքի բնականոն ընթացքի դեպքում զրուցակիցների ասույթները փոխկապակցված են: Խոսքային գործունեությունն ընթանում է բաղիյուսական ասույթների շղթայական հաջորդականությամբ, որտեղ յուրաքանչյուր առնչակից շղթայական օղակ հաղորդակցական քայլ է, ազդակ կամ արձագանք, որը որոշակի մտային աշխատանքի արդյունք է և անդրադարձական բնույթ ունի: Փոխկապակցված խոսքային գործունեության դեպքում տեղեկատվության փոխանցումը կատարվում է ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական միջոցներով: Խոսողությունը մարդկանց մտքեր փոխանակելու և դրանք իրար կապելու ձև է, իմաստի ստեղծում և փոխանակում: Երկխոսության մեկնաբա-

⁷ Ст'у Русская разговорная речь, М., 1973, էջ 465:

նությունը՝ որպես խոսող անհատների մտքերի կապ, հանգեցրեց այն բանին, որ լեզվաբանները սկսեցին խոսքային գործունեությունը պայմանավորել խոսողի գիտելիքներով: Ըստ այդմ՝ խոսքի գործադրման կաղապարների մշակման ժամանակ կարևորվեց գիտելիքի փոխներգործման ուժը: Լեզվակիրների գիտելիքն անշարժ, քարացած երևույթ չէ և փոխվում է խոսողության հանրությանին և մտավոր գործունեության ընթացքում, իսկ աշխարհի մասին գիտելիքը և լեզվի իմացությունը մեկ միասնական հասկացությանին համակարգի փոխներգործող օղակներ են⁸:

Այսպիսով, խոսակցական լեզուն ունի իրեն հատուկ որոշակի նորմավորված համակարգ: Ի տարբերություն գրական լեզվի նորմի՝ խոսակցական լեզվի նորմը գիտակցաբար չի հաստատվում և չի հսկվում. չափանիշ է համարվում այն, ինչ հանդիպում է լեզվին տիրապետող շատ մարդկանց խոսքում: Գեղարվեստական գրականության մեջ խոսակցական լեզուն դիտվում է որպես գրականության լեզուն կենդանի ու թարմ պահելու, կերպարների խոսքն անհատականացնելու, ժամանակի կոլորիտ ստեղծելու, գեղարվեստական գրականության լեզվի համար այնքան անհրաժեշտ հոմանիշային հարստությունն ու խոսքի գեղագիտական որակն ապահովելու հիմնական աղբյուր⁹:

ԱՄՓՈՓՈՒՄ

Խոսակցական լեզուն մարդկանց հաղորդակցման հիմնական միջոցն է, ունի կիրառության մեծ բնագավառ, լեզվական որոշակի համակարգ է, որը հակադրվում է պաշտոնական, գրքային խոսքին իր անմիջականությամբ և ոչ պաշտոնական բնույթով: Խոսակցական լեզվի ոճական կարևոր առանձնահատկություններից մեկը լեզվական միջոցների խնայողությունն է: Խոսակցական լեզուն հիմնականում երկխոսական բնույթի է: Կարևոր դեր է խաղում խոսքային հնչերանգը, որը ծառայում է նախադասության բովանդակության ճիշտ բացահայտմանը:

Բանալի բաներ – հաղորդակցություն, սեղմություն, հակիրճություն, ժարգոն, ժեստ, հնչերանգ, լեզվական համակարգ, խոսակցական լեզու, բառային կրկնություն, անկանոն ձևեր:

⁸ Տե՛ս **Кубрякова Е. С., Шахнарович А. М., Сахарный Л. В.**, Человеческий фактор в языке: Язык и порождение речи, Москва, 1991, 240ст.

⁹ Տե՛ս **Մելքոնյան Ս.**, Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Երևան, 1986թ., էջ 30: Եւ **S. Melqonyan**, Hovh. Tumanyan yev arevelahaj gegharvestakan grakanutyany lezun, Yerevan, 1986t., ej 30.

РАЗГОВОРНАЯ РЕЧЬ

ШУШАНИК ГЕВОРКЯН

Разговорный язык – основной способ коммуникации между людьми – имеет широкий спектр использования и является определенной языковой системой, которая своей непосредственностью и неофициальным характером противопоставляется официальному, книжному языку. Одной из основных стилистических характеристик разговорного языка является экономность языковых средств. Разговорный язык в основном имеет характер диалога. В разговорном языке важную роль играет интонация речи, которая служит правильному восприятию содержания предложения.

Ключевые слова – коммуникация, сжатость, краткость, жаргон, жест, интонация, языковая система, неправильные формы, разговорный язык, лексический повтор.

SPOKEN LANGUAGE

SHUSHANIK GEVORGYAN

The spoken language is the main means of communication between human beings and as such has numerous applications in all fields of activities. It is a certain language system, straightforward and informal as opposed to the written language. One of the main stylistic characteristics of the spoken language is its economy of linguistic elements. The spoken language has mainly the form of a conversation. Intonation in conversation is an important factor. It helps to reveal the spoken message and regulate conversational interaction.

Key words – communication, brevity, laconism, jargon, gesture, intonation, language system, spoken language, lexical repetition, irregular forms.

Գրականություն

1. Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Երևան, 1986:
2. Թ. Ղարաբյուրյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1974:

3. Ս. Մելքոնյան, Հ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Երևան, 1986:
4. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գիրք երկրորդ, Երևան, 1991:
5. Кубрякова Е. С., Шахнарович А. М., Сахарный Л. В., Человеческий фактор в языке: Язык и порождение речи, Москва, 1991.
6. Разговорная речь в системе функциональных стилей современного русского литературного языка. Под редакцией О. Б. Сиротининой, Саратов, 1992.
7. Русская разговорная речь, М., 1973.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍՆԵՐՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՂԻԿՅԱՆ

«Խոսույթ» եզրի սահմանումը լեզվաբանական հանրայթում բազմաթիվ քննարկումների պատճառ է դարձել՝ շնորհիվ այս եզրի բազմապիսի ընկալումների: Ակադեմիական ոլորտում արժարժվում են հիմնականում հետևյալ երեք սահմանումները.

1. Խոսույթը լեզուն է՝ խոսքային իրացմամբ՝ նախադասությունից ավելի ծավալուն միավորներով (language ‘above the sentence’)¹,
2. Խոսույթը կիրառմամբ առկայացող լեզուն է (language ‘in use’),
3. Խոսույթը սոցիալական գործունեության կարևոր ձև է (a form of social practice):

Առաջին սահմանման հիմքում ընկած է կառուցվածքային լեզվաբանությունը, որը լեզուն բնութագրում է որպես նշանների համակարգ, որտեղ յուրաքանչյուր նշան իր տեղն ու դերն ունի, իսկ նշանները գտնվում են կարգավորված հարաբերությունների մեջ: Համակարգի ներսում այս կարգավորվածությունը կոչվում է կառուցվածք²: Հաշվի առնելով լեզվում՝ դրա համակարգում և կառուցվածքում, ներակայորեն առկա աստիճանակարգությունը, երբ ավելի ցածր մակարդակի միավորները կազմում են աստիճանակարգային ավելի բարձր միավորներ, Խոսույթի առաջին լեզվաբանական սահմանումը կարելի է ընկալել որպես կառուցվածքային այնպիսի միավորների բնորոշում, որոնք կառուցվածքային տեսանկյունից ավելի ընդարձակ են, քան նախադասությունը:

Խոսույթի երկրորդ սահմանումն առնչվում է լեզվի կիրառությանը՝ որպես ձևի և իմաստի հարաբերակցության՝ առաջնային հաղորդակցական գործառույթի իրականացման շրջանակներում³:

¹ **Stubbs, M.**, Discourse Analysis, The Sociolinguistic Analysis of Natural Language, Chicago Press, 1983, p. 1.

² **de Saussure, F.**, Course in general linguistics (3rd ed.), (R. Harris, Trans.). Chicago: Open Court Publishing Company, 1986, p. 9-10.

³ **Brown and Jule**, Discourse Analysis, Cambridge University Press, 1983.

Խոսույթի երրորդ սահմանումն ավելի շուտ հասարակագիտական է, քան լեզվաբանական և կապված է փիլիսոփա և մշակույթի պատմաբան Մ. Ֆուկոյի անվան հետ, որը սահմանել է խոսույթ(ներ)ը որպես. «գործունեություններ, որոնք համակարգայնորեն և կանոնավորապես ձևավորում են այն օբյեկտները, որոնց մասին և տեղեկություն են տալիս»⁴:

Լինելով ավելին, քան լեզուն, խոսույթը տարբեր ոլորտներում համապատասխան աշխատակարգերի, ընկալումների, գործընթացների, տրամադրությունների սերման գրավականն է: Հասարակական գործունեության յուրաքանչյուր բնագավառ բնորոշվում է իրեն հատուկ խոսույթով՝ գիտական խոսույթ, բժշկական խոսույթ, կրոնական խոսույթ և այլն: Այսպիսով, ակնհայտ են խոսույթ և քաղաքական գործունեություն կապի փոխադարձությունը և անքակտելիությունը: Արդարացի է Վան Դայքի քաղաքական գործունեության սահմանումը որպես դիսկուրսիվ, ինչի արդյունքում տեքստն ու խոսքն ունեն քաղաքական գործառույթ և իմաստ: Հետևաբար, խոսույթը կարող է համարվել քաղաքական, եթե այն որպես քաղաքական գործողություն ունի ուղղակի գործառույթային դեր քաղաքական գործընթացում⁵:

Քաղաքականության և լեզվի կապը բացառիկ է, քանի որ քաղաքականության հիմքում ընկած է հաղորդակցումը, առանց որի ոչ մի քաղաքական ռեժիմ չէր կարող գոյատևել⁶: Լեզվի միջոցով են քաղաքական գործիչները համոզում, վախեցնում, օրենքներ ընդունում և հրահանգներ տալիս: Քանի որ լեզուն մտքի և գործունեության կապող օղակն է, այն կարևոր գործոն է դառնում քաղաքական ճնշում, տնտեսական և հասարակական խտրականություն հաստատելու մեջ⁷: Հմուտ քաղաքական գործիչը, կիրառելով լեզվական առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ իմաստային բազմազանությունը, կարող է այնպես ներկայացնել իրադարձությունների իրական և ցանկալի պատկերը, որ իր կարծիքի պարտադրմամբ շահարկի ուրիշի գիտակցությունը: Վան Դայքը գտնում է, որ շահարկումը (մանիպուլյացիան) տեղի է ունենում

⁴ Foucault, M. The Archeology of Knowledge and the Discourse on Language. New York, Pantheon Books, 1972, p. 49.

⁵ Van Dijk T., What is Political Discourse Analysis? Amsterdam: Benjamins, 1997, p. 23.

⁶ Шейгал Е., Семиотика политического дискурса. Волгоград, 2000, стр. 28.

⁷ Miles L. – Preface // C. Schaffner, A.L. Wenden eds. Language and peace. – Aldershot. Dartmouth Publishing Company Ltd., 1995, p. vii.

տեքստի և խոսքի միջոցով, և շահարկվում է միտքը, ինչը ենթադրում է իշխանություն և իշխանության չարաշահում⁸:

Յ. Սորոկինը սահմանում է քաղաքական խոսույթը որպես «գաղափարախոսական խոսույթի տարատեսակ»⁹: Քաղաքական հաղորդակցումը միշտ գաղափարական է, քանի որ քաղաքական գործիչները ներկայանում են ոչ թե որպես անհատներ, այլ որպես քաղաքական խմբերի և ինստիտուտների ներկայացուցիչներ, դրանց գաղափարախոսության ջատագովներ: Գաղափարախոսություն ասելով հասկանում ենք սկզբունքների համակարգ, որի հիմքում ընկած է տվյալ խմբի արժեհամակարգը՝ կազմված խմբի գիտելիքներից և կարծիքներից: Քաղաքական հաղորդակցման սուբյեկտների գաղափարական մտային սխեմաներով է պայմանավորված նրանց խոսքային վարքագիծը, մասնավորապես նրանց կիրառած ռազմավարությունները և հոետորական հնարքները, ներիմաստները (իմպլիկացիաները) և կանխադրույթները, խոսքային քայլերը և խոսույթի թեմատիկ կառուցվածքը¹⁰:

Բնութագրելով քաղաքական խոսույթը՝ հեղինակները հիմնականում շեշտում են դրա շահարկող բնույթը: Լեզվաբանական վերլուծության դիրքից քաղաքական խոսույթի քննական ուսումնասիրության (CDA-critical discourse analysis) նպատակն է բացահայտել իշխանության, ճանաչողության, խոսքի և վարքի փոխհարաբերության բարդ մեխանիզմը¹¹: Քաղաքական խոսույթի ուսումնասիրության նկատմամբ այս մոտեցումը քննադատական է և նպատակ ունի ուսումնասիրելու հասարակական անհավասարությունը՝ արտահայտված լեզվում և խոսույթում: Այսպիսի վերլուծությունը պայմանավորված է քաղաքական խոսույթի յուրահատկությամբ, քանզի այն ուղղված է թիրախ լսարանի (հանրությանը, ՉԼՄ-ներին, հակառակորդներին), ունի հատուկ և հստակ գործառույթ և նպատակ (համոզել, կառավարել, մտափոխել), ինչպես նաև տեղի է ունենում որոշակի քաղաքական իրավիճակի և համատեքստի շրջանակում: Քաղաքական խոսույթի նպատակը ոչ թե նկարագրությունն է, այլ

⁸ Van Dijk T., Discourse and manipulation, Discourse & Society, Vol. 17(2), 2006, p. 360.

⁹ Сорокин Ю. А. Политический дискурс: попытка истолкования понятия // Политический дискурс в России. Москва, 1997, стр. 57.

¹⁰ Шейгал Е., Семиотика политического дискурса. Волгоград, 2000, стр. 18.

¹¹ Hacker K. L. Political Linguistic Discourse Analysis / The Theory and Practice of Political Communication Research. New York: State University of New York Press, 1996, p. 51.

համոզումը, հասցեատիրոջ մեջ մտադրություն առաջացնելը, համոզմունքի հիմք տալը և գործելու դրդելը¹²:

Վ. Դեմյանկովն իր հոդվածում նշում է, որ քաղաքական խոսույթը լիարժեք մեկնաբանելու և ընկալելու համար հարկավոր է չսահմանափակվել միայն լեզվական կողմով, այլ նաև տեղյակ լինել քաղաքական ֆոնին, հեղինակի և լսարանի սպասելիքներին, գաղտնի դրդապատճառներին, սյուժետային սխեմաներին և տվյալ ժամանակաշրջանում տարածված տրամաբանական մտեցումներին¹³: Լսարանի և տեղեկատվության փոխանցման սխեմաների հաշվառմամբ է, որ Ե. Շեյգալը, որպես քաղաքական խոսույթի բնորոշիչ հատկանիշներ, նշում է խոսույթի թատերականացվածությունը¹⁴ և էզոթերիկությունը¹⁵: Հենց այս համատեքստային տեղայնացումն ու թիրախային լսարանի առկայությունն է բնորոշում քաղաքական խոսույթի բազմաշերտությունն ու բազմաստարրությունը:

Քաղաքական խոսույթի թատերականությունը Շեյգալը կապում է այն փաստի հետ, որ հաղորդակցման մի կողմը՝ ժողովուրդը, կատարում է ոչ թե ուղղակի հասցեատիրոջ, այլ դիտորդի դեր, որն ընկալում է քաղաքական իրադարձությունները որպես իր համար խաղարկվող գործողություն: Հասցեատեր-դիտորդի առկայությունը ոչ միայն գիտակցվում է խոսողի կողմից, այլ նաև ազդում է նրա հաղորդակցական մտադրության, ռազմավարության ընտրության և խոսքային վարքի վրա¹⁶: Այս փաստը ստիպում է քաղաքական գործիչներին մշտապես հիշել անուղղակի լսարանի մասին և խաղալ իրենց համար նախատեսված դերը հասարակության առջև: Էզոթերիկությունը՝ որպես քաղաքական խոսույթի բնորոշ հատկանիշ, Շեյգալը¹⁷ հիմնավորում է

¹² Bayley P. 1985 – Live oratory in the television age: The language of formal speeches // G. Ragazzini, D.R.B.P. Miller eds. Campaign language: Language, image, myth in the U.S. presidential elections 1984. – Bologna: Cooperativa Libraria Universitaria Editrice Bologna, 1985, p. 104.

¹³ Демьянков В.З. Политический дискурс как предмет политологической филологии. Политическая наука. Политический дискурс: История и современные исследования. № 3.– М., 2002. – Стр. 32-43 (philology.ru).

¹⁴ Шейгал Е., Семиотика политического дискурса. Волгоград, 2000.

¹⁵ Шейгал Е.И. Рефлексивы в политической коммуникации. Теоретическая и прикладная лингвистика. Выпуск 3. Аспекты метакоммуникативной деятельности. Воронеж, 2002, стр. 133-141.

¹⁶ Шейгал Е., Семиотика политического дискурса. Волгоград, 2000.

¹⁷ Шейгал Е.И. Рефлексивы в политической коммуникации. Теоретическая и прикладная лингвистика. Выпуск 3. Аспекты метакоммуникативной деятельности. стр. 133-141.

նրանով, որ գաղտնիքին տիրապետելը իշխանության անքակտելի ուժերից մեկն է: Նա մեջքերում է Կանետտի հետևյալ սահմանումը. «Գաղտնիքի մեջ է իշխանության նվիրական հիմքը»¹⁸:

Քաղաքական խոսույթի բավականին համապարփակ և բազմակողմանի բնութագրում է առաջարկում Ա. Չուդինովը՝ առանձնացնելով հետևյալ հատկանիշները, որոնք քաղաքական խոսույթի բնորոշման տարբեր բևեռներ են, սակայն ծառայելով նույն հաղորդակցական նպատակին՝ հավասարակշռում են ուղերձը.

- 1) ծիսականությունը և տեղեկավորականությունը,
- 2) ինստիտուցիոնալությունը և անձնական բնույթը,
- 3) էզոթերիկությունը և հանրամարչելիությունը,
- 4) տեղեկավորության սղությունը և բազմահայեցակարգությունը,
- 5) քաղաքական տեքստի հեղինակայնությունը և անանունությունը,
- 6) միջտեքստայնությունը և ինքնավարությունը,
- 7) ազդեցիկությունը և հանդուրժողականությունը¹⁹:

Վերջին տասնամյակներում քաղաքական խոսույթը մշտապես եղել է լեզվաբանական ուսումնասիրությունների կիզակետում: Այս հանգամանքը պայմանավորված է լեզվաբանական հանրույթի կողմից քաղաքական գործիչների կիրառած շահարկման մեխանիզմների և միջոցների բացահայտմամբ: Եթե տարբեր քաղաքական գործիչների ելույթները բազմիցս նյութ են ծառայել քննական վերլուծության համար, ապա մամլո ասուլիսները՝ որպես քաղաքական խոսույթի դրսևորման և իրացման ժանր, ինչպես նաև քաղաքական գործունեության տեսակ, շատ հազվադեպ են դարձել ուսումնասիրության առարկա:

Ուստի այս հոդվածում մենք անդրադառնում ենք քաղաքական խոսույթի ժանրերից մամլո ասուլիսին, որը, լինելով բավականին բարդ ժանր, ունի բովանդակությամբ հարուստ համատեքստ: Մամլո ասուլիսների մասնակիցները հասարակական տարբեր կարգավիճակների կրողներ են, ունեն տարբեր շահեր, նպատակներ և միտումներ: Մեզ հետաքրքրում են այն ռազմավարություններն ու լեզվական միջոցները, որոնք կիրառվում են մամլո ասուլիսի ընթացքում զանգվածային գիտակցության ուղղորդման և շա-

¹⁸ Канетти Э. Элементы власти // Психология и психоанализ власти. Т. 1. Хрестоматия. Самара, 1999, стр. 130.

¹⁹ Чудинов А. П. Политическая лингвистика / Общие проблемы, метафора. Учебное пособие. Екатеринбург, 2003, стр. 42-56.

հարկման նպատակներով: Որպես լեզվական նյութ ընտրել ենք 2014 թվականի օգոստոսի 1-ին ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի մամլո ասուլիսը (<http://www.whitehouse.gov/the-press-office/2014/08/01/press-conference-president>): Տվյալ մամլո ասուլիսի նույնիսկ փոքր հատվածի վերլուծությունը վեր է հանում քաղաքական խոսույթի վերոնշյալ հատկանիշներից մի քանիսը, որոնց իրացումը պատահական չէ և ծառայում է որոշակի հաղորդակցական նպատակի:

Մամլո ասուլիսը բացում է նախագահ Օբաման՝ առաջադրելով քննարկման համար առաջնային թեման.

«THE PRESIDENT: Good afternoon, everybody. Happy Friday. I thought I'd take some questions, but first, let me say a few words about the economy»:

Օբաման, ողջունելով ներկաներին, դիմում է նրանց ողջույնի սովորական, զուտ քաղաքավարության դրսևորում հանդիսացող արտահայտությամբ: Այնուամենայնիվ, այժքի է զարնում թվացյալ անմեղ, առօրեական, բայց այս համատեքստի համար արտառոց «Happy Friday» արտահայտությունը, որը շնորհավորական ուղերձ է հիշեցնում: «Happy X» արտահայտությունը կիրառվում է տոների կապակցությամբ շնորհավորելիս, սակայն «Friday»-ը՝ ուրբաթը, տոնական կարող է լինել միայն որպես աշխատանքային շաբաթվա վերջին օր: Այս առումով կարևոր է ուշադրությունից բաց չթողնել մի հանգամանք. Օբամայի առաջնային լսարանը, որը միջնորդ է տեղեկատվության վերջնական օգտատերերին՝ սպառող էլեկտրատիսն տեղեկատվություն փոխանցելու գործում, ազատ օրերի ռեժիմով չի աշխատում: Ուստի կարելի է ենթադրել, որ Օբաման, այս փաստին քաջատեղյակ լինելով, ոչ թե նկատի ունի գալիք ազատ օրերը՝ դրանք վայելելու նպատակով, այլ ձգտում է այդ կերպ ավելի անկաշկանդ տրամադրություն ստեղծել ներկաների մեջ և ձևավորել միկրոհանրայինի զգացողություն. «Ես էլ ձեզ նման մեկն եմ, որ հոգնել է շաբաթվա գործերից»: Սրանով նա հավանաբար նաև ձգտում է ընդգծել աշխատանքային շաբաթվա ավարտը սահմանող այս միջոցառումը՝ միտված քննարկման արագընթացությանը և աշխատանքն արագ վերջացնելուն հակվածության ենթագիտակցական մղմանը:

“I thought I'd take some questions, but first, let me say a few words about the economy.”

Ակնհայտ է, որ ԱՄՆ նախագահը քաջատեղյակ է մամլո ասուլիսի ձևաչափին, որը ենթադրում է լրագրողական հարցին նախագահական պատասխան: Հենց իր այս իրազեկությանն էլ հղում է անում Բ. Օբաման՝ նշելով, որ

միտք ուներ հարցերին պատասխանելու, սակայն կնախընտրեր մի քանի բառով նախ խոսել տնտեսության մասին:

Եթե նախագահը, որպես միջոցառման բացման խոսք, նախաձեռնություն է դրսևորում՝ խոսելով տնտեսության մասին, ապա այդ իսկ նախաձեռնությամբ զրկում է իրենց իրադրության տերը համարող լրագրողներին նախօրոք պատրաստած հարցերը տալու հնարավորությունից՝ սահմանելով քննարկման շրջանակը՝ տնտեսությանը վերաբերող խնդիրները:

Տնտեսության մասին ելույթը նա սկսում է հետևյալ կերպ.

“This morning, we learned that our economy created over 200,000 new jobs in July. That’s on top of about 300,000 new jobs in June. So we are now in a six-month streak with at least 200,000 new jobs each month. That’s the first time that has happened since 1997. Over the past year, we’ve added more jobs than any year since 2006. And all told, our businesses have created 9.9 million new jobs over the past 53 months. That’s the longest streak of private sector job creation in our history.”

Սկսելով խոսքը «This morning» արտահայտությամբ՝ Օբաման կարծես գերապատվություն է տալիս տնտեսության մասին միայն առավոտյան հրապարակված տեղեկատվության հաղորդմանը՝ համարելով այն ամերիկյան հասարակության համար առաջնային կարևորություն: Այս նախապատվությունն ակնհայտորեն պայմանավորված է Օբամայի՝ սեփական էլեկտորատի աչքերում իր վարկանիշի բարձրացման ջանքերով: Ընդհանուր առմամբ, այս մամլո ասուլիսի ներածական հատվածի հիմնականպատակը ներկա իշխանությունների վարկանիշի վերականգնմանն է միտված:

Մամլո ասուլիսը տեղի է ունենում օգոստոսի մեկին, և Օբաման, հաղորդվող տվյալների թարմությունը և անհապաղությունն ընդգծելու նպատակով, հնչեցնում է նախորդ՝ հուլիս ամսվան վերաբերող վիճակագրական տվյալները: Հաղորդվող վիճակագրական տվյալները վերաբերում են տնտեսության աճին, և այդ աճի կայուն բնույթը շեշտելու նպատակով Օբաման տվյալները ներկայացնում է համեմատական կարգով: Սկզբում նա համեմատում է վերջին՝ հուլիս ամսվա տնտեսական աճը դրան նախորդող հունիս ամսվա հետ և նշում, որ այս աճը միտված է նաև հետագա՝ առնվազն վեց ամիսներին.

“So we are now in a six-month streak with at least 200,000 new jobs each month.”

Եթե Օբաման ստացված թարմ տվյալները նախ համեմատում է նախորդ ամսվա իրադրության հետ, ապա համեմատության մյուս ելակետային հղումը 1997 թվականն է՝ այն տարեթիվը, երբ Օբաման նոր էր մուտք գործում մեծ քաղաքականություն՝ որպես Սենատի անդամ: Օբաման շարունակում է և համեմատում վերջին տարվա տվյալները 2006թ. ի վեր գրանցված տվյալների հետ: 2006 թվականին Օբաման Սենատում ծավալել է ակտիվ գործունեություն և մասնակցել օրենսդրական բարեփոխումների ընդունմանը: Այդ տարի ընդունվել են նրա անունը կրող իրավական ակտեր: Ինչպես տեսնում ենք, Օբաման տնտեսական աճը ամեն կերպ կապում է իր անվան և գործունեության հետ և ի վկայություն այս կարծիքի համընդհանրության՝ նա փաստում է.

“And **all told**, our businesses have created 9.9 million new jobs over the past **53 months**.”

Նշված 53 ամիսներն Օբամայի երկրորդ պաշտոնավարման ժամանակահատվածն են խորհրդանշում (01.2009-08.2014), և նա կրկին շեշտում է այդ ժամանակահատվածում գրանցված տնտեսական աճի կայունությունը՝ ասելով, որ այդպիսի երկարաձիգ առաջընթաց երբևէ չի գրանցվել ԱՄՆ-ի պատմության ընթացքում.

“That’s the longest streak of private sector job creation in our history.”

Վիճակագրությամբ և համեմատություններով հագեցած խոսքը միտված է ավելի համոզիչ և անհերքելի լինելու: Դրա հետ միաժամանակ Օբաման բոլոր համեմատություններն անում է այն տարեթվերի հետ վերաբերությամբ, որոնք կապված են իր քաղաքական և նախագահական գործունեության հետ, ինչից հետևում է, որ մի կողմից՝ Օբաման կարծես թե կատարված աշխատանքի համար հաշվետվություն է տալիս, իսկ մյուս կողմից անուղղակիորեն հաղորդում է, որ նշված առաջընթացը և տնտեսական աճը գրանցվել են իր՝ ամիսների և տարիների ընթացքում կատարած արդյունավետ աշխատանքի շնորհիվ:

Կոշտ թվերի և բացահայտ վիճակագրական համեմատական ներկայացումից հետո Օբաման ընտրում է հաղորդակցման մեկ այլ ռազմավարություն՝ անցում կատարելով նկարագրական հնարքների: Արդյունքում նրա խոսքը թիրախում է հուզագայական ոլորտը՝ ի տարբերություն նախկին տրամաբանականի:

“And as we saw on Wednesday, the economy grew at a strong pace in the spring. Companies are investing. Consumers are spending. American manufacturing, energy, technology, autos -- all

are booming. And thanks to the decisions that we've made, and the grit and resilience of the American people, we've recovered faster and come farther from the recession than almost any other advanced country on Earth.

So the good news is the economy clearly is getting stronger. Things are getting better. Our engines are revving a little bit louder. And the decisions that we make right now can sustain and keep that growth and momentum going.”

Եթե սկզբում Օբաման խոսում էր տնտեսության ընդհանուր աճի մասին, ապա հիմա նա սկսում է թվարկել և նկարագրել այն ոլորտները, որտեղ գրանցվել են այս դրական փոփոխությունները, ընդ որում նա սկսում է կիրառել բայի ներկա շարունակական ձևը՝ ընդգծելով կատարվող գործընթացների շարունակական և կայուն բնույթը.

“Companies are investing. Consumers are spending. American manufacturing, energy, technology, autos -- all are booming.”

Օբաման այստեղ արդեն ոչ թե խորհրդանշական տարեթվերի միջոցով ակնարկում, այլ ուղղակիորեն ասում է, որ այս ամենն իրականություն է դարձել իր և իր համախոհների վարած ճիշտ քաղաքականության և Ամերիկայի ժողովրդի հանդուրժողականության շնորհիվ: Նա ձևավորում է այն միտքը, որ իր աշխատակազմը և ժողովուրդը գործում են միասին, ծառայում են միևնույն նպատակին, և այդ միասնականության շնորհիվ է, որ իրենց երկիրը կրկին աշխարհի մյուս զարգացած երկրների շարքում առաջատարն է.

“And thanks to *the decisions that we've made, and the grit and resilience of the American people*, we've recovered faster and come farther from the recession than almost any other *advanced country on Earth.*”

Օբամայի խոսքի այս հատվածում կիրառվող մի շարք լեզվական միջոցներ ծառայում են լսարանին համոզելու և վստահություն ներշնչելու ռազմավարությանը: Առավել ակնհայտորեն է դրսևորվում հետևյալ լեզվական միջոցների կիրառումը.

ա) բայի ներկա շարունակական ժամանակաձևը, որը, ինչպես արդեն նշվեց, տվյալ դեպքում կիրառվում է, երբ խոսքը վերաբերում է իրականացվող դրական գործընթացներին և միտված է ընդգծելու տվյալ գործընթացների շարունակական և կայուն բնույթը (are investing, are spending, are booming, is getting, are revving): Բացի ներկա շարունակականից, կիրառվում է նաև ներկա վաղակատարը, որն այստեղ նույնպես շեշտում է դրական գործընթացների

արդյունքները և դրանց կապը անցյալի և ներկայի հետ (we've made, we've recovered): ժամանակն արտահայտող քերականական ձևերին զուգահեռ կիրառվում են նաև բառային ձևեր (this morning, in July, in June, since 2006, 53 months, on Wednesday, in the spring):

Հակադրությունները ստեղծվում են դրականի և բացասականի ժամանակային առանցքի վրա տեղադրությամբ: Ժամանակային իմաստի արտահայտումն իրականացվում է բառաքերականական միջոցներով՝ ինչպես բայերի ժամանակային ձևերով, այնպես և ժամանակային ցուցայնության բառարտահայտման միջոցներով, մասնավորապես ներկա վաղակատար և ներկա շարունակական ժամանակաձևերով՝ որպես անցյալի և ներկա ընթացքի և շարունակականության, ինչպես նաև փոփոխության արձանագրման համար: Ժամանակային ցուցայնության բառային արտահայտման միջոցները օրվա, ամսվա, տարվա և այլ տարբեր հատվածներ անվանող միջոցներ են:

բ) Ածականի համեմատական աստիճանի կիրառումը: Ընդ որում կիրառված են միայն դրական իմաստ ունեցող ածականների համեմատական աստիճանները, ինչը խոսքը դարձնում է դրական միտումների և զարգացումների արձանագրություն՝ ընդգծելով առաջընթացը և բարեփոխումները (faster, farther, stronger, better, louder):

գ) Դրական բառապաշարի օգտագործում (grew, strong, investing, booming, recovered, advanced, growth, momentum):

Տնտեսական աճի, դրական փոփոխությունների և գործընթացների մասին խոսելուց հետո միայն նախագահ Օբաման անդրադառնում է այն խնդիրներին, որոնք դեռևս լուծում չեն ստացել և կարող են անհանգստացնել իր լսարանին: Այսպիսով, նա կարծես թե սկզբում դրական ֆոն է ապահովում որոշակի լեզվական միջոցների կիրառմամբ, որի շնորհիվ կթուլացվի հետագայում հնչեցվող բացասական տեղեկության ազդեցությունը:

Օբաման կիրառում է հռետորական արվեստում լայնորեն կիրառվող մի ռազմավարություն՝ հերքումը (rebuttal): Այս ռազմավարության կիրառմամբ հռետորները սովորաբար իրենց հիմնավարկածը փաստարկելուց հետո ջախջախում են հակառակորդների հավանական ամենագորեղ հակափաստարկը՝ նախ ընդունելով նրանց կողմից հավանաբար առաջադրվող խնդրի առկայությունը և ապա տրամաբանական հիմնավորումներով քայքայելով դրա հակընդդեմ փաստարկվածությունը:

“Unfortunately, there are a series of steps that we could be taking to maintain momentum, and perhaps even accelerate it; there are

steps that we could be taking that would result in more job growth, higher wages, higher incomes, more relief for middle-class families.”

Այստեղ նույնպես մենք տեսնում ենք վերոնշյալ լեզվական միջոցների՝ դրական բառապաշարի (maintain, momentum, accelerate, growth, wages, incomes, relief) և ածականի համեմատական աստիճանի կիրառումը (more, higher): Ինչ վերաբերում է բայի պայմանական եղանակի շարունակական ձևի կիրառմանը՝ «could be taking», ապա մենք գիտենք, որ այն արտահայտում է ըղձականություն. զարգացում, որը, սակայն, չի իրականացել նպաստավոր պայմանների բացակայության պատճառով:

Խոսելով խնդիրների և այն քայլերի մասին, որոնք պետք է ձեռնարկվեն դրական շարժը պահպանելու և ավելի լավ արդյունքներ գրանցելու նպատակով (որոնք, սակայն, իրականում չեն ձեռնարկվել), Օբաման մեղքի մեծ բաժինը դնում է Կոնգրեսի վրա, որը, ըստ նրա, կա՛մ չի ցանկանում, կա՛մ էլ ընդունակ չէ այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկելու: Այստեղ նա հակադրում է իրեն և իր համախոհներին («մենք») և Կոնգրեսի անդամներին («նրանք») և «նրանց» է մեղադրում դեռևս լուծում չգտած բազմաթիվ խնդիրների առկայության մեջ՝ այսպիսով կիրառելով «մենք-նրանք» հակադրության ռազմավարությունը, որտեղ «մենքը» ներկայացվում է որպես դրական, իսկ «նրանքը»՝ որպես բացասական կողմ: Այստեղ նա հակադրում է նաև քաղաքական կամքի և կարողության հասկացությունները:

“And so far, at least, in Congress, we have not seen them willing or able to take those steps.”

Շարունակելով հակադրել իրեն և իր աշխատակազմը Կոնգրեսին՝ Օբաման նաև ցանկանում է շեշտել, որ իրավիճակի բարելավումը բացառապես իրենց շնորհիվ է, Կոնգրեսի կողմից աջակցություն չկա: Նա հիշեցնում է խնդիրների լուծմանն ուղղված այն գաղափարներն ու ելքերը, որ ինքն է առաջարկել, և որոնք չեն արժանացել Կոնգրեսի ուշադրությանը և չեն ընդունվել՝ էլ ավելի խորացնելով հակադրությունը օրենսդիր և գործադիր մարմինների միջև.

“I’ve been pushing for common-sense ideas like rebuilding our infrastructure in ways that are sustained over many years and support millions of good jobs and help businesses compete. I’ve been advocating on behalf of raising the minimum wage, making it easier for working folks to pay off their student loans; fair pay, paid leave. All these policies have two things in common: All of them

would help working families feel more stable and secure, and all of them so far have been blocked or ignored by Republicans in Congress. That's why my administration keeps taking whatever actions we can take on our own to help working families.”

Այս հատվածում «մենք-նրանք» հակադրությունն արտահայտված է նաև դրական և բացասական բառապաշարի կիրառության միջոցով: Խոսելով իր և իր վարչակազմի մասին՝ Օբաման օգտագործում է հետևյալ դրական արտահայտությունները և բառապաշարը.

“pushing for common-sense ideas, rebuilding, sustained, support, help, advocating, raising, making it easier, pay off, fair pay, paid leave, more stable and secure”

Երբ խոսքը վերաբերում է Կոնգրեսին, բառապաշարն առավելապես բացասական է (*blocked, ignored*), ի նշան Հանրապետական կոնգրեսականների խոչընդոտող կամ նախագահի ջանքերն անտեսող դիրքորոշման:

Ցանկանալով էլ ավելի նվազեցնել Կոնգրեսի դերը դրական փոփոխությունների հարցում՝ Օբաման, խոսելով Կոնգրեսի կողմից ընդունված ընդամենը մեկ ծրագրի մասին, նշում է, որ այդ ծրագիրը թեև կարևոր է, սակայն տնտեսության զարգացման հարցում այդքան էլ մեծ դեր չունի, մինչդեռ հիմնահարցերն անուշադրության են մատնված. Կոնգրեսն իր գործողություններով խափանում է երկարաժամկետ զարգացման միտումները.

“Now, it's good that Congress was able to pass legislation to strengthen the VA. And I want to thank the chairmen and ranking members who were involved in that. It's good that Congress was able to at least fund transportation projects for a few more months before leaving town -- although it falls far short of the kind of infrastructure effort that we need that would actually accelerate the economy. But for the most part, the big-ticket items, the things that would really make a difference in the lives of middle-class families, those things just are not getting done.”

Շարունակելով նախագահի ջանքերի և Կոնգրեսի ձեռքբերումների միջև հակադրության թեման՝ Օբաման կիրառում է մի շարք բառաքերականական միջոցներ, որոնք ունկնդրի մեջ ստեղծում են նախագահի կողմից Կոնգրեսի քայլերի անբավարար արժևորման տպավորություն: Մասնավորապես, այս հաղորդակցական արդյունքին նպաստում են՝ *«was able to pass, was able to at least fund, the things that would really make a difference»* արտահայտությունները:

Նախքան լրագրողների հարցերին անցնելը, նախագահ Օբաման կրկին վերադառնում է իր կառավարման տարիներին արձանագրված ձեռքբերումներին: Իր խոսքի այս հատվածում կիրառելով «մենք»-ը՝ նա նորից նկատի ունի ոչ միայն իրեն և իր անձնակազմը, այլ նաև Ամերիկայի ժողովրդին: Ասելով, որ Ամերիկայի ժողովուրդը պահանջում է և արժանի է ավելին, նա ցանկանում է ընդգծել, որ այդ ձեռքբերումները և իրենց տարած ողջ աշխատանքը եղել են հանուն ժողովրդի և ծառայում են մեկ ընդհանուր նպատակի՝ ժողովրդի բարեկեցությանը: Մինչդեռ, եթե Կոնգրեսը նույնպես աշխատեր հավուր պատշաճի և արդարացներ ժողովրդի սպասելիքները, արդյունքներն ավելի ոգևորիչ կլինեին:

“So the bottom line is this: We have come a long way over the last five and a half years. Our challenges are nowhere near as daunting as they were when I first came into office. But the American people demand and deserve a strong and focused effort on the part of all of us to keep moving the country forward and to focus on their concerns. And the fact is we could be much further along and we could be doing even better, and the economy could be even stronger, and more jobs could be created if Congress would do the job that the people sent them here to do.”

Փաստորեն Օբաման հակադրում է նաև ժողովրդին և Կոնգրեսը՝ ցանկանալով հակաժողովրդական որակել Կոնգրեսի գործունեությունը: Եթե Կոնգրեսը խոչընդոտում է «մեր» կողմից առաջադրվող ժողովրդական օրենքների ընդունումը, ապա դրանով այն խոչընդոտում է ժողովրդի և երկրի առաջընթացը, քանի որ «մենք»-ը նաև ժողովուրդն է:

Այնուամենայնիվ, գիտակցելով, որ կառավարական բոլոր մարմինները պետք է ծառայեն մեկ նպատակի, և նրանց միջև խիստ տարածայնությունները և հակամարտությունները չեն բխում ժողովրդի շահերից, Օբաման իր ելույթը եզրափակում է այն մտքով, որ ինքը ջանք չի խնայի, հավասարապես կաշխատի կառավարության երկու կողմերի հետ միասին և հույս է տածում, որ հետագայում Կոնգրեսը կնպաստի, այլ ոչ թե կխոչընդոտի նրանց աշխատանքը՝ կանգնելով երկրի առաջընթացի ճանապարհին, ինչպես դա արվել էր նախկինում և արվում է հիմա:

“And I will not stop trying to work with both parties to get things moving faster for middle-class families and those trying to get into the middle class. When Congress returns next month, my hope is, is that instead of simply trying to pass partisan message bills on party

lines that don't actually solve problems, they're going to be willing to come together to at least focus on some key areas where there's broad agreement. After all that we've had to overcome, our Congress should stop standing in the way of our country's success.”

Օբաման իր ելույթն ավարտում է՝ հույսով լի հայացքը դեպի ապագան՝ նախանշելով Կոնգրեսի հետ իրենց երկկողմ համագործակցությունը:

Միայն այսքանից հետո է Բ. Օբաման վերադառնում մամլո ասուլիսի ձևաչափին և լրագրողների հարցերին պատասխանելու պատրաստակամություն արտահայտում: Տվյալ իրավիճակը կարելի է մեկնաբանել երկու կողմից. նախ կարելի է ենթադրել, որ Բ. Օբաման ցանկանում է իր լսարանի ուշադրությունը սևեռել տնտեսության, դրական աճի և երկրի ներքին խնդիրների վրա՝ դրանով իսկ շեղելով լսարանի ուշադրությունը այլ՝ առավել արդիական, մեծամասշտաբ և անհապաղ լուծում պահանջող հարցերից: Եթե նկատի ունենանք, որ տվյալ մամլո ասուլիսում հնչած հենց առաջին և դրան հաջորդող հարցերը վերաբերում էին ոչ թե ԱՄՆ-ի ներքին, այլ արտաքին քաղաքականությանը, ապա կարող ենք Օբամայի՝ ուշադրություն շեղելու այս ռազմավարությունը ձախողված համարել:

Մյուս կողմից, եթե նախագահի նպատակն էր իր ելույթով սպառել տնտեսության թեման և այլևս չանդրադառնալ դրան, ապա այս ռազմավարությունը կարելի է հաջողված համարել, քանի որ ողջ մամլո ասուլիսի ընթացքում ներքին քաղաքականությանը և տնտեսությանն առնչվող ընդամենը երկու հարց է հնչում:

Կատարված ուսումնասիրության արդյունքում մենք գալիս ենք այն եզրահանգման, որ նախագահ Օբաման իր խոսքը կառուցում է՝ դիմելով ռազմավարական այնպիսի միջոցների, ինչպիսիք են հերքումը, վիճակագրական տվյալների և թվերի կիրառումը և նկարագրությունները:

Հռետորական ռազմավարություններից առանձնանում են «մենք-նրանք» հակադրության կիրառումը, ինչպես նաև «ես»-ի դրական և բարոյական պատկերումը (ethos):

Նշված խոսքային ռազմավարություններին ծառայում են հետևյալ բառաբերականական միջոցները՝ դրական և բացասական բառապաշարը, ածականի համեմատական աստիճանի կիրառումը, բայի պայմանական եղանակի, ներկա շարունակական և վաղակատար ժամանակաձևերի կիրառումը, ժամանակային ցուցայնության բառապաշարը և այլ միջոցներ:

Նշված բոլոր ռազմավարություններն ու լեզվական միջոցները գործածվում են լսարանին համոզելու, հարկ եղած դեպքում մտափոխելու և վստահություն ներշնչելու նպատակով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տվյալ հոդվածում իրականացվում է քաղաքական խոսույթի՝ մամլո ասուլիսներում արտահայտված առանձնահատկությունների խորքային վերլուծություն: Վերլուծությունն անդրադառնում է հոետորական և խոսույթային ռազմավարություններին, ինչպես նաև ցանկալի ազդեցության հասնելու նպատակով կիրառված հատուկ բառաքերականական միջոցներին:

Բանալի բառեր – խոսույթ, քաղաքական խոսույթ, ռազմավարական միջոցներ, բառաքերականական միջոցներ, մամլո ասուլիս:

РЕАЛИЗАЦИЯ СТРАТЕГИЙ ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА В ПРЕСС-КОНФЕРЕНЦИЯХ

АНАИТ МАНУКЯН, КРИСТИНЕ СОГИКЯН

Данная статья представляет собой анализ характеристик политического дискурса, нашедших отражение в пресс-конференциях. Рассматриваются риторические и дискурсивные стратегии, а также использование особых лексико-грамматических средств для достижения желаемого эффекта.

Ключевые слова - дискурс, политический дискурс, стратегические средства, лексико-грамматические средства, пресс-конференция.

POLITICAL DISCOURSE STRATEGIES IN PRESS-CONFERENCES

ANAHIT MANUKYAN, KRISTINE SOGHIKYAN

The present article presents an insightful analysis of the characteristics of political discourse as reflected in press conferences. This analysis considers the rhetorical and discursive strategies as well as the use of specific lexical and grammatical means to achieve the sought-after effect.

Key words – discourse, political discourse, strategic means, lexical and grammatical means, press conference.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱՏՕ-Ի ՀԵՏ ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է ակտիվ ռազմաքաղաքական գործակցություն ՆԱՏՕ-ի հետ: Սկսած 1990-ական թվականների սկզբներից՝ Հյուսիսատլանտյան դաշինքը հետաքրքրություն ցուցաբերեց հաստատելու խորացված երկխոսություն նախկին ԽՍՀՄ մաս կազմած կամ նրա ազդեցության ներքո գտնված պետությունների հետ: Հայաստանի համար այդ հարաբերությունները կարևոր էին մի քանի առումներով: Թեև ՀՀ-ն արտաքին անվտանգության ոլորտում կարևորագույն ուղղությունը համարում էր Ռուսաստանի հետ հարաբերությունները և ԱՊՀ շրջանակներում ձևավորվող անվտանգության համակարգը, սակայն, հաշվի առնելով ՆԱՏՕ-ի անխուսափելի ակտիվացումը նաև Հարավային Կովկասի տարածաշրջանում, ինչպես նաև Ադրբեջանի և Վրաստանի ցանկությունը հնարավորինս խորը հարաբերություններ հաստատել այդ կառույցի հետ, Հայաստանի համար հրամայական էր դառնում Դաշինքի հետ զարգացնել իր սեփական օրակարգը տարածաշրջանում՝ բևեռացում և նոր բաժանարար գծեր թույլ չտալու նպատակով: Մյուս կողմից անհնար էր թերագնահատել այն դերակատարությունը, որ ՆԱՏՕ-ն խաղում էր եվրոպական աշխարհամասում անվտանգության պահպանման գործում, ուստի եվրոպական ընտանիքի շարքերը համալրել և եվրոպական երկրների ու կառույցների հետ զարգացած հարաբերություններ հաստատել փորձող Հայաստանի համար ՆԱՏՕ-ի հետ ակտիվ երկխոսությունը կարող էր նպաստավոր լինել այս առումով:

Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների սկզբնակետը կարելի է համարել 1992թ., երբ ՀՀ-ն միացավ նորաստեղծ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին: Արդեն երկու տարի անց Հայաստանն անդամակցեց «Գործընկերություն հանուն խաղաղության» նախաձեռնությանը (ԳՀԽ): Այդ ծրագիրը, որն առաջ էր քաշվել ԱՄՆ-ի կողմից և 1994թ. հունվարին ընդունվել

ՆԱՏՕ-ի բարձրագույն մարմնի՝ Հյուսիսատլանտյան խորհրդի կողմից, ՆԱՏՕ-ի և դրան չանդամակցող երկրների միջև ռազմական ուղորտում համագործակցության հնարավորություն ընձեռեց:

ԳՀԽ շրջանակներում համագործակցությանն առնչվող խնդիրները քննարկելու նպատակով 1995թ. հոկտեմբերին Հայաստան այցելեց Եվրոպայում ՆԱՏՕ-ի գործերի հրամանատարի տեղակալ Ջ. Մակքենզիի ղեկավարած պատվիրակությունը: Սա ՆԱՏՕ-ի կողմից Հայաստան այցելած առաջին բարձրաստիճան պատվիրակությունն էր: Եռօրյա այցի ընթացքում գեներալ Մակքենզին կոչ արեց ՀՀ կառավարությանն ավելի ակտիվ ռազմական կապեր հաստատել ՆԱՏՕ-ի հետ ԳՀԽ-ի միջոցով: Այդ կապակցությամբ ՀՀ գործող ԱԳ նախարար Վահան Փափազյանը նշեց, որ Հայաստանը նախատեսում է ավելի ակտիվ դեր ստանձնել ծրագրի շրջանակներում՝ միևնույն ժամանակ շեշտելով, որ Հայաստանն այդ ամենը կշարունակի անել «զգույշ տեմպերով»¹:

1997թ. փետրվարին արդեն ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարն այցելեց Հայաստան: Այցի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հայտարարեց, որ ՀՀ զինված ուժերը ՆԱՏՕ-ի հետ կմասնակցեն զորավարժությունների կառույցի գործառնության մեթոդներին ծանոթանալու նպատակով²:

Եւոյն թվականի մայիսի 30-ին Պորտուգալիայի Սինտրա քաղաքում ՀՀ պատվիրակությունը՝ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանյանի գլխավորությամբ, մասնակցեց ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր պետությունների ներկայացուցիչների հանդիպմանը, որի ընթացքում մասնակից պատվիրակությունները համաձայնվեցին Եվրաստլանտյան գործընկերության խորհրդի ստեղծման վերաբերյալ:

ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների ակտիվ զարգացման վրա հատկապես 90-ական թթ. ազդեցություն էին թողնում մի շարք գործոններ: Նախ և առաջ Հայաստանը ՌԴ-ի և մի շարք այլ պետությունների հետ ստորագրել էր հավաքական անվտանգության մասին պայմանագիրը, որը ենթադրում էր ռազմական դաշինքի ստեղծում: Այս հանգամանքը չէր կարող որոշակի սահմանափակումներ չմտցնել անվտանգության այլ համակարգերի

¹ Տե՛ս Glen E. Howard “NATO and The Caucasus: The Caspian Axis”, 1998 Strategic Studies Institute of the US Army War College (SSI), p. 189.

² Տե՛ս նույն տեղում:

հետ հարաբերությունների զարգացման համար: Մյուս կողմից ՆԱՏՕ-ի ակտիվ անդամներից մեկը՝ Թուրքիան, շրջափակման մեջ էր պահում Հայաստանին, տարբեր ադիթներով իր աջակցությունն էր հայտնում Ադրբեջանին Ղարաբաղյան հարցում՝ փորձելով օգտագործել նաև ՆԱՏՕ-ի հարթակը, թեև Դաշինքը պաշտոնապես բազմիցս հայտարարել էր, որ ԼՂ հակամարտության կարգավորումն իր հետաքրքրությունների շրջանակից դուրս է: Թուրքիայի նմանատիպ կեցվածքը թերահավատություն էր առաջացնում ՆԱՏՕ-ի՝ տարածաշրջանում անվտանգության ամրապնդման կարողությունների վերաբերյալ: Պետք է նշել նաև, որ ՆԱՏՕ-ն ինքը հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի սկզբնական փուլում դեռ հստակ պատկերացում չունեի Հարավային Կովկասի և հետխորհրդային մի շարք այլ երկրների հետ հարաբերությունների կառուցման տեսլականի առումով: Եթե արևելաեվրոպական երկրների հետ հարաբերությունները կառուցվում էին հետագա անդամակցության հստակ նպատակի առկայության պայմաններում, ապա նույնը հնարավոր չէր ասել գործընկեր մյուս պետությունների մասին: Այս գործոնների հետևանքով Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության սկզբնական փուլը առատ չէր գործնական օրինակներով և ընդգրկում էր սակավաթիվ ուղղություններ: Ընդհանուր առմամբ, 90-ական թվականները կարելի է գնահատել որպես հնարավորությունների ուսումնասիրության և երկկողմ մտադրությունների փոխանակման փուլ, երբ համագործակցությունը սահմանափակվում էր ԳՀԽ շրջանակներում կազմակերպվող որոշակի միջոցառումներին ՀՀ ՊՆ ներկայացուցիչների մասնակցությամբ:

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո ՆԱՏՕ-ի կողմից էապես վերանայվեց Հարավային Կովկասի տարածաշրջանի նշանակությունը: Այն սկսեց դիտվել որպես համաշխարհային մարտահրավերների դեմ պայքարում կարևորագույն հենակետ: Այս պայմաններում Դաշինքի կողմից ավելացան ազդակները գործընկեր պետությունների հետ հարաբերությունների առավել խորացման վերաբերյալ: ՌԴ-ի հետ ընդհանուր առմամբ համագործակցային երկխոսության ծավալումը ևս խթանեց Դաշինքի և հետխորհրդային պետությունների միջև առավել անկաշկանդ հարաբերությունների կառուցումը: Մյուս կողմից, արևելաեվրոպական պետությունների մեծ մասի անդամակցությունը Դաշինքին վերադասավորումներ մտցրեց ՆԱՏՕ-ի հարևանության քաղաքականության առաջնայնությունների մեջ:

Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության զարգացման, մասնավորապես ԳՀԽ ծրագրի շրջանակներում Դաշինքի հետ ՀՀ ԶՈՒ գործակցության

խորացման առումով կարևոր նշանակություն ունեցավ 2002թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի կողմից ԳՀԽ՝ պլանավորման և վերանայման գործընթացին (ՊԿԳ/PARP) միանալը: Պլանավորման և վերանայման գործընթացի հիմնական ռազմական նպատակը ծրագրի մասնակից պետությունների կողմից հայտարարվող զորամիավորումները ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցնելն է՝ ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող զորավարժություններին, իսկ անհրաժեշտության դեպքում խաղաղապահ գործողություններին ներգրավելու հեռանկարով:

Ծրագրի համաձայն՝ Հայաստանը ՆԱՏՕ-ի զորավարժություններին և գործողություններին մասնակցելու նպատակով կազմավորում է մեկ խաղաղապահ բրիգադ՝ իր մարտական և թիկունքային ապահովման ստորաբաժանումներով (թիկունքային, հետախուզական, նոնականետային, ականանետային, բժշկական, ակննազերծման, միջուկային, կենսաբանական և քիմիական պաշտպանության), արդիականացնում է այդ նպատակի համար անհրաժեշտ կապի համակարգը, պատրաստում շտաբային սպաներ՝ ՆԱՏՕ-ի շտաբներում աշխատելու համար: 2005թ. այս ծրագրի շրջանակներն ընդլայնվեցին՝ հնարավորություն տալով այն տարածելու նաև պաշտպանական բարեփոխումների վրա:

Գործընկեր պետությունների հետ ՆԱՏՕ-ի հարաբերությունների ինստիտուցիոնալացման առումով շրջադարձային նշանակություն ունեցավ 2002թ. նոյեմբերին Պրահայում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովը: Նոյեմբերի 21-ին ընդունված հռչակագրում Դաշինքի անդամ երկրների և կառավարությունների ղեկավարները կոչ էին արել Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների ռազմավարական կարևոր երկրներին օգտվել ՆԱՏՕ-ի հետ համագործակցության նոր գործնական մեխանիզմներից, ինչպիսիք են անհատական գործակցության ծրագրերը, որոնք կօգնեն ձևավորել համապարփակ և տարբերակված մոտեցումներ՝ աջակցություն ցուցաբերելով բարեփոխումներ իրականացնող գործընկեր պետություններին³: Փաստաթղթում կոչ էր արվում գործընկեր պետություններին ՆԱՏՕ-ի հետ զարգացնել ավելի խորը հարաբերություններ անհատական մակարդակով և համաձայնեցնել Անհատական գործընկերության գործողությունների ծրագրեր (ԱԳԳԾ), որոնք կներդաշնակեցնեին, կհամակարգեին և կկազմակերպեին ԵԱԳ-ի և ԳՀԽ-ի շրջա-

³ Տե՛ս «Հայաստան-ՆԱՏՕ. Առաջընթացի 10 տարիներ (1999-2008)», կազմեց՝ Թադևոսյան Ա., Երևան, 2008, էջ 34:

նակներում ՆԱՏՕ-գործընկեր պետություն հարաբերությունների բոլոր ասպեկտները՝ համաձայն Դաշինքի նպատակների և յուրաքանչյուր գործընկեր երկրի առանձնահատուկ պայմանների և շահերի⁴:

ԱԳԳԾ-ն նախատեսում էր խորհրդատվության տրամադրում և աջակցություն գործընկերներին պաշտպանության և անվտանգության ապահովման հարցերում վերջիններիս կողմից բարեփոխումների իրականացման ընթացքում⁵: Սակայն այս ձևաչափի ներմուծումով ՆԱՏՕ-ն կարևորություն էր տալիս գործընկեր պետությունների կողմից պաշտպանական հաստատությունների բարեփոխումներին ձեռնամուխ լինելու քաղաքական հանձնառության արտահայտմանը, որից հետո միայն ՆԱՏՕ-ի անձնակազմը և անդամ-պետություններն ի վիճակի կլինեն խորհրդատվություն տրամադրելու դրանց իրականացման վերաբերյալ:

2004թ. հունիսի 12-ին Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես դիմեց ՆԱՏՕ-ի ղեկավարությանը՝ այդ կազմակերպության հետ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր իրականացնելու առաջարկով, որը 2004թ. հուլիսի 29-ին արժանացավ Հյուսիսատլանտյան խորհրդի դրական արձագանքին և հավանությանը: Ծրագրի հիմքը հանդիսացավ Հայաստանի կողմից կազմված «Ներկայացման փաստաթուղթը», որը 2005թ. հունիսի 10-ին ՀՀ պաշտպանության նախարարը ՀՀ նախագահի հանձնարարականով պաշտոնապես փոխանցեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարին: 2005թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի ԱԳԳԾ-ն քննարկվեց Բրյուսելում կայացած ՆԱՏՕ-ի քաղաքական կոմիտեում և 26+1 ձևաչափով ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական կոմիտեի ընդհանուր նիստում, իսկ դեկտեմբերի 16-ին այն հաստատվեց Հյուսիսատլանտյան խորհրդի կողմից և ուժի մեջ մտավ⁶:

ԱԳԳԾ-ի նախաձեռնությամբ ՀՀ-ի և ՆԱՏՕ-ի միջև սկիզբ առավ որակապես նոր և ավելի խորացված համագործակցություն: Այս ծրագիրը հնարավորություն ընձեռեց օգտագործելու ՆԱՏՕ-ի անդամ երկրների փորձն ու խորհրդատվությունը պաշտպանական համակարգի բարեփոխման և արդիականացման համար:

2009թ. մայիսի 4-ին Հյուսիսատլանտյան խորհրդում հաստատվեց ՀՀ-ՆԱՏՕ 2009-2010թթ. նորացված Անհատական գործընկերության գործողու-

⁴ Տե՛ս <http://www.nato.int/docu/rdr-gde-prg/rdr-gde-prg-eng.pdf>.

⁵ Տե՛ս «Հայաստան-ՆԱՏՕ. Առաջընթացի 10 տարիներ (1999-2008)», կազմեց՝ Թադևոսյան Ա., էջ 34:

⁶ Նույն տեղում, էջ 35:

թյունների ծրագիրը⁷: Փաստաթղթում պաշտպանական և ռազմական խնդիրների շարքում ընդգրկվել են պաշտպանական և անվտանգության համակարգի բարեփոխումը, պաշտպանական պլանավորումը, ռազմական վարժանքի և փոխգործունակության խնդիրները և սահմանային անվտանգությունը⁸: Փաստաթղթում նաև շարադրված էին այն պետական միջոցառումները, որոնք պետք է իրականացվեին ՀՀ-ի կողմից վերը նշված խնդիրների լուծման համար: Դրանք էին հրամանատարական օղակի վերանայումը, ազգային անվտանգության քաղաքականության և դրան վերաբերող փաստաթղթերի մշակումը, պաշտպանական ռազմավարական վերանայման իրականացումը, պաշտպանական պլանավորումը և բյուջետավորումը, պահեստազորի վերապատրաստումը, ՆԱՏՕ-ի չափանիշների համապատասխան մեկ խաղաղապահ բրիգադի կազմավորումը, զորավարությունների և գործողությունների պլանավորումը, անձնակազմի վերապատրաստումը և կառավարումը, կրթական համակարգի վերանայումը, ուսումնական ծրագրերի մշակումը և եղածների թարմացումը, անձնակազմի կառավարման համակարգի բարեփոխումները, լեզվի ուսուցումը, հրամանատարության, վերահսկողության և թիկունքային ապահովման երկարաժամկետ ծրագրերը, ռազմարդյունաբերական համալիրի գնահատումը՝ պաշտպանության համար դրա օգտակարությունը և առնչությունը սահմանելու համար, և սահմանային անվտանգության ամրապնդման աշխատանքները⁹:

Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության առանցքային ուղղություններից է ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպված տարբեր զորավարություններին և սեմինարներին ՀՀ ԶՈՒ-ի մասնակցությունը: Այդ միջոցառումներին Դաշինքի անդամ-պետություններից զատ մասնակցում էին նաև գործընկեր երկրների ներկայացուցիչները, ինչը նպաստում էր ոչ միայն Դաշինքի և գործընկեր պետությունների միջև, այլ նաև ՆԱՏՕ-ին չանդամակցող տարբեր պետությունների միջև ռազմական ոլորտում փոխգործակցության հաստատմանը:

1997թ. դեկտեմբերին Հունաստանի Պոլիկատրա քաղաքում «Պրոմեթևս 97» միջազգային զորավարությանը Հունաստանի, Նիդեռլանդների, Բուլղարիայի և Ալբանիայի զինված ուժերի հետ միասին մասնակցություն

⁷ Տե՛ս http://mfa.am/u_files/file/reports/report2009.pdf.

⁸ Տե՛ս http://www.mil.am/files/IPAP%202009-2010-Unclassified_arm.pdf.

⁹ Տե՛ս նույն տեղում:

ունեցավ ՀՀ-ն 27-հոգանոց ստորաբաժանմամբ¹⁰: 2002թ. փետրվարին Երևանում կայացավ նույն տարվա ամռանը Վրաստանում կայանալիք «Համատեղ լավագույն ջանք-2002» (Cooperative Best Effort-2002) զորավարությունների պլանավորման գլխավոր կոնֆերանսը¹¹: Հայաստանի տարածքում անցկացված ԳՀԽ առաջին խոշոր միջոցառման շրջանակներում հայտարարվեց «Համատեղ լավագույն ջանք-2003» զորավարությունները Հայաստանում անցկացնելու մասին: Մինչ այդ միայն հայ-ռուսական համատեղ զորավարություններ անցկացրած Հայաստանում ՆԱՏՕ-ի զորավարության անցկացման մասին այդ հաղորդագրությունը շատ մեկնաբաններ որակեցին որպես «սենսացիա»¹²:

«Համատեղ լավագույն ջանք-2003» զորավարությունն անցավ հունիսի 16-27-ը Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի տարածքում: Մասնակցեց ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր 19 երկրի 400 զինծառայող (ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Հունաստան, Թուրքիա, Հունգարիա, Լեհաստան, Ավստրիա, Սլովակիա, Ռումինիա, Բուլղարիա, Մակեդոնիա, Լիտվա, Հայաստան, Ռուսաստան, Վրաստան, Մոլդովա և Ուզբեկստան):

2006թ. հուլիսի 14-ին ՀՀ ՊՆ ռազմական ավիացիոն ինստիտուտում կայացավ ԳՀԽ շրջանակներում ԱՄՆ եվրոպական հրամանատարության կազմակերպած «Փրկարար-2006» (Rescuer-2006) վարժանքը, որին մասնակցեցին ավելի քան 300 սպաներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Ալբանիայից, Ավստրիայից, Վրաստանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Մակեդոնիայից, Ռումինիայից, Տաջիկստանից և Ուկրաինայից, ինչպես նաև ներկայացուցիչներ ՄԱԿ-ից և Կարմիր խաչի միջազգային կոմիտեից¹³:

2007թ. ապրիլի 27-ին ՀՀ ՊՆ ավիացիոն ինստիտուտում մեկնարկեցին ԱՄՆ եվրոպական հրամանատարության կողմից «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում իրականացվող «Համատեղ ձգտում – 2007» զորավարությունները, որոնց նպատակն էր փորձարկել, նույնացնել և փաստաթղթերով հիմնավորել հաղորդակցման միացյալ բազմազգ ռազմավա-

¹⁰ Տե՛ս “NATO after enlargement: New chalanges, new missions, new forces”, edited by Stephen J. Blank, Strategic Studies Institute of the US Army War Collegep. 1998, p. 192.

¹¹ Տե՛ս «Հայաստան-ՆԱՏՕ. Առաջընթացի 10 տարիներ (1999-2008)», կազմեց՝ Թադևոսյան Ա., 2008, էջ 15:

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

րական և մարտավարական համակարգերի փոխգործակցությունը¹⁴: Ջորավարժություններին մասնակցեց շուրջ 130 սպա Ֆրանսիայից, Ռուսաստանից, Վրաստանից և ԱՄՆ-ից:

2008թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հայաստանը հյուրընկալեց ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի «Համատեղ աղեղ, համատեղ նիզակակիր – 2008» զորավարժությունները: Այն ՆԱՏՕ-ի կողմից մինչ այդ Հարավային Կովկասում անցկացված խոշորագույն զորավարժությունն էր, ինչպես նաև այդ տարվա Դաշինքի ամենախոշոր միջոցառումներից մեկը: Ջորավարժությունների առաջին փուլը՝ հրամանատարաշտաբայինը կամ «Համատեղ աղեղ 2008-ը», որի նպատակը արագ արձագանքման բազմազգ շտաբի խաղաղարար գործողությունների պլանավորումն էր, մեկնարկեց սեպտեմբերի 29-ին Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում: Երկրորդ, դաշտային փուլը՝ «Համատեղ նիզակակիր 2008-ը», սկսվեց հոկտեմբերի 9-ին Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի մերձակայքում¹⁵:

Սկսած 2008թ.-ից՝ ՆԱՏՕ-ի քաղաքականության փոփոխության արդյունքում գործընկեր երկրների ներգրավմամբ զորավարժություններ չեն անցկացվում, այդ իսկ պատճառով ՀՀ ՊՆ-ն այս ոլորտում համագործակցությունը շարունակում է երկկողմ ձևաչափով:

ՀՀ ՋՌԻ-ի առաջին խաղաղապահ դասակը տեղակայվեց Կոսովոյում՝ հունական գումարտակի կազմում՝ նոր էջ բացելով Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններում: 2004թ. փետրվարի 12-ին 34-հոգանոց դասակն ուղևորվեց Կոսովո: 2008թ. հունիսին Հայաստանի Հանրապետությունը կրկնապատկեց իր խաղաղապահ ուժերը Կոսովոյում՝ հասցնելով մեկ վաշտի (70 զինձառայող)¹⁶: Կոսովոյում հունական ստորաբաժանման դուրսբերումից հետո հայ խաղաղապահներն իրենց գործունեությունը շարունակեցին արդեն ամերիկյան հրամանատարության ներքո: 2005թ.-ից բժիշկներից, սակրավորներից և վարորդներից բաղկացած 46-հոգանոց հայ խաղաղապահ ստորաբաժանումը բազմազգ բրիգադի հրամանատարությամբ մեկնեց Իրաք: 2008թ. հոկտեմբերին հայ խաղաղապահներն ավարտեցին իրենց առաքելությունն Իրաքում:

¹⁴ Տե՛ս <http://www.azatutyun.am/content/article/1588020.html>.

¹⁵ Տե՛ս <http://www.a1plus.am/26448.html>.

¹⁶ Տե՛ս http://mfa.am/u_files/file/reports/report2008.pdf.

2009թ. նոյեմբերի 20-ին ՀՀ ԱԳ և պաշտպանության նախարարների գլխավորած պատվիրակությունը Լիսաբոնում մասնակցեց Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերին (ISAF) ներդրում կատարող ՆԱՏՕ-ի ոչ անդամ երկրների ղեկավարների հանդիպմանը¹⁷: Սկզբնական շրջանում Կունդուզ քաղաքում իրենց առաքելությունն էին իրականացնում 40 հայ խաղաղապահներ՝ գերմանական հրամանատարությամբ: 2011թ. հունիսին հայ խաղաղապահների թիվը եռապատկվեց, և նրանք սկսեցին խաղաղապահ առաքելություն իրականացնել նաև Մազարի Շարիֆ քաղաքում¹⁸:

Հայաստանը և ՆԱՏՕ-ն համագործակցում են նաև ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում «Ահաբեկչության դեմ պայքարի գործողությունների ծրագրի» միջոցով: Այն ենթադրում է հետախուզական տվյալների և վերլուծությունների փոխադարձ տրամադրում, ազգային հակաահաբեկչական կարողությունների զարգացում և սահմանային անվտանգության ամրապնդում¹⁹:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցության վերը նշված ուղղություններում ակտիվ ներգրավվածությունը ՀՀ արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչներից մեկն է, նպաստում է ժամանակակից չափանիշներին համապատասխան ԶՈւ կառուցելուն և հնարավորություն է ընձեռում Հայաստանին իր ավանդը ներդնելու միջազգային խաղաղության ամրապնդման գործում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության հետ ՀՀ զինված ուժերի համագործակցության էվոլյուցիան և հիմնական դրսևորումները: Անդրադարձ է կատարվում ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների վրա ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ազդեցությանը, Դաշինքի զորավարժություններին և խաղաղապահ առաքելություններին ՀՀ ստորաբաժանումների մասնակցությանը: Ընդգծվում է այն հանգամանքը, որ ՆԱՏՕ-ի հետ ակտիվ գործակցությունը նպաստում է ՀՀ ռազմական անվտանգության ամրապնդմանը, ԶՈւ արդյունավետության բարձրացմանը և միջազգային ներգրավվածության մեծացմանը:

¹⁷ Տե՛ս http://mfa.am/u_files/file/reports/report2009.pdf.

¹⁸ Տե՛ս http://www.nato.int/cps/en/natolive/topics_48893.htm#.

¹⁹ Տե՛ս http://www.nato.int/cps/en/natolive/topics_48893.htm#.

Բանալի բաներ – միջազգային ռազմական համագործակցություն, ռազմական դաշինք, խաղաղապահ գործողություններ, պաշտպանական բարեփոխումներ, զորավարություններ:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ СОТРУДНИЧЕСТВА ВООРУЖЕННЫХ СИЛ АРМЕНИИ С НАТО

АНДРАНИК ГРИГОРЯН

В статье освещаются эволюция и основные направления сотрудничества ВС Армении с НАТО. Рассматриваются влияние сотрудничества на оборонные реформы, проводимые в Армении, а также участие армянских военных в учениях и миротворческих операциях альянса. Отмечается, что активное сотрудничество с НАТО способствует усилению военной безопасности РА, повышению эффективности ВС страны и углублению ее международного сотрудничества.

Ключевые слова – международное военное сотрудничество, военный альянс, миротворческие операции, оборонные реформы, военные учения.

THE MAIN DIRECTIONS OF NATO - ARMENIAN MILITARY FORCE COOPERATION

ANDRANIK GRIGORYAN

The article centers on the evolution and the main functioning of Armenian military force - NATO cooperation. Grigoryan writes about the influence of NATO cooperation on the reforms taking place in Armenian republic's defense forces and also about the participation of Armenian military units in the exercises and peacekeeping operations of the Alliance. He draws attention to the fact that active cooperation with NATO helps to reinforce the RA defense security, make the armed forces more efficient and enlarges the RA military units involvement in different international missions.

Key words – International military cooperation, military alliance, peace-keeping operations, defence sector reforms, military exercises.

«ՋԻՀԱԴ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄԻ ՎԱՂ ՇՐՋԱՆՈՒՄ (7-9-ՐԴ ԴԱՐԵՐ)

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Ջիհադ» (Al-Ġihād-الجهاد)՝ հասկացության ճիշտ ընկալման համար այն պետք է դիտարկել պատմական բովանդակության և իրադարձությունների համատեքստում, որի ակունքները գնում են դեպի իսլամական կրոնի առաջացումն ու իսլամական ումմայի² (Al-‘Umma-الأمة) ձևավորումը: Առաջին և կարևոր աղբյուրը, որտեղ կարելի է հետևել այս հասկացության ձևավորմանն ու հաստատմանը, Ղուրանն³ է (Al-Qurān-القرآن), որը մուսուլմանների կողմից ընկալվում է որպես իր պատմական առնչություններով մարդկության անունից Աստծո գործողությունների վկայություն և ուղեցույցի աղբյուր⁴:

Ղուրանում «ջա-հա-դա» (ğ-h-d) արմատից գոյացած եզրի (արաբերենից թարգմանաբար նշանակում է ջանալ, ջանք թափել, դժվարություններ հաղթահարել և այլն) հիշատակում կա 28 սուրաներում⁵ (sūrah-سورة), որը նշվել է 41 անգամ: Առաջին անգամ այդ եզրը հանդիպում է Ղուրանի ժամանակագրական բաժանման մեքքայական երկրորդ շրջանում⁶: Մեքքայական երրորդ

¹ Տառադարձությունը կատարվել է Բրիլի արաբերեն տառադարձության համակարգի միջոցով (տե՛ս http://www.brill.com/downloads/Simple_Arabic_transliteration.pdf):

² Ումման դավանական ընդհանրությունների վրա հիմնված կրոնական համայնքն է (տե՛ս The Encyclopaedia of Islam, Volume X. Leiden, E. J. Brill, The Netherlands, 2000, pp. 859-862):

³ Ղուրանը համարվում է մուսուլմանների Սուրբ գիրքը, այն Աստծո խոսքն է, որն ուղարկվել է Մուհամմադ մարգարեին (տե՛ս The Encyclopaedia of Islam, Volume 5. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1986, p. 400):

⁴ Bonney R., Jihad From Quran to bin Laden, New York. Palgrave Macmillan. p. 22.

⁵ Սուրան Ղուրանի 114 մասերից յուրաքանչյուրի անվանումն է, որոնց բաժանվում է Ղուրանը (տե՛ս Ислам: Энциклопедический словарь, М., 1991, стр. 214):

⁶ Մեքքայական երկրորդ շրջանի սուրաներն արձակ տեսքով են գրված՝ որը բանաստեղծական բնորոշումներով: Այս սուրաներում առավել վառ կերպով են ներկայացվում դրախտի և դժոխքի, ինչպես նաև Աստծո կողմից պատժի ենթարկվելու բնորոշումները (տե՛ս The Encyclopaedia of Islam, Volume 5. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1986, pp. 416-417):

շրջանի սուրաններում⁷ «ջիմ-հա-դալ» եզրով բառերն ավելի հաճախ են հանդիպում: Սակայն «ջիհադ» հասկացությունը, ավելի հաճախ արդեն որպես հանուն Աստծո պայքար մղելու և նահատակվելու (al-Ġihād fi sabīli llāhi- في الجهاد سبيل الله) իմաստով, օգտագործվում է վերջին՝ մադինայական շրջանի սուրաններում⁸, որտեղ ջիհադի բովանդակությունն առավել ամբողջական և հստակ տեսք է ընդունում: Այս համատեքստում, կարելի է ենթադրել, որ կոնկրետ քաղաքական իրադրությունը (հատկապես Բադրի ճակատամարտը⁹) ստիպեց Մուհամմադ մարգարեին առավել ամբողջական և հստակ ձևակերպում տալ «ջիհադ» հասկացությանը, որն արդեն այս շրջանում հայտնվեց մարգարեի ծրագրային հիմնադրույթների կենտրոնում¹⁰:

«Ջիհադ» եզրն ու հասկացությունը կարելի է դիտարկել որպես զուտ իսլամական հասկացություն, որն արաբների բառապաշարում սկսեց լայն կիրառություն ստանալ իսլամի սկզբնավորումից հետո, որի հիշատակությունը Ղուրանում նպատակ ուներ նաև բացատրելու մուսուլմաններին ռազմական գործողություններ վարելու իմաստն ու ցույց տալ մուսուլմանի դիմակայության և հուսալքությունը հաղթահարելու աստիճանը՝ մատնանշելով հոգևոր պատրաստությունն Աստծո ճանապարհին մղվող պայքարում¹¹:

«Ջիհադը» Ղուրանում մուսուլմանի համար սահմանվում է որպես ուժերի լարում և սեփական կյանքի և ունեցվածքի գնով Աստծո և նրա մարգարեի համար զոհաբերում: «Ջիհադին» վերաբերող Ղուրանի այաները վկայում են նաև այն մասին, որ Մուհամմադը թույլատրեց իր հետևորդներին շարունակել

⁷ Մեքքայական երրորդ շրջանի սուրաններն արձակ տեսք ունեն, որտեղ մարգարեն և Աստծո կողմից պատժին վերաբերող պատմությունները ներկայացվում են առավել մանրամասն տեսքով (տե՛ս նույն տեղում):

⁸ Մադինայական սուրաններում հանդիպում ենք Մուհամմադ մարգարեի ավելացող քաղաքական ազդեցության և հիջրայից հետո Մադինայում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունների նկարագիրը (տե՛ս նույն տեղում):

⁹ Բադրի ճակատամարտը մուսուլմանների առաջին ամենախոշոր ճակատամարտն է հեթանոս մեքքացիների դեմ 624թ. (տե՛ս The Encyclopaedia of Islam» Volume 1. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1986, p. 867):

¹⁰ **Chase, F. Robinson**, The New Cambridge History of Islam: Volume I, The Formation of the Islamic World Sixth to Eleventh Centuries. 2011, New York: Cambridge University Press, p. 190.

¹¹ **Belkhoja M. H.**, Guerre et paix dans l'optique de la tradition musulmane. //Les Religions et la guerres Judaisme, christianisme, islam, Paris, 1991, pp. 362-363.

հակառակորդի վրա հարձակումների հին ավանդույթները¹²: Սակայն «ջիհադի» գաղափարը միայն վաղ իսլամական շրջանի ավանդույթների շարունակությունը չէր. այստեղ կարելի է հստակ տեսնել այդ վաղիսլամական հարձակումների վերածնակվորում. հարձակումներին տրվեց կրոնական իմաստ, միջմուսուլմանական համայնքների միջև պատերազմների վրա դրվեց արգելք, թույլատրվեց հարձակվել միայն մուսուլմանական ումմայի հակառակորդների վրա, ընդ որում բոլոր հարձակումների նպատակը հայտարարվեց իսլամի տարածքների ընդլայնումը: Բացի դա, հարձակումները պետք է իրականացվեին ռազմական մարտավարության կիրառմամբ, ինչով դրանք տարբերվեցին մինչիսլամական շրջանի անկանոն հարձակումներից¹³, և վաղիսլամական ավանդույթների նման վերածնակեցվումը հարձակումների ավանդույթը դարձրեց մուսուլմանների կրոնական պարտականություններից մեկը¹⁴:

Ղուրանում տրվեց «ջիհադ» հասկացության կրոնական հիմքը, որն իր ազդեցությունն ունեցավ 8-9-րդ դդ.-ում տեղի ունեցած մուսուլմանական նվաճումների վրա. արդյունքում մուսուլմանների ազդեցության տակ հայտնվեցին ընդհարձակ տարածքներ՝ ձգվելով Կենտրոնական Ասիայից, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Արևմտյան Եվրոպա: Բացի արտաքին նպաստավոր որոշ պայմաններից, մուսուլմանական նվաճումների արդյունավետության պատճառներից էին նաև իսլամի միավորիչ ուժը (մեկ միասնական հավատքի ներքո մուսուլմանների համախմբումը, միասնական ազգակցության գիտակցումը (‘šabiyah- عصبية ասաբիահ¹⁵), մուսուլմանների կողմից օգտագործվող հմուտ

¹² Ղազաուաթը (ğazawāt- غزوة) վաղիսլամական շրջանում միմյանց վրա հարձակումների ավանդույթն էր, որը տարածված էր ցեղերի մեջ (տե՛ս The Encyclopaedia of Islam» Volume II. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1991, p. 1055):

¹³ Blankinship, Kh.Y., The End of the Jihad State: The Reign of Hisham Ibn Abd Al Malik and the Collapse of the Umayyads, State University of New York Press, 1994, p. 13.

¹⁴ Իսլամական ավանդույթը տարբերակում է պարտականությունների երկու տեսակ՝ «անհատական պարտականություն» (Al-Fard al-‘ین-الفرض العین), որը ներառում է աղոթքը, ծոմը և այլն, և «կոլեկտիվ/խմբային պարտականություն» (Al-Fard al-Kifāi-الفرض الكفایة), որի՝ բավարար քանակության մուսուլմանների իրականացման դեպքում մյուս անհատներն ազատվում են այն իրականացնելուց (օրինակ՝ հանգուցյալի համար աղոթքը, սրբազան պատերազմը և այլն) (տե՛ս The Encyclopaedia of Islam» Volume II. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1991, p. 790):

¹⁵ Ասաբիահ («Ազգակցության ոգի») արական սեռի միջև հարաբերություններն են տղամարդու ազգակցական շղթայում՝ ընտանիքում կամ ցեղում: Օգտագործվել է հադիսներում, որտեղ մարգարեն քննադատում է «ասաբիահն» որպես իսլամի ոգուն հակասող:

ռազմավարությունը (օր.՝ թեթև հեծելազորի կիրառումը, որի միջոցով մուսուլմանները կարողանում էին արագ տեղաշարժվել երկար տարածություններում) և այլն: Մուսուլմաններից շատերը նվաճումների արդյունավետությունը կապում էին աստվածային կանխորոշման հետ, որտեղ «ջիհադը» իսլամի բաղկացուցիչ տարրերից մեկն էր: Առանց այդ նվաճումների իսլամը չէր կարող նման տարածում ունենալ, և այս համատեքստում վերոհիշյալ նվաճումները և վերջիններիս շարժառիթը հանդիսացող նաև «ջիհադն» առանցքային նշանակություն ունեցան իսլամի զարգացման համար¹⁶:

Մուսուլմանների համար Ղուրանից հետո երկրորդ հեղինակավոր աղբյուրը Սուննան է¹⁷ (al-Sūnna-السنة), որի մեջ հավաքագրված հադիսներում¹⁸ (al-Ḥadīth-الحديث) կան նաև «ջիհադի» վերաբերյալ հիշատակումներ: «Ջիհադի» հայեցակարգի կարևորությունը վաղիսլամական ժամանակաշրջանում երևում է նաև նրանով, որ շատ հեղինակների մոտ «ջիհադին» նվիրված հադիսները ներկայացված են առանձին գլուխներով, իսկ որոշ դեպքերում «ջիհադին» վերաբերող հադիսներն անմիջապես հաջորդում են իսլամի 5 հիմնասյուները (Arkān al-Dīn-الدين أركان)¹⁹ մեկնաբանող հադիսներին:

Այն հայտնի դարձավ Իբն Խալդունի կողմից, ով «ասաբիան» դրեց պատմության և պետության հայեցակարգի վերաբերյալ իր մեկնաբանության հիմքում: Իբն Խալդունը «ասաբիան» դիտարկում էր որպես առանցքային կապ մարդկային հասարակության և պատմության հիմնական շարժիչ ուժի միջև (տե՛ս The Encyclopaedia of Islam» Volume I. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1986, p. 681):

¹⁶ Cook D., Understanding Jihad, Los Angeles-University of California Press, 1997, pp. 11-13.

¹⁷ Սուննան Մուհամմադ մարգարեի արարքների, խոսքերի և չարտահայտած հավանությունների ամբողջական հավաքածուն է (տե՛ս Ислам: Энциклопедический словарь., М., 1991, стр. 214):

¹⁸ Հադիսները համարվում են Մուհամմադի խոսքերի և արարքների ավանդապատումները (տե՛ս Ислам: Энциклопедический словарь., М., 1991, стр. 262):

¹⁹ Առքան ադ-Դիներ համարվում են իսլամի 5 հիմնասյուները, որոնց վրա հիմնվում է իսլամը: Դրանք են՝ վկայությունը (aš-Šahādat-الشهادة), աղոթքը (al-Salāt-الصلاة), նվիրատվությունը (al-Zakāt-الزكاة), ծովը (al-Saūm-الصوم) և ուխտագնացությունը (al-Ḥağğ-الحج), որոշ հեղինակներ որպես վեցերորդ հիմնասյուն ավելացնում են «ջիհադը» (տե՛ս The Encyclopaedia of Islam» Volume VIII. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1995, p. 596):

«Ջիհադի» հայեցակարգի վերաբերյալ հիշատակումներ կան մուսուլմանների համար ամենահեղինակավոր հադիսների ժողովածուներում²⁰: Դրանք կան ալ-Բուխարիի, Մուալիմի, Աբու Դաուդի, ալ-Թիրմիզիի, ալ-Նասաի, Իբն Մաջի և այլ հեղինակավոր միջնադարյան աստվածաբանների աշխատություններում: Ալ-Բուխարին իր աշխատության «Ջիհադի գիրք» գլխում (Kitāb al-Ġihād-كتاب الجهاد) «Ջիհադի» մեկնաբանումը սկսում է Ղուրանից հատվածների մեջբերմամբ: Խոսքն ավելի ազդեցիկ դարձնելու համար ալ-Բուխարին «Ջիհադի» նկարագրության տպավորիչ և պատկերավոր մեթոդներ է կիրառում²¹:

«Ջիհադի» մասին հիշատակումներ կան Մալիք Իբն Անասի «ալ-Մուատտա»-ում (al-Muʿatā-الموطأ): Այստեղ հեղինակը փորձում է ներկայացնել «Ջիհադ» վաստակելու չափորոշիչները՝ տալով նահատակների հոգևոր առավելությունների բնորոշումները:

Մուսուլմանական ավանդույթում «Ջիհադի»՝ որպես բռնության, հայեցակարգի հակառակորդների կողմից հաճախակի հղված է այն հադիսը, որտեղ Մուհամմադ մարգարեին է վերագրվում «Մեծ ջիհադ» (Al-Ġihād Al-Kabīr- الجهاد الكبير) ու «Փոքր ջիհադ» (Al-Ġihād Al-Sagīr- الجهاد الصغير) տարանջատումը՝ «Փոքր ջիհադ» եզրով բնորոշելով բուն ռազմական պայքարը, իսկ «Մեծ ջիհադ» եզրով՝ մուսուլմանի սեփական արատների դեմ պայքարը²²: Այս

²⁰ Մուսուլմանների համար ամենահեղինակավոր հադիսների ժողովածուներն են ալ-Բուխարիի և Մուալիմի Սահիհը (Sahīh-صحيح), այնուհետև իրենց կարևորությամբ հետևում են՝ Աբու Դաուդի, ալ-Թիրմիզիի, ալ-Նասաի և Իբն Մաջի Սունանը (Sunan-سُنَن) (տե՛ս The Encyclopaedia of Islam» Volume III. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1986, p. 24):

²¹ **Al-Buḥārī, Ṣaḥīḥ**, Kitāb al-jihād, Bayrūt, 1991, III, էջեր 269 (No 2903), 272 (No 2811), 274 (No 2816), 284 (No 2853).

²² **Al-Mubārd U.** Al-Kamyl fil al-Lūġa wa al-Ādab, Bayrūt, 1997, էջ 120: Այս հադիսը վերագրվում է մի քանի մուսուլմանների, որոնց Մուհամմադ մարգարեն Թաբուքի ճակատամարտից վերադառնալիս ասում է, որ նրանք վերադարձել են «Փոքր ջիհադից» (ռազմական պայքար) դեպի «Մեծ ջիհադ» (սեփական արատների դեմ պայքար): Երբ մարգարեին հարցնում են՝ «Ջիհադի» որ տեսակն է ամենալավը, Մուհամմադը պատասխանում է, որ սեփական արատների դեմ պայքարը («Մեծ ջիհադը»), (տե՛ս Renard. J., Al-Jihad al-Akbar: Notes on a Theme in Islamic Spirituality, Muslim World 78, 1988, pp. 225-242., տե՛ս նաև Richard Bonney, Jihad From Quran to bin Laden, New York. Palgrave Macmillan. p. 40-41):

հադիսը դասվում է թույլ հադիսների շարքում²³ և ընդգրկված չէ 6 ամենահայտնի հադիսների ժողովածուների շարքում²⁴: Չնայած այս հանգամանքին՝ ներկայում շատ հեղինակներ լայնորեն անդրադառնում են վերոհիշյալ հադիսին՝ այն վերագրելով Մուհամմադ մարգարեին, շարադրելով «Մեծ ջիհադին» և «Փոքր ջիհադին» վերաբերող իրենց պատկերացումները և փորձելով նման հադիսների կիրառմամբ մեղմել Ղուրանում և Սուննայում առկա «ջիհադի» արմատական, սրով պայքարի բնույթը: Շատ դեպքերում «Մեծ ջիհադը» մեկնաբանվում էր որպես «Սրտի ջիհադ», այսինքն՝ արշավանքից տուն վերադառնալուց հետո մուսուլմանի պայքարն իր սեփական արատների դեմ, և նման մեկնաբանությունը նրա իրական իմաստի փոխաբերական կիրառումն էր²⁵:

Հադիսներում այս կամ այն ձևով կրկնվում են «ջիհադի» գաղափարախոսության հիմնական դրույթները, որոնք ձևակերպված էին Ղուրանում: Սակայն միայն հադիսներում ամրագրված այդ դրույթներում են հստակորեն երևում «ջիհադի» հայեցակարգի և ջահիլիայի²⁶ շրջանում լայն տարածում ունեցող հարձակումների (ղազաուաթ) միջև գոյություն ունեցող սերտ կապերը²⁷:

Մուսուլմանների կողմից պատերազմ վարելու, Աստծո ճանապարհին զոհվելու տեսանկյունից ուշադրության է արժանի Իբն Խալլունի «ալ-Մուկադդիմա»-ն (Al-Mū qad'imat-المقدمة), որտեղ, համադրելով մուսուլմանների իրավական և փիլիսոփայական պատկերացումները: Ըստ Իբն Խալլունի՝ մուսուլմանական համայնքի համար «ջիհադը» կրոնական պարտականություն է՝ պայմանավորված իսլամի «համընդհանուր» բնույթով, մինչդեռ այլ կրոնների

²³ Մուսուլմանական ավանդույթում ընդունված հադիսների դասակարգման ձևերից են թույլ հադիսները, որտեղ հաշվի է առնվում հորդորների, պատմվածքների, բարի վարքի առկայությունը, այլ ոչ թե առնչվում են օրենքի, թույլատրելի կամ անթույլատրելի գործողություններին (տե՛ս The Encyclopaedia of Islam) Volume III. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1986, p. 25):

²⁴ **Bonney R.**, Jihad From Quran to bin Laden, New York. Palgrave Macmillan. p. 40-41, նաև տե՛ս David Cook, նշվ. աշխ., էջ 35.

²⁵ **Hayqāl M.**, al-Ġihād wa al-Qitāl fi Siyāsat al-Šāriya, Bayrūt, 1414/1993, h. I, էջ 47.

²⁶ Ջահիլիան մինչև իսլամի տարածումը բնութագրվող հեթանոսության ժամանակաշրջանն է (տե՛ս Ислам: Энциклопедический словарь, М., 1991, стр. 63):

²⁷ Տե՛ս **Al-Buḥārī**, նշվ. աշխ., էջ 265 (No 2788), 291-293 (No 2875-2883).

համար, որոնք աչքի չեն ընկնում համընդհանրությամբ, այն չունի կրոնական բնույթ²⁸:

8–9-րդ դդ. ջիհադի հայեցակարգը մանրագնին ուսումնասիրվել է ինչպես շիա²⁹, այնպես էլ սուննի³⁰ մուսուլման աստվածաբանների կողմից: Իսլամի շիայական ուղղությունը կառուցել է «ջիհադի» իր հայեցակարգային դրույթները: «Զիհադի» շիայական հայեցակարգը ենթադրում է, որ հատկապես իսլամի շիայական ուսմունքն ընդունելուց հրաժարվելը դիտարկվում է անհավատություն կամ իսլամի դրույթներից հեռացում: Շիայական իսլամի «ջիհադի» հայեցակարգը սուննիականի համեմատ ունի երկու հիմնական տարբերություն.

1. սուննիները, շիաները, խարիջիները և այլն, ընդունում են, որ «ջիհադն» ունի իմամի կողմից թույլատրման և ուղղորդման կարիք: Բայց շիայականության ամենախոշոր թևը՝ իմամականները, ընդունում են միայն 12 իմամների շղթան, որն արդեն 873թ. ընդհատվել է: Ուստի նրանց համար «ջիհադի» գործնական կիրառումը, առանց իմամի թույլտվության, անհնարին է:
2. Իմամականները «ջիհադի» հայեցակարգի մեջ չեն ընդգրկում ընդվզող մուսուլմանների ջիհադի պայքարը՝ նրանց համարելով հակառակորդներ³¹:

Սուննիական իսլամի չորս կրոնաիրավական դպրոցներից («մազհաբ»՝ *Madhab- مذهب*)³² մալիքիական, հանաֆիական և շաֆիական դպրոցները «ջիհադի» իրականացումը պարտադիր են համարում, եթե այն իրականացվում է որոշակի պայմանների առկայության դեպքում: Այդ պայմաններից են

²⁸ **Ibn Khaldun**, *The Muqaddimah, An Introduction to History*, trans. Franz Rosenthal, New York, Pantheon, 1958, pp. 473-480.

²⁹ Շիաներ անվանում են մուսուլմանների այն հատվածին, որոնք ընդունում էին Ալի իբն Աբու-Տալիբի և նրա հետնորդների օրինական ժառանգությունը՝ մուսուլմանական համայնքը ղեկավարելու համար (տե՛ս *Ислам: Энциклопедический словарь*, стр. 298):

³⁰ Սուննիներ անվանում են մուսուլմանների մեծ հատվածին, որոնք ընդունում էին կուռայշ ցեղից ընտրված արժանավորի իշխանությունը՝ մուսուլմանական համայնքը ղեկավարելու համար, Սուննայի մարդիկ (Ահլ ալ-Սուննա ուա Ջամաա) (տե՛ս *Ислам: Энциклопедический словарь*, стр. 29):

³¹ Տե՛ս **Bonner M.**, նշվ. աշխ., էջ 124-125:

³² Մազհաբը կրոնաիրավական ուղղությունն է իսլամում (տե՛ս *Ислам: Энциклопедический словарь*, стр. 152):

անհավատների կողմից ռազմական գործողություններ սկսելը և հաջողության հասնելու հիմնավորման առկայությունը:

Շաֆիական կրոնաիրավական դպրոցի հիմնադիր Աբու Աբդալլահ ալ-Շաֆիին ջիհադը համարում էր Սստծո օրենք՝ մուսուլմանական համայնքի շարունակականությունն ապահովելու համար: Ալ-Շաֆիին կարևորում էր ջիհադի իրականացման միջոցով օգուտ ստանալու սկզբունքը՝ շարադրելով անհավատներից «ջիզիա» (جزيه-³³ Gīzyah) ստանալու և այն հավաքագրելու մեխանիզմները³⁴:

Ջիհադին վերաբերող ուրույն մեկնաբանություններ հանդիպում ենք իսլամում առավել խստապահանջ կրոնաիրավական դպրոցի հիմնադիր Ահմադ իբն Հանբալի (780-855թթ.) ուսմունքում: Նա դեմ էր իսլամական դրույթների ռացիոնալ մեկնաբանմանը և կարծում էր, որ մարդու բանականությունը չի կարող գործիք դառնալ կրոնական ճշմարտության բացահայտման համար: Հանբալիական մազհաբի առանձնահատկությունն այն էր, որ «ջիհադը» բնորոշվում էր որպես անընդհատ իրականացվող գործընթաց: Ըստ Ահմադ իբն Հանբալի՝ պետք էր չդադարեցնել ռազմական արշավանքների իրականացումը (ջիհադ), սակայն դրա համար անհրաժեշտ էին պայմաններ՝ հատկապես ուժի և հզորության առկայություն և դրանից օգուտ ստանալու ակնկալիք³⁵:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վաղիսլամական շրջանում գոյություն ունեցող մուսուլմանական աղբյուրներում «ջիհադ» հասկացությունը ներկայանում է ինչպես սեփական արատների դեմ, այնպես էլ Աստծո ճանապարհին մղվող պայքար: Այդ ժամանակաշրջանում սահմանվեցին նաև «ջիհադի» հարձակողական և պաշտպանողական բնորոշումները: Հաշվի առնելով նոր ձևավորված կրոնի տարածման և այլադավանների դեմ մղվող պայքարի առաջնահերթությունները՝ տվյալ ժամանակաշրջանում «ջիհադ» հասկացության մեջ առավել շեշտվեց

³³ Ջիզիան, ավանդական մուսուլմանական իրավունքի համաձայն, մուսուլմանական երկրում հարկվող գլխահարկն է ոչ մուսուլմաններից (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume II, Leiden, E. J. Brill, 1991, p. 559):

³⁴ Տե՛ս Cook D., նշվ. աշխ., էջ 21:

³⁵ **Имам Ахмад Ибн Ханбаль.** «Основы Сунны». Каир, 2006, стр. 48-49.

նրա ուսման քաղաքացիքը, ինչն էլ իսլամական կրոնի տարածման ու խալիֆայության ստեղծման պատճառներից մեկը դարձավ:

Բանալի բառեր – ջիհադ, Ղուրան, սուրա, այա, հադիս, մազհաբ:

ПОНЯТИЕ “ДЖИХАД” В РАННЕИСЛАМСКИЙ ПЕРИОД (7-9-ЫЕ ВЕКА)

САРКИС ГРИГОРЯН

В раннеисламский период в мусульманских источниках понятие “джихад” трактовалось как борьба против собственных пороков, так и борьба во имя Аллаха. В рассматриваемый период были установлены наступательная и оборонительная характеристики “джихада”. С учетом приоритетов борьбы против иноверцев в указанный период в понятии “джихад” особо подчеркивалась его военная составляющая, что стало одной из причин распространения ислама и создания обширного мусульманского халифата.

Ключевые слова - джихад, Коран, сура, аят, хадис, мазхаб.

THE CONCEPT OF “JIHAD” IN THE EARLY PERIOD OF ISLAM (7-9TH CENTURIES)

SARGIS GRIGORYAN

In the early Islamic period according to Muslim sources the concept of "Jihad" meant strive against their own vices and in the path of God. The offensive and defensive characteristics of "Jihad" was at that time defined. Taking into consideration that in this period of time (7- 9th c.) the battles against the infidels and unbelievers was a priority, more emphasis was put on Jihad by sword, which resulted in the spread of Islam as a religion and the foundation of Caliphate.

Key words – Jihad, Quran, sura, ayah - ayat, hadith, madhhab.

ՍՓՅՈՒՌՔԱՆՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳԱՂԹԸ 1946-1948ԹԹ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

Մինչև Պոտսդամի խորհրդակցությունը, ԽՍՀՄ-ը բարձրացրել էր հայկական տարածքների խնդիրը և դաշնակիցների վրա ներգործելու համար ձեռնարկել սփյուռքահայերի հայրենադարձության գործընթացը, որն իբր ապացուցելու էր տարածքային պահանջների անհրաժեշտությունը:

Պատմական գրականության մեջ սփյուռքահայերի ներգաղթի կազմակերպման հարցում կան մի քանի տեսակետներ: Նախ, որպես վճռորոշ քայլ ընդունվում է հայ ժողովրդի լայն մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին, ապա սփյուռքահայության՝ Եվրոպայում հակաֆաշիստական դիմադրական պայքարին ներգրավվածությունը, այնուհետև տարածքային պահանջներով Թուրքիայի վրա ներգործելու միտումը, իր մարդասիրական քաղաքականությունը միջազգային հանրությանը ներկայացնելու՝ ԽՍՀՄ նպատակադրումը, սփյուռքահայության ներուժն իր ծրագրերին ծառայեցնելու ԽՍՀՄ ցանկությունը: Դրդապատճառների թվում նշվում է նաև հայկական տարբեր գաղթօջախներից ներգաղթի առթիվ համախոսականների, դիմումների, ուղերձների, նամակների նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորման փաստը: Կարևոր դերակատարություն էր տրվում նաև 1944 –1946 թթ. Սփյուռքում գործող կոմիտեների, խորհուրդների՝ երեք տերությունների ղեկավարներին հասցեագրված դիմումներում աշխարհում ցրված հայերին հայրենիք վերադարձնելու պահանջներին:

1945թ. հունիսին նորընտիր Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ VI-ը, Ստալինին դիմեց մի նամակով, որում բարձրացնում էր Խորհրդային Հայաստանից անջատված հայկական պատմական տարածքների վերամիավորման և արտասահմանում ապրող հայերի հայրենադարձության հարցերը: Կաթողիկոսի նամակի մասին լուրը մեծ ոգևորությամբ ընդունվեց Սփյուռքում, հայկական քաղաքական կազմակերպությունները և աշխարհի շատ երկրներում գործող հայկական համայնքները համախմբվեցին այդ գաղափարի շուրջ¹:

Ոգևորության ալիքն իր մեջ էր առել սփյուռքահայերին, Հայաստան էին

¹ Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг., Ереван, 2010, стр. 41, 330.

հասնում մեծաքանակ հուզական նամակներ: 1945թ. նոյեմբերի սկզբներին Գ. Հարությունյանը նորից դիմեց Ստալինին, որով հայտնում էր, թե անպատասխան թողնելով սփյուռքահայության նամակները՝ ականա հակախորհրդային ուժերի համար հնարավորություն է ստեղծում խաղալու խորհրդային իշխանության հեղինակության հետ, տարածելու այն տեսակետը, թե ԽՍՀՄ-ը դեմ է հայերի՝ հայրենիք վերադարձին²:

1945թ. նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ կառավարությունը Գ. Հարությունյանի կազմած նախագծի հիման վրա ընդունեց սփյուռքահայության ներգաղթը իրականացնելու մասին որոշում: Այնուհետև ևս երեք անգամ Գ. Հարությունյանը դիմեց կենտրոնական կառավարությանը նախապատրաստական աշխատանքներին գործնական օգնություն ցուցաբերելու խնդրանքով: 1946թ. փետրվարին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկեց ներգաղթի ծրագիրը, ապա ԽՍՀՄ ժողկոմխորհը 1946թ. փետրվարի 22-ին և հունիսի 21-ին ընդունեց սփյուռքահայերի հայրենադարձության առթիվ գործնական միջոցառումների մասին որոշումները³:

1946թ. հուլիսի 1-ին կաթողիկոս Գևորգ Չորեքյանն արտերկրի հայության ղեկավար կառույցներին դիմեց կոնդակով՝ նրանց կոչելով օժանդակել հայրենադարձությանը⁴:

Գործնականում ներգաղթի խնդիրները լուծվեցին Հայաստանի կուսակցական և գործադիր մարմինների ջանքերով: Նախ, նշենք, որ 1945թ. ապրիլին հանրապետության ղեկավարությունը կենտրոնական իշխանության առաջ բարձրացրեց ներգաղթի կազմակերպման խնդիրը, ապա կենտրոնի հանձնարարությամբ հայաշատ երկրներ գործուղվեցին ներկայացուցիչներ, որոնք ԽՍՀՄ դեսպանատների հետ ուսումնասիրում էին ներգաղթի նկատմամբ գաղթօջախների հայության վերաբերմունքը, ընդհանուր կարծիք ձևավորում խնդրի շուրջ: Անժխտելի է, որ ներգաղթի խնդիրը լուծվեց ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանի՝ Ստալինի հետ 1945թ. տեղի ունեցած հանդիպման ժամանակ: Այնուհետև Ստալինին ներկայացվեցին Հայաստանի կառավարության առաջարկները⁵, որոնց հիման վրա էլ ՀՍՍՀ ժողկոմխորհը 1945թ. դեկտեմբերի 8-ին ստեղծեց սփյուռքահայերի ընդունման և տեղավորման կոմիտե, որը գլխավորում էր Բ. Աստվածատրյանը: Հետագայում կազ-

² ՀՀ ՀԲԿԿ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 66:

³ Նույն տեղում, ֆ. 1, ց. 26, գ. 44, թ. 175-177, գ. 45, թ. 407-410:

⁴ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 136, թ. 1:

⁵ ՀՀ ՀԲԿԿ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 35-36:

մավորվեց նաև վերաբնակեցման վարչություն Գ. Գևորգյանի նախագահությամբ, և առանձնացվեցին ներգաղթի կազմակերպման և տեղավորման աշխատանքները: Կոմիտեները այն շրջաններում, որտեղ պետք է վերաբնակեցվեին ներգաղթյալները, կազմավորեցին իրենց տեղական մարմինները: Ավելացնենք նաև, որ ներգաղթի կազմակերպման և տեղավորման հանրապետական կոմիտեներում ընդգրկված էին նաև կենտրոնական իշխանության համապատասխան գերատեսչությունների պատասխանատու պաշտոնյաներ:

1946թ. փետրվարի 3-ին ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գ. Հարությունյանը ընտրողների հետ հանդիպման ժամանակ, անդրադառնալով հայրենադարձության հարցերին, ընդգծեց, որ «Իրագործելով այդ որոշումը (խոսքը հայրենադարձության կազմակերպման որոշման մասին է – Հ.Զ.), մենք նորանոր պայմաններ կստեղծենք հայ ժողովրդի հետագա զարգացման համար, նրա կուլտուրայի ու լեզվի էլ ավելի մեծ ծաղկման համար»: Որոշումը պետք է դիտել «որպես Սովետական կառավարության հումանիզմի մեծագույն ակտ, որը հնարավորություն է տալիս, իրագործելու հայերի իղձը՝ միավորվելու միասնական ընտանիքի մեջ և համատեղ ջանքերով պայքարել իրենց սոցիալիստական հայրենիքի ծաղկման համար: Այդ որոշման մեջ մեր ամբողջ ժողովուրդը տեսնում է Մեծ Ստալինի ցուցաբերած հայրական ջերմ հոգատարությունը հայերի նկատմամբ»:

- Մենք պետք է աչալոջորեն մոտենանք այդ հարցին այն իրագործելու ժամանակ, արտասահմանյան հայերի թիվը մոտ մեկ միլիոն է: Իհարկե, մենք բոլորին չենք կարող ընդունել Հայաստանի ներկայիս տերիտորիայում: Ամենաուշադիր հաշվարկումով, նկատի ունենալով մեր ռեսպուբլիկայի արդյունաբերության մեծ զարգացումը, գյուղատնտեսության զարգացումը, որը կարող է զբաղեցնել շատ ավելի շատ աշխատող ձեռքեր, մենք առաջիկա տարիներում Հայաստանի ներկայիս տերիտորիայում կարող ենք ընդունել մաքսիմում 350-400 հազար մարդ⁶:

Գ. Հարությունյանի լավատեսական ճառը հայության երազանքների արտահայտությունն էր: Այն Սփյուռքում և հայրենիքում մեծ արձագանք գտավ:

Խոշոր կարևորություն, քաղաքական մեծ հնչեղություն ունեցող համահայկական այս միջոցառումը ցանկալի ոգևորություն էր ստեղծել ամբողջ հանրապետությունում: Գրականության, արվեստի գործիչները, գյուղատնտեսության, արդյունաբերության ոլորտների աշխատավորությունը խանդավառ-

⁶ «Սովետական Հայաստան», 3 փետրվարի, 1946թ.:

ված էին տարագիր հայրենակիցների վերադարձի կազմակերպման առթիվ: Հանրապետության մամուլում տպագրվում էին Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Հր. Աճառյանի, Մ. Սարյանի, Ա. Իսաչատրյանի, այլ նշանավոր արվեստագետների, աշխատավորության ներկայացուցիչների նամակները, ողջույնի ուղերձները: Նրանց «կղիմավորենք նույն եղբայրական զգացմունքներով... Դաժան ճակատագրով իրարից բաժանված քույրեր ու եղբայրներ... գրկաբաց փարվում են իրար ազատագրված հայերի տան մեջ», - ոգևորված գրում էր Ավ. Իսահակյանը⁷:

Հուզաթաթախ էր Դ. Դեմիրճյանի խոսքը. «Հայրենազուրկ հայությունը հայրենիք է վերադառնում... թող գա տուն և ծաղկի տարագիր հայությունը»: «Սպասում էինք ձեզ... Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լույսերով, մեր հոգիները անձկալի կարոտով ու մեր ձեռքերը ծաղկի պսակներով լցված, սպասում ենք ձեզ», - Հր. Աճառյանի սրտի ծայնին միացավ Ա. Չոպանյանը. «Խորհրդային Հայաստանը մեր մեկ հատիկ կենդանի հայրենիքն է, մեր մայրն է. մայր մը խտրություն չէ դներ իր զավակներուն միջև. կսպասենք ուրեմն ու կհուսանք, որ ան ամենուս հանդեպ վարվի մայրաբար»⁸:

Հանրապետության աշխատավորությունը, հատկապես այն շրջանների բնակիչները, որտեղ նախանշված էր ներգաղթողների տեղավորումը, ոգևորությամբ ստեղծում էին օգնության ֆոնդեր, տրամադրում իրենց աշխատավարձերը, առանձնացնում բնակարաններ⁹:

Արտաշատի շրջանի կոլտնտեսականները երեք օրում հավաքեցին երեք միլիոն ռուբլի¹⁰:

Ազգահավաքման այս մեծ ու պատասխանատու խնդիրը լավագույն հույսեր էր արթնացրել նաև տարագիր հայության շրջանում: Հայրենիքի կանչը ճակատագրական հոգևոր ու քաղաքական շրջադարձ էր կանխատեսում, լացող հոգիները ոգեկոչվում էին, հայրենիքը անվանում «երկիր դրախտավայր»:

Սփյուռքահայ բոլոր գաղթօջախներում կազմակերպվեցին ներգաղթի կոմիտեներ, որոնք մեծագույնս նպաստեցին տարագիր հայության շրջանում ներգաղթի առավել մասսայականացմանը:

⁷ Նույն տեղում, 4 դեկտեմբերի, 1945թ.:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, 5 ապրիլի, 1946թ.:

¹⁰ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 207:

Կազմավորված կոմիտեներից արդյունավետ էին աշխատում Իրանի, Սիրիայի, Լիբանանի կոմիտեները, որոնց ղեկավար մարմիններում ընդգրկված էին նշանավոր գործիչներ, գրողներ, արվեստագետներ¹¹:

Ընդունված նախնական ծրագրով 1946թ. Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Ռումինիայից պետք է ներգաղթեին 8930 ընտանիք, կամ 28800 մարդ: Հետագայում, նկատի ունենալով նշված երկրների հայության վիճակը, որոշվեց կազմակերպել լրացուցիչ ներգաղթ:

Արխիվային փաստաթղթերից մեկը վկայում է, որ Սիրիայում և Լիբանանում ցուցակագրվել էին 150 000, Թուրքիայում՝ 47 550 հայ¹²:

Մեկ այլ աղբյուրի հաղորդմամբ միայն Սփյուռքի գյուղաբնակ վայրերից 1946թ. հուլիսի 1-29-ը ցուցակագրվել էին 1360 մարդ¹³:

Նշված թվական տվյալները հետագայում փոխվեցին, որովհետև հետզհետե ստվարանում էր ցուցակագրվողների քանակը: Վերջնական արդյունքում մինչև 1946թ. հոկտեմբեր հայրենիք ներգաղթեցին 50 000 հայ, մինչդեռ հանրապետությունը պատրաստ էր ընդունելու 30-35 հազար հայերի:

Ներգաղթյալները տեղավորվեցին հանրապետության 32 քաղաքներում ու շրջաններում: Քաղաքներում տեղավորվեցին 21704, շրջկենտրոններում՝ 3994, կոլտնտեսություններում՝ 17863, սովխոզներում՝ 3185 մարդ¹⁴:

Ներգաղթվածներից 9865 ընտանիք տեղավորվեցին վերանորոգված բնակարաններում, իսկ 939-ը՝ նոր կառուցված բնակարաններում¹⁵:

Բնակարանային խնդիրը ծանր էր հատկապես շրջկենտրոններում, գյուղերում: Փաստորեն նախապատրաստական աշխատանքները կատարվել էին հապճեպորեն, չէին ստեղծվել այդ չափազանց կարևոր խնդիրը լուծելու կայուն հենարաններ: Այս բացթողումները նկատի ունեւր կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանը, երբ 1945թ. հոկտեմբերի 27-ին Ստալինին ուղղված զեկուցագրում հայտնում էր, որ բնակարանային խնդիրն առավել ծայրահեղ է հատկապես հանրապետության երեք խոշոր քաղաքներում՝ Երևանում, Լենինականում և Կիրովականում, և խնդրում էր, որ նշված

¹¹ Նույն տեղում, թ. 207:

¹² Նույն տեղում, ֆ. 211, գ. 47, թ. 63, 65:

¹³ ՀԱԱ, ֆ. 326, գ. 134, գ. 1, թ. 10:

¹⁴ Նույն տեղում, ֆ. 262, գ. 2, գ. 25, թ. 1-3:

¹⁵ Նույն տեղում, գ. 1, գ. 14, թ. 29:

քաղաքներին բնակարանային շինարարության համար լրացուցիչ հատկացվի տարեկան 25-ական միլիոն ռուբլի¹⁶:

Ներգաղթողների առաջին քարավանները, հսկայական տարածքներ անցնելով, հաղթահարելով ճանապարհի դժվարությունները, հասան հայրենիք: Այստեղ նրանց սպասում էին անթիվ զրկանքներ, բացակայում էին գոնե բնակության համար հարմար կացարանները, քաղաքաբնակ, մասնագիտություն ունեցողներին, արհեստավորներին ուղարկում էին գյուղ, արդյունաբերության հետ ընդհանրապես կապ չունեցողներին՝ քաղաք:

Գաղթականների մեծ մասը զուրկ էր գոյության պահպանության նվազագույն հնարավորություններից: Ստացված նպաստներն արդեն վերջացել էին: Այս և օրածին շատ բացթողումների մասին Գ. Հարությունյանը հայտնում է Ստալինին և խնդրում Հայաստանին տրամադրել հագուստ, կոշիկ, շաքար¹⁷:

Դժբախտաբար հայտնի չէ, թե ժողովուրդների ազատարարը ինչպես արձագանքեց խնդրանքին, սակայն մի բան որոշակի էր, որ ԽՍՀՄ բարձր ղեկավարությունը, որպես ներգործության միջոց օգտագործելով ներգաղթի կազմակերպումը, առերես հանդիպելով դժվարությունների ու բացթողումների, հետպատերազմյան ծանր տնտեսական վիճակը կարգախոս ծառայեցնելով, հեռու էր մնում շուրջ 50 000 ներգաղթած հայերին գործնական օգնություն ցուցաբերելու հոգսից:

Նկատի ունենալով օր օրի աճող դժվարությունները՝ 1946թ. հոկտեմբերի 8-ին Գ. Հարությունյանը զեկուցագիր է գրում Ստալինին, ներկայացնում հայրենադարձվածների իրական վիճակը, խնդրելով հսկողություն սահմանել, որպեսզի իրականացվեն ընդունված որոշումները: Ամենացավոտ խնդիրները համակարգելով՝ Գ. Հարությունյանը նկարագրում է բնակարանային անտանելի պայմանները, գործազրկությունը, հագուստի, առաջին անհրաժեշտության մթերքների բացակայությունը¹⁸:

Գրեթե նույն բովանդակությունն ունեին Ա. Միկոյանին, Լ. Բերիային, Ա. ժդանովին, ժողովմխորհի նախագահի տեղակալ Վոզնեսենսկուն հասցեագրված նամակները¹⁹:

Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ ԽՍՀՄ մինիստրների խորհրդի՝ 1947թ. դեկտեմբերի 10-ի որոշմամբ նախկինում բյուջեի

¹⁶ ՀՀ ՀՔԿԿ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 49:

¹⁷ Նույն տեղում, ֆ. 1, ց. 26, գ. 100, թ. 91:

¹⁸ Նույն տեղում, թ. 71-74:

¹⁹ Նույն տեղում, թ. 91:

հաշվին նախատեսված 84500 քառ. մետր բնակարանների շինարարության պլանները փոխվել են, և հանրապետության ենթակայության նախարարություններին է հանձնարարվում իրականացնել շինարարությունը: Ահա այսպիսի միջամտությունների, կրճատումների պատճառով դանդաղում կամ կանգ էին առնում շինարարական աշխատանքները, մերժվում այդ ուղղությամբ հանրապետության ղեկավարության միջնորդությունները²⁰:

Շինարարական աշխատանքները դադարում էին, որովհետև չէին իրականացվում կենտրոնական կառավարության մատակարարման որոշումներն անգամ: Այդ պատճառով էլ 1947թ. զգացվում էր 2500 տոննա ցեմենտի, 23000 մետր խորանարդ ապակու, 150 տոննա արմատուրայի, 24 տոննա մեխի, 12000 մետր խորանարդ շինփայտի, շինարարական այլ միջոցների պակաս²¹:

Ավելին, նույն թվականի համար նախատեսված 20 000 խորանարդ մետր փայտի փոխարեն ստացվել է 11.800 խորանարդ մետր²²:

1946թ. որոշման համաձայն՝ բնակարանային շինարարության համար տրամադրվելու էր 130 բեռնատար ավտոմեքենա, բայց ուղարկվել էր միայն 40-ը, որի 50%-ը անվաղող չուներ²³:

Մոտավոր հաշվումներով 1947թ. ներգաղթել են 5363 ընտանիք, 22634 շունչ հայեր, որը նախատեսված 63000-ից պակաս էր 41866 շնչով: 1948թ. նախատեսվում էր ընդունել 5000 ընտանիք, ուստի անհրաժեշտ էր կառուցել ևս 5000 բնակարան²⁴:

1947թ. շահագործման էր հանձնվել միայն 1392 բնակարան, 4604-ը գտնվում էին կառուցման ընթացքում²⁵: 1946-47 թթ. ներգաղթած 84345 շնչից աշխատունակ էին 32000-ը, որոնցից աշխատանք էին փնտրում 12000 հոգի²⁶:

Բեյրութից գաղթած Սալախյանների ընտանիքը, չստանալով անհրաժեշտ օգնություն, չունենալով գոյության պահպանության միջոցներ, նամակով դիմում է ծնողներին, որպեսզի Սիրիայի կամ Բեյրութի իշխանությունների միջոցով կազմակերպեին իրենց վերադարձը: Խաչիկի Համբարձում եղբայրը

²⁰ Նույն տեղում, ց. 28, գ. 47, թ. 136-138:

²¹ Նույն տեղում, թ. 93:

²² Նույն տեղում, թ. 123:

²³ Նույն տեղում, թ. 92:

²⁴ Նույն տեղում, ց. 27, գ. 47, թ. 87:

²⁵ Նույն տեղում, թ. 91:

²⁶ Նույն տեղում, թ. 122:

ևս չէր համակերպվում ստեղծված պայմաններին և, զեկուցագրի հաղորդման համաձայն, արտահայտում էր հակախորհրդային մտքեր:

Քաղաքական կարևոր այդ գործընթացը գնում էր դեպի ձախողում: Գաղթյալների շրջանում տարածվում էր դժգոհությունը: Հատկապես սահմանամերձ շրջաններում տեղավորվածները փորձեր էին անում հատելու անգամ թուրքական սահմանը²⁷: Անաշխատ, ապրուստի որևէ միջոց չունեցող ներգաղթածներն ուղիներ էին փնտրում հայրենիքից հեռանալու համար:

Սահմանախախտման դեպքերից մեկը տեղի է ունեցել 1948թ. օգոստոսի 2-ին: Բեյրութից գաղթած Արամ Աղաջանյանը, Անդրանիկ Աբրահամյանը, Հովհաննես Գիլարոյանը, որ ընտանիքներով տեղավորվել էին Վեդիի շրջանում, ձեռք էին բերել որսորդական հրացան և սահմանն անցնելու փորձի ժամանակ հրաձգություն իրականացրել սահմանապահների դեմ՝ վիրավորելով նրանցից չորսին, սպանել մեկին: Ա. Աղաջանյանը վիրավորվել էր, Ա. Աբրահամյանը՝ մահացել, Հ. Գիլարոյանն ու ընտանիքի մյուս անդամները՝ ձերբակալվել: Հաղորդվում է նաև, որ սահմանախախտները նախօրոք կատարել էին նախապատրաստական աշխատանքներ, վաճառել էին ունեցվածքը, ստացած հացահատիկը²⁸:

Սկսած Բաթումից՝ հայրենադարձներն ականատեսն էին դառնում անտարբերության, հուսահատությունը խորանում էր, մարդկանց մեջ հասունանում էր խաբվածության զգացումը: ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գ. Հարությունյանին ուղղված զեկուցագրերից մեկը, որը արձարծում էր ներգաղթած հայերի քաղաքական, բարոյական կացության հարցերը, նշում է, որ միջոցառումներն իրենցից ներկայացնում են անտարբերության համակարգ, գավեշտ հիշեցնող իրականություն:

Հայրենիք ներգաղթելը քաղաքական մեծ իրադարձություն էր, աշխարհասփյուռ հայերի ճակատագրի ճիշտ լուծում: Սակայն զեկուցագիրը ընդգծում է, որ ներգաղթածների ընդունումը, տեղավորումը, աշխատանքով ապահովելը, քաղղաստիարակչական միջոցառումները լի են թերություններով, բացթողումներով, որոնք արհեստական անբավարարվածության տրամադրություն են ստեղծում: Որպես օրինակ բերվում է երկաթուղու գործունեությունը: Աշխատելով չհատակեցված ժամանակացույցով՝ ուղևորները տեղեկություն չունեն կանգառների մասին, որտեղից կարող են սնունդ ձեռք բերել, հոգալ բնական

²⁷ Նույն տեղում, ց. 27, գ. 47, թ. 57, գ. 74, թ. 106:

²⁸ Նույն տեղում, ֆ. 1, ց. 28, գ. 34, թ. 63, գ. 77, թ. 22-24, 39, 40:

պահանջները: Եվ զարմանալին այն է, որ գնացքները կանգնում են անշուք կայարաններում, իսկ հիմնական կայարանները՝ շրջանցում²⁹: Քանի որ չկա գնացքների ժամանման ժամանակացույց, ներգաղթողներին Երևանում չեն դիմավորում: Թերանում են նաև նախօրոք դիմավորելու կոչված կազմակերպությունները³⁰:

Բազմաթիվ բողոքներից, խնդրագրերից հետո՝ 1946թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, հայրենադարձներին բաժանվեցին արդյունաբերական ապրանքներ, պարենամթերք³¹:

ԽՍՀՄ արտաքին քաղաքականության հետպատերազմյան շրջանի հայ ժողովրդի համար կարևորագույն այս միջոցառումը կյանքի կոչվեց նույն բոլշևիկյան սկզբունքով, երբ կարևորելով ցուցադրական մասը, գրեթե անուշադրության էր մատնվում բովանդակությունը: Հայրենադարձությունը մի առիթ էր, որպեսզի նախկին դաշնակիցներին ու միջազգային հանրությանը ապացուցվեր, թե հայկական տարածքների խնդիրը հանպատրաստից արված պահանջ չէր, այլ դաժան հարվածների ենթարկված հայ ժողովրդի նկատմամբ վերաբերմունքի վկայություն, Հայկական հարցը լուծելու նպատակ:

Անգամ արտաքուստ այն տպավորությունը չէր ստեղծվում, որ ԽՍՀՄ-ի բարձր ղեկավարությունը հայրենադարձությունը որպես Հայկական հարցի բաղկացուցիչ մաս է դիտում: Զուտ քարոզչական նպատակ հետապնդող այդ գործընթացը բոլորովին չուներ այդ իմաստը: Իսկ երբ պարզ դարձավ, որ աշխարհասփյուռ հայությունն ու նրա բարեկամները հայրենադարձությանը նայում են հենց այդ տեսանկյունից, ԽՍՀՄ ղեկավարությունը, որն իր հոգածությունն ուղղորդում էր միմիայն տարածքները հետ ստանալու նպատակին, ձախողումից հետո կանգնեց երկրնտրանքի առաջ, որովհետև բարձրանում էր հենց երկրի ներսում Հայաստանից խլված տարածքների խնդիրը, որոնց բռնակցումով Անդրկովկասում ձևավորվել էին երկու կայսրություններ:

Հայրենադարձության դժվարությունները պահանջում էին փոխել Հայկական հարցի նկատմամբ ներերկրային քաղաքականությունը: Արցախը, Ջավախքը, Նախիջևանը, Դաշտային Արցախը, Բորչալուի գավառը այն շրջաններն էին, որոնք մեծագույնս կձառայեին հայահավաքման խնդիրները հավուր պատշաճի իրականացնելու գործին:

²⁹ Նույն տեղում, գ. 47, թ. 96, 97:

³⁰ Նույն տեղում, թ. 97:

³¹ ՀԱԱ, ֆ. 362, ց. 1, գ. 14:

Հայրենադարձների հոգսերը պահանջում էին հոգատար վերաբերմունք, բայց ՀԿԿ ԿԿ-ում ձևավորված նորաստեղծ բաժինն անկարող էր իրականացնել, լուծել օրածին խնդիրները: Հայկական իրականությունից զգալի թվով դժգոհ հայրենադարձներ ճանաչվեցին այս կամ այն պետության գործակալներ և աքսորվեցին: Սա սփյուռքահայության երկրորդ հայրենագրկումն էր, քաղաքական անհասունության ճշացող ապացույց, որը զգում էր ԽՍՀՄ հեղինակությունը ամբողջ աշխարհում:

Անտեսելով այս հանգամանքը՝ պատժիչ կառույցները, որպեսզի թաքցնեին հայրենադարձների վիճակը, որպեսզի բացառեն տեղեկությունների արտահոսքը, խոչընդոտում էին արտերկրում մնացած հարազատների հետ կապի պահպանումը:

ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գ. Հարությունյանին ուղղված զեկուցագրերից մեկը հայտնում է, որ 1947թ. ընթացքում Եգիպտոսից եկած 100 նամակ է վերադարձվել՝ հասցեատիրոջը չգտնելու կեղծ պատճառաբանությամբ: Կեղծ, որովհետև զեկուցագիրը բերում է հանրաճանաչ մի գիտնականի օրինակը, ում նամակը ևս հետ է ուղարկվել:

- Նամակների համատարած վերադարձը նշված պատրվակով տեղի հայ գաղթօջախի վրա ունենում է տարբեր ազդեցություն³²:

Զեկուցագիրն առաջարկում է դիմել համապատասխան կառույցներին և կարգավորել խնդիրը, որը հնարավորություն կտա խուսափելու «հակասովետական հոգեբանությունից»³³:

Հայրենադարձության ձեռնարկման առաջին քայլերը մեծ ոգևորություն առաջ բերին նաև Սփյուռքում գործող ավանդական կուսակցությունների գործունեության մեջ: Գաղափարական տարածայնությունները հետին պլան մղվեցին: Գլխավորը հայության բեկորները ուժացումից փրկելն էր, նրանց գոյատևման, մայր հայրենիքում գործելու պայմանների ապահովումը:

Հայրենադարձության որջ գործընթացը, սակայն, ցույց տվեց, որ ԽՍՀՄ բարձր ղեկավարությունը այդ քաղաքական չափազանց մեծ կարևորության նախաձեռնությանը չէր նայում նշված տեսանկյունից, պարզապես անիրաժեշտ էր միայն տպավորություն ստեղծել:

³² Նույն տեղում, գ. 77, թ. 6:

³³ Նույն տեղում:

Որպեսզի խնդիրը ներկայացվի ավելի հիմնավոր, անդրադառնանք կենտրոնական կառավարության միջոցառումներից մեկին, որը փաստաթղթերի ճնշման պարագայում վերաճվում է խաբկանքի:

1947թ. հունվարի 29-ին Ստալինի ստորագրությամբ հրապարակվեց ԽՍՀՄ մինիստրների խորհրդի N 161 որոշումը արտասահմանի հայերի ընդունման, տեղավորման միջոցառումների մասին:

Որպեսզի ձախողված հայրենադարձության հետ կապված բազմաթիվ հարցեր ստանան իրենց պատասխանը, նպատակահարմար ենք գտնում փաստաթուղթը ներկայացնել հանգամանալից, որոշ կրճատումներով:

Որոշումը 14 նախարարությունների հանձնարարում էր 1947թ. շահագործման հանձնել 46.62 հազար մետր քառակուսի բնակտարածք, բնակարանները հատկացնելուց հետո նշված նախարարությունները պետք է ներգաղթածներին հնարավորություն տային «աշխատելու իրենց ձեռնարկություններում»³⁴:

Նշված նախարարությունները պետք է ապահովեին շինարարության ֆինանսավորումը, շինանյութերի պահանջվող քանակի մատակարարումը:

ՀԽՍՀ նախարարների խորհուրդը նույն թվականին ստանում է 10.8 հազար մետր քառակուսի մակերեսով բնակելի տների, չորս նոր գյուղական բնակավայրեր կառուցելու հրահանգ:

Ընդհանուր առմամբ գոյություն ունեցող բնակելի ֆոնդերից քաղաքներում բնակարաններ էին ստանալու 1900, գյուղերում 1650 ընտանիք³⁵:

Իսկ առանձին անհատական շինարարական պլանով սահմանվում էր, որ 1947թ. կառուցվելիք 8150 տներից պետք է բնակարան ստանային քաղաքներում 4000, գյուղերում 4150 ընտանիք³⁶:

Այնուհետև մանրամասնվում էին առանձին նախարարությունների, ՀԽՍՀ կառավարության հանձնարարականները:

Գյուղական վայրերում տեղավորված հայրենադարձներն ազատվում էին գյուղատնտեսական հարկից, ինչպես նաև ամուրի, միայնակ և փոքր ընտանիք ունեցող քաղաքացիների համար սահմանված հարկերից՝ երկու տարի ժամանակով, իսկ հյուրընկալ կոլտնտեսություններն ազատվում էին եկամտահարկից³⁷:

³⁴ Նույն տեղում, ֆ. 1, ց. 27, գ. 51, թ. 1:

³⁵ Նույն տեղում, թ. 2:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում, թ. 4:

Ներկայացված փաստաթղթերը մարդասիրական բնույթ ունեին, այն պարտավորությունների մի ամբողջ համակարգ էր, որի իրականացումով ներգաղթածների համար կստեղծվեին տանելի պայմաններ: Սակայն, դժբախտաբար, խոստումներն ու հանձնարարականներն այդպես էլ լիարժեք չիրագործվեցին, իսկ կենտրոնական իշխանությունը, թուլացնելով կամ հեռու կանգնելով վերահսկողական գործընթացից, հնարավորություն տվեց, որ բարձրագույն որոշումը դառնար պարզապես փաստաթուղթ:

Անհույս ու անօթևան, անաշխատանք ու գոյության պահպանության միջոցներից զուրկ գրեթե 90-հազարանոց հայության այդ հատվածին փրկելու համար անհրաժեշտ էին պետական լուրջ ներդրումներ: ԽՍՀՄ ղեկավարությանը թվում էր, որ սփյուռքահայությունը, ոգեշնչված այդ գործընթացից, իր վրա կվերցնի հայրենակիցների հոգսերի գերակշիռ մասը: Նկատի չէր առնվել մի կարևոր հանգամանք. Սփյուռքը դեռևս գտնվում էր ինքնահաստատման փուլում: 1915թ. անցել էր ընդամենը երեսուն տարի: Սփյուռքահայությունը չուներ բավականաչափ կարողություն, որպեսզի հոգար թե՛ արտերկրի հայության պահպանության, թե՛ հայրենիք ներգաղթածների հարցերը:

Արդեն իրականացվել էր հայրենադարձությունը, և Հայաստանի ղեկավարությունը կենտրոնի օժանդակությունից զուրկ վիճակում կանգնած էր հայության ամենաանպաշտպան հատվածը կորցնելու փաստի առաջ: Սովը, հիվանդությունները կատարում էին իրենց սև գործը: Հայաստանի ղեկավարությունը ճիգեր էր թափում վիճակը բարելավելու համար, առաջարկում երկրում ստեղծել արդյունաբերական նոր ձեռնարկություններ, հայրենադարձներին տեղավորելու համար կառուցել երեք նոր ավաններ, արդիականացնել ոռոգման համակարգը, որպեսզի գյուղաբնակ գաղթականները հնարավորություն ունենային իրենք իրենց ապահովելու սննդով³⁸:

Արխիվային փաստաթղթերի վկայությունները մեզ վերադարձնում են ոչ հեռավոր 1915-1923 թթ., երբ կեսմիլիոնանոց գաղթականությունը գտնվում էր ճակատագրի տնօրինության տակ:

Հապճեպ, անհուսալի կառուցված տնակները, շինանյութի անբավարարության հետևանքով, փլուզվում էին, զոհերի պատճառ դառնում: Աշխատանքի ընդունված ընչազուրկ հայրենադարձներն օրական ստանում էին միայն 500 գրամ հաց: Թալինի շրջանում 23 ընտանիքի 116 անդամներ գտնվում էին բաց երկնքի տակ, մի շարք շրջաններում, որտեղ նախատեսված չէր վերաբնա-

³⁸ Նույն տեղում, գ. 4, թ. 53:

կեցում, և որտեղ հասել էին ներգաղթածները, ապրում էին անդուռ ու անլուսամուտ շինություններում, մի քանի ընտանիքներ ապրում էին մի փոքրիկ կացարանում, զուրկ անկողին հասկացությունից և քնում էին հողե հատակին³⁹:

Զեկուցագրերից մեկը հայտնում է, որ Երևանում, Լենինականում տեղավորված ներգաղթածները գտնվում են կենցաղային ծանր պայմաններում: Սիրիայից ներգաղթած Կ. Ջալուլյանի ընտանիքն ապրում էր մշակույթի տան նկուղում, որը բետոնե հատակով էր, զուրկ դռներից ու պատուհաններից, խավար, մութ նկուղը չուներ նաև էլեկտրական լուսավորություն: Այդ պայմաններում հիվանդացել էր փոքրահասակ երեխան և տեղափոխվել հիվանդանոց: Մեկ այլ ընտանիք, որ գաղթել էր Հունաստանից, ապրում էր երրորդ հարկի անտանիք խոհանոցում: Բերիայի շրջանի Ստալինի անվան սովխոզում 22-հոգանոց ընտանիքը ապրում է մեկ սենյակում, իսկ 16 ընտանիք ապրում էր կիսակառույց, անլուսամուտ և անդուռ շինության մեջ: Կոտայքի սովխոզում մի փոքրիկ սենյակում ապրում էր 2-4 ընտանիք⁴⁰:

Կոտայքի շրջանից 1947թ. հոկտեմբերի 1-ին ԿԿ ուղղված զեկուցագիրը հայտնում է, որ «Շրջանի առանձին բնակավայրերում տեղական կուսակցության, սովետական կազմակերպությունները դեռևս անբավարար, նույնիսկ վատ են մտահոգվում հայրենադարձների բնակարանային-կենցաղային պայմանների բարելավմամբ»⁴¹:

Արարատի սովխոզում, որտեղ տեղավորվել էին Հունաստանից և Բուլղարիայից ներգաղթած 39 ընտանիք, մեկ սենյակում ապրում էին 2-3 ընտանիք: Գաղթականներն ապահովված չէին կենցաղային իրերով, մահճակալներով, թախտերով, յոթ ընտանիք զուրկ էր անկողնային պարագաներից⁴²:

Առինջ գյուղում, որտեղ բնակություն էր հաստատել Լիբանանից եկած մի ընտանիք, քնում էին գետնին, անձրևների ժամանակ տուն կոչվածը լցվում էր ջրով⁴³: Էլար գյուղում ապրող 17 ընտանիքի նկատմամբ տեղական ղեկավարները ցուցաբերում էին անտարբերություն: Նույն գյուղում 10-հոգանոց մի ընտանիք քնում էր գետնին: Այսքանից հետո զեկուցագիրը չի էլ զար-

³⁹ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 28, գ. 60, թ. 201-208:

⁴⁰ Նույն տեղում, ց. 27, գ. 47, թ. 98:

⁴¹ Նույն տեղում, ց. 27, գ. 213, թ. 55:

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում, թ. 56:

մանում, թե ինչու է նրանց «քաղաքական, բարոյական տրամադրությունը» վատ⁴⁴:

Երևանի Ստալինյան շրջանի շրջկոմի քարտուղարի զեկուցագրից տեղեկանում ենք, որ 1946-1947 թթ. շրջանում տեղավորվել են 2846 ընտանիք: 1947թ. աշխատանքի են տեղավորվել 3375 մարդ: 1242 մարդ դեռևս աշխատանք չունի: Ներգաղթածները արհեստավորներ են, երաժիշտներ, ուսուցիչներ, թարգմանիչներ: Բնակարանային շինարարությունը դեռևս շարունակվում է: Զգացվում է շինփայտի, այլ պարագաների պակաս: Որպեսզի ավարտվեն շինարարական աշխատանքները, և 205 ընտանիք ստանա բնակարան, անհրաժեշտ է 253 խորանարդ մետր փայտ, 12120 խորանարդ մետր տուլ, 320 խորանարդ մետր ապակի, 264 դուռ, 472 լուսամուտ⁴⁵:

Անմխիթար իրականությունը ներկայացնող փաստաթղթերի մեջ կան նաև ոգևորիչ վկայություններ: Մեղրու շրջանի վիճակը ներկայացնող հաշվետվությունը հայտնում է, որ շրջանում երեք՝ Մեղրի, Շվանիձոր, Լիճք գյուղերում համապատասխանաբար տեղավորված են 29, 13, 1՝ ընդամենը 43 ընտանիք: Նրանց աշխատունակ անդամներն ընդգրկված են կոլտնտեսություններում: 11 հոգի աշխատում է շրջանի տարբեր կազմակերպություններում:

- Հայրենադարձ հայերի ճնշող մեծամասնությունը ազնիվ ու բարեխիղճ կարգով են աշխատում կոլտնտեսություններում և իրենց վաստակած աշխօրերով ապահովում են իրենց նյութական և տնտեսական կարիքները⁴⁶: Ներգաղթածներից երեքը գյուղական խորհրդի դեպուտատ են, յոթ հոգի՝ ընտրական հանձնաժողովի անդամ⁴⁷: Ավելի հուսադրիչ տեղեկություններ հաղորդվում էին Նոր Բայազետի շրջանից: Կարմիր գյուղում տեղավորված 20 ընտանիք աշխօրի դիմաց ստացել են 50 ցենտներ հացահատիկ, 80 կգ կարագ, 250 կգ պանիր, 55 ց կարտոֆիլ, նրանց նվիրվել են տնային իրեր, 8 ընտանիք ստացել է բնակարան⁴⁸:

Աղկալա գյուղի 8 ընտանիք ստացել է վառելափայտ, նրանք ապահովված են նաև սննդամթերքով: Ծաղկաշենի 6 ընտանիք ստացել են 14 ց հացահատիկ, 25 կգ յուղ, 50 կգ պանիր, 12 ց կարտոֆիլ: Նույն բարենպաստ վիճակում էին Գեղարքունիք, Հացառատ գյուղերում տեղավորվածները:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում, թ. 47:

⁴⁶ Նույն տեղում, թ. 60:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում, թ. 41:

Շրջանի գաղթականների 194 երեխաներից 192-ը սովորում են դպրոցներում. «Այսպիսով հիմնականում շրջանում ներգաղթած ընտանիքների համար ստեղծված են նյութական և աշխատանքային պայմաններ», - եզրափակում է գեկուցագիրը⁴⁹:

Այն շրջաններում, որտեղ հոգատար ու կարեկից էին գաղթականների նկատմամբ, նրանց վիճակը դանդաղ, բայց բարելավվում էր: Ներգաղթածների մեծ մասը նվիրվածությամբ ներգրավվել էին աշխատանքի: Օրինակ՝ Վեդիի շրջանի Դաշլու գյուղում տեղավորված 16 ընտանիքները (64 շունչ) վաստակել էին 3650 աշխօր, որի դիմաց ստացել 8026 կգ հացահատիկ, 36.5 կգ յուղ, 73.0 կգ պանիր, 7660 ռուբլի⁵⁰:

Նույն շրջանի «Նոր կյանք» գյուղում 152 ընտանիքի 675 շունչ գաղթականներին բաշխվել էին 647 կտոր հագուստ, կոշիկ, մահճակալ, 17.0 տոննա կարտոֆիլ, 20.1 հազար ռուբլու մթերք, 30.0 հազար ռուբլու արդյունաբերական ապրանքներ, 44.0 հազար ռուբլու դրամական օգնություն, 1750 հատ օճառ, 600 կգ շաքար, 1222 կգ ալյուր, 1375 կգ ձավար, 72 կգ կակաո⁵¹:

Ծանր տնտեսական ու կենցաղային պայմանները ներգաղթածների աչքում նսեմացնում էր հայրենիքի գաղափարը: Սակայն կենտրոնական իշխանությունը, որ քաջատեղյակ էր այս վիճակին, հետևողական չէր ընդունված որոշումների կատարման հարցում:

1947թ. նախատեսված էր կառուցել 13 հազար սենյակ (տուն), սակայն ամբողջ տարվա ընթացքում ընդհատումներով ստացվող շինանյութի պատճառով նույն թվականի հոկտեմբեր ամսին կառուցվել էր ընդամենը 2375 սենյակ⁵²: Ամբողջ 1947թ. համար այդ նպատակով նախատեսված 65 միլիոն ռուբլու փոխարեն հանրապետությանն էր փոխանցվել միայն 16.8 միլիոն ռուբլի⁵³:

Հայրենադարձների արդարացի դժգոհությունները, տեղական իշխանությունների միջոցներից զուրկ վիճակը ստիպում էր դիմել կենտրոնի օգնությանը, սակայն ուղարկված գեկուցագրերն ու խնդրագրերը մնում էին անպատասխան: 1947թ. դեկտեմբերի 10-ին ԽՍՀՄ նախարարների խորհուրդը որոշում կայացրեց, որի համաձայն բյուջեի միջոցներով կառուցվելու էր

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում, ֆ. 1, ց. 28, գ. 87, թ. 5, 6:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Նույն տեղում, թ. 203:

⁵³ Նույն տեղում, թ. 204:

84.5 հազար քառակուսի մետր բնակտարածություն, բանկային վարկերի միջոցով՝ 9036 տուն⁵⁴: Այս ներդրումներն ինչ-որ չափով կնպաստեին վիճակի բարելավմանը, սակայն հետո, երբ պարզվեց, որ դրանք անբավարար են դրությունը շտկելու համար, փոխանակ լրացուցիչ ներդրումներ կատարվեին, նախատեսված քանակը կրճատվեց⁵⁵:

Մի առանձին հոգս էր հայրենադարձներին աշխատանքով ապահովելը: Ներգաղթածներից 15100 մարդ աշխատունակ էին, նրանք շինարարներ էին, արհեստավորներ, կոշկակարներ, ոսկերիչներ, ճարտարագետներ, երաժիշտներ, նկարիչներ, քանդակագործներ, բժիշկներ, տեխնիկներ, գյուղատնտեսներ: Բայց հանրապետության թույլ զարգացած տնտեսությունն անկարող էր նրանց տեղավորել աշխատանքի, և գաղթականները լրացնում էին անաշխատ սպառողների շարքերը:

Հայրենադարձների ընդհանուր թվաքանակի մասին վիճակագրությունը տատանողական էր, որովհետև փրկություն փնտրելու նպատակով նրանք տեղից տեղ էին տեղափոխվում: Առկա աճի ցուցանիշները, մահացության դեպքերը չէին գրանցում:

Ուսումնասիրողներից մեկի կազմած ցուցակի համաձայն, մինչև 1948թ. ներգաղթել են 20646 ընտանիք, 89750 մարդ, որոնց տեղավորման, բնակարանով ու աշխատանքով ապահովելու խնդիրները լուծելը գրեթե անիրական էր⁵⁶:

Վերջին հաշվով ձախողվեց մարդասիրական, քաղաքական մեծ հնչեղություն ստացած ներգաղթի գործընթացը: Հայաստանի կառավարությունը անկարող էր դիմակայել դժվարություններին: Գոյություն ուներ մի կարևոր խնդիր ևս: Ներգաղթածների նկատմամբ «իրավասու» կառույցները կազմել էին շինծու բնութագրեր՝ նրանց անվանելով անհուսալի տարրեր, արտասահմանի գործակալներ: Այս պայմաններում նրանց նկատմամբ Հայաստանի կառավարության հոգատարության որևէ դրսևորում կդիտվեր որպես հակախորհրդային տարրերի հովանավորություն:

Դժվարությունները, դրանք լուծելու անկարողությունը, հայրենադարձների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը պատճառ դարձան ներգաղթի դադարեցման համար: Այդ քայլերը սկսեց կենտրոնական կառավարու-

⁵⁴ Նույն տեղում, ց. 29, գ. 99, թ. 140:

⁵⁵ Նույն տեղում, թ. 160:

⁵⁶ **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք սփյուռք առնչությունները և հայրենադարձությունները (1920-1980 թթ.), Երևան, 1985, էջ 240:

թյունը: Նախ կրճատվեցին հաստիքները, ապա փակվեցին Ջուլֆայի ու Բաթումի ընդունման կետերը:

Հայաստանի կառավարությանն այլ ելք չէր մնում, քան 1949թ. դադարեցնել հայրենադարձությունը: Այս ամենի հրահանգողը Ստալինն էր: 1948թ. սեպտեմբերի 1-ին ներգաղթյալներ տեղափոխող «Պոբեդա» ջերմանավի վրա պատահականորեն հրդեհ է բռնկվում: Լուրը Ստալինին է հասցվում գլխիվայր շրջված, և զայրացած առաջնորդը հանգստավայրից 1948թ. սեպտեմբերի 13-ին Գ. Մալենկովին ուղղված հեռագրում պահանջում է պարզել՝ եթե այդ ամենը ամերիկահայ գործակալների ձեռքի գործն է, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ: Նույն օրը պատասխանելով հեռագրին՝ Գ. Մալենկովը հաստատում է Ստալինի «մեղադրանքը», և նրա միջնորդությամբ ԽՍՀՄ կառավարությունը սեպտեմբերի 14-ին որոշում է դադարեցնել ներգաղթը:

Ներգաղթի նկատմամբ ԽՍՀՄ կառավարության վերաբերմունքը ի վերջո հաստատեց այն տեսակետը, որ ներգաղթը կազմակերպվում էր Արևմուտքի և Թուրքիայի վրա ներագդելու համար և չուներ Հայկական հարցը լուծելու նպատակ:

Ներգաղթը կապելով տարածքային պահանջների հետ, բնական է, որ նրա լուծման կամ մերժման պարագայում հայության համար չափազանց մեծ կարևորության խնդիրն արժանանալու էր իրադարձությունների քմահաճույքին, նրա կողմնակալ լուծումներին ու վերաբերմունքին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մինչև Պոտսդամի խորհրդակցությունը, ԽՍՀՄ-ը բարձրացրել էր հայկական տարածքների խնդիրը և դաշնակիցների վրա ներգործելու համար ձեռնարկել սփյուռքահայերի հայրենադարձության գործընթացը, որն իբր ապացուցելու էր տարածքային պահանջների անհրաժեշտությունը:

Պատմական գրականության մեջ սփյուռքահայերի ներգաղթի կազմակերպման հարցում կան մի քանի տեսակետներ: Նախ, որպես վճռորոշ քայլ ընդունվում է հայ ժողովրդի լայն մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին, ապա սփյուռքահայության՝ Եվրոպայում հակաֆաշիստական դիմադրական պայքարին ներգրավվածությունը, այնուհետև տարածքային պահանջներով Թուրքիայի վրա ներգործելու միտումը, իր մարդասիրական քաղաքականությունը միջազգային հանրությանը ներկայացնելու ԽՍՀՄ նպատակադրումը, սփյուռքահայության ներուժն իր ծրագրերին ծառայեցնելու ԽՍՀՄ ցանկությունը: Դրդապատճառների թվում նշվում է նաև հայկական տարբեր

գաղթօջախներից ներգաղթի առթիվ համախոսականների, դիմումների, ուղերձների, նամակների նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորման փաստը: Կարևոր դերակատարություն էր տրվում նաև 1944-1946 թթ. Սփյուռքում գործող կոմիտեների, խորհուրդների՝ երեք տերությունների ղեկավարներին հասցեագրված դիմումներում աշխարհում ցրված հայերին հայրենիք վերադարձնելու պահանջներին:

Բանալի բաներ – սփյուռքահայություն, ներգաղթ, 1946-1948թթ.:

РЕПАТРИАЦИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В 1946-1948 гг.

ОВАНЕС ЗАТИКЯН

До Потсдамского совещания советская сторона поднимала территориальную проблему и в целях оказания давления на союзников предприняла репатриацию армянской диаспоры, что, якобы, должно было стать доказательством необходимости территориальных требований.

В исторической литературе по вопросу организации репатриации армян существует несколько точек зрения: 1. в качестве решающего фактора акцентируется участие армянского народа во второй мировой войне; 2. отмечается участие армянской диаспоры в антифашистской борьбе в Европе; 3. указывается факт оказания давления на Турцию посредством территориальных требований; стремление СССР продемонстрировать международному сообществу свою гуманную политику; использование потенциала армянской диаспоры в реализации своих программ. В вопросе организации репатриации важную роль сыграли также заявления действующих в Диаспоре 1944-1946 гг. комитетов возвращения армян на родину.

Ключевые слова - армянская диаспора, репатриация, 1946-1948гг.

REPATRIATION OF THE ARMENIAN DIASPORA IN THE 1946-48.

HOVHANNES ZATIKYAN

Prior to the Potsdam Conference the Soviets introduced the Armenian territorial problem and to impress the allies they undertook the process of repatriation of the Armenian Diaspora, which was to prove the indispensability of their territorial claims.

There exist in historical literature several standpoints concerning the organization of repatriation of the Armenian Diaspora. First, as a critical point the wide participation of the Armenian people in World War II, then the involvement of the Armenian Diaspora in anti-fascist struggles in Europe. One of the other points is to restrain Turkey by putting territorial demands on it, to demonstrate the Soviet humanitarian policy to the international community, and then to try make use of the potential of the Armenian Diaspora in different programs. Among other reasons was also the amiable attitude adapted towards the applicants, letter writers and others from different Armenian communities of the Diaspora on behalf of their repatriation to Soviet Armenia. It was as well quite decisive the applications written by Armenian Diaspora Committees, councils to the Three Heads of Government of the USSR, USA and UK requiring the repatriation of Armenians from around the world to Soviet Armenia.

Key words - Armenian Diaspora, repatriation, 1946 -1948.

ԿԱԹՈՒԿԻՅԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԿԱԹՈՒԿԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հոգևոր առումով հայ իրականության մեջ ազգապահպան մեծ նշանակություն ունեցող Հայ առաքելական եկեղեցու կողքին այլ դավանանքների և կրոնների հիմնախնդիրն այսօր ևս կարևոր տեղ է գրավում գիտական ու հասարակական շրջանակներում: Այս համատեքստում մեծ նշանակություն են ձեռք բերում նաև հայ իրականության մեջ կաթոլիկ քարոզիչների գործունեության, կաթոլիկյան դավանանքի տարածման, ինչպես նաև քարոզչության արդյունքում ձևավորված հայ կաթոլիկ համայնքների պատմությանն ու արդիական կացությանը վերաբերող հարցերը: Կաթոլիկությունը և ուղղափառությունը ի հայտ եկան որպես արևմտյան և արևելյան Հռոմի միջև քաղաքական և տնտեսական պայքարի արդյունք: Երկու եկեղեցիներն էլ պայքարում էին իրենց հետևորդների թիվն ավելացնել ոչ միայն հեթանոսների, այլ նաև այն ժողովուրդների հաշվին, ովքեր ընդունել էին Քրիստոսի հավատքը: Սակայն իրենց շարքերը ներգրավել քրիստոնեությունն ընդունած հայերին հնարավոր էր միայն նրանց եկեղեցին հերետիկոս համարելու արդյունքում: Սակայն, եթե բյուզանդական եկեղեցին պայքարում էր Հայ առաքելական եկեղեցու հետ ագրեսիվ և առանց փոխհամաձայնության, ապա Հռոմեական կաթոլիկ եկեղեցին, հաշվի առնելով Բյուզանդիայի անհաջող փորձը, գործում էր շատ ավելի մեղմ: Խաչակրաց արշավանքների ընթացքում, հուսալով ստանալ Կիլիկյան Հայաստանի օժանդակությունը, Հռոմեական կաթոլիկ եկեղեցին տեղի հայ թագավորներին և հոգևոր առաջնորդներին հոգևոր ունիա առաջարկեց: Կիլիկիայի քաղաքական վերնախավն այդ ունիան ընդունեց որպես զուտ ռազմաքաղաքական միության նախահիմք, որը, նրա համոզմամբ, չէր խաթարի Հայ առաքելական եկեղեցու ազգային բնութագիրը¹:

Բավականին արժեքավոր վավերագրեր են պահպանվել այն մասին, որ հայերի մեջ կաթոլիկյան քարոզիչների գործունեությունը Կիլիկյան հայկական թագավորության սահմաններում ծավալվել է դեռևս XIII դարի վերջին և XIV

¹ Сукиасян А. История Киликийского армянского государства и права (XI-XIV вв.). Ереван, 1969, с. 24-26.

դարի առաջին կեսին: Լևոն IV-ի (1305-1308) ճնշման ներքո Հայ եկեղեցում ընդունվեցին խոստովանական և ծիսական որոշ սկզբունքներ, որոնք փաստացի բերում էին ունիայի ձևավորման: Շրջակա մահմեդական իշխանությունների պարբերական ասպատակությունների շրջանում հռոմեական եկեղեցին օգնության նախապայման էր համարում հայերի կողմից Հռոմի պապի գերիշխանության ճանաչումը, ինչպես նաև՝ կաթոլիկ եկեղեցու դավանանքի և ծեսի ընդունումը: Իսկ միաբանության հայ կողմնակիցները (ունիթորներ), Կիլիկիայի հայոց թագավորության փրկությունը կապելով լատինական եկեղեցու օժանդակության հետ, կորորեն ընդունում էին լատինական եկեղեցու պահանջները և փորձում էին կաթոլիկյան դոգմաներն ու ծեսերն արմատավորել Հայաստանում²: Սակայն հայ հոգևորականների հակակաթոլիկյան տրամադրությունները, իսկ այնուհետև Կիլիկյան Հայաստանի կործանումը ձախողեցին միաբանություն հաստատելու բոլոր փորձերը, որն ընդունվել էր Ֆլորենցիայի ժողովում 1439 թ. նոյեմբերի 22-ին:

² Այդպիսի մի փորձ էր Սսի՝ 1307 թ. տեղական ժողովը, որն սկսվել և ավարտվել է մեկ օրում (մարտի 19-ին՝ Ծաղկազարդի օրը): «Սուկ այդ պարագայն բաական է ցուցանել, - գրում է Մաղաքիա արք. Օրմանյանը, - թէ օրինաւոր ժողով մը չէ եղած Սսոյ գումարումը, այլ հանդիսական արարողութիւն մը, ուր թագաւոր մը եւ թագաւորահայր մը թուղթ մը կը դնեն մէջտեղ, եւ քանի մը եպիսկոպոսներ ու վարդապետներ առանց գլխի եւ առանց կաթողիկոսի հլու հպատակութեամբ կը ստորագրեն առջեւը դրուած թուղթը» (**Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. 2, Ս. Էջմիածին, 2001, էջ 906-907, սյուն. 2089. Maxaqia arq. Ormanyan, Azgapatum, h.2, S. Ejmiatsin, 2001, ej 906-907): Ժողովական որոշումը «Հայ եկեղեցոյ հազար տարուան անփոփոխ դաւանութիւնն ու աւանդութիւնը» ջնջելու անհաջող մի փորձ էր, որի պատճառով այն արմատապես մերժվել է Հայ եկեղեցու կողմից:

Հատկանշական է նաև, որ Սսի՝ 1342 թ. և 1361 թ. տեղական եկեղեցական ժողովները մերժեցին հռոմեական եկեղեցու հետ միություն կազմելու և ծիսական փոփոխություններ կատարելու առաջարկները: Մանրամասները տե՛ս **Աբել արք. Մխիթարեանց**, Երկերի ժողովածու («Արարատ»-ի ժառանգություն Ա), Ս. Էջմիածին, 2009, էջ 270-276, 349-362, Abel arq. Mxitaréanc, Erkerdi joxovacu, Ararati jarangutyun A, S.Ejmiatsin, 2009. ej 270-276, 349-362. **Մելքիսեդեկ վրդ. Մուրադյանց**, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ (վերահրատ.), Ս. Էջմիածին, 2011, էջ 261-270, Meliqsedek vrd. Muradyanc, Patmutyun Hajastaneac Araqelakan Surb Ekexcvo, S. Ejmiatsin, 2011, ej 261-270, **Յուսիկ վրդ. Մովսիսեան**, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ պատմութիւն, Բ հրատ., Ս. Էջմիածին, 2008, էջ 245-252, Husik vrd. Movsisean, Hajastaneayc Aqaelakan S. Ekexecvo patmutyun, B hrat., S. Ejmiatsin, 2008, ej 245-252, **Ներսես վրդ. Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրավունքը (վերահրատ.), Ս. Էջմիածին, 2011, էջ 374-376 Nerses vrd. Meliq-Tangean, Hayoc ekexecakan iravunqy, S. Ejmiatsin, 2011, ej 374-376 և այլն:

Ֆլորենցիայի ժողովում անհաջողության մատնվելով՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցին Հայ առաքելական եկեղեցու վարչական տարածքում կաթոլիկություն արմատավորելու միտումով սկսեց գործել քարոզիչների օգնությամբ: Կաթոլիկյան քարոզիչների՝ Հայաստան ներթափանցումը մեծ մասամբ կապված է դոմինիկյան միաբանության վանականների անվան հետ: Հռոմի Հովհաննես XXII պապի՝ 1318 թ. կոնդակով ստեղծվեց արևելյան գավառների արքեպիսկոպոսություն, որն ընդգրկեց նաև Արևելյան Հայաստանին սահմանամերձ կենտրոնները: Այս վայրերից շարժվելով դեպի բուն հայկական տարածքներ՝ կաթոլիկյան քարոզիչներին հաջողվեց հաստատվել Նախիջևանի գավառի առևտրաշատ Ջահոկ, Երնջակ և այլ բնակավայրերում³: Դոմինիկյան միաբաններ Բարդուղիմեոս Բյուրխացու, Պետրոս Արագոնացու և այլոց եռանդուն դավանափոխական գործունեության հետևանքով XIV դարի առաջին կեսին նշված տարածաշրջաններում ձևավորվեցին հայ լատինադավանների կամ ունիթորների մի շարք համայնքներ, որոնք Իննոկենտիոս VI պապի 1356 թ. կոնդակով հռչակվեցին որպես միարարների առանձին միաբանություն՝ դոմինիկյան ուխտի վանահոր անմիջական ենթակայությամբ: Արևելքում կաթոլիկյան քարոզիչների գործունեությունը նոր թափ ստացավ Բյուզանդիայի կործանումից հետո: Կայսրության նախկին տարածքում կաթոլիկյան քարոզչական գործընթացներն էլ դարձան հայերի մեջ կաթոլիկություն տարածելու երկրորդ փորձի նախահիմքերից մեկը: Հայոց մեջ կաթոլիկյան նոր քարոզչությունն էլ ավելի ամբողջական տեսք ստացավ Օսմանյան տիրապետության շրջանում: Ինչպես նախկինում, Օսմանյան կայսրության շրջանակներում ևս հայ ժողովրդի կաթոլիկացման նախաձեռնող ուժը Վատիկանն էր: Վերջինիս ընդունած որոշումների արդյունքում էին Արևմտյան Հայաստան ուղարկվում քարոզչական խմբեր, որոնք զանազան միջոցներով ի վերջո կարողացան դավանափոխ անել արևմտահայության փոքրաթիվ մի հատվածի⁴:

XVII- XVIII դարերում Հռոմեական կաթոլիկ եկեղեցու ակտիվացումն ընթանում էր Եվրոպայի և Օսմանյան կայսրության միջև տնտեսական կապերի ամրապնդմանը զուգընթաց: XVII դ. վերջին տասնամյակներին կաթոլիկության տարածման գործընթաց ներառվեցին նաև հայ քարոզիչները: Այդ տեսանկ-

³ Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայ կաթոլիկե և Ավետարանական համայնքները Թուրքիայում. ժամանակակից միտումներ, Երևան 2012. Simavoryan A., Hovyan V., Hay katoxike ev Avetaranakan hamaynqneri Turkiayum. Jamanakacic mitumner, Yerevan 2012:

⁴ Խաչատրյան Տ., Միսիոներությունը Թուրքիայում, Khachatryan T. Misionerutyuny Turkiayum <http://www.religions.am/index.php>:

յունից նշանակալի դեր են կատարել հատկապես Սուրբ Ղազար կղզում հիմնադրված Մխիթարյան միաբանության մտավորականները, ինչպես նաև Վիեննայի և Լիբանանի եղբայրությունների հայագիտական կենտրոնների ներկայացուցիչները⁵:

1622 թ. Գրիգոր XV պապի որոշմամբ հիմնադրվեց «Հավատի քարոզչության Սուրբ միաբանությունը», որի նպատակն էր կաթոլիկությունը տարածել Արևելքում և մասնավորապես Հայաստանում: Պապի նախաձեռնության արդյունքում XVII դարի երկրորդ կեսին Հայաստանում լայնածավալ և ակտիվ քարոզչական գործունեությամբ աչքի ընկան հատկապես ֆրանցիսկյան, կարմելիտների, օգոստինական և մի շարք այլ վանական միաբանություններ: Հայերին դավանափոխ անելու լատին քարոզիչների ձեռնարկած այս քայլերն անհետևանք չանցան, և բազմաթիվ հայեր կաթոլիկյան դավանանք ընդունեցին: Օգտվելով այն հանգամանքից, որ թուրքական և պարսկական լծի տակ հայերը գտնվում էին անասելի ծանր վիճակում, կաթոլիկյան քարոզիչները հայ ժո-

⁵ **Ակինյան Ն.**, Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա, Վիեննա, 1912, նույնի՝ Դասական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 338, Akinyan N. Aknark my Viennakan Mxitaryan miabanutyayn grakan gorcuneutyayn vra, Vienna, 1912., Dasakan hayereny ev Viennakan Mxitaryan dprocy, Vienna 1932, ej 338, Հուշարձան. գրական ժողովածու առթիվ 100-ամյա հոբելյեի հաստատման Մխիթարյան միաբանության ի Վիեննա (1811–1911), Վիեննա, 1911, էջ 436, Hushardzan. Grakan joxovacu artiv 100-amyay hobeleni hastatman Mxitaryan miabanutyayn i Vienna, Vienna, 1911, ej 436: **Մաղաքիա արք. Օրմանյան**, Հայ եկեղեցին և յուր պատմությունը, Կ. Պոլիս, 1912, էջ 86-88, Maxaqia arq. Ormanyayn, Hay ekexecin ev jur patmutyayn, K. Polis, 1912, ej 86-88: **Տաշեան Յ.**, Յուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, 1891, էջ 7, Tashean Y., Cucak hayeren dzeragrak kayserakan matenadaranin I Vienna, 1891, ej 7, **Լեո**, Տրիեստի Մխիթարյանները / Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 1019-1020, Leo, Triesti Mxitaryannery /Hayoc patmutyayn, h. 3., Yerevan, 1946, ej 1019-1020, **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 185-191, Acharyan H. Hay gaxtakanutyayn patmutyayn, Yerevan, 2002, ej 185-191. **Սեբրուկեան Օ.**, Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանի ի Վիեննա, Վիեննա, 1983, նույնի՝ «Հանդէս ամսօրեայի» հոդվածներուն 100 տարվան մատենագիտական ցուցակ, 1887-1987, Վիեննա, 1990, Sequlean O. Cucak hayeren dzeragrak Mxitarean matenadaranin I Vienna, Vienna, 1983, Handes amsoreayi joxovacunerun 100 tarvan matenagitakan cucak, 1887-1987, Vienna, 1990, **Աղայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958, էջ 245-315, Axayan E. Hay lezabanutyayn patmutyayn, h.1, Yerevan, 1958, ej 245-315, **Փաշայան Ա.**, Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները ԺԸ-ԺԹ դարերում // «Բազմավեպ», 2001, 1-4, էջ 333-350, Pashayan A. Mxitaryanneri bnagitakan hratarakutyaynery JY-JT darerum// Bazmavep, 2001, 1-4, ej 333-350 և այլն:

ղովրդին սոցիալական օգնություն ցուցաբերելուն զուգընթաց հետևողականորեն տարածում էին նաև կաթոլիկյան դավանանքը: Այդ ամենի արդյունքում կաթոլիկություն ընդունեցին հիմնականում այն գյուղերի կամ բնակավայրերի բնակիչները, որոնք կանգնած էին երկընտրանքի առջև՝ ֆիզիկապես բնաջնջվել կամ իսլամ ընդունել: Այս կերպ դավանափոխ եղած հայերը փորձում էին ունենալ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պաշտպանությունը, մինչդեռ կաթոլիկ քարոզիչների նպատակը ամենևին էլ հայ ժողովրդին թուրքական սպառնալիքից փրկելը չէր, այն ուներ ավելի խոր՝ Վատիկանի համար թերևս քաղաքական պատճառներ. Հռոմի կողմից Հայաստանում ծավալված քարոզչությունը յուրատիպ փոխհատուցում պետք է հանդիսանար Ռեֆորմացիայի հետևանքով Եվրոպայում կաթոլիկ եկեղեցու կրած կորուստների համար⁶: Դեռևս 1461 թ. թուրքական սուլթանի հատուկ հրովարտակով Կ. Պոլսում ստեղծվեցին Հայ առաքելական պատրիարքարան, որը զբաղվում էր ոչ միայն հայ համայնքի հոգևոր, այլ նաև քաղաքացիական հարցերով: Թուրքերը բոլոր հայերին, անկախ դավանանքից, ընդունում էին որպես մեկ ազգ: Այդ պատճառով մինչև 1829 թ. Թուրքիայում ապրող կաթոլիկ հայերը ենթարկվում էին Հայ առաքելական եկեղեցուն, հաճախում էին նույն եկեղեցին, մկրտվում էին Հայ եկեղեցու հոգևորականների կողմից և նրանց կողմից էլ հաղորդություն էին ստանում: Սակայն այդ «միասնությունը» չէր կարող բավարարել կողմերից և ոչ մեկին: Կաթոլիկները հայ կրոնական համայնքների միջև արհեստականորեն հրահրում էին կոնֆլիկտներ և անհարկի դավանաբանական վեճեր: Իր հերթին պապական Հռոմը սուլթանից պահանջում էր օրինականացնել հայ կաթոլիկյան համայնքը: Այդ կոնֆլիկտից իր որոշակի շահն էր ուզում ստանալ նաև Կ. Պոլսի ուղղափառ պատրիարքը: Հայ առաքելական եկեղեցին, բնականաբար, բացասական դիրքորոշում ուներ հայերի մեջ կաթոլիկ քարոզիչների գործունեության նկատմամբ՝ համարելով, որ նրանք խախտում են ազգային միաբանությունը:

Չնայած Հայ առաքելական եկեղեցու ընդդիմությանը՝ կաթոլիկների գործունեությունը ի վերջո տվեց իր արդյունքները. XVII դարի երկրորդ կեսին սկսեցին ի հայտ գալ առանձին հայկական կաթոլիկական համայնքներ, իսկ XVIII դարի սկզբին Հալեպի և Մարդինի հայ եպիսկոպոսները բացահայտորեն արտահայտվեցին կաթոլիկություն ընդունելու օգտին: XVIII դարում պապական Հռոմի հետ համագործակցության ոլորտում ազդեցիկ դեր էր կատարում

⁶ Лаврецкий И. Ватикан. М., 1957, с. 62.

հատկապես կաթոլիկյան Անտոնյան միաբանությունը: Մերձավոր Արևելքում այս միաբանության համայնքները ձևավորվում էին հինարևելյան այն եկեղեցիների դավանորդների հաշվին, որոնք անցում էին կատարել կաթոլիկության: Հայ անտոնյան միաբանությունը հիմնադրվել է 1715 թ., որի կարգավիճակը հաստատվել է Կղեմես XIII պապի կողմից: XVIII դարի վերջին գործող հայ կաթոլիկ համայնքների եպիսկոպոսական դասի մեծ մասն այս միաբանության ներկայացուցիչներ էին:

Աստիճանաբար ծավալվող կաթոլիկյան հայ համայնքներն իրենց համար ակնկալում էին եկեղեցական աստիճանակարգություն և սեփական պատրիարք: Օսմանյան կայսրության հայ հոգևորական դասի մեջ կաթոլիկների ազդեցության արդյունքում տարածայնություններ ձևավորվեցին, քանի որ Հայ առաքելական եկեղեցու մի քանի եպիսկոպոսներ ևս կաթոլիկություն ընդունեցին և ֆրանսիական կառավարության ու Հռոմի պապի միջնորդությամբ առանձնացան Հայ եկեղեցուց: 1742 թ. Բենեդիկտոս XIV պապը Հայ առաքելական եկեղեցու նախկին եպիսկոպոս Աբրահամ Արծիվյանին (1679-1749թթ.) հաստատեց Կիլիկյան Հայաստանի կաթոլիկյան պատրիարք՝ Լիբանան նստավայրով: Նրան հանձնարարվեց նաև Օսմանյան կայսրության հյուսիսային շրջանների հայ կաթոլիկ համայնքների ղեկավարման իրավասությունը: Նոր պատրիարքը իրեն անվանեց Աբրահամ Պետրոս I, և նրա բոլոր հաջորդները ևս իրենց ավանդաբար անվանեցին Պետրոս:

Փաստ է, որ Օսմանյան Թուրքիայի քաղաքական-կառավարչական համակարգը ազգային փոքրամասնություններին «ներքին ինքնավարություն» էր տրամադրում բացառապես կրոնական առաջնորդների ղեկավարության ներքո (Միլիեթի համակարգ): Դա էր պատճառը, որ նախապես հայ կաթոլիկյան բոլոր համայնքները հայտնվեցին Հայ առաքելական եկեղեցու Կոստանդնուպոլսի պատրիարքի ղեկավարության ներքո: Այդ իրավիճակը հայ կաթոլիկների համար բազում դժվարություններ ծնեց, ինչը շարունակվեց մինչև 1829 թ., երբ Ֆրանսիայի ճնշման ներքո թուրքական կառավարությունը հայ կաթոլիկներին ևս թույլատրեց միավորվել վարչական ինքնուրույն միավորի (Միլիեթի) տեսքով՝ Կոստանդնուպոլսում ունենալով արքեպիսկոպոս: Իսկ 1846 թ. հայ կաթոլիկ արքեպիսկոպոսը ևս օժտվեց քաղաքացիական ղեկավարման

իրավունքներով⁷: Իրադարձությունների անտրամաբանական դասավորությունը, որի արդյունքում հայ կաթոլիկ արքեպիսկոպոսը Կ. Պոլսում ներկայացնում էր քաղաքացիական և կրոնական իշխանություն, իսկ եկեղեցու հոգևոր առաջնորդը՝ պատրիարքը, գտնվում էր Լիբանանում, վերացվեց 1867 թ., երբ Պիոս IX պապը միավորեց հայ կաթոլիկների նվիրապետական երկու աթոռները, և պատրիարքի նստավայրը տեղափոխվեց Կ. Պոլիս: 1867 թ. Պիոս IX պապը հայ կաթոլիկ եկեղեցու կարգավիճակի վերաբերյալ հրապարակեց «Reversurus» բուլլան, որով կտրուկ սահմանափակվեց նրա ինքնավարության իրավունքները: Այսուհետ արգելվեց պատրիարքի ինքնուրույն ընտրությունը, և բոլոր եպիսկոպոսների համար սահմանվեց դեպի Հռոմ «Ad limina apostolorum» ուխտագնացության հնգամյա ժամկետ: Հայ կաթոլիկ եկեղեցու իրավունքների այդ սրբագրումը հակասում էր XVIII դարում հաստատված կարգավիճակին և առաջ բերեց համայնքների դժգոհությունը: Հայ կաթոլիկ եկեղեցում հակասությունները խորացան հատկապես Վատիկանի առաջին ժողովից (1869-1870 թթ.) հետո, երբ ընդունվեց «Պապի անսխալականության» դոգման: Դրանով «Reversurus»-ի որոշումները գործնականում դարձան անդառնալի⁸: 1872 թ. Սուրբ աթոռի ընդդիմադիր հայ կաթոլիկները Անտոն Հասսունի փոխարեն արքեպիսկոպոս ընտրեցին Հովհաննես Կուպելյանին: Անտոն Հասսունը վտարվեց, իսկ հայ կաթոլիկ եկեղեցին Հովհաննես Կուպելյանի գլխավորությամբ հրաժարվեց ընդունել Վատիկանի առաջին ժողովի որոշումները: Հայ առաքելական եկեղեցու և Հռոմի միջև տարածանությունները շարունակվեցին մինչև 1879 թ., երբ պատրիարք Հովհաննես Կուպելյանը հռչակվեց որպես Լևոն III պապ, իսկ Անտոն Հասսունը կարողացավ վերադառնալ Կ. Պոլսի աթոռին: Մշտապես զգալով Հռոմի օժանդակությունը՝ հայ կաթոլիկ եկեղեցին երկար չկարողացավ հակադրվել պապի քաղաքականությանն իր իրավունքների սահմանափակման հարցում և ստիպված եղավ համաձայնվել «սուրբ Պետրոսի աթոռի» պահանջներին: Կաթոլիկ միսիոներների քարոզչական ակտիվ գործունեությունը խաթարվեց 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած աղետալի դեպքերի հետևանքով: 1915 թ. ցեղասպանության ժամանակ Հայ առաքելական եկեղեցու դավանորդների

⁷ Արդյան Ս., Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ Եկեղեցու, 2002թ. (էլեկտրոնային ռեսուրս). Aroyan S. Hamarot patmutyun Hay Katolixke Ekexecu, 2002. /Elektronayin resurs/ <http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf>.

⁸ Quartus Supra (On The achurch In Armenia), Pope Pius IX, Encyclical Promulgated on January 1873 <http://www.ewtn.com/library/encyc/p9quartu.html>.

կողքին նահատակվեցին նաև 30.000 հայ կաթոլիկներ: Եղեռնը և Թուրքիայում տեղի ունեցած հետագա հեղափոխական գործողությունները հանգեցրին տեղի հայ կաթոլիկական համայնքի վերացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածն անդրադառնում է կաթոլիկյան քարոզիչների՝ Հայաստան ներթափանցմանը և Հայաստանում կաթոլիկ եկեղեցու հիմնադրմանը: Կաթոլիկյան քարոզիչների՝ Հայաստան ներթափանցումը մեծ մասամբ կապված է դոմինիկյան միաբանության վանականների անվան հետ: 1622 թ. Գրիգոր XV պապի որոշմամբ հիմնադրվեց «Հավատի քարոզչության Սուրբ միաբանությունը», որի նպատակն էր կաթոլիկությունը տարածել Արևելքում և մասնավորապես Հայաստանում: 1461թ. թուրքական սուլթանի հատուկ հրովարտակով Կ. Պոլսում ստեղծվեց հայ առաքելական պատրիարքարան, որը զբաղվում էր ոչ միայն հոգևոր, այլ նաև հայ համայնքի քաղաքացիական հարցերով: 1742 թ. Բենեդիկտոս XIV պապը Հայ առաքելական եկեղեցու նախկին եպիսկոպոս Աբրահամ Արծիվյանին (1679-1749թթ.) հաստատեց Կիլիկյան Հայաստանի պատրիարք՝ Լիբանան նստավայրով:

Բանալի բառեր – կաթոլիկություն, եկեղեցի, Հայաստան, պատրիարք, քարոզիչներ:

КАТОЛИЧЕСКАЯ ПРОПАГАНДА В АРМЕНИИ И ОСНОВАНИЕ АРМЯНСКОЙ КАТОЛИЧЕСКОЙ ЦЕРКВИ

АНАИТ ХАЧАТРЯН

Статья посвящена проникновению проповедников-католиков в Армению и основанию католической церкви в Армении. Проникновение католических проповедников в Армению главным образом было связано с именами представителей доминиканского миссионерского общества священников. Решением папы Григория XV было основано “Святое единство проповеди веры”, целью которого было распространение католичества на Востоке, в частности, в Армении.

В 1461 года по указу турецкого султана Константинополя был создан патриархат армянской апостольской церкви, который занимался не только духовными, но и гражданскими вопросами общины.

В 1742 году папа Бенедикт XIV назначил бывшего патриарха армянской апостольской церкви Авраама Арцивяна (1679-1749) патриархом в Ливане.

Ключевые слова - католичество, церковь, Армения, патриарх, проповедники.

THE PREACHING OF CATHOLICISM & THE FOUNDATION OF THE CATHOLIC CHURCH IN ARMENIA

ANAHIT KHACHATRYAN

This article refers to the Catholic missionaries penetration into Armenia and the foundation of the Catholic Church. All this is basically connected with the name of the monks of the Dominican congregation.

In 1622 in accordance with the decision of Pope Gregory XV the “Faith Preaching Saint Congregation” was founded. Its objective was the spread of Catholicism through the East and particularly in Armenia.

The Armenian Apostolic Patriarchate was founded in Constantinople In 1461 by the special edict of the Turkish sultan. Patriarchate undertook the responsibility of taking care of not only spiritual but also civic issues of the Armenian community.

In 1742 Pope Benedict XIV appointed the ex-bishop of the Armenian Apostolic Church Abraham Artsivian (1679-1749) as patriarch of Cilician Armenia residence in Lebanon.

Key words - Catholicism, church, Armenia, patriarch, preachers

**ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍ-ՌՈՒՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԵՎ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ**

ՍԵՐԳԵՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղրիմի պատերազմից հետո Ֆրանսիան և Ռուսաստանը կարողացան անցնել համագործակցության: Նապոլեոն III-ը առավելություններ ստացավ կաթոլիկ աշխարհի հովանավորի և Ֆրանսիայի ազգային շահերի պաշտպանի դերում հանդես գալու համար, իսկ Ռուսաստանը կորցրեց իր բացառիկ իրավունքները՝ լինելու Թուրքիայի ուղղափառ քրիստոնյաների հովանավորը: Նոր իրողությունների պարագայում ավելի հեշտ դարձավ համաձայնության գալը: Կայսերական Ֆրանսիայի հետ հարաբերությունների բարելավման նախաձեռնողն էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Գորչակովը: Տասը տարիների ընթացքում նրա ֆրանսիամետ դիրքորոշումը Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունն էր: 1863թ.՝ լեհական ապստամբության սկսվելուց և 1866թ. Թուրքիայի ներքին բարեփոխումների հետ կապված տարաձայնություններից հետո երկու գերտերությունների ճանապարհները բաժանվեցին, իսկ Ռուսաստանի ֆրանսիամետ դիրքորոշումն այդպես էլ ոչինչ չտվեց Ռուսաստանին:

Ֆրանս-ռուսական հարաբերությունների ջերմացումն արտացոլվում էր նաև Օսմանյան կայսրության տարածքում, մասնավորապես Պաղեստինում: 1858թ. օգոստոսին Կ. Պոլսում նշանակված դեսպան Բուտենևը ուղղորդում էր Երուսաղեմում առաջին անգամ նշանակված ռուսական հյուպատոս Դոգորուժինովին հետևյալը. «Սկզբնական շրջանում ձևավորել բարեկամական և վստահության վրա հիմնված հարաբերություններ ֆրանսիական կողմի հետ»: Արևելքում երկու կողմերը քաջ գիտեին միմյանց նպատակներն ու գործելաոճը: Ֆրանսիան և Ռուսաստանը փորձում էին չարել երկկողմ հարաբերությունները, ինչը հնարավոր էր՝ հաշվի առնելով, որ կրոնական հարցերում լարվածությունը Ղրիմի պատերազմից հետո նվազել էր: Երուսաղեմի սրբավայրերի հարցում Ռուսաստանը փորձում էր անսանձ պահել սեփական հեղինակությունը և շահերը՝ խուսափելով անդրադառնալ Սուրբ քաղաքում այս կամ այն եկեղեցու

կամ կողմի առավելության կամ ազդեցության հարցին: Այսպիսին էր ցարական կառավարության դիրքորոշումը պատերազմից անմիջապես հետո¹:

Պաղեստինում ֆրանս-ռուսական համագործակցության վառ օրինակներից էր Ս. Հարության տաճարի վերանորոգման հարցի դիվանագիտական հանգուցալուծումը: 1862թ. ապրիլին Կ. Պոլսում նշանակված Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները հանդես եկան միանման նախաձեռնությամբ՝ առաջարկելով Ֆրանսիայի և Ռուսաստանի հաշվին վերանորոգել տաճարի գմբեթը: Բ. Դոան արտաքին գործերի նախարար Ալի փաշան դեսպաններ Լ. Մուստյեի և իշխան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուի հետ հանդիպման ժամանակ արտահայտեց իր գոհունակությունը, որ արևմտյան և արևելյան քրիստոնեական աշխարհների միջև համաձայնություն է ձեռք բերվել: Սուլթան Աբդուլ-Ազիզը ցանկացավ հանդես գալ որպես ֆրանս-ռուսական համագործակցության երրորդ կողմ, ինչին գերտերությունները տվեցին իրենց համաձայնությունը²:

Անհամաձայնություն ծագեց գմբեթի ներքին ձևի հետ կապված. թուրքական կողմը առաջարկում էր ձևավորել գմբեթն անտիկ ոճով՝ ոչինչ չփոխելով: Իսկ ֆրանսիական կողմը համաձայն չէր. Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Թուվենյը առարկում էր. Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև նախապես համաձայնություն էր կայացել, որ նոր գմբեթը չի կրելու իր վրա ոչ մի ձևավորում և գրություն, որը կարող է հանգեցնել տարբեր պաշտամունքների հետնորդների կոնֆլիկտին: Այդ հարցի շուրջ ձեռք բերված համաձայնությունն ավելի էական նշանակություն ունի, քան գմբեթը: Արտաքին գործերի նախարար Թուվենյը հիշեցնում էր դեսպան Մուստյեին, որ գմբեթի վրա պահպանվել են հույն-լատինական բախումների ժամանակից պահպանված հունարեն գրություններ, և որ դրանց վերականգնումն անընդունելի է: Բ. Դոուը, իր հերթին, ներկայացնում էր իր կարծիքը, որ ոչինչ պետք չէ փոփոխել տաճարի ներկայիս վիճակի մեջ, և առաջարկում էր հստակեցնել վերանորոգման աշխատանքների հետ կապված հարցերը նախնական զեկույցում:

Այդ նույն ժամանակ Ֆրանսիան ստիպված էր հանդարտեցնել իրավիճակը՝ կապված պապական Հռոմի՝ բոնապարտյան իշխանությունից ազատ-

¹ **Анисимов О.** Политика Франции в Святой Земле в период правления Наполеона III (1848–1870), /Иерусалимский православный семинар. Выпуск 4, Москва, 2013, с 135.

² **Фомин А.** Европейские державы в борьбе за Святую землю, Вестник Московского Университета, Москва, 2006, стр. 74.

վելու հետ: Հռոմը պատրաստվում էր դեմարշի՝ Բ. Դոանը հայտարարելով, որ կաթոլիկների ծախսով տաճարում անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներն իրականացնելու բացառիկ իրավունք ունի միայն կաթոլիկ եկեղեցին: Նախարար Թովմենը պետք է չեզոքացներ այդ դեմարշը, քանզի սուրբ աթոռի միջամտությունը կթուլացներ Թուրքիայի վրա գործադրած Ֆրանսիայի և Ռուսաստանի ճնշումը, և գմբեթի ձևավորման հարցի շուրջ ձեռք բերված համաձայնությունը կխափանվեր: Ֆրանսիական կողմի դիմադրության շնորհիվ հռոմեական անսպասելի դեմարշն այդպես էլ չհասավ իր տրամաբանական ավարտին³:

4. Պոլսի ֆրանսիական և ռուսական դեսպանությունների բանակցությունների արդյունքը եղավ 1862թ. սեպտեմբերի 5-ի եռակողմյան արձանագրության ստորագրումը: Ֆրանսիան, Ռուսաստանն ու Թուրքիան համաձայնեցին անմիջապես անցնել գմբեթի վերանորոգման աշխատանքներին և հավասարապես կիսել ծախսերը ֆրանսիական, ռուսական և թուրքական կողմերի միջև: Ֆրանսիական և ռուսական կողմերը նշանակեցին երկու ճարտարապետների, ովքեր պետք է գործեին փոխադարձաբար Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների հետ՝ համաձայնեցնելով ամեն ինչ տեղական թուրքական իշխանությունների հետ: Ճարտարապետներին կարգադրված էր խուսափել տաճարի և գմբեթի ձևավորման ընթացքում կողմերից որևէ մեկի զինանշանը օգտագործելուց՝ ի վնաս մեկ այլ կողմի: Թուրքական կողմն էլ պարտավորված էր տրամադրել վարչարարական և նյութական աջակցություն շինարարական աշխատանքներին: Արձանագրությանը կցված էր հետևյալ պարբերությունը. «Որոշված է, որ տվյալ համաձայնությունը ոչ մի նոր իրավունք չի շնորհում քրիստոնյա համայնքներին, արձանագրությունը ստորագրած կողմերին, և ոչ էլ առնչվում է նախկինում ձեռք բերված նրանց իրավունքներին»: Այս համաձայնությունը կարծես թե մոտ էր 1853թ. Մա-յիսի 4-ի փոխգիջմանը, երբ բոլոր քրիստոնյաներին հավասար մուտք տրամադրվեց քրիստոնեական հիմնական սրբավայրեր⁴:

Այն եղանակը, որով կարգավորվեց Սուրբ Հարության տաճարի գմբեթի պատկանելության երեսնամյա վեճը, դիվանագիտական շրջանակներում

³ **David Baguley**, Napoleon III and His Regime: an etravaganza, Louisiana State University Press 2000, p. 189.

⁴ Политика Франции в Святой Земле в период правления Наполеона III (1848–1870), Олег Анисимов, Иерусалимский православный семинар. Выпуск 4, с. 136.

ստացավ «Չեզոքացում» անվանումը՝ 1856թ. Փարիզի հաշտության պայմանագրի համաձայն Սև ծովի չեզոքացման անալոգիայով⁵:

Դիվանագիտական համաձայնությունը չհանգեցրեց դրա արդյունքների վայրկենական իրագործմանը: 1862թ. ֆրանս-ռուս-թուրքական բանակցությունների ընթացքում այդպես էլ չլուծվեց գմբեթի արտաքին տեսքի խնդիրը: Ելնելով չեզոքացման գաղափարներից՝ Ֆրանսիան պնդում էր մաքրել գմբեթի վրայի բոլոր հունարեն գրությունները: Ռուսաստանը և Թուրքիան այլ մոտեցում ունեին, ըստ որի գմբեթը պետք է վերականգնվեր համաձայն իր սկզբնական տեսքի, այսինքն՝ այն տեսքի, ինչ ուներ վերանորոգման աշխատանքներից առաջ: 1864թ. Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպան նշանակված կոմս Իգնատևը վերանորոգման աշխատանքները չսկսելու ամբողջ մեղքը վերագրում էր ֆրանսիական կողմին: Նա գտնում էր, որ Ֆրանսիան առիթ էր փնտրում ստիպելու ճանաչել իր նվաճողական նկրտումները՝ չեզոքացնելով սուրբ կառույցի այն մասերը, որոնք պատկանում են բացառապես ուղղափառներին: 1862թ. արձանագրությունն Իգնատևը անվանում էր «արևմտյան և մեղադրում էր իր նախորդին՝ Լոբանով-Ռոստովսկուն⁶:

1865թ. Նապոլեոն III կայսրի կինը՝ կայսրուհի Եվգենյան, և կաթոլիկական կուսակցության ղեկավարները հանդես եկան սենսացիոն առաջարկություններով: Կայսրուհին շրջաբերական նամակներով դիմեց Եվրոպայի միապետներին: Փորձելով բացատրել 1862թ. արձանագրության իրականացման անհաջողությունը՝ կայսրուհին այնուհետև շարադրում էր իր նախագիծը, ըստ որի պետք էր, ստանալով Բարձր դռան համաձայնությունը, վերանորոգել Սուրբ Հարության տաճարը նոր նախագծով՝ մեծ մասնաբաժիններով, որպեսզի նրանում տեղ հատկացվեր բոլոր դավանանքներին: Պետք էր կառուցել մեկական խորան կաթոլիկների և ուղղափառների համար, իսկ գլխավոր խորանը բաց էր լինելու բոլորի համար: Այս նախագիծը ուղղակիորեն հարվածում էր Երուսաղեմի հայոց պատրիարքության շահերին, քանի որ լատինական և ուղղափառ կողմերի իրավունքներն ավելի բարձր էին դասվում ըստ այդ նախագծի: Հայկական աղքյուրներում այս նախագծի մասին տեղեկություններ չկան: Ամենայն հավանականությամբ այս առաջարկությունից ժամանակի Հայոց պատրիարք Եսային տեղյակ չի եղել, այլապես կհետևեին

⁵ Мартенс Ф.Ф. Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами. СПб., 1909. Том 15: Трактаты с Францией. с. 315–316.

⁶ Политика Франции в Святой Земле в период правления Наполеона III (1848–1870), Олег Анисимов, /Иерусалимский православный семинар. Выпуск 4, с. 138.

բողոքներ Բարձր դռանը: Սակայն այդ նախագիծը չընդունվեց նաև ռուսական կողմից: Ռուսներն այս առաջարկությունը դիտարկում էին որպես հերթական թակարդ Արևմուտքի կողմից: Առաջարկությունը գործնականում ոչ մի լուրջ ազդեցություն չունեցավ⁷:

Կայսրուհու գաղափարները համապատասխանում էին Երուսաղեմի լատին պատրիարքի մտքերին, ինչի մասին վկայում է Երուսաղեմում ռուսական առաքելության ղեկավար Անտոնինը (Անդրեյ Կապուստին): «Երուսաղեմի լատին պատրիարք Վալերյան անհանգստանում է, որ չի կարողանում միջամտել գմբեթի հարցին: Նա ցանկանում է բաժանել Ս. Հարության տաճարի խորանը երեք մասի՝ լատինական, հունական և հայկական, և որ Սուրբ Գերեզմանի վրա ոչ մի կողմը պատարագ չմատուցի»⁸:

Պետք է նշել, որ կայսրուհին հակում ուներ անսպասելի քայլեր անելու դիվանագիտական ասպարեզում: Այս նախագծից երկու տարի առաջ՝ 1863թ. փետրվարին, Փարիզում Ավստրիայի դեսպան Մետերնիխի հետ զրույցում ոգևորությամբ պատմում էր դեսպանին, թե իր կարծիքով ինչպես պետք է վերափոխել Եվրոպան: Կայսրուհին անդրադարձել էր Լեհաստանի անկախության վերականգնմանը և վերջինիս տարածքների ընդարձակմանն ի հաշիվ Ավստրիայի և Պրուսիայի:

Երուսաղեմում ռուսական առաքելության ղեկավարը՝ Անտոնինը, Կոստանդնուպոլսում ռուս դեսպան Իզնատկին գրած նամակներում անդրադարձել է նաև 1862թ. արձանագրությունների իրագործմանը: 1866թ. փետրվարին նա գրում էր դեսպանին. «Գմբեթի հարցը վերջապես մոտենում է իր հանգուցալուծմանը: Իմ ուրախությունն անսահման է: Վերջապես կվերանա մեծագույն անփութությունը. Սուրբ Հարության տաճարի գմբեթների միջև գտնվող կացարանը կվերանա»⁹: Նույն տարվա մայիսին նա գրում էր արդեն Սուրբ Գերեզմանի հարցի հետ կապված. «Ֆրանսիական կողմը երևի թե տարվեց այդ մտքով՝ ելնելով իր փառասիրությունից, իսկ մենք, որ թույլ չտանք նոր հորինվածքներ: Մեզ համար շահեկան է այս հարցում բանակցել անմիջապես Ֆրանսիայի կայսրի հետ: Ձերդ գերազանցության համար դա նույնպես ավելի ցանկալի կլինի, քան թե բանակցել դեսպան Մուսոյեյի հետ: Երուսաղեմում բոլորը թերահավատ են գմբեթի վերանորոգման հարցում,

⁷ David D. Price, *Napoleon III and the Second Empire*, Boston 2002, p. 69.

⁸ **Итумен Марк (Головков)**. Русская Духовная Миссия в Иерусалиме, Богословские труды, Москва 1999, с. 25.

⁹ **Антонин (Капустин) – Игнатьеву**. 14 января 1866г. ГАРФ, Ф. 730, 41 об.

քանի որ չեն հավատում, որ հնարավոր է համաձայնության գալ ֆրանսիացիների հետ»¹⁰:

1866թ. վերջին Իզնատուրը հասավ ցանկալի համաձայնության Ֆրանսիայի և Թուրքիայի հետ: Նշանակվեցին ճարտարապետներ երկու կողմից. Էպինգերը՝ ռուսական կառավարության կողմից, իսկ Մոսը՝ ֆրանսիական¹¹: Գործը շարժվեց մեռյալ կետից: Հին գմբեթը ապամոնտաժվեց: Նոր գմբեթի պատրաստման և տեղադրման աշխատանքները շարունակվեցին ավելի քան երկու տարի: Պետք է նշել, որ իրերի նման ընթացքը խիստ անցանկալի էր Երուսաղեմի լատին պատրիարք Վալերկայի համար:

1865թ. մայիսին ծագեց հերթական վեճը սուրբ վայրերի շուրջ: Այս անգամ վեճի առարկան Բեթղեհեմի Սուրբ Աստվածածնի քարանձավն էր: Կաթոլիկները, չկարողանալով համաձայնության գալ այլ համայնքների հետ սրբավայրի տնօրինման հարցում, բռնագրավեցին այն, շրջապատեցին ցանկապատով և տեղադրեցին երկաթե դուռ: Ռուսաստանի դեսպանը կարողացավ սուլթանական կառավարությունից հասնել հրամանի, ըստ որի ապամոնտաժվեց ցանկապատը, իսկ ուղղափառները նորից մուտք ունեցան դեպի սրբատեղի¹²:

1869թ. Ֆրանսիայի կայսրուհին կրկին անհանգստություն է պատճառում Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանությանը և Երուսաղեմում ռուսական առաքելությանը: Աշնանը կայսրուհին ձեռնարկում է միջերկրածովյան մեծ ճանապարհորդություն: Հոկտեմբերի սկզբին Վենետիկ և Աթենք այցելելուց հետո նա ժամանում է Կոստանդնուպոլիս, որտեղ հանդիպում է կաթոլիկ հոգևորականների հետ: Այնուհետև Եվգենյան այցելում է Եգիպտոս: Նոյեմբերի կեսերին մասնակցում է Սուեզի ջրանցքի բացման արարողությանը: Սակայն կայսրուհին դատարկ ձեռքով չէր եկել Արևելք: Դեսպան Իզնատուրի տվյալներով նա մինչև ճամփորդությունը հանդիպել էր Փարիզում պապական դեսպանի հետ և նրա հետ կազմել 82 կետից կազմված պահանջագիր՝ կապված սուրբ տեղերի հետ¹³: Դա լրջորեն անհանգստացնում էր ռուսական դիվանագիտու-

¹⁰ Хевролина В.М. Николай Павлович Игнатъев, российский дипломат, Москва, 2009, с. 194.

¹¹ Политика Франции в Святой Земле в период правления Наполеона III (1848–1870), Олег Анисимов, /Иерусалимский православный семинар. Выпуск 4, с. 140.

¹² Хевролина В.М. Николай Павлович Игнатъев, российский дипломат, Москва, 2009, с. 215.

¹³ Хевролина В.М. Николай Павлович Игнатъев, российский дипломат, с. 226.

թյանը: Ժամանակին տեղեկանալով ֆրանսիական նպատակների մասին՝ Իգնատը կարողացավ չեզոքացնել դրանք:

Երուսաղեմում ֆրանս-ռուսական հակամարտության մեկ այլ գործոն էր կաթոլիկական և ուղղափառ քարոզչությունը, որոնք համապատասխանաբար հովանավորվում էին Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից: Վալերկա պատրիարքի շնորհիվ կաթոլիկ քարոզչությունը զգալի հաջողություններ գրանցեց սուրբ քաղաքում: Վալերկան կարողացավ դառնալ ֆրանսիական դիվանագիտության հավատարիմ դաշնակիցը և ֆրանսիական ազդեցության ջատագովը: Վերջինս հիանալի գիտեր Մերձավոր Արևելքը, որդեգրել էր Պաղեստինի լատինացման ռազմավարություն: Իր գործունեության սկզբնական շրջանում նրա քայլերը հակասում էին տեղի ֆրանցիսկյանների շահերին, իսկ վերջիններս պահանջում էին Հռոմի պապից հեռացնել նրան Երուսաղեմից: Վալերկան դիմեց ֆրանսիական ազդեցության օգնությանը, ինչը թույլ տվեց առաջին հերթին առավելության հասնել տեղայնական պայքարում, իսկ երկրորդ հերթին՝ վերականգնել Ֆրանսիայի դիրքերը ֆրանցիսկյանների շրջանում¹⁴: Բացի այդ Վալերկան վայելում էր Հռոմի Պիոս Իններորդ պապի աջակցությունը: Նրա պատրիարքության արդյունքն ավելի քան հաջող էր. Երուսաղեմը շրջապատված էր լատինական համայնքներով, իսկ նրանց քանակը աճեց 6 անգամ՝ հասնելով 12000-ի: Կաթոլիկական հիմնարկների թիվը աճեց 15 անգամ՝ հասնելով 150-ի¹⁵:

Երուսաղեմի ռուսական առաքելության ներկայացուցիչներն իրենց գլխավոր հակառակորդ էին համարում հենց Վալերկային և ֆրանսիական հյուպատոսներին: Վերջիններիս թվում աչքի էին ընկել Էրիկ դե Բարիերը, ով պաշտոնապես Ֆրանսիայի հյուպատոսն էր Երուսաղեմում մինչև 1870թ., և Յուրի Սենկևիչը, ով պաշտոնավարել էր մինչև 1872թ.: Ֆրանսիական հյուպատոսներն ամեն հարցով աջակցում էին Երուսաղեմի լատին պատրիարքությանը, ինչը հսկայական խոչընդոտներ էր առաջացնում ուղղափառ հոգևորականության համար:

1870թ. սեպտեմբերի 4-ին ֆրանսիական երկրորդ կայսրությունը կործանվեց. պրուսացիների կողմից գերեվարված Նապոլեոն III-ը գահընկեց արվեց: Ֆրանսիական բանակը հեռացավ Հռոմից, և պապական աթոռը զրկվեց աշխարհիկ իշխանությունից: Այդ իրադարձությունները զգալի, բայց ոչ կոր-

¹⁴ Мансуров Б.П. Православные паломники в Палестине, Санкт-Петербург, 2009, с. 65.

¹⁵ Хитрово В.Н. Православие в Святой Земле, Санкт-Петербург, 2011, с. 32.

Ճանարար վնաս հասցրին Պաղեստինում կաթոլիկների դիրքերին: Այդ ժամանակ սրբավայրերի հետ կապված վեճերը ժամանակավորապես կորցրել էին իրենց սրությունը, քանի որ միջդավանաբանական վեճերի լուծման համար մեխանիզմներ էին մշակվել ռուսական և ֆրանսիական դեսպանությունների և հյուպատոսությունների միջև: Ղրիմի պատերազմի փորձն աննկատ չանցավ: Երկու տասնամյակում գերտերությունները կարողացան անցնել այնպիսի ճանապարհ, որ ի վիճակի չէին եղել անցնելու մի քանի հարյուրամյակի ընթացքում: Երուսաղեմի սրբավայրերի հանդեպ բացառիկ իրավունքների դարաշրջանը մնաց անցյալում: «Եվրոպական համերգի» շրջանակներում կոլեկտիվ մասնակցության քաղաքականությունը նաև մերձավորարևելյան հարցերում գերակայություն ստացավ: Նապոլեոն III-ը ձեռնարկեց այս պայքարը՝ ունենալով նպատակ Ֆրանսիայի համար վերականգնելու երբեմնի հեղինակությունը, ունակությունը՝ պահպանելու իր ավանդական շահերը: Դա նրան հաջողվեց: Ֆրանսիական միապետը կբավարարվեր Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Լավալետի արձանագրած հաջողություններով, եթե 1853-ի գարնան դեպքերն այս հարցը չվերածեին համաեվրոպական ճգնաժամի: Փարիզի խաղաղության կոնգրեսից հետո, որն արձանագրեց Նապոլեոնի դիվանագիտական հաղթանակը, Պաղեստինն այլևս նրան չէր հետաքրքրում: Նրա առջև կային եվրոպական և համաշխարհային մակարդակի հարցեր՝ Իտալիա, Գերմանիա, Լեհաստան, Բելգիա, Մեքսիկա: Պաղեստինը նրան հարկավոր էր իր իշխանության առաջին տարիներին՝ հոգևորականությանն իր կողմը գրավելու համար, այդ թվում՝ ինչպես նաև Օսմանյան կայսրության վրա իշխանության լծակներ ունենալու համար, ինչը կնպաստեր Ֆրանսիայի գերիշխանությանը տարածաշրջանում: Իսկ Սուրբ Հարության տաճարի գմբեթի հետ կապված խնդիրը լուծելուց հետո վերացավ ֆրանս-ռուսական վերջին լուրջ տարածայնությունը Պաղեստինում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Երուսաղեմի քրիստոնեական սրբավայրերը, սկսած վաղ միջնադարից, մինչև այսօր կովախնձոր են տարբեր եկեղեցիների միջև: Կաթոլիկ, ուղափառ, ինչպես նաև հայ առաքելական եկեղեցիները մշտապես պայքարում են սրբավայրերի նկատմամբ իրենց իրավունքների համար: Այդ թվում նաև այս պայքարի արդյունք էր Ղրիմի պատերազմը, որն ընթանում էր մի կողմից Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

Պատերազմից հետո լարվածությունը թուլացավ, սակայն Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև շարունակվում էին բանակցությունները:

Բանալի բաներ - Ղրիմի պատերազմ, Երուսաղեմ, Սուրբ վայրեր, Նիկոլայ, Լուի Նապոլեոն, Թուվնել, Գորչակով, Արևելյան հարց:

ВОПРОС СВЯТЫХ МЕСТ ВО ФРАНКО-РУССКИХ ОТНОШЕНИЯХ ПОСЛЕ КРЫМСКОЙ ВОЙНЫ И АРМЯНСКИЙ ПАТРИАРХАТ ИЕРУСАЛИМА

СЕРГЕЙ ОГАНЕСЯН

Христианские Святые места в Иерусалиме были предметом спора между различными церквями начиная с раннего средневековья и до наших дней. Католическая, Православная, а также Армянская Апостольская церковь всегда боролись за свои права в отношении этих Святых мест. Результатом в том числе и этого спора стала Крымская война, во время которой Турция, Англия и Франция объединились против России. После войны между Россией и Францией продолжались переговоры по вопросу Святых мест.

Ключевые слова – Крымская война, Иерусалим, Святые места, Николай, Луи Наполеон, Тувнел, Горчаков, Восточный вопрос.

THE ISSUE OF THE HOLY LANDS AFTER THE CRIMEAN WAR & THE ARMENIAN PATRIARCHATE IN JERUSALEM

SERGEY HOVHANNISYAN

The Holy lands in Jerusalem have been a matter of dispute between different Christian churches from the early Middle Ages up to now. The Catholic, Orthodox as well as the Armenian Apostolic churches have always struggled for their rights over the Holy lands. The Crimean War (1853 - 1856) was a consequence of this struggle. In this war Turkey, Great Britain and France were united against Russia. After the war the tension decreased but negotiations between Russia and France were still in process.

Key words – Crimean War, Jerusalem, Holy Land, Nikolai, Louis Napoleon, Tuvnel, Gorchakov, Eastern Question.

**1994 թ. ՀՈՐՂԱՆԱՆԱԽՍՐԱՅԵԼՅԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ՝ ՈՐՊԵՍ ՔԵՄՓՂԵՎԻԴՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՄՆ–ի հովանու ներքո 1978 թ. Եգիպտոսի և Իսրայելի միջև կնքված քեմփդեյկիդյան 1979 թ. եգիպտահիսրայելյան խաղաղության, ապա նաև 1983թ. լիբանանահիսրայելյան խաղաղության համաձայնագրերի (որը չեղյալ հայտարարվեց մեկ տարի անց՝ 1984 թ.) ստորագրման տրամաբանական շարունակությունը դարձավ 1994 թ. Հորդանանի և Իսրայելի միջև կնքված խաղաղության համաձայնագիրը:

1990-ական թթ. սկզբին տարածաշրջանային և միջազգային մի շարք կարևոր զարգացումներ, ինչպես օրինակ՝ Պարսից ծոցի երկրորդ ճգնաժամը, ԽՍՀՄ փլուզումը և հետևաբար տարածաշրջանում վերջինիս դիրքերի թուլացումը հանգեցրին ուժերի նոր վերադասավորման: 1991 թ. ԱՄՆ–ի և ԽՍՀՄ–ի մասնակցությամբ Մադրիդի խաղաղության համաժողովը¹ կարևոր դեր խաղաց հորդանանահիսրայելյան խաղաղության համաձայնագրի կնքման գործում:

Չնայած հորդանանահիսրայելյան գաղտնի շփումների երկարատև պատմությանը՝ երկու երկրների հասարակությունները տեղեկացված չէին դրանց մասին: Հորդանանում հասարակական շրջանակներում, ինչպես և արաբական այլ երկրներում, ամեն կերպ քննադատվում էին Իսրայելն ու նրա քաղաքական ուղեգիծը: Դա էր պատճառը, որ հորդանանյան իշխանություններին նախևառաջ անհրաժեշտ էր համապատասխան ներքին մթնոլորտի ձևավորում՝ Իսրայելի հետ խաղաղության համաձայնագրի կնքման համար²:

1992 թ. սկսած, երբ Հորդանանում թույլատրվեց քաղաքական կուսակցությունների գործունեությունը, երկրում ձևավորվեցին երկու ընդդիմադիր ճամբարներ: Առաջինը գլխավորեց Մուսուլման եղբայրներ կազմակերպության հորդանանյան ճյուղը, որը կազմավորեց Իսլամական գործողության ճակատ

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Նիկոլայ Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն, հ. 4, Երևան, 2007, էջ 314–315:

² **Nigel Ashton**. King Hussein of Jordan: Political Life, Yale University Press, New Haven and London, 2008. pp. 285-290.

/ԻԳՃ/ կուսակցությունը, որը դարձավ Հորդանանի քաղաքական դաշտի միակ խոշոր կուսակցությունը: Ինչ վերաբերում է երկրորդ ճամբարին, ապա դրանում միավորվեցին երկրի արհեստակցական միությունները, որոնք, ստանալով արմատական և ձախակողմյան բնույթ, վերածվեցին Հորդանանում հակահարայեյան տրամադրությունների առաջատարի³:

Հորդանանահարայեյան գաղտնի բանակցությունների մասին հասարակության անտեղյակության և երկրում օրինական գործող ընդդիմադիր ուժերի ձևավորման պարագայում, մինչ հորդանանահարայեյան շփումների հրապարակայնացումը, հորդանանյան իշխանություններին անհրաժեշտ էր որոշակի նախապատրաստական քայլեր իրականացնել: 1993 թ. օգոստոսի 17-ին Հուսեյն թագավորի հրամանագրով փոփոխություն կատարվեց ընտրությունների մասին օրենքում: Նախկին «բաց ցուցակ» համակարգը, որից մեծապես օգտվում էր ԻԳՃ-ը, փոխարինվեց «մեկ մարդ մեկ ձայն» համակարգով, որից օգտվելու էին իշխանությունների հենասյուն համարվող ցեղային առաջնորդները⁴: Արդյունքում խորհրդարանական ընտրություններում տեղերի մեծամասնությունը զբաղեցրին ցեղային առաջնորդները: 1994 թ.-ից հորդանանյան իշխանությունները՝ Հուսեյն թագավորի (1952-1999 թթ.) գլխավորությամբ, սկսեցին քարոզարշավ իրականացնել հօգուտ հորդանանահարայեյան խաղաղության համաձայնագրի ստորագրման: Նախ նշվում էր, որ նման համաձայնագրի կնքումը ռազմավարական նշանակություն ուներ Հորդանանի համար, որը Ծոցի 2-րդ ճգնաժամի ընթացքում Իրաքին սատարելու պատճառով հայտնվել էր մեկուսացման մեջ: Լայնորեն քարոզվում էր, որ Իսրայելի հետ խաղաղության համաձայնագրի կնքման արդյունքում Հորդանանին կվերադարձվեին բոլոր գրավված տարածքները, և երկիրը նոր ջրային պաշարներ կստանար Հորդանան գետից և Տիբերիասի (Տիբերիադ, Տիբերյան) լճից⁵: Փաստարկվում էր, որ Իսրայելի հետ խաղաղության համաձայնագրի կնքմանը կարող էին հետևել օտարերկրյա խոշոր ներդրումները երկրի տնտեսության

³ **Դավիթ Վիրաբյան**, Հորդանանահարայեյան հարաբերությունները (1948-1994 թթ.), ատենախոսություն, Երևան, 2002, էջ 130:

⁴ **Paul L. Scham** and **Russel E. Lucas**, “Normalization” and “Anti-Normalisation” in Jordan: The Public Debate, *Middle East Review of International Affairs /MERIA/ Journal*, Vol. 5, No.3, September 2001, pp. 66-67.

⁵ **Dilip Hiro**, *The Essential Middle East*, New York, 2003, p. 257.

տարբեր ոլորտներում և ԱՄՆ-ի կողմից հորդանանյան բազմաթիվ պարտքերի մարումը⁶, ինչը մեծապես կնպաստեր երկրի տնտեսական զարգացմանը:

Հորդանանի ընդդիմադիր ուժերը սուր քննադատության էին ենթարկում երկրի իշխանություններին և փաստարկում էին, որ նման համաձայնագրի ստորագրումը կարող էր արգելակել Իսրայելի դեմ համաարաբական գործողությունների համակարգումը: Նրանք պնդում էին, որ համաձայնագիրը խախտում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 194, 237, 242 և 338 բանաձևերը և կարող էր հանգեցնել արաբամուսուլմանական աշխարհում Հորդանանի մեկուսացմանը: Ընդդիմադիր ուժերը մեղադրում էին հորդանանյան իշխանություններին պաղեստինցի փախստականների հարցի առկախման մեջ՝ մինչև հետագայում բազմակողմ բանակցությունների իրագործումը⁷: Հակառակ վերոնշյալ մեղադրանքներին՝ հորդանանյան իշխանությունները շարունակեցին խաղաղության համաձայնագրի կնքմանն ուղղված նախապատրաստական աշխատանքները, որոնք մինչ այդ արդեն տեղի ունեցած հորդանանախորայեյան գաղտնի շփումների և բանակցությունների տրամաբանական շարունակությունն էին:

Փաստենք, որ դեռևս 1988 թ. Հորդանանն արդեն իսկ խզել էր իր բոլոր տեսակի հարաբերություններն Արևմտյան ափի հետ, այդպիսով՝ 1. հակադրվելով իսրայելյան այն հայտարարություններին, որ Պաղեստինը Հորդանան է, և 2. ձերբազատվել էր այդ տարածքների նկատմամբ պատասխանատվությունից: Նշենք նաև, որ 1991 թ.՝ Մադրիդի համաժողովից հետո, 1993 թ. սեպտեմբերի 13-ին ստորագրվեց պաղեստինախորայեյան սկզբունքների Օսլոյի հռչակագիրը⁸, որից հետո՝ սեպտեմբերի 14-ին, մշակվեց հորդանանախորայեյան համատեղ օրակարգ, և դրանով իսկ հորդանանյան պատվիրակությունը բաժանվեց պաղեստինյան պատվիրակությունից: Իսրայելի ԱԳ նախարար Շիմոն Պերեսը պաղեստինախորայեյան սկզբունքների հռչակագրի ստորագրման կապակցությամբ նշել էր, որ Իսրայելը ողջունում էր այն փաստը, որ համաձայնագրի հիմքի վրա «հորդանանա-պաղեստինախորայեյան եռյակը հետագայում կարող էր վերածվել քաղաքական եռյակի և տնտե-

⁶ Նույն տեղում:

⁷ Nigel Ashton. նշվ. աշխ., էջ 294:

⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Declaration of Principles on Interim Self-Government Arrangements, Ministry of Foreign Affairs, State of Israel, Jerusalem, September, 1993.

սական բարօրության եռանկյունու»⁹: 1993 թ. սեպտեմբերի 13-ին Վաշինգտոնում ստորագրվեց ժամանակավոր ինքնակառավարման համաձայնությունների շուրջ պաղեստինահարայելյան սկզբունքների արձանագրությունը:

1993 թ. հոկտեմբերի 1-ին Հորդանանի թագաժառանգ Հուսեյն թագավորի եղբայր Ալ-Հասանը Վաշինգտոնում հանդիպեց Իսրայելի ԱԳ նախարար Շիմոն Պերեսին, ինչը հորդանանահարայելյան պաշտոնական առաջին հանդիպումն էր: 1994 թ. հորդանանահարայելյան սահմանում՝ Վադի Արաբայում, սկսվեցին հորդանանահարայելյան երկկողմ բանակցությունները: 1994 թ. հուլիսի 20-ին կայացավ իսրայելյան բարձրաստիճան պատվիրակության առաջին այցը Հորդանան: Իսրայելի արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսը ժամանեց Հորդանան՝ մասնակցելու եռակողմ խաղաղ բանակցություններին: Դրանից 5 օր անց՝ հուլիսի 25-ին, Վաշինգտոնում տեղի ունեցավ պաշտոնական առաջին հանդիպումը Հորդանանի թագավոր Հուսեյնի և Իսրայելի վարչապետ Իցհակ Ռաբինի միջև: Արդյունքում կողմերը ստորագրեցին Վաշինգտոնի հռչակագիրը¹⁰: Սրանով վերջ դրվեց Հորդանանի և Իսրայելի միջև 46 տարի շարունակվող պատերազմական վիճակին¹¹: Իսկ հաջորդ օրը Հորդանանի և Իսրայելի ղեկավարները ելույթ ունեցան ԱՄՆ Կոնգրեսում¹²:

Վաշինգտոնյան համաձայնագրով Հորդանանի թագավորը, Իսրայելի վարչապետը և միևնույն ժամանակ պաշտպանության նախարար Իցհակ Ռաբինն իրենց աջակցությունը հայտնեցին 1993 թ. սեպտեմբերի 14-ին Վաշինգտոնում կնքված հորդանանահարայելյան համատեղ օրակարգի 5 հիմնարար սկզբունքներին՝ ուղղված արաբական երկրների և պաղեստինցիների ու Իսրայելի միջև խաղաղության հաստատմանը¹³: Երկկողմ հարաբերություններից բացի, այդ սկզբունքներն առնչվում էին նաև Երուսաղեմի մուսուլմանական սրբավայրերում Հորդանանի հատուկ դերակատարությանը, ինչի

⁹ Remarks by Foreign Minister Shimon Peres on the Occasion of the Signing of the Israeli – Palestinian Declaration of Principles, Washington, 13 September, 1993.

¹⁰ The Washington Declaration, Israel-Jordan, the United States, July 25th, 1994, State of Israel, Ministry of Foreign Affairs, Jerusalem.

¹¹ **Хамзин К.З.**, Пять лет мира: иордано-израильские отношения в 1994-1999 гг., տե՛ս Ближний Восток и современность, вып. 9, ИИИИБВ, М., 2000, сс. 255–256, <http://book.iimes.su/?p=970>

¹² Address by Prime Minister Yitzhak Rabin to a Joint Session of the United States Congress on the Occasion of the Rabin-Husseini Meeting, Jerusalem, July 1994.

¹³ **Նիկոլայ Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 316:

առնչությամբ երկու կողմերը պայմանավորվել էին համագործակցել երեք մոնոթեիստական կրոնների միջև վստահության հարաբերությունների հաստատման գործում:

Օգոստոսի 8-ին Իսրայելի վարչապետ Իցհակ Ռաբինը, Հորդանանի թագաժառանգ Ալ-Հասանը և ԱՄՆ պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերը մասնակցեցին Աքաբայից հյուսիս գտնվող առաջին հորդանանախորայելյան սահմանային անցման պաշտոնական բացման արարողությանը, որին հետևեցին եռակողմ բանակցությունները Հուսեյն թագավորի՝ Աքաբայի պալատում¹⁴: Սա Իսրայելի վարչապետի առաջին այցն էր Հորդանան:

1994 թ. հոկտեմբերի 26-ին Վադի Արաբայում Հուսեյն թագավորի, Իցհակ Ռաբինի, ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնի, Իսրայելի նախագահ Էզեր Վեյցմանի և այլ բազմաթիվ պաշտոնյաների մասնակցությամբ տեղի ունեցավ հորդանանախորայելյան խաղաղության համաձայնագրի ստորագրումը¹⁵: Դրան հետևեց 15 համաձայնագրերի կնքում, որոնցում հստակեցվում էին մի շարք դրույթներ. ավարտվում էր երկու երկրների միջև պատերազմական դրությունը, որոնվում էին լիակատար խաղաղությանը միտված ուղիներ՝ հիմնված ՄԱԿ-ի 242-րդ և 338-րդ բանաձևերի վրա, Իսրայելը ճանաչում էր Հաշիմյան Թագավորության հատուկ դերը Երուսաղեմի մուսուլմանական սրբատեղիների նկատմամբ և այլն¹⁶:

Խաղաղության համաձայնագիրը ստորագրվեց ՄԱԿ Ան 242-րդ և 338-րդ բանաձևերում ամփոփված «հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքի հիման վրա: Համաձայնագրով ապահովվեց Իսրայելի կողմից գրավված հորդանանյան տարածքների վերադարձը Հորդանանին: Համաձայնագրով ամրագրվեց նաև, որ Հորդանանը կստանար իր ջրաբաժինը Յարմուկ և Հորդանան գետերից: Մեծ կարևորություն տալով անվտանգությանը՝ յուրաքանչյուր կողմ պարտավորվեց լուծել տարաձայնությունները խաղաղ ճանապարհով¹⁷:

¹⁴ Nigel Ashton. նշվ. աշխ., էջ 301:

¹⁵ Հորդանանախորայելյան խաղաղության համաձայնագրի տեքստը տե՛ս <http://www.kinghussein.gov.jo/peacetreaty.html>

¹⁶ **Лукоянов А.К., Тронов А.М.** Израиль и Иордания: испытание временем, <http://www.iimes.ru/?p=4837>, 15 августа, 2006.

¹⁷ Հորդանանախորայելյան խաղաղության համաձայնագրի տեքստը տե՛ս <http://www.kinghussein.gov.jo/peacetreaty.html>

1994 թ. հորդանանախորհրդային խաղաղության համաձայնագրի կետերը և հավելվածները ներառում էին երկու երկրների միջև հարաբերությունների այնպիսի ոլորտներ, ինչպիսիք էին՝ առևտրական, գիտական, մշակութային, հեռահաղորդակցական՝ կապի և փոխադրումների, նավագնացության, զբոսաշրջության, բնապահպանության, էներգետիկայի և գյուղատնտեսության: Համաձայնագրով նաև նախատեսվում էր Հորդանանի դաշտավայրի և Աքաբա-էյլաթ շրջանի զարգացման համատեղ ծրագրի մշակում:

Համաձայնագրի կարևորագույն կետերից մեկը թերևս վերաբերում էր Իսրայելի կողմից Հորդանանի գրավված տարածքներին: 1968-70 թթ. ընկած ժամանակահատվածում Իսրայելը Մեռյալ ծովից դեպի հարավ գտնվող Վադի Արաբայում գրավել էր 344 կմ², իսկ Բակուրայի շրջանի հյուսիսում՝ 820 կմ² հորդանանյան տարածքներ: 1994 թ. համաձայնագրով այս տարածքները վերադարձվում էին Հորդանանին: Սակայն շուրջ երկու տասնամյակ տնօրինելով այդ տարածքները՝ իսրայելյան կողմն օգտագործել էր դրանք գյուղատնտեսական նպատակներով: Հորդանանը, որպես բարի կամքի դրսևորում, համաձայնեց, որպեսզի իսրայելցի ֆերմերներն օգտագործեն այս տարածքները ևս 25 տարի ժամանակով¹⁸: Համաձայնագրի այս կետը Հորդանանի ընդդիմադիր ուժերի կողմից ենթարկվեց խիստ քննադատության և գնահատվեց որպես Հորդանանի քաղաքական ազատությունների ոտնահարում¹⁹:

Համաձայնագրի հաջորդ կարևորագույն դրույթը վերաբերում էր անվտանգության հարցերին: Հորդանանը և Իսրայելը պարտավորվեցին անվտանգության հարցերին առնչվող իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ վստահության, համագործակցության և շահերի պաշտպանության հիման վրա՝ նպաստելով տարածաշրջանում խաղաղության հաստատմանը: Համաձայնագրում անվտանգությանն առնչվող կետերից թերևս կարևորագույնն Իսրայելի կողմից Հորդանանի Հաշիմյան Թագավորությունն անկախ և իրավական պետություն ճանաչելու փաստն էր²⁰: Փաստորեն հստակ սահմաններ դնելով Հորդանանի արևմտյան մասի համար՝ համաձայնագիրը

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ **Хамзин К.З.**, Плоды двух лет мира (к иордано-израильским отношениям), տե՛ս Сборник "Ближний Восток и современность", выпуск 3, ИИИИБВ, М., 1997, сс. 234-235, <http://book.iimes.su/?p=262>

²⁰ **Мустафа Навайсех**, Процесс мирного урегулирования иордано-израильского конфликта, տե՛ս Сборник: "Ближний Восток и современность", выпуск 5, М.ИИИИБВ, М., 1998, сс. 183-184, <http://book.iimes.su/?p=444>.

մեկընդմիջտ վերջ էր դնում սիոնիստական ծայրահեղական այն տեսակետին, որ Հորդանանը Պաղեստին է և այլընտրանքային հայրենիք պաղեստինցի արաբների համար:

Համաձայնագրի հավելված 2-րդը նախատեսում էր նաև Հորդանանի ջրային պաշարների ավելացում տարեկան 215 մլն մ³-ով: Համեմատության համար նշենք, որ մինչև 1994 թ. խաղաղության համաձայնագրի կնքումը այս քանակը կազմում էր Հորդանանի ջրային պաշարների մոտ 30%-ը: 1995 թ. նոյեմբերի 10-ից նախատեսվեց Հորդանան և Յարմուկ գետերից տարեկան ևս 50 մլն մ³ ջրի սպառում Հորդանանի կողմից: Համաձայնագրով նախատեսվում էր, որ երկու կողմերն իրավունք էին ստանում օգտագործելու ջրային պաշարները հավասարության սկզբունքով: Սակայն հողված 6-ում նշված էր, որ երկու կողմերն էլ գիտակցում էին, որ իրենց ջրային պաշարները չէին բավարարում իրենց կարիքները, և այդ պատճառով կողմերը հավելյալ ջրային աղբյուրներ էին հայթայթելու այլ մեթոդներով՝ աղազուման համատեղ կայաններ, Կարմիր ծով - Մեռյալ ծով ջրանցք, այլ տարածաշրջանային և միջազգային ծրագրեր²¹:

Համաձայնագրի հավելված 4-ը նախատեսում էր, որ Հորդանանը և Իսրայելը սերտորեն պետք է համագործակցեին բնապահպանության ոլորտում: Մասնավորապես շեշտվել էին Աքաբա-Էյլաթ շրջանի ծովեզրի, Ռիֆտ դաշտավայրի, որը ներառում է Հորդանան գետը, Մեռյալ ծովի և Վադի Արաբա շրջանի պահպանության կարևորությունը²²:

1994 թ. խաղաղության համաձայնագրով Հորդանանը և Իսրայելը պարտավորվեցին վերացնել երկու կողմերի միջև բնականոն տնտեսական հարաբերությունների զարգացումը խոչընդոտող բոլոր սահմանափակումները: Համաձայնագրով նախատեսվեց ազատ առևտրի, ներդրումների, բանկային համակարգին, արդյունաբերական համագործակցությանը և աշխատավորական ուժերին առնչվող երկկողմ համաձայնագրերի ստորագրում: 1996 թ. հուլիսին Հորդանանի և Իսրայելի միջև կնքվեց առևտրատնտեսական համաձայնագիր, որը մեծապես խթանեց երկու երկրների միջև ապրանքափոխանակումը:

²¹ Հորդանանահիսրայելյան խաղաղության համաձայնագրի տեքստը տե՛ս <http://www.kinghussein.gov.jo/peacetreaty.html>

²² **Դավիթ Վիրաբյան**, Հորդանանահիսրայելյան հարաբերությունները (1948-1994 թթ.), էջ 135:

Ինչ վերաբերում է պաղեստինցի փախստականներին, ապա համաձայնագրով սահմանվեց, որ երկու կողմերը փախստականների խնդիրը պետք է լուծեին միջազգային ատյաններում՝ միջազգային իրավունքի համաձայն: Իսկ տեղահանված անձանց առնչությամբ Հորդանանը և Իսրայելը պարտավորվեցին անդրադառնալ այդ հարցին Եգիպտոսի և պաղեստինցիների հետ քառակողմ հանձնաժողովում²³, որը մեծ դժգոհություն առաջացրեց Հորդանանի ընդդիմադիր շրջանակներում: Այս քայլը որակվեց որպես պաղեստինցի փախստականներին հայրենիք վերադառնալու հնարավորությունից զրկելու փորձ:

Ինչ վերաբերում է Երուսաղեմի խնդրին, ապա հորդանանախորայելյան խաղաղության համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում էր, որ «Իսրայելը ճանաչում է Հորդանանի Հաշիմյան Թագավորության ներկայիս հատուկ դերը Երուսաղեմի մուսուլմանական սրբավայրերի նկատմամբ, և երբ տեղի կունենան դրա մշտական կարգավիճակի շուրջ բանակցությունները, Իսրայելը մեծ ուշադրություն կդարձնի այդ սրբավայրում Հորդանանի պատմական դերին»²⁴: Համաձայնագրի այս դրույթը խստորեն քննադատեց ՊԱԿ-ի ղեկավար Յասեր Արաֆաթը, ով գտնում էր, որ այն Իսրայելին մանևրելու մեծ հնարավորություններ էր ընձեռում²⁵: Այս հանգամանքը ստիպեց հորդանանյան իշխանություններին հանդես գալ պարզաբանող մի շարք հայտարարություններով: Հուսեյն թագավորն ու թագածառանգ Ալ-Հասանն այս կապակցությամբ նշեցին, որ հորդանանյան իշխանությունները հետագայում փոխանցելու էին Երուսաղեմի սրբավայրերի պահպանությունը պաղեստինյան կողմին, սակայն միայն այն ժամանակ, երբ տեղի կունենար պաղեստինախորայելյան համաձայնագրի ստորագրումը՝ գրավյալ արևելյան արաբական Երուսաղեմի և Հին քաղաքի վերաբերյալ, իսկ մինչ այդ Հորդանանի կողմից իրականացվող սրբավայրերի պահպանությունը սրբազան պարտականություն էր, որը ժամանակավորապես վստահված էր Հաշիմյան ընտանիքին²⁶:

Փաստենք, որ մինչև 1994 թ. Հորդանանը և Իսրայելը չունեին սահմանային անցակետ: Անցակետ էին համարվում Հորդանանը գրավյալ Արևմտյան ափի հետ կապող Հուսեյն թագավորի և Մուհամմադ արքայազնի կամուրջ-

²³ Paul L. Scham and Russel E. Lucas, նշվ. աշխ., էջ 68:

²⁴ Dilip Hiro, նշվ. աշխ., էջ 257:

²⁵ Paul L. Scham and Russel E. Lucas, նշվ. աշխ., էջ 69:

²⁶ Նույն տեղում:

ները: Ինչպես արդեն նշել ենք, 1994 թ. հուլիսի 25-ին, մինչև խաղաղության համաձայնագրի ստորագրումը, տեղի ունեցավ առաջին սահմանային անցման պաշտոնական բացման արարողությունը, իսկ խաղաղության համաձայնագրի կնքումից հետո բացվեց նաև երկրորդ սահմանային անցումը՝ Շեյխ Հուսեյնի կամուրջը, որը անցնում էր Հորդանան գետի վրայով: Այն Իրբիդ քաղաքը կապում էր Վադի Ալ-Ուրդուն շրջանի հետ:

Փաստորեն 1994 թ. հորդանանախորայեյան խաղաղության համաձայնագրի ստորագրումը հորդանանյան կողմի համար դարձավ 1988 թ. Արևմտյան ափի հետ բոլոր տեսակի հարաբերությունների խզման տրամաբանական շարունակությունը: Իսրայելի հետ խաղաղության համաձայնագրի ստորագրումը Հորդանանին հնարավորություն տվեց վերջնականապես ձերբազատվելու «պաղեստինցիների այլընտրանքային հայրենիք» լինելու պիտակից: Բացի այդ, ակնհայտ էր համաձայնագրի կնքմանը հետևած ֆինանսական աջակցությունը, երբ ԱՄՆ-ը չեղյալ համարեց 6 մլրդ դոլարի հասնող հորդանանյան պարտքերը: Իրենց լուծումը գտան երկու երկրների միջև առկա ջրային հարցերը, Հորդանանը ելք ստացավ դեպի Իսրայելի միջերկրածովյան նավահանգիստները, իսկ Նեգևի անապատով նաև ճանապարհ ունեցավ դեպի Եգիպտոս:

Հետաքրքրական է հորդանանախորայեյան համաձայնագրի ստորագրման վերաբերյալ պրոֆեսոր Ե. Պիրլինի տեսակետը: «Հուսեյն թագավորի գաղտնի հանդիպումներն իսրայելյան գործիչների հետ չպետք է գնահատել սոսկ որպես Իսրայելի հետ ամեն գնով համաձայնության հասնելու մշտական ձգտում: Պարզապես թագավորը փորձել է շփման եզրեր գտնել տարածաշրջանում համընդհանուր խաղաղության և անվտանգության ապահովման բանաձևը մշակելու հարցում», – գրում է Ե. Պիրլինը²⁷:

Փաստենք, որ 1994 թ. հորդանանախորայեյան խաղաղության համաձայնագրի ստորագրմամբ և արաբախորայեյան հակամարտությունից դուրս գալով՝ Հուսեյն թագավորը ոչ միայն քաղաքական և տնտեսական զգալի ձեռքբերումներ ապահովեց Հորդանանի համար, այլև պատմական և քաղաքական մեծ նշանակություն ունեցող քայլ կատարեց, ինչը միտված էր տարածաշրջանում համընդհանուր խաղաղության և անվտանգության հաստատմանը, ինչպես նաև Մերձավոր Արևելքում միջպետական հարաբերությունների նոր որակի զարգացմանը:

²⁷ Пырлин Е. Ближневосточный лабиринт, М., 1996, стр. 28-29.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Նիկոլայ Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն, հ. 4, Երևան, 2007:
2. Nigel Ashton, King Hussein of Jordan: Political Life, Yale University Press, New Haven and London, 2008.
3. **Դավիթ Վիրաբյան**, Հորդանանախորայեյան հարաբերությունները (1948-1994 թթ.), ատենախոսություն, Երևան, 2002, էջ 130:
4. **Paul L. Scham and Russel E. Lucas**, “Normalization” and “Anti-Normalisation” in Jordan: The Public Debate, Middle East Review of International Affairs /MERIA/ Journal, Vol. 5, No.3, September 2001.
5. **Dilip Hiro**, The Essential Middle East, New York, 2003.
6. Declaration of Principles on Interim Self-Government Arrangements, Ministry of Foreign Affairs, State of Israel, Jerusalem, September, 1993.
7. Remarks by Foreign Minister Shimon Peres on the Occasion of the Signing of the Israeli – Palestinian Declaration of Principles, Washington, 13 September, 1993.
8. The Washington Declaration, Israel-Jordan, the United States, July 25th, 1994, State of Israel, Ministry of Foreign Affairs, Jerusalem.
9. **К.З. Хамзин**, Пять лет мира: иордано-израильские отношения в 1994-1999 гг., տե՛ս Ближний Восток и современность, вып. 9, ИИИиБВ, М., 2000, сс. 255–256, <http://book.iimes.su/?p=970>
10. Address by Prime Minister Yitzhak Rabin to a Joint Session of the United States Congress on the Occasion of the Rabin-Husseini Meeting, Jerusalem, July 1994.
11. <http://www.kinghussein.gov.jo/peacetreaty.html>
12. **А.К. Лукоянов, А.М. Тронов**, Израиль и Иордания: испытание временем, <http://www.iimes.ru/?p=4837>, 15 августа, 2006.
13. **К.З. Хамзин**, Плоды двух лет мира (к иордано-израильским отношениям), տե՛ս Сборник "Ближний Восток и современность", выпуск 3, ИИИиБВ, М., 1997, сс. 234–235, <http://book.iimes.su/?p=262>
14. **Мустафа Навайсех**, Процесс мирного урегулирования иордано-израильского конфликта, տե՛ս Сборник: “Ближний Восток и современность”, выпуск 5, М.ИИИиБВ, М., 1998, сс. 183–184, <http://book.iimes.su/?p=444>
15. **Е. Пырлин**, Ближневосточный лабиринт, М., 1996, стр. 28-29.

ԱՄՓՈՓՈՒՄ

1990-ական թթ. սկզբին տարածաշրջանային և միջազգային մի շարք կարևոր զարգացումներ, ինչպես օրինակ՝ Պարսից ծոցի երկրորդ ճգնաժամը, ԽՍՀՄ փլուզումը և հետևաբար տարածաշրջանում վերջինիս դիրքերի թուլացումը հանգեցրին ուժերի նոր վերադասավորման: 1991 թ. ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի մասնակցությամբ Մադրիդի խաղաղության համաժողովը կարևոր դեր խաղաց հորդանանախորայեյան խաղաղության համաձայնագրի կնքման գործում:

1994 թ. հոկտեմբերի 26-ին Հորդանանի և Իսրայելի միջև խաղաղության համաձայնագրի ստորագրմամբ և Հորդանանի՝ արաբախորայելյան հակամարտությունից դուրսբերմամբ Հուսեյն թագավորը ոչ միայն քաղաքական և տնտեսական զգալի ձեռքբերումներ ապահովեց Հորդանանի համար, այլև պատմական և քաղաքական մեծ նշանակություն ունեցող քալ կատարեց, ինչը միտված էր տարածաշրջանում համընդհանուր խաղաղության և անվտանգության հաստատմանը, ինչպես նաև Մերձավոր Արևելքում միջպետական հարաբերությունների նոր որակի զարգացմանը:

Քանալի բաներ - Հորդանան, Իսրայել, Պաղեստին, պաղեստինախորայելական, հակամարտություն, փախստականներ, բանակցություն, համաձայնագիր, խաղաղություն:

ИОРДАНО-ИЗРАИЛЬСКИЙ МИРНЫЙ ДОГОВОР 1994 ГОДА КАК ПРОДОЛЖЕНИЕ КЭМП-ДЭВИДСКОГО ПРОЦЕССА

САРКИС КАЗАРЯН

Ряд важных региональных и международных событий в начале 1990-х годов, в частности, второй кризис Персидского залива, распад СССР и, следовательно, ослабление его позиций в регионе привел к новой перестановке сил. Мадридская мирная конференция с участием США и СССР (1991г.) сыграла важную роль в вопросе подписания израильско-иорданского мирного договора. Подписанием мирного договора между Иорданией и Израилем 26 октября 1994г. и выводом Иордании из арабо-израильского конфликта король Хусейн не только обеспечил значительные политические и экономические достижения для Иордании, но и сделал важный исторический и политический шаг, направленный на утверждение всеобщего мира и безопасности в регионе, а также развитие нового качественно новых межгосударственных отношений на Ближнем Востоке.

Ключевые слова - Иордания, Израиль, Палестина, палестино-израильский, конфликт, беженцы, переговоры, договор, мир.

JORDAN-ISRAELI PEACE TREATY — THE CONTINUATION OF CAMP DAVID'S PEACE PROCESS

SARGIS GHAZARYAN

At the beginning of the 1990s certain regional and international developments such as Gulf Crisis II, the collapse of USSR, which led to the weakening of Russia's stance in the region redefined the balance of power. The US and the RF co-sponsored the Madrid Peace Conference in October, 1991 played an important role in the accomplishment of the Jordan-Israel Peace Treaty.

Israel and Jordan signed a peace treaty on 26 October 1994.

King Hussein by signing this peace treaty and withdrawing from the Arab-Israel conflict not only promoted economic growth to Jordan but also brought about political recognition. This was a great historic event aiming at enhancing security, stability and peace in the region, as well as advocating new kind of relationships among the Middle East countries.

Key words - Jordan, Israel, Palestine, Palestinian-Israeli, conflict, refugees, negotiation, treaty, peace.

ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵՒՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հայ-արաբական պատմամշակութային առնչությունների պատմության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում հայկական համայնքներին տրված և Մուհամմադ մարգարեին վերագրված պայմանագրերը, որոնք հայկական պատմագրության մեջ հայտնի են Ալի Մանշուր (հրաման, հրովարտակ) անունով: Դրանք վեհապետական հրովարտականեր կամ արտոնագրեր են, որոնք, ըստ ավանդության, նրանց տրվել են Մուհամմադի կամ նրա հաջորդների կողմից քրիստոնյա համայնքներին եկեղեցական-ազգային առանձնաշնորհումներ հաստատելու և պահպանելու համար¹: 12-րդ դարի պատմագիր Սամվել Անեցին վկայում է, որ Մահմեդը (Մուհամմադը). «...գլուխ վաճառականացն եգիպտացի, հաստատեալ էր աղանդովն Արիոսի ու Կերինթոսի... արգել զսուրն ու բանիւ խրատու նորա հնազանդեցուցին ինքնեաց զմեծ մասն տիեզերաց: Եվ անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս՝ համարձակ ունել զքրիստոնեութիւնն և վաճառեաց նոցա զհաւատս նոցա, յամենայն տանէ առեալ դ դրամ և երիս մոդ խորբալ և ծիատաւարակ մի և պարան մի մագէ և ձեռնարար (ձեռնոց) մի: Իսկ ի քահանայից և յազատաց և ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկն»²: Այս պայմանագրի պայմանների մասին հիշատակում են նաև 13-րդ դարի պատմագիրներ Կիրակոս Գանձակեցին և Մխիթար Անեցին: Հ. Մանանդյանը, ուսումնասիրության ենթարկելով այս դաշնագիրը, նշում է, որ դրամը 7-րդ դարում Մերձավոր Արևելքում օգտագործվող արծաթե դրամն էր, որն ըստ իր արժեքի հավասար է մոտ 50 կոպեկի, իսկ վերոհիշյալ 4 դրամը հավասար էր մոտ 2 ոսկի ռուբլու: 3 մոդ խորբալը մաղած ցորենն էր, որը կշռում էր 29 կգ 376 գրամ կամ մոտ 2 փոպ: Այնուհետև պարզ է դառնում, որ այս պայմանագրում «ազատներից» հետո հիշատակված հեծելազորը հավանորեն ռամիկներից կազմված «այրուծին» էր, որ գոյություն ուներ

¹ Կյուլեսերյան Բ., Իսլամը հայ մատենագրության մեջ, Վիեննա, 1930, էջ 122: Kjuleseryan, B., Islamy haj mateanagrutjan mej, ej 122.

² Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 80: Samueli qahanaji Anecvoj Havaqmunq i groc patmagrac, Vagharshapat 1983, ej 80.

արդեն մարգպանության շրջանում: Այդ հեծելագորը, որն ազատ էր հարկերից, ինչպես նաև ազատներն ու քահանաները օմայաններից ստանում էին հատուկ ռոճիկ՝ տարեկան 100 հազար դահեկան³: Վերոհիշյալ արտոնագիրը «Ալի Մանշուր» անվանելու մասին առաջին գրավոր հիշատակությունը հանդիպում է 14-15-րդ դարերի մատենագիր Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցի «ընդդեմ տաճկաց» գլխի «6-րդ մոլորութիւն այլազգեաց» հատվածում: Հեղինակն իր գրքի վերոհիշյալ հատվածում սկզբում քննադատաբար է անդրադառնում Մուհամմադի մարգարեական առաքելությանը, այնուհետև նշում, որ «ի մեծ թվականին Հայոց ՂԷ (648թ.) եւ (իշխանութեան Հայոց Թեոդորոս Ռշտունու) եւ ի կաթողիկոսութեան Եզրի ի Ժ. ամին (561) ոմն Մահմէտ անուն, յազգ է Իսմայելի, որդի Աբդլայ.... արգել գտուրն և բանիւ խրատու հնազանդեցոյց ինքնեան զմեծ մասն տիեզերաց և անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ աշխարհիս Հայոց, որ այժմ կոչի Մեծ Մանշուր»⁴: Այնուհետև շարադրում է պայմանագրի պայմանները՝ տրված Հայոց երկրին:

Իր հերթին Խ. Սամվելյանը, անդրադառնալով պայմանագրում հիշատակված «ազատներ» եզրի լուսաբանմանը, նշում է, որ դրանք մանր-հողատեր ազնվականներ էին, և իսկ ինչ վերաբերում է «ազատ» եզրին, ապա այն պարսկա-պարթևական ծագում ունի, և որ նրա իմաստն ավելի պարզ կլինի, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի նախարարական դասը շատ գծերով նման էր Սասանյան Պարսկաստանի ֆեոդալական կառուցվածքին: Ազատների հիմնական ծառայությունը զինվորական բնույթի էր, ավելի շուտ՝ հեծյալ⁵:

Ինչպես արդեն տեսնում ենք, Գ. Տաթևացու կողմից հիշատակված պայմանագրի այս օրինակում նշվում են կոնկրետ թվականներ. Թեոդորոս Ռշտունու իշխանության (648թ.) և Եզրի կաթողիկոսության (561թ.) շրջանում Մուհամմադ մարգարեն, իրեն ենթարկելով «տիեզերքի մեծ մասը», պայմանագիր (մուրհակ) է կնքել Հայոց աշխարհի հետ, որով երկրի հոգևորականությունը և իշխանական դասն ազատվում էին հարկերից, իսկ մնացած բնակիչները պարտավորվում էին վճարել դրանք: Ակնհայտ է այն փաստը, որ

³ **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, Երևան, 1960, էջ 212: Manandyan H., Qnnakan tesutjun haj dzoghovrdi patmutjan, h. 2, ej 212, E., 1960.

⁴ **Կյուլեսերյան Բ.**, նշվ. աշխ.:

⁵ **Սամվելյան Խ.**, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 219: Samvelyan Ch., Hin haj iravunqi patmutjun, h. 1, E. 1939, ej 219.

632թ. Մուհամմադ մարգարեն արդեն կնքել էր իր մահկանացուն և հետևաբար չէր կարող պայմանագիր կնքել հայերի հետ:

Հ. Փափազյանը, իր աշխատության մեջ անդրադառնալով Ս. Անեցու կողմից հիշատակված պայմանագրի կնքման ժամանակին, այն անվանում է «անհայտ ժամանակին վերաբերող»⁶, իսկ Ա. Տեր-Ղևոնդյանն ավելի հանգամանորեն է մոտենում այս հարցին՝ լույս սփռելով պայմանագրի ստեղծման պատմության վրա և նշելով, որ Ս. Անեցին այդ կարևոր փաստաթղթում շփոթել է Օմայյան Մուհամմադ իբն Մրվան փոխարքայի անունը իսլամի հիմնադրի անվան հետ: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի, մենք կասեինք շատ կարևոր հայտնության, հետագայում հայկական պատմագրության մեջ ամրագրվել է ավանդությունն այն մասին, թե իբր հենց Մուհամմադ մարգարեն է պայմանագիր կնքել հայերի հետ նրանց իրավունքները ճանաչելու և քրիստոնեական կրոնը ազատորեն դավանելու մասին⁷:

Օմայյանների շրջանում մեկ երդի կամ ծխի տակ միավորվում էին մի քանի ընտանիք, որոնք, որպես կանոն, բազմամարդ էին: Հիշատակված ծիսատուրակը (կրկնապարկ), մազե պարանը և ձեռնոցը մուսուլմանները հավանաբար արաբական զորքի կարիքների համար էին վերցնում⁸:

Հ. Մանանդյանը նշում է, որ իրենց տիրապետության առաջին շրջանում Օմայյանները եղել են ընդհանուր առմամբ «մատչելի և ժողովրդին մոտ»⁹: Այս շրջանում նվաճողների այդ զգույշ և մեղմ քաղաքականությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ Օմայյանները հաշվի էին առնում Հայաստանի խոշոր ռազմական նշանակությունը՝ պահելով նրա ներքին ինքնուրույնությունն ու նախկին նախարարական կարգերը:

⁶ Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. 1. Հրովարտականք, պրակ Ա (ԺԵ-ԺԶ դդ.), վավերագիր 21, Երևան, 1956, էջ 99: Phaphazyan H., Matenadaranı parskeren vaveragrery. 1. Hrovartakner, prak A. (DZ E –DZ Z d.d.), vaveragir 21, E. 1956, ej 99.

⁷ Տեր-Ղևոնդյան Ա., Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 294: Ter-Ghevondyan A., Hodvacneri dzoghovacu, E., 2003, ej 294.

⁸ Նալբանդյան Հ., Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, ԳԱ, «Տեղեկագիր», N 12, Երևան, 1956, էջ 76: Nalbandyan H., Arabneri harkajin qaghaqakanutjuny Hajastanum, GA, Teghekagir, N 12, E., 1956, ej 76.

⁹ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, Երևան, 1960, էջ 56: Manandyan H., Qnnakan tesutjun haj dzoghovrdi patmutjan, h. 2, ej 56, E., 1960.

Ինչպես տեսնում ենք, Ս. Անեցին և վերոհիշյալ հայ միջնադարյան մատենագիրները, շարադրելով պայմանագրի տեքստը, հիմնականում չեն լուսաբանում, թե ինչ հանգամանքներում և պարագայում է այն տրվել Հայոց աշխարհին:

Ինչպես նշվեց, Ս. Անեցին իր «Ժամանակագրության» մեջ գրում է, որ արաբները «կոտորեցին զԲզնունիս զԱղոյովիտ և զՏարոն»՝ ակներևաբար նկատի ունենալով 640թ. արաբական առաջին արշավանքները դեպի Հայաստան, հետո հիշատակում է Մուհամմադի՝ Հայոց աշխարհին տրված պայմանագրի պայմանների մասին: Մահմեդին է հնազանդվում տիեզերքի մեծ մասը, «իր կամքով», պարզ է, սակայն, որ այստեղ խոսքը վերաբերում է արաբական արշավանքներին, որոնց արդյունքում բազմաթիվ երկրներ, այդ թվում Բյուզանդական կայսրությունն ու Սասանյան Պարսկաստանն իրենց հպատակությունն էին հայտնել արաբներին: 652թ. հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիայի միջև կնքված հայ-արաբական պայմանագրով Հայաստանը 3 տարով ազատվում էր հարկեր վճարելուց՝ պահպանելով իր ներքին ինքնավարությունը, որպես կիսանկախ պետություն, պահպանվում էին նաև նախարարների հողատիրական իրավունքները:

Համենայն դեպս, այս պայմանագիրը Հայաստանի վերջնական նվաճման փաստն արձանագրող պայմանագիրը չէր: Վերոհիշյալ պայմանագրի կնքումից հետո էլ Մուավիան շարունակեց իր նվաճումները Հայաստանում: 654թ. արաբները գրավեցին Հայաստանի գյուղերն ու քաղաքները՝ բնակչությանը տալով հաշտության պայմանագրեր: 653թ. Հայոց իշխան դարձավ Համազասպ Մամիկոնյանը, ում օրոք Հայաստանը խզեց իր կապերը Արաբական խալիֆայության հետ: 661թ. իշխանության գլուխ անցան Օմայանները, և Մուավիան հրովարտակ ուղարկեց հայերին հարկ վճարելու համար: 660-ական թվականներին Արաբական խալիֆայությունը փոխադարձ պատերազմների մեջ էր Բյուզանդական կայսրության հետ, և այս շրջանում Հայաստանը վայելում էր լայն ինքնավարություն և խաղաղ կյանք: 680-ական թվականներին Հայաստանը խզեց իր կապերը Արաբական խալիֆայության հետ և դարձավ անկախ¹⁰: Ղևոնդը գրում է, որ Մուավիայի որդի Եգիդը Հայոց աշխարհից վերացրեց այն հարկը, որը Հայաստանը վճարում էր Մուավիայի օրոք¹¹: 689թ.

¹⁰ Տեր-Ղևոնդյան, Ա., Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996, էջ 100: Ter-Ghevondyan A., Hajastany 6-8-rd darerum, E. 1996, ej 100.

¹¹ Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, էջ 14: Ghevond, Patmutjun, E., 1982, ej 14.

Օմայան Աբդ ալ-Մալիք խալիֆան, Բյուզանդիային վերջնական պարտության մատնելուց հետո և լուծելով իր երկրի ներքին խնդիրները, իր եղբորը՝ Մուհամմադ իբն Մրվանին, նշանակեց Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ, ով 701թ. վերջնականապես գրավեց Հայաստանը: Հավանաբար, այս շրջանին էլ վերաբերում է Ս. Անեցու կողմից հիշատակված և Մուհամմադ մարգարեին վերագրված պայմանագիրը: Պարզ է դառնում վերոհիշյալ շարադրանքից, որ այդ պայմանագիրը կնքվել է արաբական արշավանքների ու նվաճումների շրջանում:

Պատմագիրը պայմանագրի պայմանները շարադրելիս չի նշում որևէ թվական, և կամ երբ ու ինչ հանգամանքներում է այն տրվել Հայոց աշխարհին, միայն ընդհանուր ձևով կարող ենք դատել, որ արաբական նվաճումների ընթացքում հայերը կարիք ունեին արաբների պաշտպանության ու հովանավորության, որի փոխարեն նրանք պետք է ստանձնեին հարկային պարտավորություններ:

Հավանաբար, Ս. Անեցին փորձել է վաղեմություն հաղորդել վերոհիշյալ պայմանագրին՝ վերագրելով այն ավելի վաղ շրջանի, մասնավորապես արաբական նվաճումների նախօրյակին: Ընդ որում, գալով այս պայմանագրի կնքման կամ ստեղծման պատմությանը, նշենք, որ բոլոր վերոհիշյալ հեղինակների մոտ նկատվում է միտում արտոնագրի կնքումը վերագրելու Մուհամմադ մարգարեին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրության նյութ են դարձել Մուհամմադ մարգարեին վերագրված և հայկական համայնքներին տրված պայմանագրերը, որոնք հայտնի են Ալի Մանշուր (հրովարտակ) անունով: Ներկայացվել է Մեծ Մանշուրը, որը արաբական իշխանությունների կողմից տրվել է հայերին:

Բանալի բաներ - հրովարտակ, խալիֆա, դաշինք, հարկեր, ապստամբություն, պայմանագիր, նամակ-խնդրագիր, հայկական համայնքներ, արաբական իշխանություններ, կրոնական օրենքներ:

ДОГОВОР, ПРИПИСЫВАЕМЫЙ ПРОРОКУ МАГОМЕТУ И ДАННЫЙ АРМЯНСКИМ ОБЩИНАМ

ԳԱՅԱՆԷ ՄԿՐՏՄՅԱՆ

Предметом данного исследования стали приписываемые пророку Магомету и данные армянским общинам договоры, которые известны под названием Али Маншур (манифест). Представлен Большой Маншур, который в VIII веке был передан армянам арабскими властями.

Ключевые слова – манифест, халифа, альянс, налоги, бунт, соглашение, письмо-ходатайство, армянские общины, арабские власти, религиозные права.

AN ARAB ARMENIAN AGREEMENT ASCRIBED TO PROPHET MAHOMET

GAYANE MKRTUMYAN

This article considers the agreement between the Arab authorities and the Armenian elites known as Ali Manshur (manifesto) and ascribed to prophet Mahomet. Mkrtumyan in this article introduces the entire Ali Manshur document, which was given to the Armenian communities by the Arab authorities in the VIII century.

Key words – manifesto, khalifa, alliance, taxes, riot, agreement, letter-petition, Armenian community, Arabian authorities, religious rights.

Գրականություն

1. Կյուլեսերյան Բ., Իսլամը հայ մատենագրության մեջ, Վիեննա, 1930:
2. Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982:
3. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, Երևան, 1960:
4. Նալբանդյան Հ., Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, ԳԱ «Տեղեկագիր», N 12, Երևան, 1956:
5. Սամվելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939:
6. Սամուելի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
7. Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996:
8. Տեր-Ղևոնդյան Ա., Հոդվածների ժողովածու, Երևան, 2003:
9. Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. 1. Հրովարտականեր, պրակ Ա (ԺԵ-ԺԶ դդ.), վավերագիր 21, Երևան, 1956:

ՎԱԶԳԵՆ Ա ՊԱԼՃՅԱՆԸ ԵՎ ՌՌԻՄԻՆԻԱՅԻ «ՎԵՐԿ» ԱՄՍԱԳԻՐԸ (1937-1938 ԹԹ.)

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Երանաշնորհ Վազգեն Ա հայրապետը՝ հայ ժողովրդի մեծագույն հովվապետների՝ Գրիգոր Լուսավորչի և Ներսես Մեծի, Սահակ Պարթևի ու Ներսես Աշտարակեցու, Խրիմյան Հայրիկի և այլոց գահը ժառանգած արժանավոր հայրորդին՝ 130-րդը հոգեւոյսներից, շուրջ 40-ամյա գահակալության ընթացքում (1955-1994) խիզախորեն ընդունեց «անհավատ ու աստվածամերժ ժամանակների» նետած նենգ մարտահրավերները, իր ժողովրդին գործազույթ հոր նման վերստին առաջնորդեց դեպի ճշմարիտ հավատ, դեպի լույս եզերքներ ու միասնություն և խորապես նպաստեց հայության առջև ծառայած բախտորոշ ծրագրերի իրականացմանը:

Ուսուցչական, հասարակական և եկեղեցավարչական բեղմնավոր գործունեությունից բացի՝ Վեհափառ հայրապետն ունեցել է նաև գրական շնորհալի աշխատանք: Նա 1937 թվականին գրական ասպարեզ է իջել որպես հրապարակագիր՝ բովանդակալից հոդվածներ ու ակնարկներ գրելով ռումինահայ կյանքի և հայ մշակույթի մասին: Ուշագրավ է, որ գրական առաջին իսկ քայլերից Վազգեն Ա-ն, ինչպես բոլոր դեպքերում, այս անգամ ևս հանդես է բերել ինքնուրույն մտածողություն ու անափ հայրենասիրություն:

Նա 1937 թվականի հունիսին ռումինահայ համալսարանական հայրենասեր մի քանի ընկերների հետ հրատարակում է «Վերկ» ամսագիրը՝ բաղկացած 16 մեծադիր էջերից: Հիշյալ պարբերականի վարիչն էր Ժ. Գարագաշյանը, խմբագիրը՝ Կ. Պալճյանը (հետագայում՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս), իսկ աշխատակիցները՝ պրոֆ. Գ. Ավագյանը, Ա. Ազտերյանը, Արամազդը, Հ. Թումաճանյանը, Ա. Կլորիկյանը, Հ. Փիրանյանը և Ք. Օտապաշյանը: Ամսագիրն ուներ մշտական մի շարք էջեր՝ «Տնտեսական», «Էջ մը պատմութենէ», «Ի՞նչ կը նշանակէ», «Գիտական», «Այսօրուան երիտասարդութիւնը», «Նշմարներ», իսկ ավելի ուշ՝ «Մեր հարցումին կպատասխանեն», որտեղ պարբերաբար հետաքրքիր հոդվածներ, ուսումնասիրություններ և հայտարարություններ էին ներկայացնում աշխատակիցները:

«Տնտեսական» բաժնում ներկայացվում են վերլուծական այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են, օրինակ, «Պատերազմներու տնտեսական պատճառ-

ները» (հեղ.՝ Հ. Թումանյանն)՝, «Անզլեիտալական մրցակցութիւնը» (հեղ.՝ Հ. Փիրանյանն)², «Ռուզվէթի տնտեսական օրէնսդրութիւնը» (հեղ.՝ Հ. Թումանյանն)³... «Էջ մը պատմութենէն» բաժնում տեղադրվում են «Ինչպէս խաբուեցան արաբները»⁴, «Պատմութեան ուսուցումը Խ. Միութեան մէջ» (հեղ.՝ Ա. Օպերման)⁵ և այլ ուսումնասիրություններ: Հիշարժան են հատկապէս «Ի՞նչ կը նշանակէ» մշտական էջում զետեղված՝ Կարապետ Պալճյանի հեղինակային հետևյալ հոդվածները՝ «D’ALECTIQUE»⁶, «A PRIORI»⁷, «Bourgeois»⁸, «Ռգի»⁹, «SYNTHESE»¹⁰, «IDEALIZME»¹¹, «Ընկերային»¹²: «Գիտական» կոչվող բաժնում զետեղված հոդվածներից են Մ. Օտապաշյանի «Հին եւ նոր տեսութիւններ նիւթի կազմութեան մասին»¹³, «Նիւթի կազմութեան արդի ըմբռնողութիւնը»¹⁴ և Կ. Պալճյանի «Մենտեի Օրէնքները»¹⁵, «Բնագը եւ գիտակցութիւն»¹⁶ ուսումնասիրությունները: «Այսօրուան երիտասարդութիւնը» էջում տեղ են գտել ժամանակի տարբեր ազգերի՝ իտալացի, գերմանացի, թուրք, ռուս, հնդկ, Բալկանյան երկրների, նաև հայ երիտասարդների կյանքին, նրանց հետաքրքրություններին ու ազգային արժեքներին նվիրված ակնարկ-դիտարկումները¹⁷: Ինչ վերաբերում է «Նշմարներ» բաժնին, ապա այնտեղ հիմնականում զետեղվում են հայ գաղթօջախի ներքին կյանքին նվիրված ժամանակի կարևոր հայտարարություններն ու ծանուցումները:

¹ Տե՛ս «Շերկ», ամսագիր, Պուքրեշ, 1937, թիվ 1, հունիս, էջ 8-9:

² Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 2, հուլիս, էջ 4-5:

³ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 3-4, օգոստոս-սեպտեմբեր, էջ 6-8:

⁴ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 1, հունիս, էջ 10:

⁵ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 7, դեկտեմբեր, էջ 12-13:

⁶ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 1, հունիս, էջ 12-13:

⁷ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 2, հուլիս, էջ 13:

⁸ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 3-4, օգոստոս-սեպտեմբեր, էջ 12-16:

⁹ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 5, հոկտեմբեր, էջ 10-12, թիվ 6, նոյեմբեր, էջ 12:

¹⁰ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 7, դեկտեմբեր, էջ 11:

¹¹ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1938, թիվ 8, հունվար, էջ 13-14:

¹² Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1938, թիվ 11, ապրիլ, էջ 12-13:

¹³ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 1, հունիս, էջ 14-15:

¹⁴ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 2, հուլիս, էջ 14-15:

¹⁵ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1937, թիվ 7, դեկտեմբեր, էջ 14:

¹⁶ Տե՛ս «Շերկ», Պուքրեշ, 1938, թիվ 9, փետրվար, էջ 13-14:

¹⁷ Տե՛ս «Շերկ», 1937, թիվ 5, հոկտեմբեր, Պուքրեշ, էջ 12-14, թիվ 6, նոյեմբեր, էջ 13-15, թիվ 7, դեկտեմբեր, էջ 7-10:

«Հերկ» ամսագրի՝ 1938 թվականի հունվար ամսվա 8-րդ համարում ստեղծվում է նոր էջ, որտեղ այսուհետ պիտի դրվեին աշխարհի տարբեր երկրներում ապրող մտավորական հայերի կարծիքները հայ երիտասարդների, նրանց անելիքների և այդ համապատկերում ամսագրի կոչման ու կատարած դերի մասին: «Հերկ»-ի խմբագրությունը,- գրում է պարբերականը,- մեր ազգային կեանքի զանազան դասերու եւ հոսանքներու պատկանող անձերու ուղղած է երեք հարցումներ ներկայ հայ երիտասարդութեան վերաբերեալ, որոնց ստացուած պատասխանները հաճոյքով պիտի հրատարակենք ժամանակագրական կարգով յաջորդաբար ու բոլոր պատասխանները ստանալէ վերջ պիտի անդրադառնանք յայտնուած կարծիքներուն»¹⁸:

Այսպես, «Հերկ»-ում սկսում են տեղադրվել նաև Սփյուռքում ապրող հայ մտավորականների և հայագի նշանավոր գործիչների կարծիք-հոդվածները Ալեքսանդրիայից (Օ. Ռ. Պէրպէրեան)¹⁹, Բարիզից (Լ. Կ. Կերտան)²⁰, Սոֆիայից (Գ. Նժդեհ)²¹, Փարիզից (Ս. Վրացյան)²², Բուխարեստից (Ս. Արարատեան)²³, Վենետիկից (Հայր Սահակ Կոզեան, Մխիթարյան միաբանություն)²⁴:

Լ. Կերտանը²⁵ «Հերկ»-ի մասին գրում է, որ նրանք արդեն իսկ սահմանել են իրենց ծրագիրը. «Ձեր ընելիքը, Ձեր կատարելիք դերը, սահմանել էք ինքնին: Մտածել, սորվիլ, գործել,- ինչպես կը գրէք: Ասիկա արդէն ամբողջ ծրագիր մըն է»²⁶: Միայն նա խմբագրությանը զգուշացնում է, որ ներկայի և ապագայի հարցերով զբաղված լինելու պարագայում էլ չմոռանան երբեմն-երբեմն ուսումնասիրել իրենց անցյալը և չմոռանան նրա մասին,

¹⁸ «Հերկ», Պուքրեշ, 1938, թիվ 8, հունվար, էջ 9:

¹⁹ Մանրամասն տե՛ս նույն տեղում, թիվ 8, հունվար, էջ 9:

²⁰ Մանրամասն տե՛ս «Հերկ», Պուքրեշ, 1938, թիվ 9, փետրվար, էջ 5:

²¹ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 5-6:

²² Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 6-7:

²³ Մանրամասն տե՛ս «Հերկ», Պուքրեշ, 1938, թիվ 11, ապրիլ, էջ 9-12:

²⁴ Մանրամասն տե՛ս «Հերկ», թիվ 12, մայիս, Պուքրեշ, 1938, էջ 5-7:

²⁵ Լևոն Կերտան (Կյումյուշկերտանյան, 1886-1950) հայ ֆրանսիագիր գրող: Հայտնի է իր «Կշեռքի սխալ ծանրությունը», «Բերտրան Բերնոյի պատրանքները», «Տիգրան Երկաթ», «Բոլորին ճանաչում եմ» և «Մինարեթներից դեպի երկնասլացներ» վեպերով: Նա նաև անգլերենից ֆրանսերեն է թարգմանել գեղարվեստական երկեր, որոնք տպագրվել են ֆրանսիական մամուլում: Եղել է Հայկական բարեգործական միության անդամներից:

²⁶ Լ.Կ. Կերտան, «Հերկ» ամսաթերթի խմբագրութեան», «Հերկ», 1938, թիվ 9, փետրվար, էջ 6:

որովհետև փոքր ազգերի ուժն իրենց փորձառությունն է: Իսկ Գ. Նժդեհը²⁷ «Վերկ»-ը համարում էր հայ երիտասարդ սերնդի մի օրգան և ավելացնում, որ այն պիտի նպաստի սեփական ազգային գաղափարախոսության մշակման գործին: «Վերկ»-ը իբրև երիտասարդ սերունդի օրգան՝ պիտի աշխատէ նախ հոգեբանօրեն նուաճել երիտասարդ Հայը, հայութիւնը իր ցեղի համար,- պնդում է նա.- պէտք է նախ օտար խաթարիչ ազդեցութիւններէն ազատագրել ու կազմակերպել Հայ Մտածողութիւնը, այլապէս Հայութիւնը կը մնա պառակտուած ու ցրուած հոգեբանօրէն, կը մնայ տկար՝ միշտ պատրաստի որս իր երկու թշնամիների - Հայաստանում իր հարևանների՝ Հայաստանից դուրս օտարացման վտանգի համար: Պատմութիւնը աճապարում է – չրանդադի՛նք»²⁸:

Ս. Վրացյանի²⁹ ամսագրի նամակի պատասխանում, թե ինչը պիտի դառնա «Վերկ»-ի գործառույթը հայ երիտասարդության աշխատանքում հանուն մեր ազգի, մատնանշվում է, որ ամսաթերթը պիտի ջանա պատրաստել ազգային դեմք, հանրային նկարագիր ու դավանանք և ողնաշար ունեցող երիտասարդ գործիչներ³⁰: Ս. Արարատյանն³¹ էլ յուրահատուկ ոգևորությամբ է ներկայացնում իր կարծիքը «Վերկ»-ի դերի վերաբերյալ. նա գտնում է, որ ամսագիրը պիտի օգնի հայ երիտասարդներին՝ տալով սեղմ, ամփոփ, խնամքով գրված հոդվածներ, որպեսզի դյուրացնի հայ նոր սերնդի կրթության

²⁷ Գարեգին Նժդեհ, իսկական անունը՝ Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունյան (1886-1955), հայ պետական, ռազմական գործիչ, քաղաքագետ-իմաստասեր, դաշնակցական գործիչ:

²⁸ **Նժդեհ Գ.**, «Վերկ»-ի Յարգոյ խմբագրութեան», «Վերկ», 1938, թիվ 9, փետրվար, էջ 6:

²⁹ Սիմոն Վրացյան (1882-1969) - հայ քաղաքական գործիչ, դաշնակցական ղեկավար: Եղել է Հայաստանի Առաջին հանրապետության գյուղատնտեսության և աշխատանքի նախարար և չորրորդ վարչապետը:

³⁰ **Տե՛ս Վրացյան Ս.**, «Վերկ»-ի յարգելի խմբագրութեան», «Վերկ», 1938, թիվ 9, փետրվար, էջ 7:

³¹ Արարատյան Սարգիս Շահնագարի (1886-1943), մասնագիտությամբ եղել է քիմիկոս, հասարակական, պետական, ազգային-քաղաքական գործիչ, ՀՀԴ անդամ: Ապրել է Բաքվում, մասնակցել է հայկական ազգային կյանքին: 1918 թ. ընտրվել է Բաքվի ազգային խորհրդի անդամ, այնուհետև գործուղվել Պարսկաստան՝ անգլիացիների հետ բանակցելու Բաքվի ճակատագրի վերաբերյալ: 1919-1920թթ. ընտրվել է ՀՀԴ կուսակցության քյուրդի անդամ: 1919-1920թթ.՝ Հայաստանի Առաջին հանրապետության Խորհրդարանի պատգամավոր, 1919.08-1920.05 եղել է ՀՀ ֆինանսների ու պարենավորման նախարար, 1920.05-1920. 12՝ ՀՀ խնամատարության և վերաշինության նախարար: 1921-ից տեղափոխվել է քնակվելու Ռումինիայում՝ Բուխարեստում:

ու դաստիարակության գործը: Հոդվածագիրը կարծում է, որ ամսագիրը պիտի լավին՝ լավ ու վատին՝ վատ ասելու կամեցողություն ունենա, այլապես այն կկորցնի իր գոյության իրավունքը: Իսկ դա իրագործելու համար Ս. Արարատյանը գրում է. «Ամէնէն առաջ «Հերկ»ը պիտի կրկնապատկէ-եռապատկէ իր ծաւալը կամ վերածուի շաբաթաթերթ-երկշաբաթաթերթի: Այս պարագան հնարատրութիւն կը տայ Ձեզ ընդարձակելու Ձեր հորիզոնը, դուրս գալու Ռումինահայ շրջագծէն, եղբայրական կապ հաստատելու Սփիւռքի մէջ արդէն գոյութիւն ունեցող երիտասարդական այլ և այլ կազմակերպութիւնների հետ, հանդիպումներ ու համագումարներ կազմակերպել՝ նման երբեմնի ուսանողական համագումարներին և փոխադարձ ծանօթութիւնների միջոցով յաջողութեամբ ծառայել այն կոչումին, որն ունի արդի հայ երիտասարդութիւնը»³²: Իհարկէ, Ս. Արարատյանի բարի ցանկությունը՝ «Հերկ»-ը տեսնելու շաբաթաթերթի կամ երկշաբաթաթերթի կարգավիճակում, ավելին կտար Ռումինիայում ապրող հայ հասարակության ազգային ոգուն ու գաղափարախոսությանը, սակայն նյութական միջոցների սղությունը թույլ չտվեց անգամ հետագայում ընդլայնելու «Հերկ»-ի ծավալներն ու ապա նաև գոյությունը:

Ինչպես նշվեց, Լևոն-Կարապետ Պալճյանն ինքն էր խմբագրում «Հերկ»-ը՝ այնտեղ տպագրելով խմբագրականներ ու հոդվածներ հայ մշակույթի, հայոց պատմության, հայ ոգու, մտքի, Սուրբ Էջմիածնի, հայ երիտասարդության, Սփիւռքի մասին՝ շահեկան և իմաստալից խորհրդածություններով: Ամսագիրը նպատակ է հետապնդել հայ կյանքն ու միտքը հարստացնել նոր ու թարմ մտածումներով, ազնիվ զգացումներով ու հայրենասիրական ոգով: «Հերկ»-ի շուրջ բոլորված երիտասարդները պաշտպանում էին «մտքի թագավորության» ազատությունն ու անկախությունը. «Հերկի» շուրջ հաւաքուած խումբ մը երիտասարդներ, իրենց համեստ ուժերով, կ'ուզէն մտածել ու ապրիլ նոր ժամանակներու մտածումներով ու խնդիրներով և նաև հայ ժողովուրդի ներկայի և ապագայի հետ կապուած հարցերով»³³: Հայ հայրենիքի, հայ ժողովրդի, Հայաստանյայց եկեղեցու, հայ մշակույթի, հայ ոգու, հայ սրբությունների պաշտպանության համար էր, որ նրանք ճանապարհ էին ընկել: Փիլիսոփայության և քաղաքականության բնագավառներում նրանք դեռ տենդագին «որոնման» մեջ էին, բայց կազմակերպվում էին այդ ուղղությամբ և

³² Արարատյան Ս., «Հերկ»ի հարգելի խմբագրության», «Հերկ», 1938, թիվ 11, ապրիլ, էջ 9-12:

³³ «Հերկ», Պուքրեշ, 1937, թիվ 1, հունիս, էջ 1:

աշխատում ու ջանում՝ Սփյուռքի հայ մարդու մտքի ու հոգու «հորիզոնը բանալ, զայն ազատել միայն կուսակցական մտահոգությանց մեջ ապրելու մոլորանքեն»³⁴:

«Հերկ»-ի առաջին իսկ համարի խմբագրականում Կարապետ Պալճյանը ցանկություն է հայտնում «մտածելու»՝ «Մտածել: Ահա ինչ կուզենք սովորի: Սովորիլ մեր ընթերցողներուն, մանաւանդ մեր երիտասարդ ընթերցողներուն հետ...Եվրոպան դարերէ ի վեր մտածման պաշտամունքի շնորհիւ իր հոգիով կը բարձրանայ դէպի անասելի բարձունքներ: Գիտենք, կար ատեն երբ հայ ժողովուրդն ալ կը դաւանէր այդ պաշտամունքը»³⁵: Կ. Պալճյանը, նշելով ճակատագրի անակնկալների պատճառով մեր հայ մտքի երբեմն վերելքներն ու վայրէջքները, հույս էր հայտնում, որ մեր ազգը կա ու պիտի նորից մարզի իր մտածողությունը:

«Հերկ»-ի խմբագրության կողմից Սփյուռքի հայ ժողովուրդը դիտված է որպես իմացական հոգեղեն մի հավաքականություն, որ պետք է ապրի ազգային-հայրենասիրական գիտակցությամբ:

Կարապետ Պալճյանը «Հերկ»-ում հանդես է գալիս հրապարակագրի իր խոստումնալից տաղանդով, գրական փորձով ու զարգացած ճաշակով: Երիտասարդ խմբագիրը հայոց ազգային-եկեղեցական և մշակութային կյանքի մասին խոսելիս ինքնատիպ ոճով ու ուրույն փիլիսոփայությամբ արծարծում է հայրենիքի սերը, հայ մշակույթի պաշտամունքը, բորբոքում Հայաստանյայց եկեղեցու հուրը, հորդորում բոլորին՝ լինել խոհուն, առաջնորդվել գիտության լույսով, կարգապահության ճանապարհով... Այդ օրերին սփյուռքահայությանը հուզող ազգային-եկեղեցական և մշակութային զանազան հարցեր խորհրդածության լայն նյութ են դառնում երիտասարդ խմբագրի գրչի տակ՝ մարմնավորվելով խոր համոզմունքով ու լավատեսությամբ համակված ազդու հոդվածներով:

«Հերկ»-ը լույս տեսավ 12 համար միայն և փակվեց նյութական միջոցների պակասի պատճառով³⁶: Ամսագրի վերջին համարում՝ «Վարչական» կոչված հատվածում, խմբագրությունը շնորհակալական խոսք է ասում այն բոլոր նվիրատուներին ու բաժանորդներին, ովքեր աջակցել են իրենց՝ մեկ տարի անընդմեջ լույս ընծայելու պարբերականը: Դրա հետ միասին նշմար-

³⁴ «Էջմիածին», 1976, Ը-Թ, էջ 9:

³⁵ «Հերկ», Պուրբեշ, 1937, թիվ 1, հունիս, էջ 1:

³⁶ Տե՛ս «Էջմիածին», 1976, Ը-Թ, էջ 10:

վում է հույսը ամսագրի հետագա ծավալի և աշխատակիցների շրջանակը մեծացնելու մասին. «Հերկը» յառաջիկա շրջանը պիտի սկսի Յուլիս ամիսէն»³⁷: Այս ամենով հանդերձ՝ «Հերկ»-ը մշակութային խրախուսիչ և ուշաբժան երևույթ էր սփյուռքահայ կյանքում, քանի որ ուներ ընթերցողների լայն շրջանակ թե՛ Ռումինիայում և թե՛ հայոց մյուս գաղթօջախներում:

ՎԱԶԳԵՆ Ա ՊԱԼՃՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ «ՀԵՐԿ» ԱՄՍԱԳԻՐԸ (1937-1938 ԹԹ.)

Լիլիթ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոդվածը ներկայացնում է Վազգեն Ա Պալճյանի խմբագրական գործունեությունը Ռումինիայում: Կարապետ Պալճյանը (հետագայում՝ Վազգեն Ա Պալճյան Ամենայն Հայոց Կաթողիկոս) 1937 թվականի հունիսին ռումինահայ համալսարանական հայրենասեր մի քանի ընկերների հետ հրատարակում է «Հերկ» ամսագիրը՝ բաղկացած 16 մեծադիր էջերից: Նա շուտով դառնում է ամսագրի խմբագիրը: Ուսուցչական, հասարակական և եկեղեցավարչական բեղմնավոր գործունեությունից բացի՝ Վեհափառ Հայրապետին վիճակված էր իր ժողովրդի կյանքում հիշվել նաև որպես տաղանդավոր գրող, մտածող և մեծ հայրենասեր:

Քանալի քաներ - ամսագիր, խմբագիր, հոդված, հայրենասիրություն, ազգ, եկեղեցի, երիտասարդություն, գաղթօջախ, հայոց պատմություն:

ВАЗГЕН I ПАЛЧЯН И ЖУРНАЛ “ГЕРК”, издававшийся в В РУМЫНИИ (1937-1938гг.)

ЛИЛИТ ПОГОСЯН

В статье освещается редакторская деятельность Вазгена I Палчяна в Румынии. В июне 1937 г. Карапет Палчян (позднее – католикос Вазген I Палчян) со своими товарищами по университету издает журнал “Герк” (“Пашня”), объем которого составлял 16 страниц большого формата. Редактором этого журнала становится именно он.

³⁷ «Հերկ», 1938, թիվ 12, մայիս, էջ 16:

Католикос Вазген I остался в памяти народной не только как учитель, общественный и духовный деятель, но и как талантливый литератор, мыслитель и патриот.

Ключевые слова – редактор, журнал, статья, патриотизм, нация, церковь, молодежь, общество, армянская история.

VAZGEN I PALCHYAN AND THE MAGAZINE “HERK” IN ROMANIA

LILIT POGHOSYAN

This article considers Catholicos Vazgen I Palchyan’s editorial activities in Romania. Karapet Palchyan (later Catholicos Vazgen I Palchyan) with several patriot Armenian friends of the university founded “HERK” meaning ‘arable land’, a 16-paged monthly magazine in June 1937. He was the editor-in-chief as well as the editor-at-large of the magazine.

Catholicos Vazgen I was revered by his people as an outstandingly wise, spiritual, social and religious leader. Having been a talented writer, thinker and a great patriot Catholicos Vazgen I was and remains to be a real inspiration for the Armenians.

Key words – magazine, editor, article, patriotism, nation, church, youth, community of immigrants, Armenian history.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЕВРОПЕЙСКИЕ ОРИЕНТИРЫ МОДЕРНИЗАЦИИ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ В УКРАИНЕ

ЮЛИЯ ЛИХАЧ (УКРАИНА)

Постановка проблемы. Провозглашенный Украиной курс на интеграцию в Европейский Союз предусматривает достижение не только социально ориентированной экономики, но и высоких стандартов жизни, построения гражданского общества, соблюдения верховенства права. Последовательная и эффективная имплементация Соглашения об ассоциации между Украиной и ЕС создаст прочный базис дальнейшего устойчивого политического и экономического развития нашего государства, станет основой стратегии реформирования всех ключевых сфер и внедрения европейских стандартов с целью повышения качества жизни населения.

Для обеспечения реализации этих задач Президентом Украины П. Порошенко инициирована Программа развития Украины “Стратегия – 2020”, которая предусматривает проведение более 60 реформ. Среди первоочередных реформ предусмотрены обновление и децентрализация власти, антикоррупционная реформа и реформа государственного управления и т.д.

Анализ последних исследований и публикаций. Вопросы внедрения и реализации в Украине принципов европейского управления рассматривались в трудах В. Аверьянова, И. Грыцяка, А. Пухтецкой, М. Пухтинского, В. Шаповала и других.

Проблематика усовершенствования системы государственной службы, ее кадрового обеспечения и профессиональной подготовки за годы независимости Украины не утратила своей актуальности и значимости. Она является предметом исследований многих отечественных ученых, в частности В. Лугового, М. Канавец, И. Колиушко, В. Майбороды, Н. Нижник, Л. Пашко, О. Руденко, В. Сороко, В. Тимощука, В. Толкованова и др.

За этот период был принят ряд программных документов, правительственных постановлений и нормативно-правовых актов, направленных на совершенствование государственного управления, реформирование государственной службы и ее адаптации к европейским стандартам, в частности:

- Закон Украины “О государственной службе” от 16.12.1993 № 3723- XII);
- Постановление Кабинета Министров Украины “Программа развития государственной службы на 2005-2010 гг.” от 08.06.2004 № 746);
- Указ Президента Украины “О Концепции адаптации института государственной службы в Украине к стандартам Европейского Союза” от 05.03.2004 № 278/2004;
- Распоряжение Кабинета Министров Украины “Концепция реформирования системы повышения квалификации государственных служащих, должностных лиц местного самоуправления и депутатов местных советов” от 28.11.2011 № 1198 - р;
- Закон Украины “О государственной службе” от 17.11.2011 № 4050-VI;
- Указ Президента Украины “Стратегия государственной кадровой политики на 2012-2020 годы” от 01.02.2012 № 45/2012;
- Постановление Кабинета Министров Украины “Об утверждении Государственной целевой программы развития государственной службы на период до 2016 год” от 13.06.2013 № 350 и другие.

Все эти программы, концепции, стратегии, законы стали базисом отечественной нормативно-правовой базы, в которой определены как общие принципы государственного управления, так и основные необходимые меры по организационному обеспечению государственной службы, создание дееспособного аппарата органов государственной власти, совершенствование системы кадрового обеспечения и т.п.

Целью исследования является анализ организационно-правовых основ функционирования государственной службы, а также определение основных направлений и мероприятий по ее модернизации в условиях проведения в Украине системных реформ и евроинтеграционных процессов.

Изложение основного материала

Успешная реализация структурных реформ в Украине невозможна без модернизации института государственной службы. Формирование нового поколения государственных служащих - профессионально-компетентных, преданных делу и своей стране, инициативных, целеустремленных, готовых брать

на себя ответственность, выдвигать и воплощать в жизнь самые смелые замыслы – должно стать базисом реформы государственной службы.

Это соответствует задачам Соглашения об ассоциации между Украиной и Европейским Союзом и Соглашения о финансировании (контракт для Украины по развитию государства), подписанного 13 июня 2014 Президентом Европейской Комиссии Жозе Мануэлем Баррозу и премьер-министром Украины Арсением Яценюком.

Созданный за годы независимости институт государственной службы на сегодняшний день является средством борьбы политических элит, межпартийного противостояния и удовлетворения интересов бюрократии. Такая политически ангажированная, непрофессиональная, коррупционная система давно изжила себя и требует немедленного реформирования. Это подтверждают также и европейские эксперты программы SIGMA, которые отмечают, что основным проблемным вопросом публичной службы в Украине является вопрос стабильности и профессионализма и политической беспристрастности.

Так, согласно докладу OECD “Антикоррупционные реформы в Восточной Европе и Центральной Азии: достижения и вызовы, 2009-2013 годы”, комментариями Программы ОЭСР SIGMA, предоставленными к Закону Украины от 17.11.2011 года № 4050-VI “О государственной службе”, и по предварительным результатам оценки действующего законодательства Украины в сфере государственной службы, которая была осуществлена в рамках проведенного в 2014 году Программой OECD SIGMA сравнительного исследования “Профессионализация государственной службы в Армении, Азербайджане, Грузии, Молдове и Украине», к причинам недостатков и проблем кадровой политики в сфере государственной службы и службы в органах местного самоуправления следует отнести:

- *отсутствие четкого разграничения норм частного и публичного права.* Совмещение политических и административных полномочий в пределах одной должности государственной службы или должности в органе местного самоуправления.
- *несовершенство системы назначения на должности, продвижения по службе.* Для этой системы характерно отсутствие прозрачности при поступлении на государственную службу и службу в органах местного самоуправления, четких карьерных перспектив в целом подрывает

авторитет этих служб и приводит к высокому уровню текучести кадров.

- *чрезмерная политизация, как показывает практика кадровой ситуации последних лет.* Это происходит потому, что довольно часто с приходом к власти новой команды политиков отбор кадров на государственную службу осуществляется не по принципу профессионализма и компетентности, а по принадлежности к определенной партии или на основе личной преданности конкретному лицу.
- *несовершенство системы управления персоналом.* Кадровые службы органов государственной власти вместо системной работы по подбору персонала, формулировки требований к их уровню профессиональной компетентности, планирования обучения и карьерного роста государственных служащих в основном выполняют технические функции, связанные с ведением кадровой документации. Недостаточны условия для развития и обеспечения стратегической роли кадровой службы в управлении персоналом на государственной службе, а также аналитическое и информационно-технологическое сопровождение процессов управления персоналом.
- *несовершенство системы оплаты труда государственных служащих.* Средний уровень оплаты их труда остается достаточно низким. Проблемой остается и непрозрачность, обусловленная низкой долей должностного оклада по сравнению с различными доплатами, разрыв в заработной плате руководителей I-II категорий должностей и рядовых государственных служащих. Как следствие, имеет место большой риск протекционизма, пренебрежение интересами общества на пользу интересам руководства, а затем и служебных злоупотреблений и коррупции. ОЭСР в рамках проведенного в 2008 году анализа систем оплаты труда и оценки результатов служебной деятельности в странах-членах ЕС “The State of the Public Service” пришла к выводу, что децентрализованное принятие решений по заработной плате государственных служащих, в том числе на основании результатов их служебной деятельности, может быть оправданным только при условии, что введение собственной схемы оплаты труда с учетом потребностей конкретного административного органа позволяет значительно повысить экономическую эффективность его деятельности.

- *несовершенство системы профессиональной подготовки, переподготовки и повышения квалификации государственных служащих.* Государственные служащие несут ответственность за предоставление услуг, создают благоприятные условия для жизни граждан. К сожалению, государственным служащим часто не хватает опыта, навыков и необходимых ресурсов для предоставления качественных услуг населению. Существующая система профессионального обучения государственных служащих не обеспечивает непрерывное образование и ориентирована в основном на обучение университетского типа. Ей не хватает динамичности и практической направленности.
- *несовершенство системы общественного и государственного контроля за деятельностью органов государственной власти, критериев и механизмов объективной оценки их работы.*
- *недостаточно эффективные меры, которые осуществляются органами исполнительной власти по предотвращению коррупции в государственном секторе.*

Эти и другие недостатки государственной кадровой политики в сфере государственной службы носят системный характер, а следовательно, нуждаются и в системных решениях.

Стоит отметить, что опыт проведения системных социально-экономических преобразований в большинстве стран мира (Великобритания, Австралия, Новая Зеландия, Германия, Финляндия, Венгрия, Польша, Соединенные Штаты Америки, Бразилия и т.д) начинался именно с укрепления государственной службы. В процессе осуществления реформ были выполнены такие задачи, как обеспечение прозрачности, гибкости, эффективности функционирования системы государственного управления, сокращения количества госаппарата и снижения расходов на его содержание, привлечение качественно новых кадров на государственную службу с большой пользой для государства и общества.

Приоритетные направления реформирования публичной службы в Украине определены в Коалиционном соглашении, подписанном народными депутатами в Верховной Раде Украины VIII созыва, предусматривают:

- принятие новой редакции Закона “О государственной службе”, который должен обеспечить институциональное усиление системы управления государственной службой;

- принятие новой редакции Закона о службе в органах местного самоуправления, построенной на европейских принципах публичной службы;
- проведение функционального анализа органов государственной власти и органов местного самоуправления, сокращение численности государственных служащих, оптимизация расходов на обеспечение органов государственной власти и органов местного самоуправления;
- реформирование Кабинета Министров Украины, предусматривающее введение должности Государственного секретаря и внедрение коллегиальности и прозрачности деятельности Кабинета Министров Украины, повышение эффективности работы правительственных комитетов;
- реформирование органов государственной власти, включая введение института государственных секретарей министерств, сокращение политических должностей заместителей министров, оптимизацию численности и структуры органов государственной власти.

На выполнение задач по совершенствованию государственной политики в сфере государственной службы Национальным агентством Украины по вопросам государственной службы совместно с общественными организациями и международными экспертами разработан новый законопроект о государственной службе.

К основным новациям законопроекта следует отнести:

- четкое определение сферы действия закона, ограничения политических должностей от должностей государственной службы;
- внедрение компетентностной модели управления человеческими ресурсами на государственной службе;
- новые подходы к оценке служебной деятельности и профессионального обучения;
- оптимизация системы оплаты труда и устранения межотраслевых и территориальных диспропорций;
- исключение коррупционных механизмов при назначении на должность государственной службы и в течение прохождения службы, исключительно конкурсный отбор на все должности;
- совершенствование системы управления государственной службой: усиление роли Нацдержслужбы, работа Комиссии высшего корпуса

государственной службы, роль руководителей государственной службы - госсекретарей и служб персонала.

С целью однозначной трактовки проект закона дает определение принципов государственной службы, которыми должны руководствоваться государственные служащие при исполнении должностных обязанностей. К принципам отнесены: патриотизм, добродетель, верховенство права, законность, эффективность, ориентированность на граждан, равный доступ к государственной службе, профессионализм, политическая беспристрастность, прозрачность, стабильность, ответственность.

Проектом определен перечень должностей, на которые не распространяется действие закона. Таким образом, законопроект четко определяет сферу действия законодательства о государственной службе по вертикали через функциональное определение государственной службы и ограничения должностей, не являющихся должностями государственной службы, и по горизонтали через определение государственных органов, на которые распространяется его действие.

Одной из новаций проекта является создание новой системы категорий и рангов, которая призвана устранить межведомственное неравенство и обеспечить достаточную мотивацию для совершенствования деятельности служащих. Предлагаемая система классификации должностей в целом соответствует европейской модели - это три категории должностей государственной службы: "А" - высший корпус государственной службы, "Б" - руководители подразделений и "В" - исполнители. Принципы разделения должностей категорий "А", "Б" и "В" определяются уровнем ответственности, объемом выполняемой работы и сложностью задач.

Законопроект вместо точечных подходов обеспечивает кардинальную перестройку института государственной службы, вводя единые для всех органов власти действенные принципы отбора оценки результатов деятельности, планирования карьеры и профессионального развития государственных служащих.

Реализация заложенного в проекте компетентностного подхода позволит обеспечить рациональный подбор и расстановку кадров с учетом их профессиональных способностей и личных качеств. Таким образом, закладываются объективные механизмы повышения профессионализма государственной

службы и устранения коррупционных составляющих, что обеспечит прогнозируемость и постоянство государственной службы.

Стоит отметить, что внесение законопроекта о государственной службе в Верховную Раду Украины и его принятие планируется до конца 2014 года, а его поэтапное внедрение запланировано до 2020 года.

Ожидаемыми результатами реформирования института государственной службы станут:

- достижение Украиной 40 позиции в рейтинге глобальной конкурентоспособности по показателю качества государственных институтов;
- обновление кадрового состава государственных служащих (включая правоохранительные органы), судей и работников прокуратуры на 70% к 2020 году;
- снижение уровня текучести кадров на государственной службе на 6,0%;
- повышение уровня профессиональных знаний, умений и навыков государственных служащих в соответствии с требованиями должностей государственной службы.

Одним из самых точных индикаторов результативности и эффективности реформы государственной службы должно стать позитивное восприятие общественностью государственных служащих через формирование новой идеологии деятельности органов государственной власти как особого вида деятельности, направленной на обеспечение реализации прав и свобод граждан, предоставление качественных государственных и общественных услуг.

Выводы: Реформа государственной службы в Украине должна обеспечить приближение законодательства о государственной службе к общепринятым стандартам стран-членов ЕС на основе демократических ценностей и принципов эффективного управления, что позволит в краткосрочной перспективе построить демократическое и правовое государство, а в долгосрочной перспективе – обеспечит полноценное членство в Европейском Союзе.

Список литературы

1. Вопросы управления государственной службой в Украине: Указ Президента Украины от 18.07.2011 № 769/2011 // Официальный вестник Верховной Рады Украины. - 2011. - № 22. - С. 8. - Ст. 926.

2. Концепция реформирования системы повышения квалификации государственных служащих, должностных лиц местного самоуправления и депутатов местных советов: Распоряжение Кабинета Министров Украины от 28.11.2011 №1198-р // Правительственный курьер. - 2011. - № 246.
3. О государственной службе: Закон Украины от 16.12.1993 // Официальный вестник Верховной Рады Украины. - 1993. - № 52. - С. 490.
4. О государственной службе: Закон Украины от 17.11.2011 № 4050-VI // Официальный вестник Верховной Рады Украины. - 2012. - №№ 26 - С. 1072. - С. 273.
5. О Комплексной программе подготовки государственных служащих: Указ Президента Украины от 09.11.2000 № 1212/2000 [Электронный ресурс]. URL: <http://zakon2.rada.gov.ua/laws/show/1212/2000>
6. О повышении эффективности системы государственной службы: Указ Президента Украины от 11.02.2000 № 208/2000 [Электронный ресурс]. URL: <http://zakon2.rada.gov.ua/laws/show/208/2000>
7. О подписании Соглашения о финансировании (контракт для Украины по развитию государства): Распоряжение Кабинета Министров Украины от 07.05.2014 № 452-р. - Режим доступа: [Электронный ресурс]. URL: <http://zakon4.rada.gov.ua/laws/show/452-2014-%D1%80>
8. Об утверждении Национальной рамки квалификаций: Постановление Кабинета Министров от 23.11.2011 № 1341 // Правительственный курьер. - 2012. - № 9.
9. Об утверждении Программы развития государственной службы на 2005-2010 годы: Постановление Кабинета Министров Украины от 08.06.2004 № 746 [Электронный ресурс]. URL: <http://zakon2.rada.gov.ua/laws/show/746-2004-%D0%BF>
10. Соглашение об Ассоциации между Украиной, с одной стороны, и Европейским Союзом, Европейским сообществом по атомной энергии и их государствами-членами, с другой стороны от 27.06.2014 [Электронный ресурс]. URL: http://www.kmu.gov.ua/control/publish/article?art_id=246581344
11. Стратегия государственной кадровой политики на 2012-2020 годы: Указ Президента Украины от 01.02.2012 № 45/2012 // Официальный вестник Президента Украины. - 2012. - № 4. - С. 68. - Ст. 127.
12. Антикоррупционные реформы в Восточной Европе и Центральной Азии: достижения и вызовы [Электронный ресурс]. URL: http://www.keepeek.com/Digital-Asset-Management/oecd/governance/anti-corruption-reforms-in-eastern-europe-and-central-asia_9789264204294-ru#page1
13. Civil service professionalization in Armenia, Azerbaijan, Georgia, Moldova and Ukraine [Электронный ресурс]. URL: <http://www.slideshare.net/SIGMA2013/tag/eni041114cs>
14. Labour Relations (Public Service) ILO Convention, 1978 (No. 151). Convention concerning Protection of the Right to Organise and Procedures for Determining Conditions of Employment in the Public Service (Entry into force: 25 Feb 1981).

РЕЗЮМЕ

В статье рассматриваются европейские стандарты государственной службы и необходимость их внедрения в Украине. Проанализировано нормативно-правовое и организационное обеспечение государственной службы, акцентируется внимание на первоочередных мероприятиях, которые будут способствовать развитию государственной службы в Украине.

Ключевые слова – государственное управление, реформа государственной службы, государственный служащий, европейские принципы государственного управления, европейские стандарты публичной службы.

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

ՅՈՒԼԻԱ ԼԻԽԱՉ

Հոդվածում քննության են առնվում քաղաքացիական ծառայության եվրոպական ստանդարտները և Ուկրաինայում դրանց ներդրման անհրաժեշտությունը: Վերլուծվում է քաղաքացիական ծառայության կանոնակարգմանը և կազմակերպմանը ցուցաբերված աջակցությունը: Ուշադրություն է հրավիրվում Ուկրաինայում քաղաքացիական ծառայության զարգացման և կատարելագործման առաջնահերթությունների վրա:

Բանալի բառեր – հանրային կառավարում, քաղաքացիական ծառայության բարեփոխումներ, քաղաքացիական ծառայող, հանրային կառավարման եվրոպական չափանիշներ, քաղաքացիական ծառայության եվրոպական ստանդարտներ:

EU-ORIENTED MODERNIZATION OF UKRAINE CIVIL SERVICE

YULIYA LYKHACH

This article considers the European standards of Civil Service and the necessity of their implementation in Ukraine. The legal and organizational provision of Civil Service in Ukraine is as well considered. The primary issues that would support the development of Civil Service in Ukraine are emphasized.

Key words – Public administration, Civil Service reform, civil servant, European principles of public administration, European standards of Civil Service.

ԷԹՆՈՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԼԴՄԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

ՌՈՐԲԵՐՏ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Գլոբալացման գործընթացով պայմանավորված՝ աշխարհում աննախադեպ ծավալներ են ստացել միգրացիոն հոսքերը: Դա հանգեցրել է նոր էթնիկական համայնապատկերի ձևավորմանը, որի բնութագրիչ առանձնահատկությունն է էթնիկական բազմազանությունը: Իսկ տեղեկատվահաղորդակցական նորագույն հնարավորությունները բազմապատկել են ցանցային կառավարման արդյունավետությունը: Այս պայմաններում հետաքրքրություն է ներկայացնում տարբեր կառույցների միջև ինքնաբերաբար, առանց միջամտությունների արտասահմանյան կապերի հաստատումը, ինչը բնութագրական է ոչ միայն արևմտյան հասարակությունների, այլև բոլոր տարածաշրջանների համար:

Ընդհանուր էթնիկ խմբից դուրս էթնիկական միավորի որևէ հատվածի գործունեությունը, հատկապես եթե այդ հատվածը ներքնապես համակարգված է, ենթադրում է հիմնական խմբի նմանատիպ կառույցների հետ կապերի հաստատման և ամրապնդման առավել նախընտրելի հավանականություն, քան այլ էթնիկ խմբի ներկայացուցիչների կողմից ստեղծված նման կառույցների հետ: Ժամանակակից հաղորդակցական միջոցներն ամրապնդում են այս ենթադրության կյանքի կոչման հնարավորությունները, քանի որ այլևս տարածությունը խոչընդոտ չի կարող հանդիսանալ: Ցանցային մեխանիզմները ևս նպաստում են պետությունների սահմաններից դուրս տարբեր կառույցների գործունեության իրականացմանը: Ցանցային մեխանիզմների գործարկումը միաժամանակ հանգեցնում է անհատի խնդիրների վերհանման մեխանիզմների արդիականացման: Արդյունքում հասարակության ներսում անհատները սեփական «Ես»-ը գիտակցաբար համադրում են հանրային «Մենք»-ի հետ: Հանրագումարում ձևավորվում են շահերի ու մոտեցումների հարաբերականորեն կայուն համակարգ ունեցող հանրություններ, որոնք միմյանց միջև հարաբերություններում հանդես են գալիս միասնական տեսակետներով՝ հարահուս արդիականացնելով սեփական ինքնությունը: Այս առումով առաջնային նշանակություն է ստացել էթնիկ տարբեր պատկանելությամբ խմբերի միջև իրա-

կան և վիրտուալ տարածություններում հարաբերությունների ձևավորման համատեքստում անվտանգության ապահովման հիմնախնդիրը:

Էթնոսի անվտանգության ապահովումը հիմնախնդիր է եղել բոլոր ժամանակներում: Այն ընդհանուր առմամբ ներառում է «...էթնոսի ինքնաբավությունը, նրա կարողությունը ինքնապաշտպանության բոլոր միջոցներով զինվելու, ստեղծելու էթնոսի բազմակողմանի զարգացման, նրա կենսունակության բացարձակ բարեհաջող պայմաններ՝ անկախ թվաքանակից»¹: Ներկա բազմաէթնիկ աշխարհում անվտանգության հիմնահարցին նման մոտեցումը տարբեր՝ համագործակցող և հակասություններ ունեցող էթնոսների միջև առաջ է քաշում լոկալ և գլոբալ տարածություններում մի շարք խնդրահարույց հարաբերություններ: Հաշվի առնելով, որ բազմաէթնիկ տարածաշրջանների զարգացման գործընթացը ընթանում է էթնիկական երկխոսությունների, համագործակցության և բախումների ներքո, կարելի է ասել, որ գլոբալ իրական և վիրտուալ տարածություններում էթնիկ անվտանգության ապահովումը բոլոր հասարակությունների համար անցնում արդիականացման գործընթացի գերակա խնդիր է:

Բազմաէթնիկ հասարակություններում այլ էթնիկ խմբի հետ հարաբերությունների հաստատումը հիմնվում է մշակութային, քաղաքական և այլ հարթություններում համատեղելիության պատկերացումների վրա: Էթնիկ խումբը կարող է իրեն պատկերացնել տվյալ հասարակությունում գերիշխող կամ այլ խմբի արժեքների նկատմամբ «...ոչ միայն տարբեր հարթություններում, այլև ճնշված»², ինչը կրեթի հակասությունների էթնիկականության հիմքով: Օրինակ՝ կարելի է նշել Իսրայելի քաղաքացի հանդիսացող արաբներին, ովքեր թեև օգտվում են հավասար քաղաքացիական իրավունքներից, սակայն իշխանական մարմինների քաղաքականության արդյունքում չի թույլատրվում բանակային ծառայության կամ աշխատանքի ուժային մարմիններում, ինչը բացատրվում է հրեաների կողմից արաբ էթնիկ պատկանելությամբ անձանց նկատմամբ անվստահությամբ³: Որպես հետևանք՝ Իսրայելում ապրող արաբ-

¹ **Григорян Э.** Как можно трактовать этническую безопасность?

<http://husisapail.wordpress.com/2013/03/20/эрнест-григорян-как-можно-трактовать/>


² **Marger M. N.**, Race and Ethnic Relations: American and Global Perspectives, Eighth Edition, Belmont: Wadsworth Cengage Learning, 2009, p. 472.

³ **Самуха С.** Часть проблемы или часть решения? Национальная безопасность и арабские граждане Израиля <http://ocw.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume3/article27.html>.

ներն իրենք են գնում հրեական մեծամասնության հետ ընդհարման՝ սեփական իրավունքների ոտնահարման հիմնական ելակետ համարելով արժեքային անհամատեղելիությունը: Իսրայելում էթնիկական հողի վրա ընդհուպ մինչև ռազմական բախումների առկայությունն այսօրինակ քաղաքականության կողմնակի դրսևորումներից մեկն է:

Մ. Մերջերը էթնիկական բախման առաջացման 5 գործոն է առանձնացնում (աղյուսակ 1), որոնք ձևավորում են համապատասխան դաշտ տարածայնությունները էթնիկական ընկալման վերածելու համար: Ինչպես տեսնում ենք, էթնիկ պլյուրալիզմի ձևավորումը առանց մշակութաքաղաքական արժեքային համակարգում համապատասխան փոխըմբռնման նախադրյալների բերում է տարբերությունների արտահայտման, որն էլ կարող է կերպափոխվել էթնիկ հակասության:

Գծագիր1. Էթնիկական բախման առաջացման գործոնները⁴



Գլոբալ իրական և վիրտուալ տարածություններում միգրացիոն բազմազան տեղաշարժերով պայմանավորված էթնիկ բազմազանությունն ինքնին

⁴ Marger M. N. Race and Ethnic Relations: American and Global Perspectives, Eighth Edition, Belmont: Wadsworth Cengage Learning, 2009, p. 490.

մարտահրավեր է տվյալ հարթությունում առկա էթնիկ խմբերի համար. «...Հնուտ խաղարկման կամ սոցիալական և/կամ քաղաքական պահանջի հետ համադրման դեպքում այս կամ այն էթնիկ խումբը կարող է լինել նոր սերնդի բախման, այսինքն՝ ցանցային պատերազմի խթանիչ»⁵: Սեփական անվտանգության նկատառումներից ելնելով՝ հաճախ միևնույն էթնիկ պատկանելության անհատները համախմբվում են և փորձում միասնական մոտեցում ցուցաբերել այդ մարտահրավերներին դիմագրավելու գործընթացում: Ձևավորվում են էթնիկական ցանցեր, որոնց շրջանակներում համատեղ գործելով՝ անհատները կամ կարողանում են արդյունավետ հակազդել բախումնաստեղծ երևույթներին, կամ նախադրյալներ են ստեղծում անմիջապես բախման գործընթացում սեփական դիրքերի ամրապնդման համար:

Գլոբալացվող աշխարհում ամեն մի ցանց ստեղծվում է մարդկանց որոշակի խմբի սեփական անվտանգության և շահերի բավարարման նկատառումներով: Ընդ որում ցանցերն ունենում են իրենց հանգույցները կամ կենտրոնները, որոնք հարաբերականորեն գերակա դիրք են զբաղեցնում ցանցի ներքին աստիճանակարգում⁶: Տնտեսական, քաղաքական, մշակութային, սոցիալական կամ այլ ցանցերը ձևավորվում են խմբերի և անհատների կողմից համագործակցային հարաբերությունների հաստատման հիմքով, ինքնաբերական կարգում են իրենց հարաբերությունները, որոնք զարգանում են թե՛ իրական և թե՛ վիրտուալ տարածություններում: Ցանցերը լինում են տարբեր կառուցվածքի՝ շղթայական, աստղաձև, բազմալիքային և այլն, որոնցից ամեն մեկն ունի իր առանձնահատկությունները, անվտանգության ապահովման գերակայություններն ու գործառման սկզբունքները:


Էթնիկական ցանցերը բազմալիքային են, որոնց դեպքում դերակատարների միջև գոյություն ունեն բազմակողմանի հարաբերություններ, առկա են մի շարք հանգուցային կետեր, ընդ որում այդ կետերը հարաբերվում են միմյանց հետ միջնորդավորված և չմիջնորդավորված այլ դերակատարներով: Ցանցակենտրոն կառուցվածքի դեպքում ցանցն ունենում է 1 կամ մի քանի հանգուցային կենտրոններ, որոնք թեև աստիճանակարգային համակարգին քնորոշ դերակատարում չունեն, սակայն համակարգման գործառույթներ են

⁵ Савин Л. Сетевая война. Введение в концепцию, Москва, Евразийское движение, 2011, с. 88.

⁶ Кастельс М. Информационная эпоха, экономика, общество, культура, Москва: ГУ ВШЭ, 2000.

կատարում: Ընդ որում արդեն գործող ցանցի ենթակառուցվածքների արդիականացումն ու նոր կառույցների ներգրավումը շարունակական գործընթացներ են, որոնք հարաբերականորեն անկախ են կենտրոնների աշխատանքի ուղղվածությունից: Անգամ նոր կառույցը կարող է ընդգրկվել առանց կենտրոնի հետ անմիջական հարաբերություն հաստատելու: Միջնորդավորված հարաբերությունները էթնիկական ցանցերում լրացուցիչ դժվարություններ են ստեղծում անվտանգության միջոցների իրականացման համար: Պահանջվում են ցանցում դերակատարների գիտակցության բարձր մակարդակ, ընդհանուր անվտանգության համակարգի ձևավորման շուրջ համախմբման կարողություն, երկխոսության և համագործակցության պատրաստակամություն:

Գծագիր 2. Բազմալիքային ցանցի 1 կենտրոնով ցանցակենտրոն կառուցվածքը



Համացանցը, սոցիալական ցանցերը, բլոգները, բջջային հաղորդակցությունը էթնոսի ցանցային համախմբման կարևորագույն հնարավորություններն են. «Ֆորումներն ու չատերը, չնայած արտաքին անլրջությանը, չերքեզ երիտասարդության շրջանում իրականացնում են կարևոր հաղորդակցական գործառույթ՝ նպաստելով երիտասարդ սերնդի էթնիկական համախմբմանը և

բարձր էթնիկական ինքնագիտակցմանը»⁷: Այս առումով խնդիր է առաջանում ամրապնդելու ցանցային անվտանգության մակարդակը՝ էթնիկ տարբեր խմբերի միջև համագործակցային և բախումնային հարաբերությունների կանոնակարգման, անորոշությունների ու քաոսի առաջացման միտումների կանխատեսման, կանխարգելման ու հակազդման միջոցներով: Էթնիկական ցանցի շրջանակներում ձևավորված տեղեկատվական համակարգերի անվտանգությունը էթնոսի տարբեր հատվածների միջև հաղորդակցման որակի լավարկման ու բնականոն արդիականացման գործընթացի ապահովման հիմնասյունն է. «Տեղեկատվական գրոհներից պաշտպանությունը շատ նմանություններ ունի հիվանդությունների, թմրամոլության և հանցագործությունների դեմ պայքարում հասարակության ջանքերի հետ»⁸:

Նկատի ունենալով, որ ցանցային հարաբերություններում դերակատարների անկանխատեսելի բազմություն է առկա, էթնոսի առանձին հատվածների գործողությունների համակարգումը և **վիրտուալ աշխարհ-իրականություն** անցման անվտանգության ամրապնդման հիմնախնդիրը պետք է փորձ կատարվի լուծել ցանցային հանգույցներում ռազմավարական ընտրանու սոցիալ-կրթական մակարդակի անընդհատ արդիականացման միջոցով. «Հաղորդակցության գլոբալ ցանցերում սոցիալական դերակատարների ցանցի կառուցվածքն այնքան բարդ է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ հիմնական որոշումները կայացնում է անհատը, նրա հնարավորությունները սահմանափակված են իշխանության բազմաթիվ այլ ցանցային կենտրոններով»⁹: Այդ առումով կարևորվում է հանգուցային հատվածներում տարբեր ընտրանիների որակական շարունակական համալրումը բաց հավաքագրման միջոցով: Ընդ որում հանգուցային հատվածները կարող են լինել ինչպես էթնոսի անդամների կողմից որպես ընդհանուր հայրենիք համարվող պետությունը (օրինակ՝ հայության համար Հայաստանի Հանրապետությունը, հրեաների համար Իսրայելը կամ չինացիների համար Չինաստանը), այնպես էլ այլ կառույցներ, որոնք

⁷ **Виханская Е.** «Черкесский» дискурс в Интернете: Поиски пути из прошлого в будущее (Аналитический обзор) /Под ред. Верченнова Л., Ефременко Д., Тищенко В., Социальные сети и виртуальные сетевые сообщества: Сб. науч. тр., РАН. ИНИОН. Центр социал. науч.-информ. исслед., Москва, 2013, с. 244.

⁸ **Савин Л.** Сетевая война. Введение в концепцию, Москва, Евразийское движение, 2011, с. 50.

⁹ Мануэль Кастельс о власти и коммуникации в сетевом обществе /Под ред. Верченнова Л., Ефременко Д., Тищенко В., Социальные сети и виртуальные сетевые сообщества: Сб. науч. тр., РАН. ИНИОН. Центр социал. науч.-информ. исслед., с. 67.

կարող են տեղակայված լինել տվյալ պետությունում կամ երկրագնդի այլ հատվածում և գործում են էթնոսի ընդհանուր շահերին համահունչ: Որպես այդպիսիք կարելի է նշել Կիլիկիայի կաթողիկոսությունը, Եվրոպայի հայկական միությունների ֆորումը՝ հայերի համար, հոլոքոստի թանգարան-ինստիտուտը ԱՄՆ-ում՝ հրեաների համար, Քրդական աշխատավորական կուսակցությունը՝ քրդերի համար և այլն: Քաղաքական ցանցերի դեպքում պետությունն անգամ այլևս միանշանակորեն միակ դերակատարը չէ. «Քաղաքական ցանցերի հայեցակարգը փոխում է պետության՝ որպես քաղաքական դերակատարի դիտարկման տեսանկյունը... ցանցային մոտեցման դեպքում պետությունը և նրա ինստիտուտները քաղաքական որոշումներ արտադրող դերակատարներից լոկ մեկն են...»¹⁰: Այնուամենայնիվ պետությունը ցանցային կառուցվածքում առանցքային դերակատարում է իրականացնում: Պետական կառավարման համակարգի արդիականացումն այս առումով գերակա նշանակություն է ստանում էթնոսի կողմից ցանցային համախմբման գործընթացում սեփական անվտանգության մակարդակի ամրապնդման նկատառումներով: Քանի որ ցանցային հարաբերություններում մեծ է հատկապես քաղաքացիական հասարակության կառույցների դերակատարումը, հետևաբար պետության և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն խնդիրների շուրջ համագործակցային լուծումների մշակման միջոցով: Որոշումների կայացման մեխանիզմների արդիականացումը ցանցային հարաբերություններում համախմբման որակի բարձրացման նախադրյալներ կարող է ստեղծել: Իսկ բարձր համախմբվածության մակարդակը կմեղմի անորոշությունների ազդեցությունն էթնոսի անվտանգության ապահովման ընդհանուր համակարգում: Մյուս կողմից պետք է նշել, որ ընդհանրապես մարդու անվտանգության ապահովման գործընթացում լայն կիրառություն են ստացել նորագույն սոցիալական ցանցերը. «Սոցիալական ցանցերը, ինչպիսին են Facebook-ը, Twitter-ը և տարածաշրջանային խոշորագույն այլ ցանցեր, ինչպես նաև բջջային հեռախոսները, արաբական հեղափոխությունների ընթացքում (իսկ մինչ այդ՝ հետխորհրդային տարածքում այսպես կոչված «նարնջագույն հեղափոխությունների» ժամանակ) ծառայել են որպես լայն իմաստով մարդու անվտանգության դիսկուրսի ձևավորման ու կուտակման

¹⁰ **Մարգարյան Մ.**, Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն», 2006, էջ 106-107:

հիանալի տեխնիկական աջակցություն»¹¹: Էթնիկական ցանցի ձևավորման ու գործունեության նախընտրելի ուղղվածություններից մեկը պետք է լինեն նմանատիպ տարածություններում սեփական արժեքային համակարգի հիման վրա ենթատարածությունների ձևավորումը և անկախ գտնվելու վայրից նոր անդամների շարունակական հավաքագրումն ու համահունչ կրթումը՝ հանուն անվտանգության մակարդակի ամրապնդման: Այսպիսով, կարելի է անգամ հաղթահարել քաղաքական մասնակցության ճգնաժամը, քանի որ սոցիալական ցանցերը ոչ միայն տեղեկատվության հաղորդիչներ են, այլև ընդունիչներ: Դրա շնորհիվ էթնոսի ընտրանին որոշումների նախապատրաստման գործընթացում արդեն կարող է հավաքագրել տարբեր կողմերի մի շարք մոտեցումներ, որոնք մի կողմից կլեգիտիմացնեն ընդունվող որոշումը, իսկ մյուս կողմից առավել կանխատեսելի կդարձնեն որոշման իրագործման արդյունքները:

Գլոբալ աշխարհում էթնոսի գոյատևման և աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում առավել շահավետ դիրքերի զբաղեցման նկատառումներով ցանցային տեխնոլոգիաների կիրառումը ժամանակի հրամայականն է: Ցանցերի ձևավորման ու գործառման միջոցով էթնոսի ամեն մի անդամ տարբեր տարածություններում հնարավորություն է ստանում գիտակցելու սեփական արժեքային համակարգն ու արդիականանալու այդ դաշտում: Նա իր նպաստն է բերում ցանցում համախմբման ընդհանուր գործընթացին, սակայն մյուս կողմից ավելացնում է անորոշությունների մակարդակը: Այս առումով էթնիկական ցանցի անվտանգության ապահովումը տեղեկատվական ժամանակակից միջոցների կիրառմամբ էթնոազգային հարաբերությունների ու հասարակության զարգացման գործընթացների անվտանգության առանցքային բաղադրիչն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Григорян Э. Как можно трактовать этническую безопасность?
<http://husisapail.wordpress.com/2013/03/20/эриест-григорян-как-можно-трактовать/>
2. Marger M. N., Race and Ethnic Relations: American and Global Perspectives, Eighth Edition, Belmont: Wadsworth Cengage Learning, 2009.

¹¹ **Atanesyan A.**, Human Security Issues in the Context of the Current Social Movements in the Arab World/ Bulletin of Yerevan State University, 2011, N 134.5, p. 29.

3. Самуха С. Часть проблемы или часть решения? Национальная безопасность и арабские граждане Израиля <http://ocw.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume3/article27.html>
4. Савин Л. Сетевая война. Введение в концепцию, М., Евразийское движение, 2011.
5. Кастельс М. Информационная эпоха, экономика, общество, культура, М.: ГУ ВШЭ, 2000.
6. Виханская Е. «Черкесский» дискурс в Интернете: Поиски пути из прошлого в будущее. (Аналитический обзор)/Под ред. Верченнова Л., Ефременко Д., Тищенко В., Социальные сети и виртуальные сетевые сообщества: Сб. науч. тр., РАН. ИНИОН. Центр социал. науч.-информ. исслед., М., 2013.
7. Мануэль Кастельс о власти и коммуникации в сетевом обществе/Под ред. Верченнова Л., Ефременко Д., Тищенко В., Социальные сети и виртуальные сетевые сообщества: Сб. науч. тр., РАН. ИНИОН. Центр социал. науч.-информ. исслед., М., 2013.
8. **Մարգարյան Մ.**, Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն», 2006: Margaryan M., Qaxaqakan yntranin ev joxovrdavarakan ancmann himnaxndirneri Hayastani Hanrapetutyunum, Er.: “Petakan carayutyun”, 2006.
9. Atanesyan A., Human Security Issues in the Context of the Current Social Movements in the Arab World/Bulletin of Yerevan State University, 2011, N 134.5.

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից աշխարհում էթնիկ խմբերի ու հայրենիքի միջև հարաբերությունները զարգանում են ցանցային տրամաբանությամբ: Այդ պատճառով էթնոսի անվտանգության ապահովման համակարգում ընդգծվել է ցանցային գործընթացների դերը: Տեղեկատվահաղորդակցական ժամանակակից միջոցների կիրառմամբ էթնիկական ցանցի անվտանգության մակարդակի ամրապնդումը գերակա նշանակություն է ստացել էթնոսի համախմբման համատեքստում: Ցանցի հանգուցային հատվածներում կրթական որակի բարելավումը, որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը, արագ արձագանքման ու փոխօգնության հնարավորությունների ստեղծումը և մի շարք այլ միջոցառումներ են անհրաժեշտ այս նպատակի իրականացման համար:

Բանալի բառեր – էթնիկական ցանց, համախմբում, ցանցի անվտանգություն, էթնիկ բախում:

СЕТЕВАЯ ПРИРОДА УКРЕПЛЕНИЯ БЕЗОПАСНОСТИ ЭТНОСА

РОБЕРТ ГЕВОНДЯН

В современном мире отношения между этническими группами и родиной развиваются по сетевой логике. По этой причине в общей системе обеспечения безопасности этноса подчеркнута роль сетевых процессов. В контексте консолидации этноса исключительную важность приобретает укрепление уровня безопасности этнической сети благодаря использованию современных информационно-технологических возможностей. Для достижения этой цели необходимо в узлах сетей проводить ряд мер, обеспечивающих улучшение качества образования, прозрачность процесса принятия решений, создание возможностей быстрого реагирования и взаимной помощи и т.д.

Ключевые слова – этническая сеть, консолидация, безопасность сети, этнический конфликт.

THE NETWORK NATURE OF ETHNOS SECURITY STRENGTHENING

ROBERT GHEVONDYAN

Relationships between ethnic groups and their motherlands are currently developing according to the network logic. The role of network processes in ensuring the safety of ethnos is thus emphasized.

The strengthening of the level of ethnic network's security by applying modern informational and technological facilities in the context of ethnos consolidation has acquired foremost importance. To attain this objective, it is necessary to improve the quality of education, ensure the transparency of decision-making processes, and create possibilities for rapid-response and mutual assistance along with some other activities in the nodes of the network.

Key words – ethnic network, consolidation, network security, ethnic conflict.

ԷՄՊԱԹԻԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴԻԻՉ (դիվանագիտական-հոգեբանական վերլուծություն)

ԱՐՄԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

«Էմպաթիան» (հունարեն՝ Empathos) նշանակում է ուժեղ, խոր տառապանքի աստիճանի հասնող զգացմունք, երկու անձնավորության միջև առաջ եկող հատուկ հարաբերություններ: Այս եզրը շրջանառության մեջ է դրել Ջիզմունդ Ֆրոյդը, որի օգնությամբ անվանի հոգեբանը նկարագրում է մարդու՝ իրեն ուրիշի տեղը դնելու և ապրումակցելու հատկություն: Էմպաթիայի խնդրով հետաքրքրվել են հոգեբանական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ՝ հոգեվերլուծողները, գեշտալտհոգեբանության ներկայացուցիչները, իմացական (կոգնիտիվ) հոգեբանները, սոցիալական հոգեբանության և անձի հոգեբանության մասնագետները: Նման հետաքրքրությունը պատահական չէ, քանի որ էմպաթիան այն մեխանիզմն է, որը նպաստում է մարդկանց միջև հուզական կապերի առաջացմանը, հետևաբար՝ հաղորդակցության կայացմանն ու զարգացմանը: Վերլուծելով էմպաթիայի երևույթը էմոցիոնալ՝ զգայական տեսանկյունից՝ Ի. Անդրեևան գտնում է, որ « էմպաթիայի ամբողջական գործընթացը բաղկացած է շղթայի երեք օղակներից, որոնք են ապրումակցումը, կարեկցանքը և ներքին աջակցությունը: Յուրաքանչյուր օղակ խաղում է իր դերը: Ապրումակցումը, որի հիմքում ընկած է իդենտիֆիկացիան՝ նույնացումը, դիմացինի ապրումների արձագանքն է: Կարեկցանքի երևան գալը ենթադրում է կոգնիտիվ՝ իմացական ուղղվածություն այն իրադրությունում, որն իր հերթին ակտիվացնում է տարբեր տիպի աջակցություններ, նախ՝ ներքին, հետո, որոշ պայմաններում, նաև արտաքին: Այլ խոսքով, էմպաթիան ենթադրում է զարգացած ունակությունների առակայություն դեպի տարբեր էմոցիաներ և ինֆորմացիայի մշակում, որոնք պարունակվում են այդ էմոցիաների մեջ»¹:

Իսկ ամերիկյան հայտնի սոցիալական հոգեբան Ս. Աշը 1952 թվականին ներկայացրեց նշված շղթայի կրճատված տարբերակը՝ առաջարկելով

¹ **Андреева И.Н.** Азбука эмоционального интеллекта, Санкт-Петербург, БХВ-Петербург, 2012, с. 172.

առանձնացնել էմպաթիայի երկու տեսակ՝ ապրումակցում և կարեկցանք (ցավակցություն), որը, մեր կարծիքով, ընդունելի է նաև դիվանագիտության ոլորտում: Նախ, ապրումակցման մասին: Այսպես, Ա անհատի ապրումակցումը Բ-ի հետ նշանակում է հետևյալը. Ա-ն հետևում է Բ-ի վարքին, ընկալում նրա ապրումների արտաքին դրսևորումները ու, հիմնականում, ենթագիտակցորեն, այսինքն՝ առանց իրեն հաշիվ տալու մեկնաբանում է այդ ազդանշանները և սկսում է ապրել այնպիսի հույզեր ու հոգեվիճակներ, ինչպիսիք ապրում է նրա սոցիալական ընկալման օբյեկտը: Նրանց միջև առաջ է գալիս հատուկ տիպի հուզական կապ, և Բ-ն Ա-ի համար դառնում է էմպաթիայի օբյեկտ: Իսկ ինքն այս կապի մեջ հանդես է գալիս որպես էմպաթիայի սուբյեկտ:

Էմպաթիայի երկրորդ տեսակը, ըստ Ս. Աշի, կարեկցանքն է (ցավակցություն), երևույթ, երբ սուբյեկտն ընկալում է օբյեկտին, հասկանում է նրա վիճակն ու ապրումները, բայց դրան զուգահեռ նա ունի իր՝ սեփական ապրումները, որոնք նրա համար առաջնային են:

Էմպաթիայի այս երկու տեսակների գոյության և տարբերությունների հստակ ըմբռնումը կարևոր նշանակություն ունի սոցիալական փոխներգործության, այդ թվում նաև դիվանագիտական հաղորդակցության մեջ մտած մարդկանց վարքը հասկանալու համար: Ընդ որում՝ զարգացման ընթացքում, մի ամբողջ շարք ժառանգական ու սոցիալական գործոններից կախված, ձևավորվում են էմպաթիայի ունակության տարբեր մակարդակներ ունեցող անձնավորություններ: Սոցիալական հոգեբանության բնագավառում ներկայումս առանձնացնում են հատուկ՝ էմպաթիայի բարձր աստիճան ունեցող անձնավորության տիպ: Դա այնպիսի մարդ է, որը հեշտությամբ է հասկանում ուրիշի հուզական վիճակը, ապրումակցում է նրան կամ միայն կարեկցում ու ցավակցում՝ չմոռանալով իր ապրումները: Այս տիպի մարդիկ, ապրումակցելով հանդերձ, մնում են պասսիվ: Դիմացինին օգնելու մոտիվացիան նրանցում կամ թույլ է, կամ բացակայում է: Նրանք սոցիալական օգտակար, օժանդակող գործողությունների չեն դիմում: Դրանք հուզական՝ սենտիմենտալ անձնավորություններ են, ովքեր հաճույք են զգում նման ապրումներից, սակայն հրաժարվում են դժվար իրադրության մեջ հայտնված մարդուն օգնության ձեռք մեկնելուց²: Մինչդեռ կան ուրիշին անշահախնդիր օգնություն ցույց տալու պատրաստ մարդիկ, որոնց համար էմպաթիան այլասիրության ներքին

² См'и Ильин Е. П. Эмоции и чувства. СПб.: «Питер», 2007, с. 395.

հոգեբանական նախադրյալն է, որը կարևոր նշանակություն է ստանում դիվանագիտական հարաբերություններում³: Էմպաթիայի հիմնախնդրի որոշ ուսումնասիրողների կողմից առաջ է քաշվում այն տեսակետը, որ դիվանագետը պետք է ապրումակցի բոլոր նրանց, ում հետ հաղորդակցվում է՝ անգամ քաղաքական հակառակորդներին, առանց որի բանակցային որևէ գործընթաց չի կարող արդյունք ունենալ: Մեր կարծիքով այն դիվանագետը, ով այդպիսի սկզբունքով է ղեկավարվում, աշխատում է մրցակցի օգտին և կարող է տանուլ տալ: Այնպես որ դիվանագետների գործունեության մեջ էմպաթիայի դերը ճիշտ հասկանալուն կարող է մեծապես նպաստել Ս. Աշի արդեն նշված կոնցեպցիան էմպաթիայի երկու տեսակների՝ ապրումակցման և կարեկցության մասին:

Էմպաթիան որպես մարդկային հաղորդակցության կարևոր միջոց հոգեբանները սերտորեն կապում են ալեքսիտիմիայի հետ (հունարենից թարգմանվում է «զգացմունք առանց բառի»), որը շրջանառության մեջ է դրել Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, անվանի հոգեբույժ Պիտեր Սիֆնետսը: Ալեքսիտիմիան նրա կարծիքով հոգեկան խանգարում է, որն ընկած է անհատի ունակությունները սահմանափակող և սեփական զգացմունքներն արգելափակող հոգեամանտիկ հիվանդությունների հիմքում: Ալեքսիտիմիայով տառապողներն անընդմեջ նկարագրում են իրենց ֆիզիկական զգացմունքները, իսկ ներքին ապրումներն արտահայտում են գրգռվածություն, ծանծրույթ, ունայնություն, հոգնածություն և լարվածություն եզրերով: «Նրանց աֆեկտները ադեկվատ չեն, և նրանք դժվար են հնչեցնում իրենց զգացմունքները: Ալեքսիտիմիկներին բնորոշ են ոչ զարգացած երևակայությունը, պոռթկումային միտումները և միջանձնային կապերի աղքատությունը: Նրանց կյանքում գերակայում է գործողությունը: Զրույցը նրանց հետ սովորաբար ուղեկցվում է ծանծրույթի զգացողությամբ և շփումների անիմաստությամբ»⁴ :

Այսպիսով, ալեքսիտիմիան անձի հատուկ վիճակ է, երբ նա չի գիտակցում իր զգացմունքները, երբ խոսքային շփման մեջ է շրջապատի հետ, չի կարողանում արտահայտել ապրումները ժեստերի և դիմախաղի միջոցով: Նա չի ընկալում նաև դիմացինի զգացմունքները: Բժիշկներն ալեքսիտիմիայի ախտորոշումը չեն կարող որոշել, քանի որ նման հիվանդություն գոյություն չունի:

³ Տե՛ս **Նավասարդյան Ա.**, Դիվանագիտություն, Երևան, «Մուլնի», 2010:

⁴ **Былкина Н.Д.** Алекситимия (аналитический обзор зарубежных исследований) // Вестник Московского ун-та. Сер. 14. Психология. 1995, № 1, с. 43-53.

Սակայն մի շարք հեղինակների կարծիքով «զգացմունքն առանց խոսքի» կարող է հանդիպել նաև ավեքսիտիմիայով չտառապող, նորմալ անձանց մոտ: Այս հանգամանքը ոչ միայն բացառում է էմպաթիայի առաջացման հնարավորությունը բանակցային դիվանագիտության գործընթացում, այլև ընդհանրապես հաղորդակցության նորմալ զարգացումը բոլոր մակարդակներում: Ի դեպ, լինում են դեպքեր, երբ փորձառու բանակցողները, առաջնորդվելով տարբեր մոտիվներով, «խաղում են» ավեքսիտիմիա, ձևացնելով ոչ այնքան իրենց զգացմունքների և մտքերի արտահայտման արգելափակում, որքան դիմացինին չհասկանալու և չընկալելու իմիտացիա, որը, բնականաբար, տապալում է հաղորդակցության, հատկապես բանակցությունների գործընթացը, մտցնում դրանք փակուղի: Բանակցությունը վերածվում է մենախոսության կամ երկխոսության խուլ-համրերի հետ:

Հարկ է նշել նաև, որ հոգեբանական վերջին նվաճումների ենթատեքստում ավելի հաճախ է հնչում ոչ վերբալ (ժեստերի կամ մարմնի լեզվի) հաղորդակցության դերը էմպաթիայի գործընթացում: Ամերիկացի հետազոտող Ջեյմս Բորգը, օրինակ, գտնում է, որ մարդկանց հաղորդակցությունը, այդ թվում նաև էմպաթիայի գործընթացը տեղի են ունենում զգացմունքների «երեք ասպեկտների միջոցով՝ ապրումակցում, զգայունություն, դյուրմբռնում»⁵: Սակայն դիմացինի այդ զգացմունքներին անձը կարող է հասու լինել միայն ոչ վերբալ՝ ոչ խոսքային հաղորդակցության օգնությամբ: Ջ. Բորգի կարծիքով «մարդիկ հազվադեպ են բացահայտում իրենց ապրումները միայն խոսքերով, և մենք ընկալում ենք նրանց զգացմունքները հիմնականում ժեստերի, դիմախաղի և ինտոնացիայի միջոցով»⁶:

Այժմ քննարկենք, թե ինչպիսին պետք է լինի դիվանագետների դերային վարքը էմպաթիայի գործընթացում, հատկապես ապրումակցման և կարեկցանքի երկվության (ամբիվալենտ) համատեքստում: Մեր կարծիքով այն դիվանագետը, ով աշխատում է իր երկրի օգտին (իսկ այլ կերպ չի էլ կարող լինել), անհրաժեշտ է, որ գործընկերոջ հետ ունենա ոչ թե հոգեբանական նույնացում, որը հնարավոր է միայն նրա հույզերի և զգացմունքների հետ ապրումակցում ունենալու դեպքում, այլ կարեկցանք, ընդ որում՝ դրա այն տեսակը, որն առավելագույնս ռացիոնալ է, այսինքն՝ ազատ է սուբյեկտիվիզմից և սենտիմենտալությունից: Եթե կարեկցող, բայց և սթափ մտածող մարդու հոգե-

⁵ **Борг Джеймс**, Язык тела, Минск, «Попурри», 2013, с. 25.

⁶ Там же.

կանում նույնիսկ ծագում է ապրումակցում, այն լինում է թույլ և ընդհանուր հուզական ֆոնի բնույթ է կրում: Իսկ երբ մենք կարեկցում ենք ուրիշին, ապա ի վիճակի ենք լինում օգնելու նրան, եթե անհրաժեշտ ենք համարում: Բայց կարող ենք նաև մերժել, եթե այդ են պահանջում մեր պետական շահերը: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բոլոր դեպքերում էմպաթիան ուրիշին օգնելու և միջանձնային ազդեցիկ ճնշելու փորձված միջոցներից մեկն է⁷: Այս ամենով հանդերձ դժվար է գերազնահատել էմպաթիայի դերը դիվանագիտական շփումների և գրույցների ընթացքում, որը գիտակցել են դեռևս անտիկ մտածողները: Դիվանագետների շրջանում մեծամասնություն են կազմում կրթված և նուրբ զգացողությամբ օժտված մարդիկ, ովքեր վատ չեն հասկանում այլ դիվանագետների հետ գրուցելու ընթացքում էմպաթիայի խաղացած դերը: Նրանք ձգտում են հնարավորին չափով հաշվի առնել գրուցակցի տեսակետը, փորձում են տեղի ունեցող իրադարձությունները դիտել նաև նրանց տեսանկյունից, «նրանց աչքերով»՝ առաջնորդվելով Սոկրատեսի «<Հասկանալ, որ ուրիշը դու ես>» խոսքերով: Դիվանագիտական բանակցությունները կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ կողմերը հրաժարվում են միայն իրենց սկզբունքներով ղեկավարվելուց: Զրույցի ընթացքում, թափանցելով դիմացինի ապրումների աշխարհը, դուք այնուհետև պետք է հասկացնեք նրան, որ իր մտքերն ու շահերը ձեզ համար նորություն են, հետաքրքրություն են ներկայացնում, կարևոր են: Դրանից հետո սեփական մտքերն այնպես շարադրել, որպեսզի նրանից կարողանաք լսել այն, ինչ կցանկանայիք, որ նա ասեր: Դիվանագիտական այս տրյուկից, որը կոչվում է տրիանգուլյացիա և դիվանագիտական արվեստի լավագույն կոմբինացիաներից մեկն է, ժամանակին օգտվել է Սոկրատեսը:

Այլ պետությունների ներկայացուցիչների հետ գրուցելիս և բանակցություններ վարելիս դիվանագետի հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի սեփական ինքնագիտակցության այնպիսի մակարդակի ապահովումը, որի դեպքում էմպաթիան դուրս չի գալիս թույլատրելիի սահմաններից, որից այն կողմ նա, հանձնվելով էմպաթիայի ազդեցությանը, այս կամ այն չափով անցնում է մրցակցի դիրքին և սկսում է պաշտպանել նրա տեսակետը, իսկ դա նշանակում է նաև նրա պետության շահերը: Որքան էլ դիվանագետը դրական պատկերացում ունենա իր աշխատած երկրի, նրա գաղափարախոսության և քաղաքականության մասին, պետք է զգա այն սահմանը, որը բաժանում է

⁷ Տե՛ս **Ильин Е. П.** Эмоции и чувства. 2-е издание, СПб., «Питер», 2007, с. 389.

սեփական պետության շահերն այն պետության շահերից, որի տարածքում նա գտնվում է: Հենց այս պատճառով էլ շարադրելով և ընդունելով էմպաթիայի մասին ժամանակակից պատկերացումները՝ մենք գտնում ենք, որ արդյունավետ աշխատելու և սեփական անկախությունն ապահովելու նպատակով դիվանագետը հնարավորին չափով պետք է հրաժարվի ապրումակցումից և ընտրի կարեկցելու ռազմավարությունը: Էմպաթիայի և նրա հետ կապված հարմարվողականության մյուս ծայրին է գտնվում դիվանագետի կանխակալ կարծիքը զրուցակցի, բանակցային կողմի կամ իրեն հյուրընկալած երկրի ներքին և արտաքին քաղաքականության նկատմամբ, որն անվանվում է հարմարվողականության հակաթեզ՝ հակավարկած: Կանխակալ կարծիքով տառապող դեսպանի համար իր աշխատած երկրում ամեն ինչ վատ է՝ եղանակից մինչև վարչակարգ: Ավելորդ է ասել, որ նման մտածելակերպ և դիրքորոշում ունեցող դեսպանը հազիվ թե նպաստի իր և տվյալ երկրի բարեկամական հարաբերությունների զարգացմանը: Կանխակալ, գնահատման բացասական սինդրոմով առաջին հերթին տառապում են քաղաքական և գաղափարախոսական տարբեր բևեռներում տեղակայված հասարակարգերի քաղաքական գործիչները և դիվանագետները: Այս հանգամանքը պետք է նկատի ունենան փոքր պետությունների դիվանագետները մեծ երկրների հետ իրենց հարաբերությունները զարգացնելիս: Կարևոր է գիտակցել, որ այդ գործընթացում որոշիչ դեր են խաղում ոչ միայն կողմերի ներուժերի և միջազգային ասպարեզում դերերի անհամաչափությունը՝ ասիմետրիան, այլև պակաս կարևոր չեն նրանց քաղաքական-գաղափարախոսական դիրքորոշումները և արժեքային համակարգերը: Այս հարցում փոքր երկրների համար կարող են օրինակ ծառայել գերտերությունների հարաբերությունները սառը պատերազմի տարիներին և այսօր: Խորհրդային Միությունը և Արևմուտքը երբեք չեն դադարեցրել քաղաքական-գաղափարախոսական առճակատումը: Բավական է միայն հիշել Նիկիտա Խրուշչովի դիվանագիտական «մարզաբիրտները», երբ նա հայտարարում էր, որ թաղելու է կապիտալիզմը և կամ կոշիկով թմբկահարում էր ՄԱԿ-ի ամբիոնը, իսկ Ռոնալդ Ռեյգանը Խորհրդային Միությունը համարում էր չարյաց կայսրություն: Ի՞նչ էմպաթիայի կամ փոխըմբռնման ու հարգանքի մասին կարող է խոսք լինել նման անողորմ պայքարի պայմաններում: Սակայն չպետք է կարծել, որ քաղաքական-դիվանագիտական հակամարտությունը հատուկ է միայն հակոտնյա հասարակական-քաղաքական հասարակարգերին, և որ նույն ճամբարի երկրների ղեկավարները բանակցում են զուտ հաճոյախոսությունների մթնոլորտում: Ամենևին: Վիկտոր

Պոպովը ներկայացնում է Ֆրանսիայի նախագահ Ժիսկար դ' Էստենի և Անգլիայի պրեմիեր մինիստր Մարգրետ Թեթչերի, մեղմ ասած, ոչ բարեկամական հարաբերությունները: «Նրա (Մ.Թեթչերի, Ա.Ն.) համար գրուցակիցը որպես այդպիսին գոյություն չունի: Նա պատրաստ է խոսել նրա հետ միայն այն դեպքում, երբ վերջինս լրիվ համամիտ է իր տեսակետին: Նրա մտքով անգամ չի անցնում, որ գրուցակցի խոսքերում կարող է հանդիպել որևէ փաստարկի, որը հնարավոր է ընդունել ի գիտություն»: Արդյունքում՝ Ժիսկար դ' Էստենը առաջին իսկ հայացքից հակակրանք տածեց Թեթչերի նկատմամբ և անվանեց նրան «խանութպանի դուստր»⁸:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հեղինակն այս հոդվածում անդրադառնում է դիվանագիտական հոգեբանության գրեթե չուսումնասիրված թեմաներից մեկին՝ էմպաթիայի խնդրին, որը կարևոր նշանակություն ունի դիվանագիտական հարաբերությունների համար ընդհանրապես և բանակցային գործընթացի համար մասնավորապես: Շոշափվում է ամերիկյան հոգեբան Ս. Աշի առաջ քաշած միանգամայն նոր տեսությունը, համաձայն որի էմպաթիան բաժանվում է երկու զգացմունքի՝ ապրումակցման և կարեկցանքի (ցավակցության): Հեղինակը համաձայն է ամերիկացի հոգեբանի այն կանխադրույթի հետ, որ դիվանագիտական հաղորդակցության ժամանակ նախընտրելի է լինել ոչ թե ապրումակցողի, ինչպես խորհուրդ էր տրվում մինչև վերջերս, այլ կարեկցողի դերում: Նոր տեսության հիման վրա ապացուցվում է, որ ապրումակցելու դեպքում դիվանագետը կարող է կորցնել իր անկանխակալ վերլուծելու ունակությունը և տանուլ տալ: Մինչդեռ կարեկցելու պարագայում նա ի վիճակի է հնարավորության սահմաններում ընդառաջ գնալ բանակցային մյուս կողմին, որը կնպաստի համաձայնության գալուն, սակայն երբեք չի վնասի իր երկրի ազգային և պետական շահերին:

Բանալի բառեր - էմպաթիա, ապրումակցում, կարեկցանք (ցավակցություն), ալեքսիտիմիա, անկանխակալ վերլուծելու ունակություն, ընդառաջ գնալ բանակցային մյուս կողմին, երկրի ազգային և պետական շահեր:

⁸ **Попов В.И.** Маргарет Тэтчер: человек и политик, Москва, 1991, с. 137.

ЭМПАТИЯ – ВАЖНЫЙ КОММУНИКАТИВНЫЙ КОМПОНЕНТ (дипломатический-психологический анализ)

АРМАН НАВАСАРДЯН

В настоящей статье автор обращается к одной из практически не изученных тем дипломатической психологии – эмпатии, имеющей важное значение для дипломатических отношений в целом и переговорного процесса в частности. В статье рассматривается совершенно новая теория американского психолога С.Аша, согласно которой эмпатия делится на два чувства – сопереживания и сочувствия (соболезнования). Автор согласен с постулатом американского ученого, в соответствии с которым в дипломатическом общении предпочтительнее выступать в роли сочувствующего, а не сопереживающего, как советовали до недавнего времени. На основе новой теории автор доказывает, что при сопереживании дипломат может утратить способность к беспристрастному анализу и потерпеть неудачу. Между тем при сочувствии он сможет в пределах возможного пойти навстречу другой стороне переговоров, что будет способствовать достижению согласия, но ни в коей мере не ущемит национальные и государственные интересы его страны.

Ключевые слова – эмпатия, сопереживание, сочувствие (соболезнование), алекситимия, способность к беспристрастному анализу, идти навстречу другой стороне переговоров, национальные и государственные интересы.

EMPATHY - AN IMPORTANT COMMUNICATIVE COMPONENT (DIPLOMATIC AND PSYCHOLOGICAL ANALYSIS)

ARMAN NAVASARDYAN

In this article the author studies one of the virtually unstudied themes of the diplomatic psychology–empathy. It has a very important significance for diplomatic relations in general, and for negotiation processes in particular. This article considers the new theory of S. Asha, an American psychologist, Empathy, according to this theory is divided into two emotions – sympathy and compassion. Navasardyan agrees with the American psychologist's postulate that it is preferable,

especially in diplomatic negotiations to be a sympathetic and not a compassionate person, as had been advised until recently.

With the help of this new theory, it is proved that a diplomat in case of experiencing empathy while negotiating may lose the ability of impartial analysis and probably fail to reach an agreement with the other party. On the other hand, if a diplomat experiences or enacts sympathy he would be able to go as far as possible towards the other party, which will facilitate reaching an agreement with them, never undermining the national and governmental interests of his country.

Key words - Empathy, sympathy, compassion, alexithymia, ability of impartial analysis, to go as far as possible towards the other side of the party, national and governmental interests of the state.

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ**

ԱՖՍԱՆԵՀ ՇԻՐԱՆԻ (ԻՐԱՆ)

Միջազգային կոնֆլիկտների բնույթից կախված՝ կարգավորման գործընթացը ծավալվում է շատ երկար ժամանակահատվածում: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ընթացքը որոշ ելևէջներից հետո 2009թ. ցյուրիխյան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը չավարտվելու հետևանքով **կոնֆլիկտի կարգավորման գործընթացը իրագործման փուլից նախորդ փուլ է մղվել՝ վերադառնալով բանակցային փուլ**, որը նշանակում է կողմերի հիմնական դիրքորոշումների և հակասությունների քննարկման փուլ:

Հայ-թուրքական հակամարտության պարագայում, չնայած կողմերի ուշագրավ դրական մոտեցմանը, ինչպես նաև միջազգային մասշտաբով թափված ջանքերին, կոնֆլիկտի լուծումը հաջողությամբ չպսակվեց՝ կարծեք թե հուշարկելով այն գաղափարը, որ կոնֆլիկտը չի կարող վերանալ: Նման իրավիճակներից ելնելով՝ նպատակահարմար է դիմել կոնֆլիկտի փոխակերպման կամ տրանսֆորմացիայի մոտեցմանը, որի համաձայն՝ որոշակի պայմաններում հակամարտությունը կարող է վերափոխվել և տեղի տալ դրական գործառույթների:

Կոնֆլիկտի փոխակերպման պրակտիկայում ընթացիկ զարգացումները տեղի են ունենում հետևյալ չորս հիմնական մակարդակներում.

- պետական և միջկառավարական ներկայացուցիչների,
- զարգացող գործակալությունների և մարդասիրական կազմակերպությունների,
- հասարակական կազմակերպությունների (NGOs), որոնք առնչվում են հակամարտությունների կանխմանը և փոխակերպմանը,
- կոնֆլիկտ ներգրավված կողմերի և հասարակության այլ տուժած խմբերի:

Կոնֆլիկտների ձևափոխումը կամ փոխակերպումը այն գործընթացն է, որում հակամարտությունները վերածվում են խաղաղ արդյունքների: Այն

տարբերվում է հակամարտությունների կարգավորման (conflict resolution)¹ և կառավարման (conflict management)² մոտեցումներից:

Ժամանակակից հակամարտությունները պահանջում են ավելին, քան կողմերի դիրքորոշումների փոխակերպումն է, և նույնիսկ տանում են դեպի հաղթանակ-հաղթանակ արդյունքի: Կոնֆլիկտի փոխակերպումն իրականում հակամարտությունների, հարաբերությունների, շահերի և դատողությունների փոխակերպումն է³, արդյունավետ ելակետային լուծում հակամարտությունների հաղթահարման համար:

Ինչպես նշվեց, **կոնֆլիկտների փոխակերպման մոտեցումը** տարբերվում է հակամարտությունների կառավարումից և կարգավորումից: Այլ կերպ ասած՝ հակամարտության փոխակերպումն ընդգրկում է հարաբերությունների փոխակերպումներ, սակայն **հակամարտությունների կառավարման մոտեցումը** ձգտում է պարզապես կառավարել հակամարտությունը: Հատկանշական է, որ **հակամարտության լուծման** կամ կարգավորման (conflict resolution) մոտեցումը փորձում է հակամարտության կողմերին զրոյական արդյունքով խաղի (zero-sum) դիրքերից հասցնել դրական արդյունքների, անշուշտ, հաճախ արտաքին դերակատարների օգնությամբ:

Կոնֆլիկտի փոխակերպման մոտեցման կողմնակիցներ են հատկապես եվրոպացի մասնագետները, իսկ կոնֆլիկտի լուծման մոտեցման կողմնակից-

¹ **Miall Hugh**, Conflict Transformation: A Multi-Dimensional Task, 2004, p. 4. Available at: http://www.berghof-handbook.net/uploads/download/miall_handbook.pdf.

² ‘Conflict management is the positive and constructive handling of different and divergence. Rather than advocating methods for removing conflict, [it] addresses the more realistic question of managing conflict: how to deal with in a constructive way, how to bring opposing sides together in a cooperative process, how to design a practical, achievable, cooperative system for the constructive management of difference (Bloomfield and Reilly 1998, “The Changing Nature of Conflict and Conflict Management”, in Peter Harris and Ben Reilly (ed.), op. cit, 18).

³ «Conflict transformation is a comprehensive approach, addressing a range of dimensions (micro- to macro- issues, local to global levels, grassroots to elite actors, short-term to long-term timescales). It aims to develop capacity and to support structural change, rather than to facilitate outcomes or deliver settlements. It seeks to engage with conflict at the pre-violence and post- violence phases, and with the causes and consequences of violent conflict, which usually extend beyond the site of fighting.” [Miall Hugh, Conflict Transformation: A Multi-Dimensional Task, 2004, 17. Available at: http://www.berghof-handbook.net/uploads/download/miall_handbook.pdf].

ներն առավելապես ամերիկյան դպրոցի ներկայացուցիչներ են:⁴

Համաձայն որոշ տեսաբանների՝ միաբևեռ-ավտորիտար մոդելն է⁵, որտեղ ԱՄՆ-ը իր կամքով և հարադրաբար կգբաղվի «աշխարհի կառուցվածքով»՝ նկատի ունենալով սեփական ազգային շահերն ու աշխարհընկալումը⁶:

Ամերիկյան դպրոցի մոտեցումը հակամարտությունների կառավարման հարցում հենվում է զարգացած տեխնոլոգիաների, հզոր տեղեկատվական և հաղորդակցական համակարգի ու ռազմական հնարավորությունների վրա: Հակամարտության կառավարումն ամերիկյան դպրոցում կենտրոնացված է ուժի գործոնի վրա: Հյուսիսատլանտյան դաշինքը համարվում է ԱՄՆ-ի կարևոր գործոններից մեկը հակամարտությունների կառավարման հարցում:

Սակայն պետք է նշել, որ անգլիական դպրոցը հիմնախնդիրների կառավարման հարցում շեշտը դնում է միջազգային համակարգի կարգապահության վրա, ֆրանսիական դպրոցը՝ միջազգային համակարգի քաղաքական հասարակագիտության, իսկ ռուսական դպրոցը՝ ռազմական և աշխարհաքաղաքական ուժի գաղափարախոսության վրա:

Մարդկային գործոնն ընդհանուր գործոն է համարյա բոլոր կոնֆլիկտներում, ընդամին կոնֆլիկտներ առաջացնող գործոն: Միջազգային և ներքին բոլոր հակամարտությունների էպիկենտրոնը մարդն է: Եթե հակամարտությունները պատշաճորեն չկառավարվեն կամ չկարգավորվեն, վերածվում են անհաշտ հակամարտությունների, ինչը հանգեցնում է կոնֆլիկտում ներգրավված գործոնների միջև խիստ բախումների: Հակամարտությունների հարցում տարբեր մոտեցումներ և մեխանիզմներ են օգտագործվում: Որոշ երկրներ ձգտում են հակամարտության կառավարմանը, իսկ որոշ այլ երկրներ՝ հակամարտության հետ բախմանը և դրա վերացմանը:

⁴ **Մելքոնյան Ա.**, Կոնֆլիկտ, կոնֆլիկտների կարգավորում, 2010, էջ 4: <http://old.asparez.am/aboutus/projects/jca-arm-az-uk-fco-2010-2011/10.armen-melqonyan-conflict-regulation-management.pdf>.

⁵ Ներկայացվում են «նոր աշխարհակարգի ձևավորման երկրաքաղաքական տարբեր մոդելներ: Միջազգային համակարգի կառուցվածքի մեջ առանձնացնում են չորսը՝ «միաբևեռության» հիպոթեզը, բազմաբևեռայնության, այսինքն՝ ուժերի նոր հաշվեկշռի թեզիսը, համաշխարհային կառավարման ձևերի կամ միջազգային կազմակերպությունների նշանակության աճի միտումների վարկածը, քաղաքակրթությունների բախումը» (մանրամասն տե՛ս **Շիրինյան Լ.**, Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Երևան, 2010):

⁶ **Շիրինյան Լ.**, Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Երևան, 2010, էջ 15:

Առանձնանում են հակամարտության փոխակերպման հինգ տեսակներ⁷ (տե՛ս ստորև բերված աղյուսակը):

Հակամարտության փոխակերպումները	
տեսակը	օրինակ
1. ենթատեքստային կամ կոնտեքստային փոխակերպումներ	փոփոխություն միջազգային կամ տարածաշրջանային միջավայրում
2. կառուցվածքային փոխակերպումներ	<ul style="list-style-type: none"> ✓ անցում անհամաչափ /asymmetric/ հարաբերություններից համաչափ /symmetric/ հարաբերությունների ✓ փոփոխություն ուժային կառույցներում ✓ բռնության ոլորտների փոփոխություն
3. դերակատարների փոխակերպումներ	<ul style="list-style-type: none"> ✓ ղեկավարության փոփոխություններ ✓ նպատակների փոփոխություններ ✓ ներկուսակցական փոփոխություն ✓ կուսակցությունների փոփոխություն ✓ դերակատարների փոփոխություն
4. հարցի փոխակերպումներ	վիճելի հարցերի գերակայությունը կառուցողական փոխզիջում փոխել հարցերը՝ առանձնացնելով կամ կրկին կապելով հարցերը
5. անհատական (անձնական) / գործոնի փոխակերպում	հեռանկարի փոփոխություններ կամքի փոփոխություններ հաշտեցման ակնարկներ

⁷ **Miall Hugh**, Conflict Transformation: A Multi-Dimensional Task, 2004, 10. Available at: http://www.berghof-handbook.net/uploads/download/miall_handbook.pdf.

Հակամարտության փոխակերպման այս հինգ տեսակները կարող են հեշտությամբ կապված լինել հակամարտությունների այն պատճառների կամ կանխարգելման մակարդակների հետ, որ ներկայացվեցին վերևում:

Ենթատեքստային փոխակերպումները վերաբերում են հակամարտության համատեքստում կատարված փոփոխություններին, որոնք կարող են արմատապես փոխվել: Կոնտեքստային փոխակերպումներ սովորաբար տեղի են ունենում գլոբալ կամ տարածաշրջանային ոլորտում:

Կառուցվածքային փոխակերպումները սովորաբար լինում են պետական և հասարակական, իսկ դերակատարների և հարցի փոխակերպումները տեղի են ունենում հակամարտության կողմերի և վերնախավի մակարդակով: Անհատական փոխակերպումները պահանջում են իրավասություններ՝ անհատական մակարդակներով:

Ենթատեքստային և կառուցվածքային փոփոխությունները հակված են տեղի ունենալու ավելի երկար ժամանակահատվածի մասշտաբով և ազդում են հակամարտության կարգավորման վրա, այլ տեսակի փոխակերպումները՝ որպես հակամարտության դինամիկայի մի մաս, ավելի արագ և հերթակալությամբ են տեղի ունենում: Փոփոխությունների հերթականությունը տատանվում է յուրաքանչյուր հակամարտության կարգավորման գործընթացում՝ կախված իրավիճակի տրամաբանությունից:

Կոնֆլիկտի փոխակերպումն իր բոլոր մակարդակներով օգտագործվել է 20-րդ ամենաանկառավարելի կոնֆլիկտի՝ Հյուսիսային Իռլանդիայի հակամարտության կարգավորման համար:

Ինչ վերաբերում է խնդրո առարկա թեմային, ապա տնտեսական հարաբերությունների գործոնը հնարավոր է օգտագործել որպես հայ-թուրքական հակամարտության փոխակերպման միջոց՝ որպես հակամարտության հարցի ոլորտում փոխակերպում: Տնտեսագետները նշում են, որ Թուրքիայի հետ ՀՀ-ի տնտեսական համագործակցությունը կենսական անհրաժեշտություն է: Ըստ նրանց. «...որքան էլ քաղաքական հարաբերությունները այս երկրի հետ /Թուրքիայի/ լարված լինեն, վաղ թե ուշ դրանք պետք է մղվեն հետին պլան՝ տնտեսական հարաբերությունների զարգացման ճանապարհով, քանի որ Թուրքիան Հայաստանի բնական հարևանն է»⁸:

⁸ Այս կապակցությամբ մանրամասն տե՛ս **Թորոսյան Թ., Հայրապետյան Գ., Գալոյան Դ., Հովակիմյան Ն., Կոտիկյան Ն., Սարգսյան Լ.,** Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում, Երևան, 2012, էջ 173-174: **Թորոսյան Թ.,** Միջազգային տնտեսագիտություն, Երևան, ԱՌՏ, 2003, էջ 242:

Հակամարտության շրջանակներից ելնելով՝ ազգությամբ թուրք մասնագետները, ամփոփելով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ներկայացված մոդելները⁹, առաջ են քաշում Conflict transformation հակամարտության փոխակերպման միջոցը և ենթադրում են հետևյալ մոտեցումները հակամարտությունների փոխակերպման համար: Նրանց ընկալմամբ հայ-թուրքական հակամարտությունն ընդգրկում է հետևյալ չորս շրջանակները.

1) հակամարտության հիմքում ընկած հոգեբանական և ճանաչողական գործոնները (այսինքն՝ այլ պատկերացումներ, բացասական կարծրատիպերի առկայություն, պատմական շեղումներ, հավաքական հիշողության, բուժման պակաս).

2) կառուցվածքային խոչընդոտներ (այսինքն՝ փակ սահմաններ, կապի և շփման բացակայություն, անտեղյակություն մյուս կողմի մասին, դիվանագիտական և տնտեսական հարաբերությունների բացակայություն).

3) անհրաժեշտ է արդարություն (այսինքն՝ շտկելու պատմական և ներկա անարդարությունները).

4) իրական քաղաքականություն (այսինքն՝ տարածաշրջանային տերությունների դինամիկան, ինչպես օրինակ՝ Ռուսաստանի հարաբերությունները և տարածաշրջանային այլ դերակատարների հետ, ինչպիսիք են Ադրբեջանը և Վրաստանը, ուժի ոչ հավասարակշռությունը երկու երկրների միջև և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը)¹⁰:

Հակամարտության վերոհիշյալ շրջանակներից ելնելով՝ կարելի է ենթադրել երեք տեսակի մոտեցումներ հակամարտությունների փոխակերպման համար դիվանագիտության երկրորդ մակարդակի /ոչ պաշտոնական/ դերակատարների միջոցով:

Խոջաբեկյան Վ.Ե., Զբաղվածության հակամարտությունները Հայաստանում անցման շրջանում, Երևան, 1998, էջ 219:

⁹ **Burcu Yeşiladali**, Second Track (Unofficial) Diplomacy Efforts to Mitigate Conflicts between Turks and Greeks, and Turks and Armenians, 2 nd Istanbul Conference on Democracy and Global Security, Human Rights Law Research Center, Istanbul, Bilgi University. Available at: https://www.academia.edu/2358050/Second_Track_Unofficial_Diplomacy_Efforts_to_Mitigate_Conflicts_between_Turks_and_Greeks_and_Turks_and_Armenians

¹⁰ **Esra Çuhadar, Burcu Gültekin Punsman**, Reflecting on the Two Decades of Bridging the Divide: Taking Stock of Turkish-Armenian Civil Society Activities, tepav, 2012, p. 23.

Հաճախականության առումով առաջին երկու շրջանակներն են առավել հաճախ նշվում հայերի և թուրքերի կողմից: Սակայն երրորդ շրջանակի ճնշող մեծամասնությունը ներկայացնում է հայկական կողմը, նաև՝ ազգությամբ մի քանի թուրք գործիչներ: Վերջին շրջանակն ավելի շատ նշվում է հայ գործիչների միջոցով, որպես մի գործոն, որը հիմնականն է երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործում:

Կարևոր հանգամանք է, որ թե՛ հայերը (նկատի առնելով Հայաստանում հարցազրույցների տվյալները) և թե՛ թուրքերը ընդհանուր ըմբռնում ունեն հակամարտության շրջանակի մասին:

Թե՛ թուրքական, թե՛ հայկական կողմի մեծամասնությունը (ըստ Հայաստանում և Թուրքիայում կատարված հարցազրույցների արդյունքների) հոգեբանական և ճանաչողական գործոնները հակամարտության շատ կարևոր պատճառներ և կառուցվածքային խոչընդոտներ են համարել երկու երկրների միջև հարաբերությունների հաստատման համար¹¹:

Ակնհայտ է, որ այս հանգամանքը, անշուշտ, կկարգավորվի փոխճանաչման և սոցիալական կապերի զարգացմամբ: Այսինքն՝ կառուցվածքային փոխակերպումների ոլորտում կատարել անցում անհամաչափ հարաբերություններից համաչափ հարաբերությունների և իրականացնել փոփոխություն բռնության ոլորտներում:

Հակամարտության փոխակերպման համար գործողությունների տեսակները և մոտեցումները: Վերջում նպատակահարմար ենք համարում ամփոփելու հայ-թուրքական հակամարտության փոխակերպման մասին ներկայացված մոտեցումները: Ըստ հակամարտության շրջանակների՝ դիվանագիտական հարաբերությունների երկրորդ մակարդակում ներկայացվում են երեք տեսակի մոտեցումներ հայ-թուրքական հակամարտության փոխակերպման շուրջ¹²:

Համաձայն առաջին խմբի մոտեցման՝ հակամարտությունը դիտարկվում է որպես Թուրքիայի ներքին հարց՝ պնդելով, որ հիմնական պատաս-

¹¹ Այս կապակցությամբ մանրամասն տե՛ս Ferhat Kentel and Gevorg Poghosyan, Armenian-Turkish Citizens' Mutual Perceptions and Dialogue Project, Turkish Economic and Social Studies Foundation (TESEV, Istanbul), Sociological and Marketing Research Center (HASA, Yerevan), 2004.

¹² Մանրամասն տե՛ս **Esra Çuhadar, Burcu Gültekin Punsmann**, Reflecting on the Two Decades of Bridging the Divide: Taking Stock of Turkish-Armenian Civil Society Activities, tepav, 2012, p. 23.

խանատվությունն ընկած է Թուրքիայի վրա, և գործունեության հիմնական թիրախը թուրքական հասարակական կարծիքն է: Որոշ թուրքական և ամերիկյան գործիչներ հետևում են այս կարծիքին: Նրանց ընկալումը հակամարտությունից ավելի մոտ էր հոգեբանական և ճանաչողական շրջանակին, ինչպես նաև այն դիտարկվում է որպես արդարադատության և մարդու իրավունքների հարց՝ հետևաբար խրախուսելով պատմության ու ինքնության առճակատումը: Այս մոտեցումը հակամարտության կարգավորման համար արդեն նկարագրված է Աննա Օհանյանի¹³ կողմից որպես «խաղաղության և արդարության» մոդել:

Երկրորդ խմբի ընկալումը հակամարտությունից հիմնականում կրկին պայմանավորված է հոգեբանական և ճանաչողական գործոններով, բայց տարբերվում է առաջին խմբից: Այս խմբում հակամարտության լուծում չեն տեսնում հատկապես Թուրքիայում ճիշտ այնպես, ինչպես հակամարտության փոխակերպումն այդ երկրում: Այդ ընկալմամբ անհրաժեշտ է համատեղ, ինտերակտիվ երկխոսության և հաղորդակցության գործընթաց, որը տանում է փոխըմբռնման և հաշտեցման: Այս մոտեցումը հակամարտության լուծման ոլորտում կոչվում է «պահանջների կամ անհրաժեշտության մոդել», քանի որ այն ձգտում է հասկանալ փոխադարձ պահանջները՝ փորձելով գտնել համապատասխան լուծումներ:

Երրորդ խումբը մոտենում է հակամարտությանն ավելի պրագմատիկ կամ ուշադրության կենտրոնում է պահում կարճաժամկետ գործողություններ, և այն համարում է միջպետական հակամարտություն Հայաստանի և Թուրքիայի միջև: Բնականաբար, այս խումբն ընդգրկված է երկրորդ մոտեցման մեջ և որոշակիորեն՝ վերևում քննարկված հակամարտության վերջին շրջանակում, ուշադրության կենտրոնում պահելով սահմանի բացումը և երկու երկրների միջև դիվանագիտական ու տնտեսական հարաբերությունների կարգավորումը, այլ ոչ թե լիաթեք հաշտեցում: Այս մոտեցումը համընկնում է «Կոնֆլիկտների կառավարում» (conflict management) մոտեցման հետ, որը պարզապես կարևորում է հակամարտության կործանարար կողմերի վերահսկումը, գործոնները, այլ ոչ թե լիովին փոխակերպումը կողմերի միջև՝ հաշտության ուղղությամբ:

¹³ **Anna Ohanyan** conducted the study on the Armenian-Turkish dialogue initiatives in the US as part of this project. These approaches were mentioned in her report titled **TURKISH-ARMENIAN ENGAGEMENT INITIATIVES IN THE UNITED STATES, 2000-2011**.

Գրականության ցանկ

Թորոյան Թ., Հայրապետյան Գ., Գալոյան Դ., Հովակիմյան Ն., Կոտիկյան Ն., Սարգիսյան Լ., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում, Երևան, 2012:

Թորոյան Թ., Միջազգային տնտեսագիտություն, Երևան, ԱՌՏ, 2003:

Խոջաբեկյան Վ. Ե., Զբաղվածության հակամարտությունները Հայաստանում անցման շրջանում, Երևան, 1998:

Մելքոնյան Ա., Կոնֆլիկտ, կոնֆլիկտների կարգավորում, 2010:

<http://old.asparez.am/aboutus/projects/jca-arm-az-uk-fco-2010-2011/10.armen-melqonyan-conflict-regulation-management.pdf>

Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Երևան, 2010:

Burcu Yeşiladali, Second Track (Unofficial) Diplomacy Efforts to Mitigate Conflicts between Turks and Greeks, and Turks and Armenians, 2 nd Istanbul Conference on Democracy and Global Security, Human Rights Law Research Center, Istanbul Bilgi University. Available at: https://www.academia.edu/2358050/Second_Track_Unofficial_Diplomacy_Efforts_to_Mitigate_Conflicts_between_Turks_and_Greeks_and_Turks_and_Armenians

Çuhadar Esra, Burcu Gültekin Punsmann, Reflecting on the Two Decades of Bridging the Divide: Taking Stock of Turkish-Armenian Civil Society Activities, tepav, 2012.

Kentel Ferhat and Gevorg Poghosyan, Armenian-Turkish Citizens' Mutual Perceptions and Dialogue Project, Turkish Economic and Social Studies Foundation (TESEV, Istanbul), Sociological and Marketing Research Center (HASA, Yerevan), 2004.

Miall Hugh, Conflict Transformation: A Multi-Dimensional Task, 2004. Available at: http://www.berghof-handbook.net/uploads/download/miall_handbook.pdf

Ohanyan Anna, "Transfer up or down? Dialogue groups between Turkish and Armenian communities in the United States," Conflict Resolution Quarterly 29, 4 (2012): 433-460.

ԱՄՓՈՓՈՒՄ

Միջազգային կոնֆլիկտների բնույթից կախված՝ կարգավորման գործընթացը ծավալվում է շատ երկար ժամանակահատվածում: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ընթացքը որոշ ելևէջներից հետո 2009թ. ցյուրիխյան գործընթացի անավարտ լինելու հետևանքով **կոնֆլիկտի կարգավորման գործընթացը իրագործման** փուլից նախորդ փուլ է մղվել՝ վերադառնալով **բանակցային փուլ**, որը նշանակում է կողմերի հիմնական դիրքորոշումների և հակասությունների քննարկման փուլ:

Կոնֆլիկտների ձևափոխումը կամ փոխակերպումն այն գործընթացն է, որը հակամարտությունները վերածում է խաղաղ արդյունքների: Հողվածում անդրադառնում ենք հակամարտության փոխակերպման տեսակներին, որոնք կարող են ուղղակիորեն կապված լինել հակամարտությունների պատճառների կամ կանխարգելման մակարդակների հետ: Անդրադառնում ենք նաև հայ-թուրքական հակամարտության կարգավորման համար ներկայացված «խա-

ղաղության և արդարության», «պահանջների կամ անհրաժեշտությունների» մոդելներին և «կոնֆլիկտի կառավարման» մոտեցմանը:

Բանալի բաներ – Հայաստան, Թուրքիա, հակամարտություն, հակամարտության փոխակերպում, հակամարտության կարգավորում, հակամարտության կառավարում:

ТРАНСФОРМАЦИЯ КОНФЛИКТА КАК АЛЬТЕРНАТИВА АРМЯНО-ТУРЕЦКОГО КОНФЛИКТА

АФСАНЕ ШИРАНИ

В зависимости от характера международных конфликтов процесс урегулирования конфликта охватывает довольно-таки длительный период.

Трансформация конфликта – это процесс, в результате которого конфликт может завершиться миром. В статье представлены типы трансформации конфликта, которые могут быть непосредственно связаны с причинами возникновения и их предотвращением. В статье обсуждаются модели урегулирования армяно-турецкого конфликта, в частности, модели "мир и правосудие", "требования или необходимость".

Ключевые слова – Армения, Турция, конфликты, трансформация конфликта, разрешение конфликтов, управление конфликтами.

CONFLICT TRANSFORMATION AS AN ALTERNATIVE FOR THE ARMENIAN- TURKISH CONFLICT

AFSANEH SHIRANI

The settlement of international conflicts is a long lasting procedure. The normalization processes of Armenian-Turkish diplomatic ties after some ups and downs was concluded by signing protocols on 10 October 2009 in Zurich Switzerland designed to allow the opening of borders and to set up a formal diplomatic relationship. However, the failure to ratify the protocols was a significant setback nullifying the efforts and setting the Armenian-Turkish relations back to its starting point, the stage of discussions of the principal positions and contradictions.

Conflict transformation is the process by which conflicts are transformed into peaceful outcomes. This article considers the types of conflict transformation that might be directly related to the causes of conflicts or levels of their prevention. It also refers to the models of “peace and justice”, “requirements or necessities” and as well to the approach to “the control of conflict” presented to settle the Armenian-Turkish conflict.

Key words – Armenia, Turkey, conflict, conflict transformation, conflict resolution, conflict management.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Անհնար է պատկերացնել այնպիսի հասարակություն, որտեղ սոցիալական և քաղաքական առումներով տարբեր խմբեր իրենց կենսագործունեության մեջ ղեկավարվեն միևնույն մտածելակերպով ու գործեն միանման: Այս հանգամանքը ընդդիմության առաջացման հիմնական նախադրյալներից է, որը, կախված լինելով ժամանակային և տարածական չափանիշներից, արտահայտվում է տարբեր միջոցներով և ձևերով:

Չնայած սոցիալական տարբերություններին և դրանցից բխող սոցիալական կոնֆլիկտներին, որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն հասարակության մեջ, ժողովրդավարական համակարգը չի վերացնում դրանք: Այն պայմաններ է ստեղծում այդ սոցիալական շահերի և կոնֆլիկտների դրսևորման համար և տիրապետում է միջոցների դրանց հարաբերական կարգավորման համար: Ի տարբերություն այլ վարչակարգերի՝ ժողովրդավարությունը պահանջում է կոնֆլիկտների հաղթահարման խաղաղ և սահմանադրական տարբերակ՝ պահելով դրանք որոշակի սահմանների մեջ:

Ժողովրդավարությունը ենթադրում է քաղաքական գործընթացի մասնակիցների վստահության բարձր մակարդակ, որի ապահովման հիմնական գրավականը հասարակական-քաղաքական կյանքի ֆորմալ և ոչ ֆորմալ «խաղի կանոնների» համընդհանուր պահպանությունն է: «Քաղաքական մրցակիցների միջև փոխադարձ վստահության խոր արմատավորված զգացումը կարևոր է կայուն ժողովրդավարության անհրաժեշտ մեկ այլ պայմանի՝ ընդդիմության հանդեպ հանդուրժողականության համար»¹: Քաղաքական ընդդիմությունը ժողովրդավարական վարչակարգերի կարևոր ինստիտուտ է, որի միջոցով բարձրացվում են որոշակի քաղաքական շահեր: Այն նաև առանցքային դերակատար է գործող իշխանությունների հանդեպ վերահսկողություն սահմանելու համար:

Մարդկության պատմության ողջ ընթացքում ընդդիմությունը եղել է իշխանության ուղեկիցը, սակայն մինչև ժողովրդավարական կարգերի գար-

¹ Տե՛ս **Diamond L., Plattner M.** Nationalism, Ethnic Conflict and Democracy, Baltimore, John Hopkins University Press, 1994, p. 19.

գացումը իշխանությունների կողմից դրա հանդեպ դրսևորվող վերաբերմունքը եղել է հակասական և անկանխատեսելի: Դժվար է թվարկել ընդդիմության նկատմամբ կիրառված հետապնդումների և սահմանափակումների այն բոլոր ձևերը, որոնք իրականացվել են իշխանությունների կողմից՝ փորձելով ձերբազատվել ընդդիմությունից: Իր հերթին վերջինս մշտապես վերագտել է իշխանության կողմից առաջարկվող պայքարի պայմաններին հակազդելու տարբերակներ: Փոխվում էր միայն ընդդիմադիրության արտահայտման բնույթը, սակայն ընդդիմությունը երբեք չի դադարել գոյություն ունենալուց, թեկուզ և այլախոհության, իշխանություններին անհնազանդության կամ լուռ անհամաձայնության տեսքով:

Հետագայում ընդդիմությունը հանդես էր գալիս և՛ տարերային ու կազմակերպված շարժումների, և՛ առանձին կազմակերպությունների (մասնագիտական միությունների, քաղաքական կուսակցությունների), և՛ հենց կուսակցությունների ներսում պառակտումների տեսքով (երբ մի հատվածը հակադրվում էր մեծամասնությանը): Ժողովրդավարական կարգերի հաստատման հետ մեկտեղ ընդդիմությունը դառնում է քաղաքական դաշտի կարևորագույն ինստիտուտներից մեկը: Մ. Դյուվերժեն գրում է. «Կազմակերպված քաղաքական ընդդիմության առկայությունը էական բնորոշիչ է արևմտյան ժողովրդավարության, իսկ դրա բացակայությունը՝ արևելյան»²: Իրականում ժողովրդավարությունը չի կարող լինել ո՛չ արևելյան, ո՛չ արևմտյան, ո՛չ հարավային և ո՛չ էլ հյուսիսային: Դրա սկզբունքներն ու նորմերը ընդհանուր են բոլոր երկրների ու ժողովուրդների համար:

Եթե քաղաքական ընդդիմության պաշտոնապես ճանաչումը և դրա ինստիտուցիոնալ ամրագրումը հասարակության քաղաքական կյանքում պատմականորեն համարվում են բրիտանական քաղաքական համակարգի ձեռքբերում, ապա ժամանակի ընթացքում ժողովրդավարության ձգտող քաղաքական համակարգերը սկսում են ընդդիմությունը դիտել որպես քաղաքական գործընթացների կարևոր բաղադրիչ:

Ընդհանուր առմամբ «ընդդիմություն» հասկացությունը մեկնաբանվում է լայն և նեղ իմաստներով: Նեղ առումով ընդդիմությունը կարելի է սահմանել որպես կուսակցություն կամ կոալիցիա, որը, փոքրամասնություն կազմելով խորհրդարանում, կարող է հաջորդ ընտրությունների միջոցով ստանձնել իշխանական լիազորություններ: Ըստ Պ. Բրոմհեդի՝ «ընդդիմությունը կուսակցու-

² Տե՛ս **Дюверже М.** Политические партии, Москва, 2000, с. 497.

թյուն է կամ կուսակցությունների կոալիցիա, որը հույս ունի հաղթանակ տոնելու հաջորդ համընդհանուր ընտրություններում»³: Չբացառելով «ընդդիմություն» հասկացության նման սահմանման հնարավորությունը և իրավաչափությունը՝ անհրաժեշտ է նշել, որ այն կիրառելի է միայն խիստ սահմանափակ դեպքերում: Բացի այդ, այս սահմանման նպատակահարմարությունը կասկածի տակ է դրվում ճախողված ժողովրդավարացման արդյունքում ձևավորված ոչ ժողովրդավարական կամ հիբրիդային ռեժիմների մեծ մասի դեպքում:

Ռ. Դալի կողմից տրված սահմանումը (որն ավելի շատ կարելի է բնորոշել որպես բացատրություն) կարելի է դասել «ընդդիմություն» հասկացության «լայն» սահմանումների թվին: Նա «ընդդիմություն» հասկացության տակ նկատի է առնում որոշակի սուբյեկտ, որը հակադրվում է կամ համաձայն չէ կառավարական քաղաքականությանը: Այսպես, եթե A-ն պայմանավորում է կառավարության քաղաքականությունը այս կամ այն հարցի շուրջ որոշակի ժամանակահատվածի ընթացքում, և B-ն հնարավորություն չի ունենում պայմանավորելու այդ քաղաքականությունն ու հակադրվում է դրան, ապա B-ն հանդես է գալիս «ընդդիմության» դերում⁴: Նկատենք, որ որոշակի այլ ժամանակահատվածի ընթացքում կառավարական քաղաքականության վրա որոշիչ ազդեցություն կարող է ունենալ նաև B-ն, և այդ ժամանակ արդեն A-ն կստանձնի ընդդիմության դերակատարությունը:

Ա. Մարկարովը քաղաքական ընդդիմության սահմանման հարցում կարևորություն է տալիս ընդունվող որոշումների բնույթին՝ ընդգծելով, որ քաղաքական ընդդիմություն պետք է համարել հենց քաղաքական որոշումները վիճարկող, առկա ստատուս քվոյին մարտահրավեր նետող ուժին⁵: Ընդդիմության ուսումնասիրությանն ուղղակի կամ անուղղակի անդրադարձել են նաև այլ հայ հեղինակներ: Մասնավորապես Է. Օրդուխանյանը ընդդիմությունը սահմանում է որպես «լավ կազմակերպված, քաղաքական ստույգ պահանջներ և ծրագրեր ունեցող սուբյեկտներ, որոնք միաժամանակ ունեն բարձր

³ Տե՛ս **Бромхед П.** Эволюция британской конституции, М., 1978, с. 475.

⁴ Տե՛ս **Dahl R.** Political Oppositions in Western Democracies (ed. by R. Dahl), p. XVIII.

⁵ Տե՛ս **Markarov A.** Political Opposition within Hybrid Regimes: Concept and Actors // Stumbling But Struggling: Political Opposition in Four Post-Soviet Countries (ed. by R. Careja), Moscow, 2004, p. 40.

այլընտրանքային, բողոքի և բախումային ներուժ՝ ուղղված գործող իշխանության կամ վերջինիս կողմից իրականացվող քաղաքականության դեմ»⁶:

Ընդդիմության սահմանումը որպես հակադրություն գոյություն ունեցող պետական (քաղաքական) իշխանությանը այս երևույթի ասպեկտներից միայն մեկն է և կարելի է բնորոշել որպես գործառնական: Խոսելով ընդդիմության սահմանումից՝ պետք է ուշադրություն դարձնել նաև նրա մեկ այլ, ոչ պակաս կարևոր ասպեկտի վրա, որը սովորաբար անվանվում է ինստիտուցիոնալ կամ կազմակերպական (կառուցվածքային-կազմակերպական): Առաջին հայացքից նշված ասպեկտը կարելի է բնորոշել ավելի դյուրին, այսպես՝ Դ. Ջերկինի կարծիքով՝ «ընդդիմությունը սեփական քաղաքական շահերի, արժեքների և նպատակների ընդհանրության գիտակցմամբ միավորված և այս կամ այն չափով կազմակերպված ակտիվ անհատների խումբն է, որը պայքարում է իշխող սուբյեկտի դեմ պետական իշխանության համակարգում գերակա դիրք զբաղեցնելու նպատակով»⁷: Ընդհանուր առմամբ կարելի է համաձայնել այս սահմանմանը, ըստ որի ընդդիմությունը դիտարկվում է իբրև սեփական շահերն ունեցող և այդ շահերի դիրքերից իշխանությանը հակադրվող խումբ, թեև ընդդիմության նպատակի սահմանումը միայն որպես պայքար պետական իշխանության համակարգում գերակա դիրք զբաղեցնելու համար շատ նեղ է և աչքի է ընկնում ավելորդ որոշակիացմամբ:

Պետք է նշել, որ քաղաքական ընդդիմության սահմանումը որպես ինստիտուտ իր հերթին առաջ է բերում զգալի անորոշություններ ու դժվարություններ: Այսպես, ըստ Ա. Ցիգանկովի՝ «ընդդիմությունը ընկալվում է որպես քաղաքական ինստիտուտ, որը ստեղծված է կենտրոնական իշխանության կողմից հետապնդվող որոշակի շահերից տարբերվող շահերի արտահայտման և պաշտպանության համար»⁸: Այլ տեսակետի համաձայն՝ ընդդիմությունը ինստիտուցիոնալացված հանդես է գալիս միայն ժողովրդավարական վարչակարգի առկայության պայմաններում, մինչդեռ ոչ ժողովրդավարական վարչակարգերի դեպքում ընդդիմությունը, որպես կանոն, ենթարկվում է հետապնդումների, և նույնիսկ ժողովրդավարացման գործընթացը սկսելուց հետո

⁶ Տե՛ս **Օրդուխանյան Է.**, Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, Երևան, 2010, էջ 29:

⁷ Տե՛ս **Зеркин Д.** Политический конфликт и оппозиция // Социально-политический журнал (под. ред. Д. Зеркина), 1998, N 5, с. 95-96.

⁸ Տե՛ս **Цыганков А.** Современные политические режимы: структура, типология, динамика, Москва, 1995, с. 98.

ընդդիմության ինստիտուցիոնալացման համար պահանջվում է որոշ ժամանակ:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք պաշտոնապես չճանաչված և հետապնդվող ընդդիմությունը կարող է որակվել իբրև քաղաքական ինստիտուտ, կարելի է նշել, որ եթե նկատի են առնվում կազմակերպված ընդհատակյա կամ կիսաընդհատակյա խմբեր, ապա «քաղաքական ինստիտուտ» որակումն այստեղ լիովին տեղին է, քանզի լեգալությունը ոչ մի դեպքում չի կարող համարվել քաղաքական կյանքի այս կամ այն երևույթի ինստիտուցիոնալացման ցուցիչ: Այս տեսանկյունից իրավաչափ կլինի ինստիտուցիոնալ որակում տալ այն ընդդիմադիր կազմակերպություններին, որոնք հետապնդվում են ոչ ժողովրդավարական վարչակարգերի կողմից, սակայն դե յուրե կամ առնվազն դե ֆակտո նրանց գոյությունն ընդունվում է այդ վարչակարգերի կողմից («Համերաշխությունը» Լեհաստանում 1980-1989թթ.): Ինստիտուցիոնալացումը կարող է ընկալվել նաև ավելի լայն իմաստով՝ ոչ միայն որպես մշտական հիմքով գործող կայուն կազմակերպությունների ձևավորում, այլև որպես «որոշակի խաղի կանոնների, ֆորմալ և ոչ ֆորմալ նորմերի, արժեքների, կողմնորոշումների ձևավորման գործընթաց, որը պայմանավորում է քաղաքական, սոցիալական և մշակութային ընթացակարգերի վերարտադրությունը»⁹:

Այդուհանդերձ, ճիշտ է այն պնդումը, որ ընդդիմադիր տրամադրությունների ու հայացքների տարածման ոլորտը շատ ավելի լայն է, քան ընդդիմադիր խմբերը, շարժումները, կազմակերպությունները կամ կուսակցությունները՝ լինեն դրանք լեգալ, թե ոչ լեգալ: Վ. Հավելը հստակորեն առանձնացնում և բնութագրում է այն երևույթները, որոնք սովորաբար դիտարկվում են իբրև ընդդիմություն: «Ժողովրդավարական վարչակարգի պայմաններում դա այնպիսի քաղաքական ուժ է (հաճախ կուսակցություն կամ կուսակցությունների կոալիցիա), որը, չտիրապետելով քաղաքական իշխանության, ձգտում է նվաճել այն սահմանված օրենսդրական նորմերի շրջանակներում՝ առաջարկելով այլընտրանքային որոշակի ծրագիր՝ միաժամանակ ընդունվելով իբրև երկրի քաղաքական կյանքի օրգանական մաս»¹⁰: Իրենց անհամաձայնությունը բացահայտ արտահայտող խմբեր առկա են նաև հետամբողջատիրական վար-

⁹ Տե՛ս **Норт Д.** Институты, институциональные изменения и функционирование экономики, Москва, 1997, с. 17.

¹⁰ Տե՛ս **Гавел В.** Сила бессильных, Минск, 1991, с. 49.

չակարգերում (հետամբողջատիրական վարչակարգերի շարքում Վ. Հավելը ներառում է հետստալինյան վարչակարգերը, մասնավորապես 1970-ական թվականների Չեխոսլովակիան): Միննույն ժամանակ Վ. Հավելը ընդդիմության որակում է տալիս ցանկացած քաղաքական գործողության, որը խախտում է թույլատրված սահմանները¹¹: Ընդդիմադիր գաղափարների կրողի դերում կարող է լինել ընկերների ոչ ֆորմալ և ոչ ինստիտուցիոնալացված խումբը կամ նույնիսկ մեկ անձը, սակայն ամբողջատիրական կամ ավտորիտար վարչակարգերի պայմաններում նրանք ստիպված են թաքցնել իրենց հայացքները, կամ, համենայն դեպս, լայնորեն չհայտարարել դրանց մասին: Ռուս փիլիսոփա Ա. Զինովկը, վերհիշելով 1940-ական թվականների իր կրթության տարիները ավիացիոն դպրոցում և Մոսկվայի համալսարանում, նշում է, որ մեկ անգամ չէ, որ հանդիպել և վարել է սուր քաղաքական զրույցներ հակաստալինական տրամադրվածությամբ կուրսանտների: Սակայն այդ զրույցները որևէ կերպ չէին ազդում կուրսանտների վարքագծի վրա¹²: Նման ընդդիմադիր հայացքների տարածվածությունից կարելի է դատել, որ բավականին մեծ թվով մարդիկ այդ հայացքների կրողներ էին, սակայն հասարակության բևեռացվածության պայմաններում նրանցից յուրաքանչյուրն իրեն դիտարկում էր որպես միայնակ նոնկոնֆորմիստ և ոչ որպես ավելի լայնամասշտաբ գաղափարական ուղղության մի մասնիկ: Ավելին, նմանատիպ իրավիճակ կարող է առաջանալ նաև հետամբողջատիրական վարչակարգերում, երբ հասարակական հարցումների արդյունքում արձանագրվող ընդդիմադիր տրամադրությունները, ստանալով բավականին լայն տարածում, այդուհանդերձ չեն արտահայտվում որևէ զանգվածային գործողության, թեկուզ ընդդիմադիր կուսակցությունների օգտին քվեարկելու տեսքով: Դրա պատճառները կարող են լինել բազմաբնույթ և արժանի են հատուկ հետազոտության: Դա և՛ «չարյաց փոքրագույնի» ընտրությունն է, և՛ անվստահությունն է ամբողջ քաղաքական համակարգի նկատմամբ, երբ իշխանությունն ու ընդդիմությունը չեն տարանջատվում և վստահություն չեն վայելում հանրության կողմից:

Անհրաժեշտություն է առաջանում ուշադրություն դարձնել «ընդդիմություն» և «ընդդիմադիրություն» հասկացությունների տարբերությունների վրա: Վերջինիս տակ նկատի է առնվում զգացումների, կողմնորոշումների, արժեքների և հայացքների այն լայն սպեկտրը, որն այս կամ այն չափով հա-

¹¹ Տե՛ս **Гавел В.** նույն տեղում, էջ 50:

¹² Տե՛ս **Зиновьев А.** Русская судьба. Исповедь отщепенца, Москва, 1999, с. 207.

կադրվում է իշխանության կողմից առաջարկվող և խրախուսվող գաղափարներին: «Ընդդիմադիրությունը» կարող է արտահայտվել բողոքի ձևով: Պետք է նշել, որ այն կարող է նաև լայնորեն տարածված լինել ժողովրդավարական վարչակարգերի պայմաններում՝ հանդես գալով որպես քաղաքական ընդդիմության բաղադրատարր: Այսպես, Ռ. Դալի կարծիքով. «անհամաձայնություն արտահայտող շատ ամերիկացիներ, հնարավոր է՝ նրանց մեծ մասը, չեն ձգտում փոխել իրենց շրջապատի կողմնորոշումները, օրինակ՝ քննարկումների, այլախոհ քաղաքական շարժումներին միանալու կամ իրենց հայացքներին համապատասխան թեկնածուին առաջ քաշելու ու սատարելու ճանապարհով»¹³:

«Ընդդիմությունը» և «ընդդիմադիրությունը» նույնական հասկացություններ չեն. ընդդիմադիրությունը ոչ միշտ է ենթադրում զարգացած, ինստիտուցիոնալացված քաղաքական ընդդիմության առկայությունը և կարող է գոյություն ունենալ նաև առանց դրա: Մյուս կողմից, քաղաքական ընդդիմությունը, որպես կանոն, հենվում է այն միջավայրի վրա, որի շրջանակներում լայնորեն տարածված է ընդդիմադիրությունը՝ ստանալով հենց այդ միջավայրի ձայներն ու աջակցությունը:

Հետամբողջատիրական վարչակարգերում ընդդիմադիրությունից ընդդիմության վերածման գործընթացը վերլուծելով՝ Վ. Հավելը նշում է. «Ընդդիմադիրության դրսևորումների մեծամասնությունը այդպես էլ կմնա անհայտ, իսկ այդ դրսևորումների քաղաքական նշանակությունը ամենայն հավանականությամբ մանրամասնորեն չի ուսումնասիրվի ու չի գնահատվի: Սակայն այդ բազում փորձերի արդյունքում առաջանում է որոշակի նախաձեռնություն, որը, դուրս գալով անհատի «ընդվզման» շրջանակներից, սկիզբ է դնում «հասարակության հոգևոր, սոցիալական և քաղաքական անկախ կյանքին»: Եվ այդ «անկախ կյանքի» խորքերից էլ ի հայտ է գալիս այն «քաղաքացիական նախաձեռնությունը», որը կարելի է կոչել «այլախոհ շարժում» կամ «ընդդիմություն»¹⁴: Արևելյան Եվրոպայում 1980-ական թվականների վերջին սկսված ժողովրդավարացման երևույթը բնորոշվում էր որպես «քաղաքացիական հասարակության» ընդդիմություն, իսկ Բ. Չժանը, ով զբաղվում էր ԽՍՀՄ-ում և ՉԺՀ-ում այդ երևույթի հետազոտմամբ, գրում է. «Եթե այդ ընդդիմությունը չի

¹³ Տե՛ս **Dahl R.** The American Oppositions: Affirmations and Denial // Political Oppositions in Western Democracies (ed. by R. Dahl), New Haven and London, 1966, p. 42.

¹⁴ Տե՛ս **Гавел В.** նույն տեղում, էջ 62-64:

ճնշվում, ապա այն արագորեն ինստիտուցիոնալացվում է՝ սկզբում դրսևորվելով ազգային ճակատների, ընտրողների ակումբների, իսկ հետագայում նաև քաղաքական կուսակցությունների, ավելի ճիշտ պրոտոկուսակցությունների տեսքով: Ինստիտուցիոնալացման գործընթացի ավարտը, որն արտահայտվում է մասնավորապես պարբերական ընտրությունների անցկացման և ընտրական ցիկլերի հաստատման տեսքով, դանդաղ վերադարձնում է տարերային ընդդիմադիրության ալիքն իր հիմքերին»¹⁵: 1989թ. հետո ՉԺՀ-ում զանգվածային ընդդիմադիրության ալիքը ճնշվեց իշխանությունների կողմից այդ ալիքի՝ քաղաքական ընդդիմության վերածվելու գործընթացի ավարտից անմիջապես առաջ: Արևելյան Եվրոպայում, հատկապես Լեհաստանում, Չեխոսլովակիայում և Հունգարիայում այդ գործընթացն ընթանում էր ոչ այնքան պայթյունավտանգ, որքան ԽՍՀՄ-ում ու ՉԺՀ-ում, քանի որ կոմունիստական վարչակարգերի ընդդիմությունն այս երկրներում արտահայտվում էր քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների տեսքով: Ինչպես նշում էր Ա. Սմոլյարը. «Չեխոսլովակիայում խորհրդային միջամտությունից և սոցիալիզմի հաստատման հույսը մարելուց հետո Արևելյան Եվրոպայի ընդդիմադիր ինտելեկտուալները առաջ քաշեցին այսպես կոչված «առաջին հերթին հասարակությունը» ռազմավարությունը (society first): Այդ ռազմավարության բովանդակությունը սոցիալական անկախության սաղմերի՝ ուսանողների, հավատացյալների, գյուղացիների կոմիտեների ստեղծումն էր, որոնք դարձան քաղաքական կուսակցությունների հիմքեր: Քաղաքացիական հասարակության ստեղծվող այդ սաղմերն իրենց ներդրումն ունեցան Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներում այլընտրանքային հավաքական կերպարների ու արժեքների ձևավորման և ամրագրման մեջ»¹⁶:

Այսպիսով, ուսումնասիրելով մի շարք հեղինակների հայացքները «քաղաքական ընդդիմության» վերաբերյալ և համադրելով մեր պատկերացումների հետ՝ այն կարելի է դիտարկել որպես քաղաքական իշխանության համար պայքարող սուբյեկտ, որը հակադրվում է կառավարական քաղաքականությանը կամ դրա ինչ-որ ասպեկտին՝ չունենալով պետական կառավարման որոշումներ կայացնելու հնարավորություն, միաժամանակ ունենալով այլընտ-

¹⁵ Տե՛ս **Zhang B.** Corporatism, Totalitarianism and Transitions to Democracy // Comparative Political Studies, 1994, Vol. 27, N1, pp. 123-125.

¹⁶ Տե՛ս **Smolar A.** From Opposition to Atomization // Consolidating the Third Wave Democracies: Themes and Perspectives (ed. by L. Diamond), Baltimore & London, 1997, pp. 265-267.

րանքային դիրքորոշում տվյալ հարցերի շուրջ: Այլընտրանքային քաղաքականության առկայությունը կարևոր է նրանով, որ այն ընդդիմություն և ընդդիմադիրություն հասկացությունների բաժանման հիմք է և զարգացած քաղաքական ընդդիմության առկայության չափանիշ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հետազոտության են ենթարկվում քաղաքական ընդդիմության էությունը, մասնավորապես նրա լայն և նեղ իմաստով սահմանումները, ինչպես նաև ինստիտուցիոնալացումը: Հեղինակը համեմատական վերլուծության է ենթարկում «քաղաքական ընդդիմություն» և «ընդդիմադիրություն» հասկացությունները: Վերջինս ոչ միշտ է ենթադրում ինստիտուցիոնալացված քաղաքական ընդդիմության առկայությունը, բայց կարող է գոյություն ունենալ առանց դրա: Բացի դրանից, հեղինակը ներկայացնում է քաղաքական ընդդիմության իր սահմանումը: Նշվում է նաև իրականացվող կառավարական քաղաքականությանը այլընտրանքային դիրքորոշման կարևորության մասին:

Բանալի բաներ - քաղաքական ընդդիմություն, ժողովրդավարական վարչակարգ, ոչ ժողովրդավարական վարչակարգ, ինստիտուցիոնալացում, քաղաքական ինստիտուտ, ընդդիմադիրություն, այլընտրանքային քաղաքականություն, քաղաքական փոքրամասնություն:

К ВОПРОСУ О ПОЛИТИЧЕСКОЙ ОППОЗИЦИИ

АЛЕКСАНДР САРГСЯН

В статье рассматривается сущность политической оппозиции, в частности, определение феномена в широком и узком смысле и его институционализация. Автор проводит сравнительный анализ понятий «политическая оппозиция» и «оппозиционность». Последняя не всегда предполагает организованную политическую оппозицию, а может существовать и без нее. Автор приводит свое определение политической оппозиции. В определении отмечается также важность проводимой правительством политики альтернативной позиции.

Ключевые слова - политическая оппозиция, демократический режим, недемократический режим, институционализация, политический институт, оппозиционность, альтернативная политика, политическое меньшинство.

POLITICAL OPPOSITION

ALEKSANDR SARGSYAN

This article considers the nature of political opposition; especially the concise and expanded definitions of the concept and as well as its institutionalization. The author makes a comparative analysis of the "political opposition" and "opposition" concepts. The latter does not always presuppose the existence of an institutionalized political opposition, as "opposition" might even exist without it. Sargsyan further introduces his own proper definition of political opposition. The importance of an alternate standpoint in public policy-making processes is also considered.

Key words - political opposition, democratic administration, non-democratic administration, institutionalization, political institute, opposition, alternative policy, political minority.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄՏՔԻ ՈՉ ՏԻՊՕՐԻՆԱԿ ՁԵՎԵՐԻ ԸՄԲՈՆՄԱՆ ՇՈՒՐՋ

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ավանդական ձևական տրամաբանության պատմությունը դիտարկելիս ակնառու է տրամաբանների մտքի ձևերն առավելագույն չափով պարզեցնելու ձգտումը, ինչի արդյունքում նրանք փորձել են հանգել այնպիսի եզրակացությունների, որոնք ոչ միայն ճշմարիտ են, այլև հնարավորինս պարզ: Այսպիսի մոտեցումը կարող է օգտակար և արդյունավետ լինել այդ ձևերն ուսումնասիրողների համար: Այս տեսանկյունից ևս հատկապես մեծ է Արիստոտելի տրամաբանական բնույթի հետազոտությունների նշանակությունը, մասնավորապես սիլլոգիզմի մի ձևից մյուսին անցումը, փոխակերպումը, ինչը թույլ է տալիս ավելի հստակ պատկերացնել այն, ինչը ոչ միշտ է հաջողվում ըմբռնել հատկապես ոչ մասնագետներին:

Այն, ինչ Արիստոտելի և նրա հետևորդների գործունեության շնորհիվ հաջողվել է առավելագույն չափով պարզեցնել և չափանիշ դարձնել մտքի ձևերը հասկանալու համար, անվանենք մտքի տիպորինակ ձևեր:

Ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ գիտական հետազոտություններում և զեղարվեստական գրականության մեջ հազվադեպ կարելի է հանդիպել այս տիպորինակների ձևով կատարված եզրահանգումների: Սովորաբար օգտագործվում են ոչ տիպորինակ ձևեր, որոնք տարբերվում են տիպորինակ ձևերից նրանով, որ նախադրյալներից եզրակացության հանգելու համար օգտագործվում է նաև լրացուցիչ տեղեկույթ, որի բնույթը կախված է այն բանից, թե ինչ բնագավառի են պատկանում դիտարկվող եզրահանգումները, թերևս, ավելի ստույգ՝ մտահանգումները: Որոշ դեպքերում լրացուցիչ տեղեկատվությունը կարող է ուժեղացնել զգացմունքային ազդեցությունը, մեկ այլ դեպքում՝ համոզելու հնարները և նման կարգի այլ գործոններ: Այդպիսի դեպքերում, որպես օրենք, պահպանվում է կշռադատության, տվյալ դեպքում մտահանգման տրամաբանական կառույցը, որը վերը հիշատակված լրացուցիչ գործոն-

ների հետևանքով դառնում է ոչ բացահայտ և բացահայտ դառնալու համար կարիք ունի որոշակի կերպարանափոխությունների, փոխակերպումների:

Պարզաբանելու համար դիմենք օրինակների: Դատողությունների բաժանումը ըստ որակի և ըստ քանակի միացյալ դասակարգման տրամաբանության դասագրքերում և այլ տիպի գրականության մեջ ամրագրված է հետևյալ կերպ.

Բոլոր s-երը p են (a):

Որոշ s-եր p են (i):

Ոչ մի s p չէ (e):

Որոշ s-եր p չեն (o):

Դիտարկված նշանները (սիմվոլները), որոնք տրամաբանական փոփոխականներ են, կարելի է փոխարինել այլ սիմվոլներով, և դրանից տրամաբանական իրողությունը չի փոխվի: Ավելին, տրամաբանական հաստատումներն ու շաղկապները հեղինակները միակերպ չեն նշում: Օրինակ, ժխտումը հաճախ նշանակվում է հետևյալ ձևով՝ p, սակայն քիչ չեն այն հեղինակները, ովքեր ժխտումը նշանակում են \neg p ձևով: Սակայն դա չի կարող որևէ կերպ ազդել դիտարկվող բանաձևերի նշանակության վրա: Այսպիսի հանգամանքներն էլ իրավունք են ընձեռում դիտարկվող օրինակները համարելու մտքի որոշակի տիպորինակ ձևեր:

Տիպորինակ ձևերի ցայտուն արտահայտություններ են սիլլոգիզմի ձևերը:

m – p	p – m	m – p	p – m
s – m	s – m	m – s	m – s
s – p	s – p	s – p	s – p

Մտքի ձևերի տիպորինակները հնարավորություն են ընձեռում պարզելու դիտարկվող տեքստում երկու հարց.

ա) որքանո՞վ է կանոնավոր տվյալ մտահանգումը,

բ) որքանո՞վ է հավաստի տվյալ մտահանգման եզրակացությունը:

Մտքի տիպորինակ ձևերը որպես կանոն այսպես կոչված «մաքուր» ձևով չեն ներառվում տեքստի ցանկացած (գիտական բնույթի գործ, գեղարվեստական գրականությունից վերցրած «պատահիկ» կամ առհասարակ հաղորդակցման համար նախատեսված հաղորդում) ձևերում:

Հիշատակված (ա) և (բ) խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է վերացարկել դիտարկվող տեքստում բոլոր այն հավելյալ տեղեկություններից, որոնք կարող են տարբեր կողմերից այս կամ այն չափով շրջապատած լինել տրամաբանական տիպօրինակը:

Ֆրանսիացի գրող Ֆրանսիս Բեբեի հերոսներից մեկը պնդում է, թե ընկերուհին նա է, ում կարող ես պատմել այն ամենը, ինչ կա քո հոգում՝ նախօրոք իմանալով, որ նա այդ մասին ոչ ոքի չի ասի: Էդնայի հետ ինքը չի կարող դա իրեն թույլ տալ, հետևաբար նա իր ընկերուհին չէ:

Առաջին հայացքից ընթերցողը գուցե չկարողանա կտրուկ որոշել և հայտարարել, թե եզրակացությունը ճշմարիտ է: Սակայն սիլլոգիզմի կանոններին ծանոթը կարող է կատարել հետևյալ փոխակերպումները. «Ընկերուհին նա է, ում ես կարող եմ վստահել այն, ինչ կա իմ հոգում՝ իմանալով, որ նա այդ մասին ոչ ոքի չի ասի»: Սա համարենք սիլլոգիզմի մեծ նախադրյալը: «Էդնայի հետ ես չեմ կարող դա ինձ թույլ տալ» դատողությունն էլ կլինի փոքր նախադրյալը: Դրանցից բխում է հետևյալ եզրակացությունը. «Հետևաբար, նա իմ ընկերուհին չէ»: Ըստ (ա) կետի պահանջի՝ պետք է ստուգել այն հարցը, թե տրամաբանության տեսակետից որքանով է կանոնավոր այս մտահանգումը: Քանի որ յուրաքանչյուր սիլլոգիստական մտահանգման համար անհրաժեշտ է միջին եզր (m), որը ամրագրվում է և՛ մեծ, և՛ փոքր նախադրյալներում, ապա տվյալ մտահանգման մեջ միջին եզրը դիտարկելի է հետևյալ ձևակերպմամբ. «Ընկերուհին նա է, ում ես կարող եմ պատմել այն ամենը, ինչ կա իմ հոգում՝ նախօրոք իմանալով, որ նա այդ մասին ոչ ոքի չի ասի»: Փոքր նախադրյալում միջին եզրը ժխտվում է, թեև բառացիորեն չի կրկնում այն, ինչ ձևակերպված է մեծ նախադրյալում: Հետևաբար, կարելի է ամրագրել այս երկու նախադրյալները տրամաբանության մեջ ընդունված նշանների միջոցով. «p-ն m է, s-ը m չէ», որը համընկնում է սիլլոգիզմի երկրորդ ձևի հետ: Մնում է պարզել, թե որքանով է հնարավոր այս երկու նախադրյալներից բխեցնել մի եզրակացություն, որն անհրաժեշտաբար ճշմարիտ է: Ըստ սիլլոգիզմի երկրորդ ձևի հատուկ կանոնների՝ նախադրյալներից մեկը պետք է լինի ժխտական դատողություն, և մեծ նախադրյալը պետք է լինի ընդհանուր: Հաշվի առնելով նաև տրամաբանության այն կանոնը, ըստ որի, եթե սիլլոգիզմի նախադրյալներից մեկը ժխտական է, ապա եզրակացությունը. ևս պետք է լինի ժխտական՝ մենք իրավունք ունենք դիտարկված երկու նախադրյալներից բխեցնել հետևյալ եզրակացությունը. «Էդնան իմ ընկերուհին չէ»:

ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ խիստ կիրառելի է պայմանական դատողությունն իր տարբեր տարատեսակներով: Մի առիթով Շեքսպիրը գրում է, թե «Եթե-ի մեջ կա ահավոր մի ուժ»¹: Երբ Համլետին հայտնում են թագավորի ցանկությունը՝ իմանալ, թե երբ է Համլետը սրախաղ սկսելու Լաերտի հետ, ստանում են հետևյալ պատասխանը. «...Երբ հրամայում է նրա (Հ.Հ.՝ թագավորի) հարմարությունը՝ իմն միշտ պատրաստ է...»²: Սա մի պայմանական ասույթ (դատողություն) է, որը կարող է պայմանական մտահանգման մեծ նախադրյալի դեր կատարել: Թե ինչպիսի եզրակացություններ կբխեն այդ ասույթից, կախված է այլ հանգամանքներից: Նախ, ինչպես ցույց է տալիս այդ ասույթի համատեքստը, թագավորը ցանկացել է իմանալ, թե արդյոք Համլետը տրամադի՞ր է Լաերտի հետ սրախաղն սկսել իսկույն կեթ, թե՞ կկամենար ուրիշ ժամանակի թողնել: Համլետը լի էր սրախաղն իրականացնելու վճռականությամբ, սակայն որոշ հանգամանքների (այն է, որ ինքն այնպես լավ զգա, ինչպես այդ լուրը ստանալու պահին է զգում) առկայության պարագայում նա իր որոշումն արտահայտում է հետևյալ պայմանական մտահանգման ձևով. «Եթե հիմա պետք է լինի, ապագայում չի լինելու: Եթե ապագայում չպետք է լինի, հիմա է լինելու: Եթե հիմա չլինի, մի օր լինելու է»³: Սա արդեն, իրոք, զուտ պայմանական մտահանգում է, որի ինչպես նախադրյալները, այնպես էլ եզրակացությունը պայմանական դատողություններ են: Բայց այդ պայմանական ձևը յուրահատուկ եղանակով է արտահայտված Համլետի՝ Հորացիոյի հետ ունեցած երկխոսությունում: Այս պայմանական մտահանգման առաջին նախադրյալը հետևյալն է. «Եթե հիմա պետք է լինի, ապագայում չի լինելու»: Երկրորդ նախադրյալն է. «Եթե ապագայում չպետք է լինի, հիմա է լինելու»: Այստեղ արդեն կա շեղում զուտ պայմանական մտահանգման տիպորինակից: Ըստ այդ տիպորինակի սխեմայի՝ կարելի է ասել. «Եթե Ա, ապա Բ», որին պետք է հաջորդի «Եթե Բ, ապա Գ» (կամ՝ ասույթների լեզվով արտահայտելու դեպքում $(p \rightarrow q) \wedge (q \rightarrow r)$): Մինչդեռ Համլետի առաջադրած զուտ պայմանական մտահանգումն արտահայտվում է հետևյալ կերպ. «Եթե Ա, ապա \neg Բ և եթե \neg Բ, ապա Ա» կամ $(p \rightarrow \neg q) \wedge (\neg q \rightarrow p)$: Այստեղից Համ-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Քրուսյան Գ.**, Իմաստասիրական երկխոսություններ, հ. 2, Երևան, «Հայաստան», 1980, էջ 193:

² **Շեքսպիր Վ.**, Ընտիր երկեր երեք հատորով, խմբագրությամբ և առաջաբանով Հովհ.Մամիկոնյանի, հ. 1 (թարգմանությունը՝ Հովհ.Մասեխյանի և Խաչիկ Դաշտենցի), Երևան, «Հայպետհրատ», 1951, էջ 106:

³ Նույն տեղում, էջ 107:

լետը անցում է կատարում դեպի հետևյալ դատողությունը. «Եթե $\neg A$, ապա B », կամ ասույթների հաշվի լեզվով ($\neg q \rightarrow r$): Այս ոչ տիպօրինակ կշռադատության նպատակն է ցույց տալ, որ այդ մենամարտը կամ այժմ պետք է լինի, կամ ապագայում որևէ օր և ժխտում է այն հանգամանքը, թե այն չի կարող չլինել ո՛չ այսօր, ո՛չ էլ ապագայում որևէ օր: Եվ այս միտքը զուգակցվում է որոշակի մեկնաբանություններով, որոնք եթե հեռանում են զուտ պայմանական մտահանգման տիպօրինակից, ապա միայն մի նպատակով՝ առավել պարզ ու հստակ դարձնել Համլետի վճռականությունն իր որոշումը կատարելու տեսակետից: Միևնույն ժամանակ սովյալ օրինակը, իսկ սա եզակի չէ, ցույց է տալիս, որ բնական լեզվով արտահայտված կշռադատությունները շատ ավելի բազմազան են, քան վերջիններիս տրամաբանական տիպօրինակները և բացահայտ ու ոչ բացահայտ մտքերի զուգակցությամբ ու դրանց օգնությամբ կոչված են արտահայտելու մտքերի և զգացմունքների նրբերանգներ, որոնք միշտ չէ, որ կարելի է արտահայտել տրամաբանական սխեմաների միջոցով:

Պայմանական մտահանգման ձևով է արտահայտվում երկընտրանքը, որի մեծ նախադրյալը պայմանական դատողությունների կոնյունկցիա է, փոքր նախադրյալը հաստատում է մեծ նախադրյալի պայմանական դատողությունների հիմքերը, իսկ եզրակացությունը հաստատում է մեծ նախադրյալի պայմանական դատողությունների հետևանքները: Երբ լրաբերը հայտնում է Մակբեթին, թե Բիրնամի կողմից մի անտառ սկսեց շարժվել (ըստ էության դա եղել է վարագուրված զորք), Մակբեթն ասում է. «Ստախո՛ս, սրիկա՛»: Լրաբերն արդարանում է.

«Թափեցեք գլխիս ձեր բարկությունը՝ եթե ճիշտ չէ այդ:

Երեք մղոնից կարող եք տեսնել առաջանալը:

Մի շարժուն անտա՛ռ, ասում եմ, տեր իմ»:

Հետևում է Մակբեթի սպառնալիքը.

«Եթե սուտ է այդ՝ առաջին ծառից քեզ կախել կըտամ,

Մինչև որ քաղը կոնծացնե քեզ: Իսկ եթե ճիշտ է,

Փոյթըս չէ, եթե դու ինձ նույնն անես»⁴:

Այս դեպքում արդեն, ըստ էության, Մակբեթի սպառնալիքն ընդունում է երկընտրանքի ձև: Այն կարելի է վերաշարադրել հետևյալ կերպ. «Եթե լրաբերը սուտ է ասում, ապա ես նրան կախել կտամ ծառից, իսկ եթե նա ճիշտ է ասում, ապա նա էլ կարող է ինձ հետ վարվել նույն կերպ: Բայց նա կամ սուտ է ասում,

⁴ Նույն տեղում, էջ 278:

կամ ճիշտ: Հետևաբար, կամ ես պետք է նրան կախեմ ծառից, կամ էլ նա ինձ»: Սակայն, այնուամենայնիվ, որոշ մեկնաբանություններ կամ մտորումներ զուգակցված են անգամ այս պարզ երկրնտրանքի հետ, որոնք առնվազն ցույց են տալիս տրամաբանականի և հոգեբանականի զուգակցումը հարցի քննարկման ընթացքում: Շատ տեղին է անմիջապես երկրնտրանքին հետևող՝ Մակբեթի հետևյալ երկմտությունը.

«...Ես սկսում եմ

Կասկած հղանալ չար սատանայի երկմիտ խոսքի վրա,

Որ սուտ է ասում ճշմարտի նման...»⁵:

Շեքսպիրի հերոսներից մեկը՝ Էդմոնդը, դիմելով զինվորականներից մեկին, տալիս է առաջադրանք և դրա կատարումը կամ չկատարումը կապում է զինվորականի ապագայի հետ: Այդ պայմանը Էդմոնդն արտահայտում է հետևյալ խոսքերով.

«Եթե կատարես՝ ինչ ոչ այս թղթում

Քեզ հրամայված է, փառքի շավիղը

Կըբանաս դու քեզ»⁶:

Եվ ապա.

«Կամ ասա՝ «կանեմ», կամ բախտըդ փնտրիր

Այլ միջոցներով»⁷:

Սա խիստ մոտենում է հիմնականում երկրնտրանքի տիպորինակին: Եթե... հաշվի չառնենք այն մտքերը, այն բացատրություններն ու մեկնաբանությունները, այն հիմնավորումները, որ տրված են, թեկուզև համառոտ, տվյալ երկրնտրանքի մեծ նախադրյալի և եզրակացության միջև: Նախ, մինչև մեծ նախադրյալի ձևակերպումը Էդմոնդը, դիմելով գնդապետին, հիշեցնում է, որ արդեն մեկ աստիճանով բարձրացրել է նրա զինվորական կոչումը: Դա հավանաբար ասում է նրան ոգևորելու համար և հավատացնելու, որ իր նոր խոստումն էլ կկատարի: Խոստումից հետո, որն արտահայտված է մեծ նախադրյալով, Էդմոնդը խրատում է գնդապետին.

«...Իմացի՛ր դու այս.

Մարդիկ այնպես են, ինչպես աշխարհը.

Լինել փափկասիրտ՝ անվայել բան է

⁵ Նույն տեղում, էջ 278:

⁶ Նույն տեղում, էջ 393:

⁷ Տե՛ս նույն տեղում:

Զինվորի համար: Այս մեծ պաշտոնը,
 Որ հանձնում են քեզ, վիճելի բան չէ»⁸:
 Եվս մեկ օրինակ Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» կատակեր-
 գությունից.

«Պորցիա. Սպասիր, հրեա: Օրենքը քեզնից դեռ պահանջ ունի:
 Մեր վենետիկյան օրենքների մեջ հիշատակված է,
 Որ եթե երբեք հաստատվի օտար մի մարդու վրա,
 Որ նա ուղղակի կամ անուղղակի փորձեր է արել
 Մի քաղաքացու կյանքը բառնալու,
 Նա, որի ընդդեմ օտարականը դավ լարած լինի,
 Պետք է ստանա նրա գույքի կեսը:
 Մյուս կեսն էլ գրավվի հօգուտ պետության գաղտնի սնդուկին.
 Իսկ հանցավորի կյանքը կախված է
 Միմիայն դուքսի ողորմությունից՝ ամեն ձայնի դեմ:
 Եվ քո պարագան, ասում եմ նույնն է.
 Քանզի հայտնվեց, հրապարակային դատավարությամբ,
 Որ անուղղակի, նույնիսկ ուղղակի
 Ամբաստանյալի բուն իսկ կյանքի դեմ դու դավ ես նյութել.
 Որով ընկել ես նույն վտանգի մեջ,
 Որ մի քիչ առաջ հիշատակեցի:
 Չոքի՛ր ուրեմըն, և հայցի՛ր դուքսի ողորմությունը»⁹:

Այս դեպքում առավել ևս հասկանալի է դառնում պայմանական կա-
 տեգորիկ մտահանգման տրամաբանական կառուցվածքը, այն է՝ «Եթե Ա,
 ապա Բ: Ա, հետևաբար Բ», ասույթների հաշվի լեզվով՝ (p-q)՝p, հետևաբար՝ q:
 Եվ, այնուամենայնիվ, կշռադատության ողջ ընթացքում զգացվում է լրացուցիչ
 մեկնաբանությունների դերը արտաձված եզրակացության կանոնավորության
 մեջ համոզելու գործում: Մյուս կողմից էլ նկատում ենք գրեթե բացարձակ
 համընկնում մտքի տիպօրինակի և ոչ տիպօրինակ շարադրանքի միջև:

Մեկ այլ դեպքում Շեքսպիրի դիտարկված նույն կատակերգությունում
 կարդում ենք.

«Ով սրտով գոհ է, վարձատրված է.
 Ես էլ շատ գոհ եմ ձեզ ազատելով:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 561:

Ուրեմն այդ ձևով համարում եմ ինձ վարձատրված»¹⁰:

Մտքի ձևերի տրամաբանական տիպօրինակի և ոչ տիպօրինակի նման հարաբերակցությունները տեղի ունեն մտքի ձևերի շաղկապման կանոնների դաշտում ևս: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է մտքի ձևերի շաղկապումն ապահովող կանոններին՝ նույնության, հակասության, երրորդի բացառման և բավարար հիմունքի օրենքներին, որոնք գրականության մեջ հաճախ անվանվում են «տրամաբանության հիմնական օրենքներ»: Ուշադրություն դարձնենք Շեքսպիրի «Համլետից» վերցված հետևյալ հատվածի վրա.

«Օգրիկ. Սիրելի տեր իմ, եթե ձերո՞ բարձրությունը ժամանակ ունի՝

Կուզեի ձեզ մի բան հաղորդել նորին վեհափառության կողմից:

Համլետ. Ամենախորին ուշադրությամբ պատրաստ եմ լսել, պարոն:

Բայց ձեր գլխարկը այն բանի համար գործածեցեք, ինչի համար, որ շինված է. դա գլխի համար է:

Օգրիկ. Շնորհապարտ եմ ձերո՞ բարձրության, շատ շոգ է:

Համլետ. Ոչ, հավատացեք. նույնիսկ շատ ցուրտ է. հողմը հյուսիսային է:

Օգրիկ. Այո, իսկապես, մի քիչ ցուրտ է:

Համլետ. Բայց և այնպես՝ կարծեմ շատ խեղդող տոթ է, կամ գուցե իմ խառնվածքը...

Օգրիկ. Սաստի՛կ, տեր իմ. շատ խեղդող օդ է. կարծես թե... չեմ կարող ասել որչա՛փ.. բայց, տեր իմ, նորին վեհափառությունը հրամայեց ինձ, որ գամ ձեզ իմաց տամ, թե նա ձեր վրա մի մեծ գրավ է բռնել: Ահա, տեր իմ, բանն ինչ է»¹¹:

Ակնհայտ է, որ Օգրիկն իր պատասխաններում անընդհատ ընկնում է հակասությունների մեջ, և հակասության օրենքի պահանջի խախտումները, թերևս, բացատրվում են ոչ թե տրամաբանական կանոնների չիմացությամբ, այլ հոգեբանական դրդապատճառներով: Նա ամեն կերպ փորձում է սիրաշահել Համլետին, իսկ վերջինս միտումնավոր հակասական գնահատականներ է տալիս նույն երևույթներին՝ ցույց տալու համար պալատականի մտածելակերպի ոչ ինքնուրույնությունը:

Ուշագրավ է մեկ օրինակ ևս: Երբ Կապուլետին՝ Ջուլիետայի հայրը, պահանջում է, որ դուստրը խզի կապերը Ռոմեոյի հետ և ամուսնանա կոմս Պարիսի հետ, իսկ Ջուլիետան, ինքն իրեն հակասելով, ցույց է տալիս, որ

¹⁰ Նույն տեղում, էջ 562:

¹¹ Նույն տեղում, էջ 104:

համաձայն է հոր հետ և միևնույն ժամանակ չի կարող կատարել նրա առաջարկը, ապա հայրն այստեղ նկատում է տրամաբանական հակասություն և աղջկան համարում «հիմար իմաստակ»¹²: Սա ևս ցույց է տալիս, թե մարդիկ ինչպես կարող են ընկնել հոգեբանական այնպիսի վիճակի մեջ, որ նրանց ասածները թվան տրամաբանական այս կամ այն կանոնի խախտում, մինչդեռ իրականում այդպիսի տպավորության պատճառը ոչ թե տրամաբանության կանոնների իմացության պակասն է, այլ այն ներքին խռովքը, ինչի պայմաններում նրանք արտահայտում են իրենց մտքերը: Եվ այդ տարբերությունը հասկանալու և ըստ էության արժևորելու համար նույնպես անհրաժեշտ է համեմատել տվյալ կշռադատությունը մտածողության կանոնների տիպորինակների հետ և պարզաբանել, թե ինչով են պատճառաբանված կենդանի խոսքի մեջ թույլ տրված հակասությունները:

Ահա և մեկ այլ օրինակ քննարկվող հարցի համատեքստում: Ամուսինը դիմում է կնոջը. «Մենք կարող ենք բնակություն հաստատել կամ Դիլիջանում, կամ էլ Սևանում: Այլ ընտրություն չկա»: Որոշ մտորումներից հետո կինը պատասխանում է. «Ես չեմ ցանկանում ապրել Դիլիջանում»: Կնոջ ասածը չի կարելի համարել ամուսնու հարցի ստույգ պատասխանը:

Եթե դիմենք սիմվոլների լեզվին, ապա ամուսնու ասածը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

Ա-ն կամ Բ է, կամ Գ:

Ա-ն Բ չէ:

Ըստ մտքի տիպական ձևերի՝ այս երկու նախադրյալներից պետք է բխի, որ Ա-ն Գ է, այսինքն՝ տրամաբանական կլիներ, եթե կինը պատասխաներ, թե ինքը գերադասում է ապրել Սևանում, սակայն նրա իրական պատասխանն այն է, որ ինքը չի ցանկանում ապրել Դիլիջանում, որը չի նշանակում, թե կցանկանար ապրել Սևանում: Տվյալ դեպքում հնարավոր է, որ կինը ասեր, թե ինքը չի ցանկանում ապրել ո՛չ Դիլիջանում, ո՛չ էլ Սևանում: Իսկ դա չի համապատասխանում մտքի տվյալ տիպորինակ ձևին:

Մտքի տիպորինակ և ոչ տիպորինակ ձևերի փոխհարաբերությունը կարելի է նմանեցնել ծառերի երկու տարբեր վիճակների: Առաջին վիճակը, երբ ծառը ինչ-որ իմաստով քողարկում է իր իրական պատկերը, երբ այն պարուրված է տերևներով, մրգերով և ունի կոտրված ճյուղեր և ճյուղեր, որոնք պատրաստ են կոտրվելու ամեն մի նոր ցնցումից, և երբ ծառը ազատված է

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 470:

այդ բոլոր «հագուատներից» և հնարավոր «վարագույրներից»: Միայն «տերևաթափից» (մրգերից և այլ ավելորդ և կոտորված ճյուղերից) հետո ծառը կարող է ցույց տալ իր իսկական դեմքը: Այդ գործընթացը մենք պայմանականորեն կարող ենք անվանել «ծառի տերևաթափ»: *Տերևաթափ* հասկացությունը տարածելով մտքի ձևերի վրա՝ հարաբերական իմաստով կարելի է ասել մտքի տվյալ ձևը տիպորինա՞կ է, թե՞ ոչ տիպորինակ:

Մտքի ոչ տիպորինակ ձևերի համեմատությունը դրանց տրամաբանական կմախքների հետ հատկապես անհրաժեշտ է թարգմանչի համար: Այն կարևորագույն դեր ունի ինչպես թարգմանավոր ստեղծագործության տրամաբանական կողմն ապահովելու, այնպես էլ տրամաբանականը պարուրած հոգեբանական ելևէջների զգացումային շերտավորումների առանձնահատկություններն ըմբռնելու և մի լեզվից մյուսը փոխադրելու համար: Սակայն դա պետք է ոչ միայն թարգմանչին: Յուրաքանչյուր ոք, ով ուսումնասիրում է այս կամ այն աշխատությունը, հատկապես գիտության բնագավառում, հնարավորություն ունի մտքի ոչ տիպորինակ ձևը հանգեցնելու տիպորինակ ձևի և ավելի ստույգ հասկանալու ուսումնասիրվող խնդիրը:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բրուտյան Գ. (1980), Իմաստասիրական երկխոսություններ, հ. 2, Երևան, «Հայաստան», 446 էջ:

Շեքսպիր Վ. (1951), Ընտիր երկեր երեք հատորով, խմբագրությամբ և առաջաբանով Հովհ.Մամիկոնյանի, հ. 1 (թարգմանությունը՝ Հովհ.Մասեհյանի և Խաչիկ Դաշտենցի), Երևան, «Հայպետհրատ»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բոլոր ժամանակներում տրամաբանները ձգտել են առավելագույն չափով պարզեցնել մտքի ձևերը՝ փորձելով այդ կերպ հանգել ոչ միայն ճշմարիտ, այլև հնարավորինս պարզ եզրակացությունների: Մտքի «պարզեցված» ձևերը հողվածում դիտվել են որպես մտքի տիպորինակ ձևեր, որոնց ձևով կատարված եզրահանգումներն այսպես կոչված «մաքուր» ձևով որպես կանոն հազվադեպ են հանդիպում առօրյա կյանքում, գիտական հետազոտություններում, գեղարվեստական գրականության մեջ կամ հաղորդակցական բնույթի հաղորդումներում: Բնական լեզվով արտահայտված կշռադատությունները շատ ավելի բազմազան են, քան վերջիններիս տրամաբանական տիպորինակները և բացահայտ ու ոչ բացահայտ մտքերի զուգակցությամբ ու դրանց օգնությամբ

կոչված են արտահայտելու մտքերի և զգացմունքների նրբերանգներ, որոնք միշտ չէ, որ կարելի է արտահայտել տրամաբանական սխեմաների միջոցով: Այդ է պատճառը, որ ավելի հաճախ գործածվում են մտքի ոչ տիպորինակ ձևերը, որոնցում օգտագործվում է նաև լրացուցիչ տեղեկույթ, որի բնույթը կախված է այն բանից, թե ինչ ոլորտում է գործառնում տվյալ մտահանգումը, և որը կարող է ուժեղացնել մի դեպքում զգացմունքային ազդեցությունը, մեկ այլ դեպքում՝ համոզելու հնարները և նման կարգի այլ գործոններ: Այդպիսի դեպքերում, որպես օրենք, պահպանվում է կշռադատության տրամաբանական կառույցը, որը հիշատակված լրացուցիչ գործոնների հետևանքով դառնում է ոչ բացահայտ և բացահայտ դառնալու համար կարիք ունի որոշակի կերպարանափոխությունների, փոխակերպումների:

Մտքի տիպորինակ ձևեր կարելի է համարել նաև տրամաբանական նշանները, փոփոխականները, տրամաբանական հաստատուններն ու շաղկապները, որոնք թեև միակերպ չեն նշվում և կարող են փոխարինվել այլ սիմվոլներով, սակայն դրանից տրամաբանական իրողությունը և դիտարկվող բանաձևերի նշանակությունը չի փոխվում:

Բանալի բաներ - մտքի տիպորինակ ձևեր, մտքի ոչ տիպորինակ ձևեր, մտքի տիպորինակ և ոչ տիպորինակ ձևերի փոխհարաբերությունը, մտահանգման տրամաբանական կառույց, տրամաբանական փոփոխականներ, տրամաբանական հաստատուններ ու շաղկապներ, տրամաբանական սխեմաների, տրամաբանականի և հոգեբանականի զուգակցումը, մտքի ձևերի շաղկապման կանոնների դաշտ, թարգմանվող ստեղծագործության տրամաբանական կողմ, թարգմանվող ստեղծագործության հոգեբանական ելևէջների զգացումային շերտավորումներ:

К ВОПРОСУ О ВОСПРИЯТИИ НЕТИПИЧНЫХ ФОРМ МЫСЛИ

АСМИК ОГАНИСЯН

Во все времена логики старались насколько возможно упростить формы мысли, таким образом пытаюсь достичь не только истинных, но и максимально простых выводов. «Упрощенные» формы мысли рассмотрены в статье в качестве типичных форм мысли, выводы, сделанные по их форме (в так называемом «чистом» виде), как правило, в повседневной жизни, научных исследованиях, в художественной литературе или в информативных статьях встречаются редко. Рассуждения, выраженные естественным языком, намного разнообразней их логических типичных форм и призваны благодаря сочетанию

явных и неявных мыслей выражать оттенки мыслей и чувств, которые не всегда возможно выразить при помощи логических схем. Именно это является причиной употребления нетипичных форм мысли, в которых используется также дополнительная информация, суть которой зависит от того, в какой сфере функционирует данное умозаключение, и может усилить в одном случае чувственное воздействие, в ином случае – способы убеждения и иные факторы подобного типа. В таких случаях, как правило, сохраняется логическая структура рассуждения, которая в результате отмеченных дополнительных факторов становится неявной, а для того чтобы стать явной, нуждается в определенных трансформациях.

В качестве типичных форм мысли можно рассмотреть также логические знаки, переменные, логические константы и союзы, которые хотя и отмечаются не одинаково и могут быть заменены иными символами, однако не меняют логическую действительность и значение рассматриваемых формул.

Ключевые слова – типичные формы мысли, нетипичные формы мысли, соотношение типичных и нетипичных форм мысли, логическая структура умозаключения, логические переменные, логические константы и союзы, логические схемы, сочетание логического и психологического, поле правил соединения форм мысли, логическая сторона переводимого произведения, психологические элементы чувственных пластов переводимого произведения.

THE UNDERSTANDING OF NON-MODEL FORMS OF MIND

HASMIK HOVHANNISYAN

At all times logicians have been keen on simplifying forms of mind by trying to come as far as possible not only to real but also to simple conclusions. In this article “simplified” forms of mind are regarded as mind model forms. Conclusions drawn with the help of the so called “plain (bare)” forms, as a rule rarely occur in scientific works, literature, everyday life, or in communicative actions. Discernments expressed in natural language are much more diverse than those expressed in logical models. They, thanks to their conjunction with explicit and non-explicit thoughts are designed to express subtle nuances of thought, feelings or emotions, which are not always possible to express by logical diagrams. That is why non-model forms of mind are more frequently utilized. These non-model forms make also use of additional information the essence of which depends on the sphere where these deductions function and can, on the one hand, strengthen the

emotional impact, and on the other, enforce the means of persuasion and some other similar factors. In such cases, as a rule, the logical structure of a judgement is maintained which as a result of the above mentioned additional factors becomes obscure and needs certain transformations, conversions to become obvious.

Logical signs, variables, constants and conjunctions can as well be considered as model forms of mind. Although they are not represented in the same manner and are liable to be replaced by other symbols, their logical reality and the significance of the considered formulas do not change.

Key words – model forms of mind, non-model forms of mind, interrelation of model and non-model forms of mind, logical structure of deduction, logical variables, logical constants and conjunctions, logical diagrams, the conjunction of logic and psychology, the field covering mind form combining laws, the logical side of the translated work, the emotional levels of the psychological modulations of the translated work.

ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ՀՁՈՐ ԶԵՆՔ

ՄԱՐԻՆԵ ՇԱՀՐԱԶՅԱՆ

Ջանգվածային տեղեկատվական միջոցները՝ որպես ժամանակակից հասարակության կարևորագույն ինստիտուտներ, նշանակալից դեր են խաղում անհատի զարգացման, հասարակական գիտակցության ձևավորման ու աշխարհաքաղաքական գործընթացներում: Դեռ առաջին թերթերի ու ամսագրերի առաջացումը լուրջ սոցիալական փոփոխություններ առաջացրեց: Կարևոր դարձավ մարդու ձևավորումը հասարակության մեջ, որը մեծ հետաքրքրություն ուներ գրականության, արվեստի ու քաղաքականության, կյանքի ու գիտության նկատմամբ: Այն դարձավ ժամանակակից հասարակության նախատիպը, որը մշակում է համընդհանուր հասարակական արժեքներ և դիմակայում տարաբնույթ խմբերին ու կառույցներին, որոնց շահերը հաճախ չեն համընկնում հասարակական շահերի հետ:

Համաշխարհային թաթերաբեմում տեղի ունեցող երևույթների ու իրադարձությունների իրազեկումն ու մեկնաբանումն իրականացվում են տեղեկատվական ու հեռահաղորդակցման միջոցներով: Հասարակական զարգացման արդի փուլում տեղեկատվության հոսքերն այնքան ծավալուն և բազմաբնույթ են, որ նույնիսկ կրթված մարդը ի վիճակի չէ ճիշտ կողմնորոշվելու հաճախ միմյանց հակասող գործընթացների բարդ համակարգում և ընդունելու համապատասխան որոշումներ: Անշուշտ տեղեկատվական միջոցները տեսանելի են դարձնում ողջ աշխարհը, բայց այն ներկայացվում է անմիջական ունկնդրին որոշակի մտապատկերների ու հետաքրքրությունների լույսի ներքո: Թեև նրանք թույլ են տալիս մարդկանց դուրս գալ սեփական փորձի շրջանակներից, բայց միաժամանակ սահմանափակում են իրականությունը օբյեկտիվորեն տեսնելու և գնահատելու հնարավորությունը:

Հաղորդակցման նախկին ձևերում, որտեղ գերիշխում էր գրավոր մշակույթը, մարդն ընկալվում և դաստիարակվում էր որպես բանական էակ, որն ունի մտածելու կարողություն, լեզու և հարուստ ներաշխարհ: Անցումը հաղորդակցման աուդիովիզուալ ձևի ենթադրում է մարդու ոչ ինտելեկտուալ

կարողությունների մշակում: Այսինքն՝ «էկրանի մշակույթը»¹ ավելի շատ ազդում է հույզերի, քան բանականության վրա: Կարևոր հարց է, թե ինչպես են մարդիկ կողմնորոշվում կերպարների աշխարհում: Այսօր հաճախ ենք լսում «մարդու մահ»² հասկացությունը՝ որպես մարդու մասին որոշակի գաղափարի վերջ: Բայց այստեղ խոսքը միայն գաղափարի փոփոխության մասին չէ. փոփոխվում է մեր ողջ ռեֆլեքսիվ համակարգը, որն արդեն արդյունավետ չի գործում նոր պայմաններում: Եթե նախկինում գերիշխում էր գծային, ապա այսօր գերիշխում է պատկերային մտածողությունը: Այն շրջանառության մեջ է դնում տեսողական պատկերներ՝ ստեղծելով վիրտուալ իրականություն: Ինչպես ՌԻ. Էկոն է ասում. «...պատկերներն ունեն ահռելի ուժ, և դրանց միջոցով կարելի է մարդկանց մեջ տարածել այնպիսի համոզմունքներ ու գաղափարներ, որոնք այլ պարագաներում կարող էին կասկածներ հարուցել կամ չընկալվել»³:

Մտահոգիչ է, երբ տեղեկատվական միջոցները կիրառվում են քաղաքական նպատակներով: Տեղեկատվական պատերազմները, որոնք սպառնում են համայն մարդկությանը, ընթանում են տեղեկատվական միջոցներով: Հեռուստատեսությունը, որը զանգվածային տեղեկատվական միջոցներից ամենաազդեցիկն է, քաղաքական իշխանության իրականացման լավագույն միջոցն է: Հեռուստատեսությամբ է ստեղծվում այն վիրտուալ իրականությունը, որը պարտադրվում է միլիոնավոր հեռուստադիտողներին՝ հնարավորություն տալով վերահսկելու նրանց մտքերն ու գործողությունները: Այն մեծ ազդեցություն է թողնում մարդկանց աշխարհընկալման, զգացմունքների, գիտելիքների և արժեհամակարգերի վրա՝ վերափոխելով նրանց այս կամ այն խնդրի վերաբերյալ դիրքորոշումները: Ինչպես Դ. Բրայանտն է նշում. «զանգվածային տեղեկատվական միջոցների ազդեցությունը հոգեկանի վրա նման է ատոմային ռումբի պայթյունին»⁴:

ժամանակակից աշխարհում զանգվածային տեղեկատվական միջոցները դարձել են կառավարման և մանիպուլյացիայի հզոր գեներ: Մանիպուլյացիան զանգվածային ներշնչանքի շնորհիվ հնարավորություն է տալիս մարդ-

¹ Տե՛ս **Артамонов Г. Т.** О противоречиях перехода к информационному обществу, //Вестник ВОИВТ, 1990, N3, էջ 11:

² Տե՛ս **Медведев Е. А.** Основы информационной культуры //Социс, 1994 N11, էջ 59:

³ Տե՛ս **Эко У.** От Интернета к Гуттенбергу: текст и гипертекст, Интернет, 1998 N6-7, էջ 92:

⁴ Տե՛ս **Брайант Дж., Томсон С.** Основы воздействия СМИ, Москва, 2004, էջ 67:

կային ցանկություններն ուղղորդելու անհրաժեշտ հունով՝ առանց բռնության ուժի: Այն ենթադրում է.

1. Հոգեբանական ազդեցություն, որն իրականացվում է գաղտնի և հետևաբար ի վնաս այն անձանց, ում ուղղված է: Վերջինիս պարզագույն օրինակը գովազդն է:

2. Աննկատ ազդեցություն. հաջողությունը երաշխավորված է, եթե մանիպուլյացիայի ենթարկվողը հավատում է, որ այն, ինչ տեղի է ունենում բնական է և անխուսափելի:

3. Քողարկված մտադրության իրագործում, որը մարդկանց, նախապես մշակված ծրագրի համաձայն, դրդում է որոշակի գործողությունների:

Չանգվածային տեղեկատվական միջոցների կողմից կիրառվող մանիպուլյացիոն մեխանիզմները հնարավորություն են տալիս չբարձրաձայնելու ճշմարտությունը, իրականությունը ներկայացնելու տարբեր գույներով, շեղել մարդկանց ուշադրությունը և փոխելու նրանց պատկերացումները: Օրինակ՝ փաստերի լուռը և շեշտադրումը կիրառվում են լսարանի մոտ վստահություն ստեղծելու միտումով: Հետևողականորեն լուսաբանվում և ընդգծվում են ոչ էական փաստերը, իսկ կարևոր տեղեկատվությունը լուռության է մատնվում: Այն կիրառվում է, որպեսզի մարդկանց ուշադրությունը շեղվի կարևոր, բայց կառավարողի համար ոչ պիտանի տեղեկատվությունից: Ըստ սոցիոլոգների՝ տեղեկատվություն ստանալուց 30 րոպե հետո մարդը հիշում է բովանդակության 60%-ը, օրվա վերջում հիշողության մեջ մնում է միայն 40%-ը, իսկ շաբաթվա վերջում գրեթե մոռացության է մատնվում⁵: Արդյունքում խնդիրն անհետանում է մի քանի օրվա ընթացքում, եթե իհարկե վերջինս անընդհատ չի կրկնվում:

Այսպիսով, հարց է առաջանում՝ արդյոք տեղեկատվական միջոցներից մենք ստանում ենք ճշմարիտ տեղեկատվություն աշխարհի ու իրադարձությունների մասին: Չանգվածային տեղեկատվական միջոցների կողմից կիրառվող տեխնիկական միջոցների ու մեխանիզմների շնորհիվ հասարակությունը հաճախ գերծ է մնում օբյեկտիվ իրականությունից՝ պատկերացում չունենալով այն մասին, թե ինչ է իրականում տեղի ունեցել կամ տեղի ունենում: Եթե նույնիսկ տեղեկատվական միջոցները չեն խեղաթյուրում իրականությունը, ապա լիովին ունակ են փոխելու պատկերացումները վերջինիս մասին:

⁵ Տե՛ս **Дубровский Е. Н.** Информационно-обменные процессы как факторы эволюции общества, Москва, МГСУ, 1996, էջ 72:

Ժամանակակից պայմաններում հասարակությունն ապրում է ոչ թե իրական, այլ տեղեկատվական, վիրտուալ աշխարհում, որը հեղեղված է տեղեկատվությամբ և ապատեղեկատվությամբ: Հետևաբար, հասարակության վերաբերմունքը երևույթներին և խնդիրներին սահմանվում է նրանց կողմից, ովքեր վերահսկում են տեղեկատվական աշխարհը: Ռուս մեծ փիլիսոփա Ալեքսանդր Զինովևը պնդում է, որ այսօր Չանգվածային տեղեկատվական միջոցների խնդիրը «մարդկանց ուղեղները մինչև վերջ լցնելն է, որպեսզի էլ տեղ չմնա այլ բանի համար, և ուղեղը շարժելու ամեն ցանկություն վերանա»⁶: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է մարդկանց գիտակցության մեջ այնպիսի քառս սերմանել, որ չկարողանան այն կառավարել:

Ինչպես նախկինում, այնպես էլ մեր օրերում թերթերն ու ամսագրերը ծառայել և ծառայում են որպես հասարակական կարծիքի ձևավորման և պետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կուրսի լուսաբանման կարևորագույն միջոց: Ժամանակակից Չանգվածային տեղեկատվական միջոցների նպատակը այս կամ այն խնդրի բարձրաձայնումն ու քննարկումն է, որը հնարավոր է դարձնում պատասխանատու ծառայություններին ընդունել համապատասխան որոշումներ: Չանգվածային հաղորդակցման նոր միջոցները ոչ միայն միավորում են հեռուստախցիկը, հեռուստացույցը, ֆաքսն ու համակարգիչը, այլև քաղաքականության վարման հզոր միջոցներ են: Մյուս կողմից նրանք կարող են դառնալ ոչ թե անաչառ տեղեկատվության, այլ նաև մոլորության աղբյուր: Ընդ որում, եթե «ավանդական» տեղեկատվական միջոցներն ունեին մշակված որոշակի իրավական նորմեր ու ավանդույթներ, նյութի մատուցման սահմանված բարոյականության չափանիշներ, ապա նոր տեղեկատվական միջոցները չունեն նման չափորոշիչներ և վերահսկվում են ոչ թե հասարակության, այլ որոշակի անհատների ու կազմակերպությունների կողմից, որոնց շահերը հաճախ տարբերվում են համընդհանուր շահերից:

Այսպիսով, ազատությունը, ստեղծագործելու հնարավորությունը, մատչելիությունը, անպաշտոնականությունը, անկասկած, ժամանակակից Չանգվածային տեղեկատվական միջոցների գործունեության դրական հետևանքներն են, բայց միաժամանակ ակնհայտ է նաև այն փաստը, որ կարող են ունենալ և բացասական հետևանքներ: Արդի տեղեկատվական միջոցներում իշխանությունը տարրալուծվում ու անտեսանելի է դառնում, բայց միաժամանակ թափանցում է ամենուր: Այն թափանցում է մարդկանց գիտակցության մեջ գի-

⁶ St' u **Зинovieв** A. Глобальный человек, Москва, 2003, էջ 72:

տական ու ժամանցային հաղորդումների տեսքով ու դուրս է մնում հասարակական վերահսկողությունից: Թեև նրանք հնարավորություն են տալիս միավորելու լուսանկարը, լրահաղորդումն ու համապատասխան գնահատականը մեկ ամբողջի մեջ, իր հերթին մոնտաժի սկզբունքն էլ հնարավորություն է տալիս իրականությունն այնպես մեկնաբանելու, որ աշխարհը, որը մենք ընկալում ենք, դառնում է մտացածին: Եվ պատահական չէ, որ այսօր ոչ միայն շոուները, այլ նաև քաղաքական լրահաղորդումներն են բեմականացվում: ՁԼՄ-ները ոչ միայն նոր պատուհան են բացում դեպի աշխարհ, այլ նաև սահմանափակում են մարդու ստեղծագործական հնարավորությունը: Դասական մամուլի ընթերցողը բավականին մեծ ինքնուրույն աշխատանք էր կատարում՝ տպագրական նշանները փոխանցելով կերպարների ու հասկացությունների աշխարհ: Իհարկե, այստեղ մեծ դեր է խաղում կրթությունը, որը կատարում է և՛ կողմնորոշիչի, և՛ սելեկտորի, և՛ գրաքննիչի դեր: Այսօր ՁԼՄ-ն պատրաստի տեսանյութ է տալիս, որը չի պահանջում կերպարի ինքնուրույն վերլուծություն: «Կապույտ էկրանը դարձել է մի յուրատեսակ թակարդ, որից դուրս գալու և աշխարհը ամբողջության մեջ տեսնելու հնարավորությունները աստիճանաբար նվազում են»⁷ :

Տեղեկատվական միջոցը ոչ միայն բովանդակություն է, այլ նաև կառույց: Այն մի ինստիտուտ է, որը գործում է մյուս ինստիտուտների կողքին՝ շուկա, եկեղեցի, համալսարան և այլն: Սրանցից յուրաքանչյուրը ձևավորում է մարդկային որոշակի հատկանիշներ: Շուկան, որպես կանոն, ձևավորում է ագրեսիա, եկեղեցին՝ սեր, համալսարանը՝ գիտելիք: Չանզվածային տեղեկատվական միջոցը ինստիտուտների ինստիտուտն է: Այն մի վայր է, մի տարածություն, որտեղ այս բոլորը հանդիպում ու հաղորդակցվում են: Այդ պատճառով էլ մամուլի ու հեռուստատեսության կարևոր ֆունկցիան միջնորդ լինելն է: Չանզվածային տեղեկատվական միջոցները պետք է դառնան բարոյականության ու գործավարության, ճանաչողության ու պոեզիայի հանդիպման վայր: Այս ամենը խոսում է այն մասին, որ անհրաժեշտ է վերականգնել պետական մամուլի ու հեռուստատեսության դերը: Որքան էլ որ արդյունավետ ու ժողովրդավարական են համարվում ժամանակակից էլեկտրոնային տեղեկատվական-հաղորդակցման միջոցները, անհրաժեշտ է զարգացնել ավանդական լրագրությունն ու հրապարակախոսությունը՝ մտածելու և գործելու կարո-

⁷ Տե՛ս **Эко У.** Отсутствующая структура. Введение в социологию, СПб: Университетская книга, 1988, էջ 134:

դունակ բնակչություն զարգացնելու նպատակով՝ պահպանելու համար այն մշակութային տարածությունը՝ լրագրող-թերթ-ժողովուրդ, որտեղ հասարակությունը կարող է տարբեր հարցեր քննարկել ու համաձայնության գալ, համատեղ մշակել որոշակի դիրքորոշումներ: Քաղաքագետների ու գիտնականների գլոբալ գաղափարները, փիլիսոփաների, բարոյագետների ու իրավաբանների կողմից առաջադրվող արժեքների ու կանոնների համակարգը մարդկանց սիրտն ու հոգին գրավելու համար պետք է քննարկման առարկա դառնան ու ընդունվեն նրանց կողմից:

Զանգվածային տեղեկատվական միջոցները պետք է խիստ վերահսկողության ենթարկվեն պետական մարմինների կողմից: Այսօր նրանց նկատմամբ վարած քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես ազատ, ինտերնացիոնալ, սեփականաշնորհման քաղաքականություն: Տեղեկատվական համակարգում կատարված բոլոր փոփոխություններն անմիջականորեն ազդում են յուրաքանչյուր մարդու վրա: Մեր նշանների ունիվերսալը նախկինում ձևավորվում էր թերթի, ամսագրի, ռադիոյի, կինոյի ու հեռուստատեսության հիմքի վրա: Իսկ այսօր բացվել են հաղորդակցման «դասական տեխնիկայի»⁸ և համակարգչի համադրման նոր հնարավորություններ, ինչը պահանջում է մշակել նոր, արդյունավետ քաղաքականություն: Զարգացած շատ երկրներ վաղուց դա գիտակցել են: Մեր աչքի առաջ ավանդական մշակույթն անկում է ապրում: Հետևանքները սպասել չեն տալիս: Փոփոխությունները, որոնք կատարվում են մեր հոգևոր աշխարհում (հույզեր, հիշողություն, երևակայություն, բանականություն) արդեն ակնհայտ են: Եվ եթե համապատասխան միջոցներ չգործադրվեն, ապա հասարակական բարեփոխումների բոլոր ջանքերն անօգուտ կլինեն: XX դարի 2-րդ կեսի փորձը ցույց է տալիս, որ նոր զարգացող երկրների ավանդական մշակույթի միայն մի մասը կարողացավ ինտեգրվել նոր դարաշրջան:

Ինչպես անցումային փուլում գտնվող յուրաքանչյուր երկիր, Հայաստանը ևս շատ անելիքներ ունի տեղեկատվական ոլորտում: Հայոց ինքնության պահպանման և հոգևոր անվտանգության ապահովման համար նախկինում մշակված մեխանիզմները տեղեկատվական հեղափոխության արդյունքում ձևավորված ներկա աշխարհակարգում արդյունավետ չեն գործում: Իրողությունը պահանջում է, որպեսզի դրանք արդիականացվեն, և ստեղծվեն նորերը: Զանգվածային տեղեկատվական միջոցների վերահսկման նոր

⁸ Տե՛ս **Варганова Е. Л.** Новые проблемы, приоритеты цифровой эпохи, Информационное общество, 2001, N 3, էջ 56:

քաղաքականության մշակումն անվտանգության ապահովման գրավականներից մեկն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արդի աշխարհում զանգվածային տեղեկատվական միջոցները ոչ միայն տեղեկատվության աղբյուր են, այլև մանիպուլյացիոն հզոր զենք: Նրանք աննկատ ազդում են մարդկանց հոգեկերտվածքի, գիտակցության ու բարոյական արժեքների վրա՝ վերափոխելով դրանք: Տեղեկատվական պատերազմները վարում են զանգվածային տեղեկատվական միջոցներով: Ելնելով ազգային անվտանգությունից՝ անհրաժեշտ է, որ ԶԼՄ-ները վերահսկվեն պետության կողմից:

Բանալի բառեր - տեղեկատվություն, զանգվածային տեղեկատվական միջոցներ, մանիպուլյացիա:

СРЕДСТВА МАССОВОЙ ИНФОРМАЦИИ КАК МОЩНОЕ ОРУДИЕ МАНИПУЛЯЦИИ

МАРИНЕ ШАХБАЗЯН

В современном мире средства массовой информации являются не только источником информации, но и хорошим орудием манипуляции. Они, незаметно влияя на психику, сознание и нравственные ценности людей, трансформируют их. Информационные войны ведутся средствами массовой информации. Исходя из национальной безопасности, необходимо, чтобы средства массовой информации находились под контролем государства.

Ключевые слова – информация, средства массовой информации, манипуляция.

MASS MEDIA — A POWERFUL MANIPULATIVE WEAPON

MARINE SHAHBAZYAN

Nowadays mass media is considered to be not only a source of information but also a powerful manipulative weapon. The mass media have an influential

impact on the psychology, consciousness and spiritual values of people they have as well the power to change and shape them. As informational warfare is mainly conducted by mass media Shahbazyan thinks its censorship is of necessity a must for national safety issues.

Key words – information, means of mass media, manipulation.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ОБЯЗАННОСТЕЙ ЛИЧНОСТИ

ЛИЛИТ КАЗАНЧЯН

Исследование юридической обязанности как одного из основных структурных элементов правового положения личности имеет краеугольное значение для непрерывно развивающейся науки – теории государства и права. Следует отметить, что в юридической литературе по сей день не было уделено достаточного внимания проблематике юридических обязанностей, их социальному, юридическому содержанию и важной роли в регулировании взаимоотношений государства и личности, а также в процессе развития и стабилизации общественных отношений. Следовательно, необходимо детальное изучение юридических обязанностей как механизма правового регулирования законности, конституционности и правопорядка, так как юридическая обязанность в совокупности с правами и свободами личности составляет универсальный принцип равноправия, гражданского общества и правового государства¹.

Согласно общепризнанному определению, *юридическая обязанность – это предусмотренное законодательством и охраняемое законом необходи-*

¹ См.: **Байтин М.И.** Сущность права (современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001. с. 81-88; **Барзилова Ю.В.** Юридические обязанности как элемент правового статуса личности. Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2006. с. 105-107; **Матузов Н.И.** Актуальные проблемы теории права. Саратов, 2003. с. 302-303; **Хачатуров К.Е.** Юридические обязанности граждан Российской Федерации: проблемы теории и практики: Автореф. дисс.... канд. юрид. наук. СПб., 2000. с. 5-7; **Эбзеев Б. С.** Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации. Москва, 2005. с. 215-220. **Он же.** Личность и государство в России: взаимная ответственность и конституционные обязанности. Москва, 2007, с. 102-103.

*мое поведение участника правоотношений по отношению к правомочному субъекту (личность, организация, общество, или государство)*².

В теории государства и права юридические обязанности часто рассматриваются как корреспондирующие понятия прав, свобод, личности и наделяются их вторичными качествами. При этом, юридические обязанности могут быть исходными в правовом статусе личности, что предопределяется интересами и потребностями общества³. Заметим, что такими качествами обладают основные (конституционные) обязанности личности. Следовательно, кажется убедительным мнение Г.В.Мальцева, согласно которому юридические обязанности – это проявление *возможного поведения личности (курсив наш-Л.К.)*. В юридических обязанностях, как и в субъективном праве отражены цели, мотивы поведения личности, которые выражают объективные закономерности и тенденции развития общества⁴. С правовой точки зрения поведение должного лица связано с той возможностью, которая одновременно признается необходимой законодательством. Юридическая обязанность – это дальнейшее, перспективное, возможное поведение субъекта, которое носит обязательный характер с точки зрения закрепленных законом интересов и воли личности. Следует отметить, что правоведы раскрывают содержание концепции “обязанность” при помощи следующих понятий: “необходимость”, “юридическая необходимость”, “необходимость в поведении (долженствование)”, “возможность” и т.п. При этом, некоторые правоведы различают также понятия “долженствование (необходимость) в поведении” от “должного поведения”⁵. Так, С.А. Братус и И.А. Толстова рассматривают обязанность как *необходимое поведение обязанного лица, обусловленное требованием правовых норм и обеспеченное государственным принуждением (курсив наш-Л.К.)*⁶.

² Турпишвили Ч. Ы. *Правовые и юридические отношения*, Тбилиси, «Фирма», 1997, с. 374.

³ См.: **Кечекьян С. Ф.** Правоотношения в социалистическом обществе. Москва, изд. АН СССР, 1958. с. 60-67.

⁴ См.: **Мальцев Г.В.** Социалистическое право и свобода личности (теоретические вопросы). Москва, 1968. с. 71-79.

⁵ Подробнее см.: **Витрук Н.В.** Общая теория правового положения личности. Москва, Норма, 2009; **Воеводин Л.Д.** Юридический статус личности в России. Уч. пособ. Москва, Инфра-Норма. 1997; **Масленников В.А.** Конституционные обязанности граждан. Москва, Норма. 2010.

⁶ См.: **Братус Н. С.** Субъекты гражданского права. 1994. с. 11. **Толстова И. А.** Юриди-

По мнению Л.Д. Воеводина, закрепленные в правовых нормах права и обязанности в равной мере выражают необходимое, должное поведение, т.е. соответствующее поведение. *Должное* подчеркивает лишь внешнюю сторону обязанности: обязанность должна быть исполнена. Между тем, понятие “*долженствование (принуждение, необходимость)*” в поведении личности выражает внутреннюю сторону юридической обязанности, предоставляя тем самым возможность рассмотреть ситуацию с точки зрения субъекта, а не государства, которое утвердило меру должного поведения личности⁷. Следовательно, Л.Воеводин не согласен с теми авторами, которые определяют обязанность как “*меру должного поведения обязанного лица*” (Н.Г. Александров, С.С. Алексеев, Б.С. Эбзеев и др.) (*курсив наш-Л.К.*). Более того, по мнению Л.Д. Воеводина, категория “правовая (признанная государством) необходимость” в отличие от “субъективного права” полноценно раскрывает содержание юридической обязанности. С одной стороны, она указывает на то, что обязанность реальна и развивается в рамках дозволенного поведения, закрепленного законом и гарантированного государством. С другой стороны, правовая необходимость устанавливает признаки, свойственные содержанию обязанностей: меру и границы должного поведения. При этом, понятие “необходимость” в раскрытии вопроса об обязанностях личности играет ту же роль, что и понятие “возможность” для субъективных прав и свобод личности. Следовательно, “должное поведение”-это гарантированное (обеспеченное) принудительной силой государства и соответствующее санкциям правовой нормы поведение, которое полностью отражает особенность (специфику) права в целом и отличие правовых норм от социальных норм⁸.

Проведенные исследования свидетельствуют о том, что “необходимость” не стоит понимать как “долг”, основанный на принуждении или навязывании чужой воли. Об этом свидетельствует то, что в демократическом государстве большинство граждан исполняют свои обязанности осознанно и уверены в целесообразности своих действий. Известно, что в условиях демо-

ческая ответственность государства и его представителей. Дисс. ...канд. юрид. наук, Владимир, 2010. с. 110-124.

⁷ См.: **Витрук Н.В.** Общая теория правового положения личности. Москва, Норма. 2009, с. 117; **Воеводин Л.Д.** Юридический статус личности в России. Уч. пособ. Москва, Инфра-Норма. 1997. с. 136.

⁸ См.: **Герхард.** Социалистическое право и личность. Москва, 1971, с. 239.

кратического государства и общества многие обязанности одновременно выступают в качестве прав. Например, некоторые права должностных лиц. Очевидно, что после развала Советского Союза некая отчужденность, поляризация прав и свобод личности постепенно ослабевает вследствие конституционно-правовых, судебно-правовых и других системных реформ, касающихся развития общества и государства.

Субъективное право обеспечено обязанностями других лиц. Юридическая обязанность – это требование поведения от должного лица в пользу правомочного лица, которое обеспечено государственным принуждением. Обязанность устанавливается в соответствии с правовыми нормами и поэтому называется правовой. Юридические обязанности социально обусловлены, так как не являются результатом свободной воли личности. Так, в контексте теории индивидуализма обязанность рассматривается как явление, направленное на ограничение личных интересов, свобод и целей⁹. Мы считаем, что правовое государство играет более активную роль в жизни каждого человека, но не для более жесткого правового регулирования поведения личности, внедрения ограничений и запретов. Конституция РА и текущее законодательство в соответствии с международными документами о правах человека охраняют (защищают) безопасность государства, интересы общества и личности. В соответствии с этим в демократическом обществе равным правам граждан соответствуют равные обязанности по отношению к обществу и государству. Следовательно, лишь единство и взаимосвязь прав и обязанностей в обществе обеспечивает реальную свободу личности. Единство (целостность) прав и обязанностей в нашем обществе является важным принципом, выражающим гармоничное сочетание личных и общественных интересов, взаимных обязанностей и социальных потребностей, претензий государства и гражданина. «Нет прав без обязанностей и обязанностей без прав»¹⁰. В единстве прав и обязанностей выражается идея социальной справедливости: каждый обладает как правами, так и обязанностями. Поэтому Энгельс, критикуя Эрфуртский план,

⁹ См.: **Jellinek G.A.** *System der subjektiven offentlichen Rechte*. S. 86–87.

¹⁰ **Маркс К., Энгельс Ф.** Сочинения. Т. 16. Москва, Гос. изд. полит. лит., 1960, с. 13.

предложил изменить выражение “за равные права всех” на принцип: “за равные права и равные обязанности всех”¹¹.

Юридическая обязанность, выступая как *коррелят (относительное понятие) субъективных* прав, является особым правовым средством воздействия на других лиц, в котором нуждается индивид в процессе реализации своих субъективных прав. При этом, действия обязанного индивида (личности) направлены на удовлетворение законных интересов и прав правомочного субъекта. Следовательно, обязанность – мера обеспечения гарантий прав личности. Если субъективное право – это сфера власти свобод и прав личности, то юридическая обязанность является сферой подчинения и повиновения. Функциональное призвание юридических обязанностей – это корреспондировать (соответствовать) субъективным правам, исполняя свою работу в общем механизме правового регулирования, при этом придавая верный ход действиям личности. А социальная функция – это создать правильное, необходимое и обязательное правосознание, правовую культуру, служить регулятором в укреплении правопорядка и законности. Следует отметить, что существуют также всеобщие (общие) юридические обязанности, содержание которых непосредственно не вытекает из субъективных прав личности. Эти юридические обязанности обеспечивают охрану общественных интересов, ценностей, благ, свободы активных действий личности, защищают жизнь и достоинство личности, позитивную свободу и другие сферы личной жизни от незаконного вмешательства со стороны государства или иных лиц. Следовательно, цель данных юридических обязанностей – удовлетворение законных интересов общества, коллектива и индивидов. В демократических странах общие юридические обязанности закрепляются и гарантируются конституцией, становясь конституционными обязанностями. Стоит отметить, что в государствах с федеративным устройством такие обязанности закреплены как в Федеративной Конституции, так и в Конституциях субъектов федерации.

Обязанности человека и гражданина по своей сути разнообразны и сопряжены с различными сферами общественных отношений. Существуют обязанности, которые касаются только граждан данного государства, а существование некоторых обязанностей может быть обусловлено характером

¹¹ Маркс К., Энгельс Ф. Сочинения. Т. 22, Москва, Гос. изд. Полит. лит., 1960, с. 235-236.

правового положения личности (госслужащий, учитель, студент, обвиняемый и т.д.), а также фактом членства в организации или объединении (политическое, общественное, экономическое, и т.д.). Следовательно, обязанности личности могут быть урегулированы как правовыми нормами всех отраслей права, так и уставом общественной, политической организации. Конституционная (основная) обязанность—это вытекающая из интересов всех членов общества, установленная государством, закрепленная конституцией необходимость, которая диктует правила (меру и вид) поведения каждого гражданина, а также ответственность индивида за ненадлежащее поведение. Вообще обязанности, закрепленные в Конституции страны, существенно отличаются от обязанностей в других отраслях права и от обязанностей, закрепленных в актах, не имеющих нормативного характера. Помимо этого, в Конституции закреплены не абстрактные обязанности гражданина и человека, а только те, которые имеют всеобщий характер и не связаны с конкретным правовым статусом человека. За выполнение своих конституционных обязанностей личность несет ответственность непосредственно перед обществом, а гражданин—перед государством. Более того, наши исследования свидетельствуют о том, что в конституциях СНГ¹² наряду с основными правами также функционируют основные обязанности граждан, такие как:

- Чтить, уважать и охранять законы.
- Уважать честь, достоинство, права и свободы других.
- Защищать родину.
- Уважать государственные символы страны.
- Добросовестно оплачивать налоги и сборы.
- Охранять природу и окружающую среду.
- Охранять, защищать исторические и культурные памятники и т.д.

Б.С. Эбзеев считает, что обязанности человека и гражданина—это выраженные и закрепленные в конституционных нормах виды и меры правомерного (должного) поведения личности, включающие требования к поведению каждого члена общества, осуществление которых необходимо, с одной сто-

¹² Подробнее см.: Конституция Республики Беларусь (с изм. и доп. от 17.10.2004), <http://www.pravo.by/main.aspx?guid=2101/,/10.04.2014/>; Конституция РФ. Конституция Грузии. (24.08.1995) http://www.mfa.gov.ge/index.php?lang_id=RUS&sec_id=22/,/10.04.2014/; Конституция Республики Казахстан (с изм. и дополнениями от 21.05.2007 г.) <http://www.akorda.kz/ru/category/konstituciya/,/10.04.2014/>.

роны, для обеспечения прав и свобод других лиц, а с другой- для удовлетворения справедливых требований демократического общества, благосостояния и общественного порядка¹³. *Стоит отметить, что требование к личности, отраженное в юридических обязанностях, реально: невозможно обременить индивида таким обязательством, которое он не в силах когда-либо выполнить.* Юридическая сила данного положения распространяется как на положительные обязанности, так и на юридические запреты (на негативные обязанности). Юридические (правовые) запреты появились в обществе в результате нежелательных действий личности. В позитивных и негативных обязанностях заложена конкретная необходимость, которая раскрывается при помощи конечного, суммарного результата деятельности человека¹⁴. Правовые запреты составляют особую группу юридических обязанностей, которые устанавливают для личности необходимость воздержания от некоторых действий и отражаются в пассивных юридических обязанностях. Например, запрещается (считается преступлением) присвоение власти любым частным лицом или организацией, также применение тех законов, которые еще официально не опубликованы, применение прав и свобод с целью силового захвата конституционной власти и т.д.

Социально-юридическое значение правовых запретов-это защита общественных интересов, ценностей, жизни, здоровья, чести и достоинства личности, а также благ, без которых невозможны естественная жизнедеятельность и развитие личности. В свободном демократическом обществе правовое государство всеми средствами обеспечивает отраженную в юридических обязанностях правовую необходимость поведения. Одним из таких средств является убеждение граждан, а если оно не достаточно для проявления необходимого поведения у личности, то в этом случае применяется средство государственного принуждения. Интересна также позиция Н.А. Айвазяна в вопросе юридических обязанностей, согласно которой, “юридическая обязанность – это

¹³ См.: **Эбзеев Б. С.** Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации. Москва, Норма, 2005, с. 218.

¹⁴ См.: **Мальцев Г.В.** Социалистическое право и свобода личности (теоретические вопросы). с. 71-73, 76; **Архангельский Л.М.** Курс марксистско-ленинской этики. Москва, Юрид. лит., 1974, с. 200-201.

мера обязательного, необходимого поведения личности”¹⁵. *Характерными особенностями юридической обязанности (в отличие от нравственных обязанностей) являются его абсолютная бесприкословность и императивность, а также право одной из сторон (в данном случае государства) требовать от другой стороны (в данном случае от гражданина) исполнять возложенные на него обязательства. Более того, в случае недобросовестного выполнения или же вообще невыполнения обязанностей, утвержденных Конституцией и законами, может иметь место государственное принуждение.*

По мнению Л.Д. Воеводина, государственное принуждение не может являться характерной чертой, основным элементом юридической обязанности. Одновременно, автор таким элементом считает ответственность, которую несут в результате недобросовестного выполнения требований, предусмотренных Конституцией и законами¹⁶. Но, как нам известно, “ответственность за недобросовестное исполнение (осуществление)”-это юридическая мера государственного принуждения. Включение в характеристику юридической ответственности понятия “ответственность, возникшая из-за недобросовестного выполнения требования закона”, не совпадает с мнением автора о том, что конституционные нормы, закрепляющие права и обязанности личности, не наделены санкцией. Хотя известно, что санкция является тем элементом правовой нормы, которая определяет вид и меру неблагоприятных последствий (государственного принуждения), наступающих вследствие соблюдения или несоблюдения норм, правил поведения участников правоотношения, предусмотренных правовой нормой (несоблюдение диспозиции). Л.Д. Воеводин непоследователен также в раскрытии понятия “ответственность”. С одной стороны, он рассматривает ответственность как “ответственность за недобросовестное (ненадлежащее) выполнение требования закона”, то есть как ответ-

¹⁵ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (պատ.խմբ.՝ **Մլխաթյան Ն.Ա.**), Երևան, «ԵՊՀ» իրատ., 2008, էջ 206:

¹⁶ См.: **Воеводин Л.Д.** Юридический статус личности в России. Уч.пособ. Москва, ИНФРА-НОРМА, 1997. с. 139; **Он же.** Конституционные права и обязанности советских граждан. Москва, 1972. с. 33-35, 68; Также см.: **Аветисян С. С.** Проблемы разграничения преступного от непроступного поведения (теория и практика уголовно-правового обеспечения безопасности человека). Ереван, РАУ, 2011; **Семененко Б.М.** О научной разработке проблемы юридических обязанностей советских граждан // Вопросы теории государства и права. Саратов, 1976, Вып. 4, с. 145 - 155.

ственность, возникшую в результате правонарушения. С другой стороны, Воеводин главным признаком обязанностей считает исполнение требований закона, указывая, что обязанность привязывает субъект к существующему правопорядку, обеспечивая этим беспрекословное выполнение требований. Несомненно, автор имеет в виду позитивную (активную) ответственность личности.

Мы не согласны с Л. Воеводиным также в том, что права человека представляются как проявление свободы, а обязанности- как ответственность с некоторыми оговорками¹⁷. Мы считаем, что свобода и ответственность в равной мере присущи как правам, так и обязанностям личности. Как уже было отмечено, злоупотребление правами непозволительно. В демократическом государстве в основе любой обязанности личности лежит социальная мера свободы как необходимости социального поведения личности. Надо отметить, что Л.Д. Воеводин под свободами, характеризующими права, подразумевает возможность самостоятельного выбора меры поведения и свободу¹⁸. Другими словами, он имеет в виду возможность выбора личности, которая в равной степени важна в реализации (осуществлении) как прав, так и обязанностей личности.

Права, свободы и юридические обязанности составляют единую систему. Если содержание субъективного права является мерой дозволенного поведения, то содержание обязанности-это должная, необходимая мера поведения в правоотношении.

Из вышеуказанного становится очевидным, что в правоотношениях юридические права и обязанности-это отнюдь не поведение субъекта, а предусмотренная и предоставленная правовыми нормами возможность или необходимость в поведении личности. Реализация субъективных прав и обязанностей означает их влияние на фактическое поведение в реальных общественных отношениях. Следует отметить, что содержание юридической обязанности выражается в двух видах:

1) Исполнение активных действий (правомочных лиц) в пользу других участников правоотношения (активная обязанность).

¹⁷ См.: **Воеводин Л.Д.** Юридический статус личности в России. Уч. пособ. Москва, ИНФРА-НОРМА. 1997. с. 34-35.

¹⁸ См.: **Воеводин Л.Д.** Указ. соч. с. 15, 22, 23, 24.

2) Юридическая обязанность выражается в необходимости воздержания от исполнения запрещенных нормой права действий (пассивная обязанность).

Если на протяжении десятилетий теоретики концентрировали внимание на характерных особенностях взаимоотношений “законных интересов” и “субъективных прав”, то в последнее время одной из проблематик теории государства и права считается взаимоотношение “законных интересов с юридическими обязанностями”.

Таким образом, основываясь на проведенных нами исследованиях, можно сделать следующие выводы:

1) Законные интересы и юридические обязанности находятся в глубокой диалектической взаимосвязи.

2) Юридическая обязанность является предпосылкой, направленной на самореализацию (осуществление), удовлетворение стремлений, созвучных правам, что также ограничивает реализацию законных интересов. И все-таки, удовлетворение законных интересов обусловлено существующими юридическими обязанностями.

3) Юридическая обязанность позволяет сохранить равновесие между личными и общественными интересами, в реализации коллизионных прав и законных интересов участников правоотношений, способствуя одним и устанавливая запреты для других.

4) Юридические обязанности, субъективные права и законные интересы—это мощные рычаги правового давления на общественные отношения, в основе которых лежат многочисленные методы реализации интересов разных субъектов. Эти категории включают как нормативно-правовое регулирование, так и факторы, не обусловленные правовой нормативностью, но влияющие на методы и виды удовлетворения потребностей всех субъектов.

В итоге, юридическую обязанность личности можно охарактеризовать как социально обусловленную и гарантированную возможность, границы которой установлены нормами объективного права (конституцией, законами, подзаконными актами) с использованием определенных благ для достижения, удовлетворения личных и общественных интересов и потребностей.

РЕЗЮМЕ

В данной статье автор рассматривает сущность, особенности, фундаментальное значение и виды понятия «обязанности личности» в формировании правового положения личности в современном демократическом, правовом государстве. В частности, анализируются точки зрения известных правоведов по вопросу содержания и структурных элементов обязанностей личности в контексте теории государства и права. Одновременно подчеркивается социально-юридическое значение обязанностей, их особое взаимоотношение с правами и законными интересами личности.

Ключевые слова – правовое положение, права, законные интересы, обязанности личности, правовое государство, позитивные и негативные обязанности.

ԱՆՃԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

Տվյալ գիտական հոդվածում հեղինակը բացահայտում է «անձի պարտականություններ» հասկացության էությունը, առանձնահատկությունները, տեսակներն ու հիմնարար նշանակությունը անձի իրավական դրության ձևավորման գործընթացում ժամանակակից ժողովրդավարական իրավական պետության մեջ: Մասնավորապես դիտարկվում են անձի պարտականությունների բովանդակության և կառուցվածքային տարրի վերաբերյալ մեծանուն իրավագետների դիրքորոշումները պետության և իրավունքի տեսության համատեքստում: Միաժամանակ մատնանշվում են պարտականությունների սոցիալ-իրավական նշանակությունը, դրանց փոխհարաբերությունն անձի իրավունքների և օրինական շահերի հետ:

Բանալի բառեր – իրավական դրություն, իրավական պետություն, իրավունքներ, օրինական շահեր, անձի պարտականություններ, պոզիտիվ և նեգատիվ պարտականություններ:

THE ESSENCE AND CHARACTERISTIC FEATURES OF AN INDIVIDUAL'S LEGAL OBLIGATIONS

LILIT KAZANCHIAN

In this scientific article, the author conveys the essence, characteristic features, types and the fundamental significance of «an individual's obligation (liability)» in the formation of the legal status of a person in a modern democratic, legal state. The author particularly considers the diversity of interpretations of the structural elements and content of «an individual's obligation» by well-known legists in the context of the Theory of State and Law. At the same time, the author emphasizes the socio-legal signification of duties, their interrelations with individual rights and legal interests.

Key words - legal status, legal state, rights, legal interests, obligations (duties) of a person, positive and negative obligations.

ԷՖԹԱՆԱԶԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԷԴԳԱՐ ՎԱՀՐԱԴՅԱՆ

Կյանքի իրավունքը մարդու բնական և անօտարելի իրավունքն է: Դա նշանակում է, որ ոչ ոք՝ ո՛չ պետությունը, ո՛չ անհատ քաղաքացիները չեն կարող կամայականորեն մարդուն գրկել կյանքից: Մարդու կյանքի իրավունքը իր ամրագրումն է ստացել մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք: Իսկ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածը կյանքի իրավունքը դիտարկում է որպես յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունք:

Մարդու կյանքն առանձնահատուկ տեղ է գրավում քրեաիրավական պաշտպանության օբյեկտների թվին: ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Կյանքի իրավունքի հետ առնչվում է նաև մեկ այլ իրողություն, որն անվանում են Էֆթանագիա, այսինքն՝ «թեթև մահ», կյանքից կամովին հեռանալը, որտեղ մարդու կյանքին առնչվում է նաև մարդու անհատական ինքնորոշման իրավունքը, որը ներառում է սեփական կյանքն ավարտելու միջոցներն ու ձևերը: Բայց մարդու կյանքի իրավունքի ճանաչումը տրամաբանորեն նշանակում է նաև նրա մահվան իրավունքի ճանաչում¹: Այդ առումով գրականության մեջ և լրատվության միջոցներով առավել հաճախ քննարկվում են ոչ այնքան կյանքի իրավունքի, որքան մահվան իրավունքի հետ կապված հարցերը: Մի շարք գիտնականներ ենթադրում են, որ «մահվան իրավունքի» ձևակերպումը, որն օգտագործվում է արտասահմանյան երկրների օրենսդրության մեջ, անհաջող է, քանի որ մահվան տիրապետման իրավունքը մարդը համառորեն պնդելու է իր ցանկության՝ երրորդ անձի կողմից կատարվելը, որը փաստորեն լեգալացնում է սպանությունը կարեկցանքի շարժառիթով, իսկ դա իր հերթին կարող է առաջացնել մեկ այլ խնդիր, քանի որ հիվանդներին օգնություն ցուցաբերելու քողի տակ կարող են և իրականացվել իրական սպանություններ,

¹ Տե՛ս **Дюркгейм Э.** Самоубийство, Социологический этюд, М., 1994, էջ 327. Dyrugkgehm E. Samoubiistvo, Sociologicheskiih etyud M., 1994, Eg 327.

օրինակ՝ ժառանգություն ստանալու ճանապարհին խոչընդոտների հաղթահարման կամ ծնողներին խնամելու սահմանադրական պարտականություններից խուսափելու նպատակով և այլն: Առաջարկվում է օգտագործել «մարդու իրավունքը արժանիորեն մահանալու»² արտահայտությունը, և դրա հետ դժվար է չհամաձայնվել: 2002թ. ապրիլին մարդու իրավունքների Եվրոպական դատարանը մերժեց Բրիտանիայի հպատակ Դիանա Դրետտիին՝ ընդունել մահը իր ամուսնու ձեռքից: Ստրասբուրգի դատավորները եկան այն եզրակացության, որ կյանքի իրավունքը, որը հռչակված է մարդու իրավունքների և հիմնական ազատությունների վերաբերյալ 2-րդ հոդվածում, չի կարելի մեկնաբանել հակառակ իմաստով, որպես մահվան իրավունք³: Ինչպես նշում են հետազոտողները, սկսած XX դ. 60-ական թվականներից՝ «Էֆթանագիա» եզրույթի մեկնաբանումը տարբերակվում է ծայրահեղ հակասություններով⁴: Տեսության մեջ տարբերակում են պասիվ և ակտիվ էֆթանագիան: Պասիվ էֆթանագիան ստացել է «հետաձգված ասեղի մեթոդ» անվանումը: Ակտիվ և պասիվ էֆթանագիայի հիմնական տարբերությունն արարքի ձևով այն է, թե վերջինս դրսևորվում է բժշկի գործողությամբ, թե՞ անգործությամբ: Պասիվ էֆթանագիայի դեպքում բժիշկը դադարեցնում է այն գործողությունները, որոնց նպատակը հիվանդի կյանքը երկարացնելն էր, քանի որ դրանք անօգուտ և անիմաստ է համարում (օրինակ՝ արհեստական շնչառության սարքը անջատելը): Ի հակադրություն պասիվ էֆթանագիայի՝ բժշկի կողմից հիվանդի խնդրանքով իր կյանքին վերջ տալը, որը կարելի է բնութագրել որպես ինքնասպանության աջակցություն կամ անհուսալի հիվանդի մահն արագացնել բժշկի կողմից կատարվող գործողությունների շնորհիվ, որն անվանում են ակտիվ էֆթանագիա, քրեորեն հետապնդվում է շատ երկրներում:

Այնուհանդերձ պետք է նշել, որ էֆթանագիայի ճանաչման հարցում մի շարք երկրներ տարբեր մոտեցումներ ունեն: Օրինակ՝ Ռուսաստանում էֆթա-

² Տե՛ս **Крылова Н.В.** Эвтаназия: уголовно-правовой аспект // Вестник Московского университета. Серия // Право. 2000, էջ 20. Krilov N. V. Evtanaziya: ugolovno-pravovoh aspect // Vestnik Moskovskogo universiteta. Seriya // Pravo 2000 Eg 20.

³ **Туманов В.А., Энтин Н.М.** Комментарий к конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения, М; Норма. 2002 22-23 стр. Tumanov V. A. Entin N.M. Kommentarii k konvencii o zashite prav cheloveka i osnovnix svobod v praktike i primeneniya M: Nomer. 2002 22-23 str.

⁴ **Дмитриев Ю.А.** Право человека в РФ на осуществление эвтаназии. (Государство и право, 2000. пар. 11, с. 55. Dmitriev YU. A. Pravo cheloveka v RF na osushestvleniya evtanazii Gosudarstvo i Pravo 2000 pro. 11 str. 55.

նազիայի ճանաչման հարցը քննարկվում է վերջին 15-20 տարիներին: Այն առաջ է բերում փիլիսոփաների, բժիշկների և իրավաբանների թե՛ վե՛ճերի: ՌԴ քրեական օրենքում չկա հատուկ նորմ էֆթանազիայի համար պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ: Քրեական օրենքն այն դիտում է որպես սովորական սպանություն, այսինքն՝ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածով: Քաղաքացիների առողջության պահպանման մասին ՌԴ օրենսդրության հիմունքների 45-րդ հոդվածում խոսվում է այն մասին, որ բժշկական անձնակազմին արգելվում է էֆթանազիայի իրականացում, այսինքն՝ հիվանդի խնդրանքի բավարարումը՝ կապված նրա մահվան արագացման հետ որևէ գործողությամբ կամ միջոցով, այդ թվում՝ կյանքի պահպանման արհեստական միջոցների դադարեցմամբ⁵: Հիշյալ հոդվածը նախատեսում է, որ եթե անձը հիվանդի մեջ էֆթանազիայի ցանկություն է առաջացնում և այն իրականացնում է, «քրեական պատասխանատվություն է կրում՝ համաձայն ՌԴ օրենսդրության»: Ռուսաստանի և մի շարք երկրների քրեական իրավունքի գիտության մեջ էֆթանազիայի հիմնախնդիրը ոչ հազվադեպ դիտարկվում է արդեն նշված տեսակետից առավել լայն հասկացությամբ՝ տուժողի համաձայնությունը վնաս պատճառելու: ՌԴ քրեական իրավունքը ելնում է նրանից, որ նման համաձայնությունը, ընդհանուր կանոնի համաձայն, չպետք է դիտվի որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք: Դրա համար էլ ՌԴ գործող քրեական օրենսդրության տեսակետը էֆթանազիայի վերաբերյալ միանշանակ է՝ դիտավորությամբ կատարված սպանություն: Կարեկցանքի շարժառիթը, որը նշված է արտոնյալ հանգամանքների թվում և նախատեսված ՌԴ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածում, կարող է սուկ հաշվի առնվել մեղավոր անձին պատիժ նշանակելիս, բայց ոչ թե արարքի որակավորման հետ կապված: Սպանությունը կարեկցանքի շարժառիթով որակավորվում է ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածով, այսինքն՝ որպես հասարակ սպանություն:

Կարևոր է հասկանալ, որ էֆթանազիան՝ որպես իրավաբանական փաստ, ոչ թե «կյանքի իրավունքի իրագործում» է, այլ հանցագործություն: Դրա հետ մեկտեղ էֆթանազիայի գոյություն ունեցող առանձնահատկությունները հնարավորություն չեն տալիս ամբողջովին նույնականացնելու սպանու-

⁵ Ст'я Основы законодательства РФ об охране здоровья граждан от 22 июля 1993г. 487-1, арт. 45. Osnovi zakonodatelstvo RF ob oxrane zdorovyje grajdan ot 22 iyula 1993g. 487-1, art. 45.

թյան հետ: Քանի որ դրանով իսկ խախտվում է քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը և հենց արդարության սկզբունքը, պահանջելով, որ պատիժը և քրեաիրավական բնույթի այլ միջոցներ, որոնք կիրառվել են հանցագործության կատարած անձի նկատմամբ, համապատասխանեն հանցագործության բնույթին և հանրային վտանգավորության աստիճանին, դրա կատարման հանգամանքներին և մեղավոր անձին: Դա պայմանավորված է անհրաժեշտությամբ՝ էֆթանագիան առանձնացնել որպես սպանության առավել նվազ վտանգավոր տեսակ՝ մեղմացուցիչ հանգամանքներով և քրեական օրենսգրքում հատուկ հոդվածի լրացումով (արտոնյալ բնույթի), որում օրենսդիրը էֆթանագիայի համար քրեական պատասխանատվության սահմանումից զատ այն կտարբերակեր՝ կախված իրականացման ձևից: Կարելի է պատկերացնել, որ էֆթանագիայի վերաբերյալ նման նորմը թույլ կտա խուսափել երկու վտանգավոր ծայրահեղությունից՝ էֆթանագիայի ապաքրեականացում և տարբերակում սպանությունից:

Այսօր էֆթանագիայի առաջացման հնարավորությանը Ռուսաստանում կողմնակից են միայն պացիենտների իրավունքների պաշտպանության կազմակերպությունները: Մյուս փորձագետները գտնում են, որ հասարակությունը պատրաստ չէ նման օրենք ընդունելու:

Բայց և այնպես, այն հարցին, թե որն է լավ՝ մշտական տանջանքներով և տառապանքներով լի կյանքը, թե՞ անցավ մահը, դեռևս չի գտնվել միատեսակ վերջնական պատասխան: Էֆթանագիայի հիմնախնդրի առնչությամբ շարունակում են բաց մնալ հետևյալ հարցերը՝ արդյո՞ք կյանքի իրավունքը պետք է դիտել որպես մարդու ապրելու պարտականություն, և հնարավո՞ր է արդյոք իրավունքից նրա կամավոր հրաժարումը: Հավանաբար նշված հանգամանքները հանգեցրին նրան, որ 1990-ական թվականների սկզբին աշխարհի ավելի քան 40 պետություններում ընդունվեցին օրենքներ, որոնք թույլ են տալիս գործունակ անհատներին կազմելու այսպես կոչված «կյանքի վերաբերյալ կտակներ», որոնցով բժիշկները լիազորվում և հրահանգվում են հրաժարվել կենսապահովման արհեստական համակարգի կիրառումից, եթե այդ անհատները պետք է տառապեն ծանր, անբուժելի հիվանդությամբ: Նշված օրենքով ըստ էության օրինականացվեց պասիվ էֆթանագիան:

Մի շարք երկրներում այս հարցը տարբեր կերպ է լուծվում: Այսպես Իռլանդիայի քրեական օրենսգրքով էֆթանագիան օրինականացվեց 2002թ. ապրիլի 1-ից, ոչ միայն փաստացի, այլ նաև իրավաբանորեն: Կամավոր էֆթանագիան օրինականացվեց Բելգիայում, 2009թ. մարտ ամսին՝ Լյուքսեմ-

բուրգում⁶: Գերմանիայում քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանվում սպանության համար տուժողի խնդրանքով: Քրեական պատասխանատվությունը կարեկցանքի շարժառիթով սպանության համար նախատեսված է Բոլիվիայի, Կոլումբիայի, Սալվադորի, Ուրուգվայի քրեական օրենսգրքով⁸:

Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էֆթանագիան հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցով:

Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էֆթանագիայի կամ իրականացնում են այն, պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: ՀՀ քրեական օրենսդրությունն էլ նման դեպքերում պատասխանատվություն է նախատեսում քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի առաջին մասով:

Ժամանակակից փուլում պարզ է մի բան. էֆթանագիայի օրինականացումը մանրակրկիտ մոտեցում է պահանջում, որակապես ուսումնասիրել և քննարկել էֆթանագիայի հետ կապված հիմնախնդրի հարցերը: Միևնույն ժամանակ բարդ հիմնահարց է սա, քանզի էֆթանագիայի նկատմամբ վերաբերմունքը հասարակության մեջ միանշանակ չէ: Յուրաքանչյուր կողմի կարելի է հասկանալ կամ էլ հակառակը՝ դատապարտել: Կարծում ենք՝ այն համալիր մոտեցման կարիք ունի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատանքում լուսաբանվում են այնպիսի հարցեր, որոնք կապված են էֆթանագիայի գլոբալ խնդրի հետ, որտեղ մարդու կյանքի իրավունքին առնչվում է նաև մարդու անհատական ինքնորոշման իրավունքը: Տվյալ աշխատանքում տրված են ակտիվ և պասիվ էֆթանագիայի բնութագիրը,

⁶ Տե՛ս **Вольный В., Крук Д.** Этаназия – за и против // Проблемы медицины, 2000 N3 /17/ с. 55, Volniih V. Kruk D. Eftanaziya – za i protiv // problemi medicini, 2000 N3 /17/ str 55,

⁷ Տե՛ս **Кварнадзе Р.А.** Некоторые аспекты становления и развития законодательства в области здравоохранения // Государство и право, 2001, N 8, стр. 99. **Kvarnadze R. A.** Nekotarie aspekti stanovleniya i realizaciya zakonodatelstva v oblasti zdavooxraneniya // Gosudarstvo i pravo 2001 N 8 str. 99.

⁸ Տե՛ս **Капинус О.С.** Современное уголовное право в России и за рубежом: сб. статей // **О.С. Капинус** Конструкция состава этаназии по УК РФ зарубежных стран. с. 30. **Kapinus O. S.** Sovremennoe ygolovnoe pravo v Rossii i za rubejom: sb. Stateh // O.S. Kapinus Konstrukciya sostava eftanazii po UK RF zarubejnix stran. Str.30.

Էթանազիայի խնդրի իրավական կարգավորումը ներպետական և միջազգային իրավունքում: Անհրաժեշտություն կա էթանազիան առանձնացնել նկարագրված սպանության տեսակից որպես ինքնուրույն հանցակազմ և ներառել քրեական իրավունքում որպես հատուկ հոդված՝ ձևակերպելով հանցակազմի արտոնյալ բնութագիրը:

Հետևաբար, էթանազիայի օրինականացումը ժամանակակից փուլում պահանջում է մանրակրկիտ մոտեցում, որակյալ ուսումնասիրում և քննարկում, քանի որ հասարակության վերաբերմունքը էթանազիայի նկատմամբ միանշանակ չէ:

Բանալի բաներ – ակտիվ էթանազիա, պասիվ էթանազիա, քրեական իրավունք, էթանազիայի օրինականացում:

ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭФТАНАЗИИ

ЭДГАР ВАГРАДЯН

В статье освещаются вопросы, связанные с глобальной проблемой эвтаназии. В работе дана характеристика активной и пассивной эвтаназии, правовое регулирование проблем эвтаназии в зарубежных странах и в отечественном законодательстве. Эвтаназию необходимо внести в уголовное право в качестве особой статьи.

Следует отметить, что на современном этапе легализация эвтаназии требует детального подхода, качественного изучения и обсуждения, так как отношение к эвтаназии в обществе неоднозначно.

Ключевые слова – активная эвтаназия, пассивная эвтаназия, Уголовный кодекс, легализация эвтаназии.

PROBLEMS OF LEGAL BASIC SETTLEMENTS OF EUTHANASIA

EDGAR VAHRADYAN

This article elucidates issues related to the global problem of euthanasia, where an individual's right to life is related to self-determination. This paper defines passive and active euthanasia and discusses the regulation of euthanasia both by national and international laws as well. There is a necessity to introduce euthanasia in the penal code in a separate section as a restriction added of the general law making possible the statement of specific penalties.

It is concluded that the legalization of euthanasia at this stage requires a detailed approach, quality research and discussions. The public attitude toward euthanasia is diverse.

Key words – active euthanasia, passive euthanasia, Criminal Code, legalization of euthanasia.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն, 27.07.2005թ.:
2. ՀՀ քրեական օրենսգիրք, Երևան, 2008թ.:
3. Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենք, 1996թ.:
4. Основы законодательства РФ об охране здоровья граждан от 22 июля 1993г. N 5487-1.
5. Дюркгейм Э. Самоубийство. Социологический этюд. М 1994.
6. Туманов В.А., Энтин М.М. Комментарий к конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения. М. Норма, 2003.
7. Крылова Н.В. Эвтаназия: уголовно-правовой аспект II Вестник Московского университета, Серия II. Право, 2000.
8. Дмитриев Ю. А. Право человека в РФ на осуществление эвтаназии II Государство и право, 2000, N11.
9. Вольный Б., Крук Д. Эвтаназия – за и против II Проблемы медицины, 2000, 53.
10. Кварнадзе Р.А. Некоторые аспекты становления и развития законодательства в области здравоохранения II Государство и право, 2001, N8.
11. Капинус О.С. Современное уголовное право в России и за рубежом, некоторые проблемы ответственности: сборник статей 10 с. Капинус Конструкция состава эвтаназии по УК РФ зарубежных стран.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ԼԵՎՈՆ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆԻ ՍՅՈՒՐՈՒԵԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ¹

ԱԲԱԶՅԱՆ ԱՆՆԱ, ԳԱՐԱՍԵՖԵՐՅԱՆ ԻՐԻՆԱ

Ֆրանսահայ նկարիչ Լևոն Թութունջյանը² ծնվել է Ամասիայում 1905-ին³: Հայրը՝ Հարություն Թութունջյանը, ֆիզիկա և քիմիա էր դասավանդում, իսկ մայրը՝ Շողակաթ Հանեղայանը, ուսուցչուհի էր: Սկզբնական կրթությունը Թութունջյանը ստացել է Ստամբուլի Բերբերյան վարժարանում, այնուհետև՝ Կեդրոնական վարժարանում: 14 տարեկանում Լևոնը նկարչությունն է նախընտրում և ուսումը շարունակում Ստամբուլի գեղարվեստի ուսումնարանում:

1915թ. ջարդերին զոհ է դառնում նաև Թութունջյանի հայրը: Զավակին կոտորածից փրկելու համար մայրը նրան ամերիկյան փրկարար նավով

¹ Հոդվածը հրատարակվում է 13-6E396 ծածկագրով՝ «Սյուրռեալիզմ հայկական դիմագծով» թեմայի շրջանակներում:

² Լևոն Թութունջյանի մասին տե՛ս **Արարատ Աղասյան**, Հայաստան-Ֆրանսիա. գեղարվեստական կապերը XX դարում, «Սովետական արվեստ», Երևան, 1991, հ. 4, էջ 17-22: **Ararat Aghasyan**, Léon (Lewon) Tutundjian // Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft. Museum Bochum, 1995, S. 387-388. **Արարատ Աղասյան**, Ֆրանսահայ նկարիչ Լևոն Թութունջյանը // Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ: Երևան, 1997, էջ 15-21: **Շահեն Խաչատրյան**, Լևոն Թյությունջյան, Ֆրանսահայ կերպարվեստ, Երևան, 1991, էջ 69-72: **Яков Хачикян**, Художник Левон Тутунджян, Наедине с ушедшим. Калейдоскоп воспоминаний, книга I, Ереван, 2002, сс. 53-58. **Արարատ Աղասյան**, **Հրավարդ Հակոբյան**, **Մուրադ Հասրաթյան**, **Վիգեն Ղազարյան**, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 553-554: **Մանե Մկրտչյան**, Լևոն Թյությունջյանի արվեստը ֆրանսիական սյուրռեալիզմի համատեքստում, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջան, նվիրվում է Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին (19-21 հոկտեմբերի, 2012), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2013, էջ 214-221 և այլն:

³ Լևոն Թութունջյանի ծննդյան թիվն անորոշ է և տարբեր կենսագիրների մոտ տատանվում է 1904-1906թթ. միջև:

ուղարկում է Հունաստան: Թուֆունջյանն իր ապրուստը վաստակում է խեցեգործ վարպետի մոտ աշխատելով, իսկ այնուհետև՝ մետաքսի վրա նկարչություն անելով⁴: Հունաստանից Թուֆունջյանը մեկնում է Վենետիկ: Սուրբ Ղազար կղզում նա մի քանի ամիս ուսում է առնում Մխիթարյան միաբանության հոգևոր հայրերի մոտ⁵: 1923-ին իր բազմաթիվ հայրենակիցների պես նա հաստատվում է Փարիզում⁶: Թուֆունջյանը բոլորովին չէր տիրապետում ֆրանսերենին, սակայն արվեստի մայրաքաղաքը ձգում էր նրան, և ի ծնե հանճարեղ նկարիչը չէր կարող չմնալ Փարիզում: Օրվա հացը վաստակելու համար նա ընդունվում է խեցեգործի արհեստանոց: Օգնականի այդ աշխատանքն իր սիրելի նկարչության և կերպարվեստի հետ անմիջական կապ ուներ:

«Մտքի յուրատիպ թռիչք ու վարպետ ձեռք ունեցող Թուֆունջյանն իր մեջ միշտ փայփայել է առաջնային լինելու մի ներքին մարմաջ, ընդվզող անհանգստություն ու այդ պատճառով անընդհատ փոփոխվել է իր ձևամտածողությունը, չի ապրել մեծ կենտրոնացում»⁷: Թուֆունջյանն իր կյանքի ընթացքում փայլուն համատեղեց թաշիզմը, երկրաչափական արստրակցիան և սյուրռեալիզմը: Սյուրռեալիզմի ընտրությունը պատահական չէր: 1920-ականներին Ֆրանսիայում ձևավորված և լայն թափ ստացած արվեստի այդ ուղղության հիմնական առանձնահատկությունը պատրանքի և տարիմաստ ֆորմաների կիրառումն էր: Սյուրռեալիստական ոճով ստեղծագործող արվեստագետները փորձում էին ջնջել բնականի և ցնորականի միջև եղած սահմանները՝ հիմնվելով զուգորդական խաղի և ենթագիտակցության վրա: Ենթագիտակցությունից բխող ստեղծագործության, ավտոմատիզմի գաղափարով աշխատելու համար սյուրռեալիստ արվեստագետները բազմապիսի հնարքների էին դիմում. աշխատում էին հիպնոսի, սովի, ալկոհոլի, թմրանյութերից առաջացած հալյուցինացիաների ազդեցության տակ⁸: Սակայն Թուֆունջյանին բավական էր վերհիշել մանկության տարիների՝ Ամասիայի ջարդերը:

⁴ **Gladys Fabre**, Tutundjian, Paris, Editions du Regards, 1994, p. 13.

⁵ Թուֆունջյանի՝ վարժարանում ուսանելու տարիներից ոչ մի հետք չի մնացել, բացի 1925-ով թվագրված մի ջրաներկ նատյուրմորտից, որը նկարիչն անկասկած վարժարանին նվեր էր ուղարկել Փարիզից:

⁶ 1923-ին բազմաթիվ հայ փախստականներ Փարիզ են գալիս: ԱՄՆ-ից հետո Ֆրանսիան այդ փախստականներին ընդունող երկրորդ երկիրն էր:

⁷ **Շահեն Խաչատրյան**, Ֆրանսահայ կերպարվեստ, «Անահիտ» հրատարակչություն, 1991, էջ 71:

⁸ **Cathrin Klingsöhr-Leroy**, Surrealism, Taschen, 2004, pp. 16-17.

Այսպիսով, սյուրռեալիզմի խորհրդանշական արտահայտչալեզուն հրապուրեց եղեռնը վերապրած Թութունջյանին՝ անձնական հոգեկան ցնցումներն ու դառնակակիծ հուշերն արտահայտելու համար:

Ուսումնասիրելով Թութունջյանի սյուրռեալիստական ոճի կտավները⁹, կարելի է նկատել, որ դրանց ընդհանուր կոմպոզիցիոն լուծումը բացառիկ լարվածության, դինամիկայի վրա է հիմնված: Շեշտված հեռանկարները, մեծածավալ դետալները, հեռավորությունը շեշտող ամպերը, տարածության մեջ խճճված պարանները և մյուս դետալներն ուժեղացնում են այդ ճնշվածության տպավորությունը: Թութունջյանի այդ աշխատանքներում տեսնում ենք ինքնատիպ գերզգացմունքայնություն, որն արտահայտվում է համաչափությունների աղավաղման, կտրտված ուրվագծերի, կոմպոզիցիոն դինամիկայի մեջ: Թութունջյանի աշխատանքներում հատկանշական է երկնքի պատկերումը: Արվեստագետն այն հիմնականում բաց երկնագույն – սպիտակավուն երանգների մեջ է պատկերում: Սակայն առաջին հայացքից խաղաղ թվացող սպիտակ ամպերով այդ երկինքը անսահման լարվածություն է արտահայտում: «Հսկայական հեռանկարներ, որոնք բնակեցված են դեֆորմացված չորացած ծառերով... Այդ առեղծվածային միջավայրը մշտապես ճնշող տպավորություն է թողնում, դրանում հանդիսատեսը մշտապես երկխոսում է իր մահվան պատկերի հետ, ինչը վկայում է Թութունջյանի տեսիլքային տեսության մասին, որը սյուրռեալիստ արվեստում գրեթե ամենահոռետեսականներից է»¹⁰:

Թութունջյանի կտավների գրեթե բոլոր բնանկարներն ամայացած են: Դրանցում տեսնում ենք կամ տափաստաններ, կամ էլ տիեզերական տպավորություն ստեղծող անբնական հարթ տարածքներ: Թութունջյանի գեղանկարչական տաղանդն, անկասկած, ունակ էր ցանկացած տիպի ռեալիստական բնանկար պատկերելու, սակայն նկարչի նպատակը անբնականության և ամայության տպավորության ստեղծումն էր: Տարածություն, որը պարունակում է

⁹ «Էլեմենտները», կտավ, յուղ., 73-90սմ, 1929, «Կտրած ձեռքերը», կտավ, յուղ., 65-79սմ, 1930, «Ինձորով ալեգորիա», կտավ, յուղ., 17-23սմ, 1923, «Ճաքած զլուխը պատշգամբում», կտավ, յուղ., 97-130սմ, «Կարմիր դիմակ», կտավ, յուղ., 89-116սմ, «Անանուն», կտավ, յուղ., 72-115սմ, «Անանուն», կտավ, յուղ., 81-100սմ, «Անանուն», կտավ, յուղ., 33.1-24սմ:

¹⁰ **Christian Olivereau**, Léon Tutundjian – 1906-1968. L'œuvre constituée 1925-1930, travail de recherche de Diplôme d'Etudes Approfondies soutenue à l'Université de Dijon, juin 1985, p. 17.

դիտողի համար սովորական տարրեր, սակայն ընդհանուր կոմպոզիցիայով կամ որևէ դետալով ստեղծում է մի վայր, որը բնության օրենքից, սովորական կյանքից դուրս է: Դա ևս մի հմտալից հնարք էր բնության օրենքին դեմ գնացող արարքի՝ մարդու սպանության, մեղքի արտահայտման համար:

Թութունջյանի կտավներն ուսումնասիրելիս հաճախ տեսնում ենք արմատների, չորացած ճյուղերի և ծառերի, ճաքած նռան և այլ պտուղների, քարի բեկորների, սպիտակ ամպերի, կախաղանի պարանների, փայտե սեղանների, պատուհանների, քանոնի, շախմատաձև սալահատակի, կտրած ձեռքերի և գլուխների պատկերներ: Առաջին հայացքից չհամադրվող այդ առարկաները Թութունջյանի արվեստում ներդաշնակորեն համադրվում և խոր իմաստ են ձեռք բերում՝ դառնալով մի ինքնատիպ բառարան արվեստագետի վշտի արտահայտման համար:

Դրոտ աճուրդատան 1970-ի կտավագում արվեստաբան Ժ.Բերտրանը նշում է. «Երազների հետևորդ, բայց չափազանցությունների և մետաֆորի թշնամի, Սալվադոր Դալիի պես Թութունջյանը խոսում է խորհրդանիշներով: Ծառը, կտրած ձեռքը, պարանը, ճաքած նուրը չերևացող ճշմարտություններ են պատկերում...»¹¹:

Թութունջյանի գերիրապաշտական աշխատանքներում մշտապես հանդիպում ենք տանջանքի հետ զուգորդվող որևէ տարր, օր.՝ աչքից դուրս ընկած բիթ, երկայնական առանցքով կտրված գլուխ, ճեղքված ուղեղ, կտրված ձեռք և այլն: Մարմնի մասնատված այդ մասերը մշտապես զուգորդվում են բանականության, հաշվարկի, մտքի հետ ասոցացվող դետալների հետ՝ ճատրակ, քանոն և այլն: Եթե դեմքը ամբողջովին է պատկերված, այն պարտադիր ասիմետրիկ է թե՛ աչքերի չափերով, թե՛ գլխի համաչափություններով: «Ճեղքված, աղճատված, գերաշխարհային այդ դեմքերը Թութունջյանի ինքնանկարներն են, որոնցով նա իր ներքին տառապանքն է արտահայտում»¹²: Արվեստագետի պատկերած դեմքերի աչքերը մի գաղտնիք են պարունակում: Աչքեր, որոնք եղեռն են տեսել. գաղտնիք, որի պատասխանը գիտի միայն Թութունջյանը:

Թութունջյանի գերիրապաշտական կտավներում հաճախ հանդիպում ենք նաև պատուհանի պատկերների: Այդ դետալը կարող է տարբեր մեկնա-

¹¹ **Maitre Claude Robert**, Tableaux modernes, Paris, 21 juin 1974, p. 6.

¹² **Murachanian Jean Louise**, Leon Tutundjian: Trauma, identity and modern art in the aftermath of genocide, University of California, Los Angeles, 2009, 237p. 3384044.

բանություններ ունենալ: Արտաքին աշխարհի դիտման բացատրությունից բացի, դրանում առկա են երկու միջավայրերի բաժանման, տեսարանի վրա դիտողի հայացքի կենտրոնացման, նկարում երկրաչափական բաժանումով տեսարանի պատկերման և այլ խորհուրդներ: Պատուհանների պատկերումը գեղանկարչության մեջ տարածված էր դարեր ի վեր, և հատկապես հաճախ այն տեսնում ենք Վերածննդի շրջանի ստեղծագործություններում: Սակայն սյուրռեալիզմի արվեստաոճի դեպքում այդ դետալը նոր իմաստներ է ձեռք բերում, իսկ Թութունջյանի արվեստում դառնում է մի յուրահատուկ անցում դեպի այլ աշխարհ, այլ իրականություն:

Թութունջյանի կտավներում խորհրդանշական է նաև ծառերի պատկերումը: Հիմնականում դրանք կամ չորացած են, կամ մերկացած ճյուղեր ունեն: Դրանց մեծ մասը կղզյակներով կամ մի գծով է պատկերված և հաճախ մարդկանց խմբի տպավորություն է ստեղծում: Կտրած գլուխները կամ հսկայական դետալների պես դրված են գետնին, կամ էլ հաճախ ճաշի սեղանի սպասքի մասն են կազմում՝ սփռոցի կամ ավսեի վրա դրված: Այդ դետալները ևս ոճրի և սպանդի հուշերի հետ անմիջական կապի մեջ են գտնվում: Դրանցում բիոմորֆ տարրերի, բջիջների, հյուսվածքների պատկերումը միգուցե նոր կյանքի վերակսման, հայոց ազգի վերածնման խորհրդանիշն են:

Ցեղասպանության հիշատակներին արձագանքող աշխատանքների շարքից հատկապես առանձնահատուկ է Թութունջյանի «Դեղին դիմակ»¹³ կտավը¹⁴: Այդ աշխատանքում տեսնում ենք մշուշի մեջ աստիճանաբար անհայտացող ծառեր, ամայացած միջավայր, քարերի բեկորներ: Կտավի կենտրոնական տարրը եզրագծով լեռներ հիշեցնող, ահասարսուռ ժպտացող հսկայական դիմակն է: Լռությունը հատող ճիչով այն կարծես ամբողջ ծավալով առաջ է գալիս դիտողի վրա, պատմում տեղի ունեցած ողբերգության մասին: «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնի ուժերով Հայաստան բերված այդ նկարը սյուրռեալիստ արվեստի գլուխգործոցներից է:

Թութունջյանի կտավների աննյութ, անորոշ միջավայրում պատկերված իրերն իրենց ձևերով իրական, միաժամանակ ցնորական են թվում: Այդ աշխատանքներում կա մի յուրահատուկ խորհրդավորություն, որն ավելի շատ դիտողի զգացմունքների վրա ազդեցության, նկարին նայելիս նրա տրամա-

¹³ «Դեղին դիմակ», կտավ, յուղ., ստորագրված է ներքևի աջ անկյունում, չափերը՝ 116-89սմ:

¹⁴ Տե՛ս **Իրինա Գարասեֆերյան**, Սյուրռեալիզմի հայկական դիմագիծը, Կանթեղ, գիտական հոդվածներ, 2014, 2-3 (59-60), էջ 364-371:

դրության մեջ առաջացած վիճակով է արտահայտվում: Նրա նկարներում ասես մարմնավորվել է 1915-ի արհավիրքը վերապրած մարդու ներաշխարհը հյուժող եղեռնի արձագանքը: Ճնշվածություն, սարսափ, վիշտ, ցավ և դրա հետ մեկտեղ՝ իմաստություն, հավերժություն, դատարկություն:

«Թութունջյանի արվեստում առկա և ուրիշների համար միայն երևակայված «չերևացող ճշմարտությունները», արվեստագետի մանկության օրերի սարսափազդու պատկերներն են, որոնց մասին լռել է նկարիչը...»¹⁵: Թութունջյանը փրկվել էր եղեռնից մոր շնորհիվ: Նրա ծնողները եղեռնի զոհն էին դարձել, և այդ ցավը մշտապես ապրում էր նրա սրտում: Ամասիայում ծնված Թութունջյանը մանուկ հասակից առհավետ կորցրել էր իր հայրենիքը և, ցավոք, նրան այդպես էլ չհաջողվեց գոնե այցելել Խորհրդային Հայաստան: Բնությունից զուսպ և ինքնամփոփ լինելով՝ Թութունջյանը չէր կիսում իր խոհերն ու տառապանքները ուրիշների հետ, և իսկապես նա շատ քիչ մտերիմ ընկեր ուներ: Արտահայտման միակ աղբյուրը մնում էր արվեստը:

Ինչպե՞ս ապրել սեփական ժողովրդից կտրված, պարտադրված աքսորի մեջ: Լինել այդքան միայնակ, երբ շուրջդ այդքան մարդ կա... Հայրենիքն ու հայկական շրջապատը նրան շատ էին պակասում նաև այն պատճառով, որ արվեստագետի կինն ազգությամբ ֆրանսուհի էր¹⁶, և նրանց ընտանիքը, ցավոք սրտի, հեռու էր հայկական իրականության հետ սերտ շփումից, հայոց լեզվի գործածումից: Խառնվածքով զուսպ և ինքնամփոփ լինելով՝ արվեստագետը հաճախ խուսափում էր ընկերական մոտ հարաբերություններից, այցելություններից: Նա ապրում էր փարիզյան արվարձանում, իր անձնական աշխարհի մեջ քաշված: Ուսուցիչների զավակ լինելով և մայրենի լեզվին փայլուն տիրապետելով հանդերձ, ցավոք սրտի, Թութունջյանը շատ քիչ առիթներ ուներ այն գործածելու համար: Դրա հետ կապված խորհրդանշական է «Մենակյաց տաղանդը» պատմվածքը¹⁷, որում տեսնում ենք Թութունջյանի կարոտը մայրենի լեզվի գործածման, հայրենակիցների հետ շփման հանդեպ:

Զարմանալի է, բայց փաստ, որ համաշխարհային արվեստի մեծերի (Պ.Պիկասո, Խ.Միրո, Ռ.Մագրիտ, Ս. Դալի, Մ.Դյուշան, Ի.Տանգի, Ա.Ջակոմե-

¹⁵ **Շահեն Խաչատրյան**, Ֆրանսահայ կերպարվեստ, էջ 72:

¹⁶ Ժերմեն Թութունջյան (1904-1984):

¹⁷ **Վահրամ Մավեան**, Մենակեաց տաղանդը, «Ազգ» օրաթերթ, 19 օգոստոսի 2006թ., հավելված «Մշակույթ», թիվ 11, էջ Ա:

տի և այլն) հետ ցուցադրվող¹⁸ և ստեղծագործող հայազգի հանճարը մոռացության և անտարբերության մատնվեց, սակայն նրա ստեղծած կտավների արժեքն այնքան մեծ էր, որ դրա կողքով չէին կարող անտարբեր անցնել «Ալեն լե Գայար» և «Մինտոր» փարիզյան ցուցասրահները: Ունենալով հրեական հոտառություն՝ նրանք կարողացել էին ընտանիքից ձեռք բերել Թութունջյանի ստեղծագործությունների մեծ մասը: Հայազգի գործիչներից Գարիկ Բասմաջյանի ցուցասրահը և նրա հավաքածուն կարողացել էին պահպանել և բարձրաձայնել Թութունջյանի արվեստի մեծությունը: Հայաստանում Թութունջյանի ստեղծագործությամբ բացառապես զբաղվում է «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնը, որի ուժերով վերջին մի քանի տարվա ընթացքում Երևան են բերվել և ցուցադրվել Թութունջյանի մի քանի գլուխգործոցներ: Նշենք նաև, որ սփյուռքահայ նկարիչների ստեղծագործության քարոզչությամբ զբաղվող կենտրոնը գիտական ծրագիր է իրականացնում Լևոն Թութունջյանի ստեղծագործությունների վերաբերյալ: Հուրախություն մեզ «Բարձր արվեստ» կենտրոնում ներկայումս ցուցադրվում է Լևոն Թութունջյանի «Դեղին դիմակը» գլուխգործոցը, որը 1988-ին «Գարիկ Բասմաջյան» ցուցասրահի կողմից ցուցադրվել է Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում:

Վերադառնալով Թութունջյանի գերիրապաշտական ոճի կտավներին՝ պետք է նշել, որ դրանց բնորոշ գծերից են նաև ճնշող միջավայրն ու հոռետեսական այն տրամադրությունը, որով վարակում են դիտողին: Այդ կտավները ստիպում, պարտադրում են հիշել, խորհել, հասկանալ: Մարդկային դաժանության, թուրքական ոճրի դեմ ճիշ հանդիսացող Թութունջյանի աշխատանքներն իրենց գեղագիտական արժանիքներով և խորիմաստությամբ 20-րդ դարի արվեստի ստեղծագործությունների գոհարների շարքում են դասվում:

Կան արարքներ, որոնք վաղեմություն չունեն: Եղեռն, որից անցել է արդեն ուղիղ մեկ դար, և որը, սակայն, այնքա՛ն մոտ է թվում: Հիշատակ, որ ապրում է մեր արյան մեջ: Հիշատակ, որի փայլուն արտահայտությունն է հայրենիքի կարոտով ապրած հանճարեղ հայորդի Թութունջյանի վրձինը:

¹⁸ «Ժամանակակից արվեստի ընտրյալների ցուցահանդես», Ստեղծելի թանգարան, Ամստերդամ, 1929թ., «Produktion Paris 1930» ցուցահանդես, Տյուրիխ, 1930թ., խմբակային ցուցահանդես «Ռիվ գոշ» ցուցասրահում, Փարիզ, 1958թ.: Տե՛ս **Gladys Fabre**, Tutundjian, Paris, Editions du Regards, 1994, pp.171-172:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է ֆրանսահայ նկարիչ Լևոն Թութունջյանի սյուրռեալիստական ոճի կտավների խորհրդանիշների վերլուծությանը: Եղեռնից փրկված արվեստագետի աշխատանքների տարրերն անմիջական կապի մեջ են ջարդերի ահասարսուռ պատկերների, անջնջելի հիշողությունների հետ: Նկարների կոմպոզիցիոն լուծումները և խորհրդանշական դետալների վերլուծությունը վկայում են նկարչի արտահայտչալեզվի ինքնատիպության մասին, պարզաբանում են սյուրռեալիստական ոճի միջոցով եղեռնից մնացած հիշատակների արտահայտման պատճառները:

Բանալի բաներ - Լևոն Թութունջյան, ֆրանսահայ արվեստ, սյուրռեալիզմ, խորհրդանիշ, կերպարվեստ, Հայոց Մեծ եղեռն:

СИМВОЛЫ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В СЮРРЕАЛИСТИЧЕСКИХ РАБОТАХ ЛЕОНА ТЮТЮНДЖЯНА

АННА АБАЗЯН, ИРИНА ГАРАСЕФЕРЯН

Данная статья посвящена анализу полотен сюрреалистического направления французского художника армянского происхождения Леона Тютюнджяна. Работы пережившего геноцид художника напрямую связаны с ужасающими воспоминаниями и образами резни. Композиционные решения и символические элементы картин свидетельствуют о своеобразии художественных приёмов художника.

Ключевые слова - Леон Тютюнджян, французско-армянское искусство, сюрреализм, символ, живопись, геноцид армян.

SYMBOLS OF ARMENIAN GENOCIDE IN LEON TUTUNDJIAN'S SURREALISTIC PAINTINGS

ANNA ABAZYAN, IRINA GARASEFERYAN

This article deals with the symbols in surrealist oil paintings of Leon Tutundjian, the French Armenian painter, who has survived the Armenian Genocide. The details of his paintings are directly associated with his memories of

the terrible massacre. The analysis of his paintings' compositional solutions and details of the used symbols verify the singularity of Tutundjian's expression, his ingenuity and reveal the grounds for depicting recollections of the genocide applying surrealistic elements.

Key words - Leon Tutundjian, French–Armenian art, surrealism, symbol, painting, Armenian Genocide.

ՄԵԿ ԷՋ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՐՔԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1980-ական թվականներ)

ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ

Հայ նոր և նորագույն գրքարվեստը պատմական որոշակի ուղի է անցել, որի ընթացքում եղել են ինչպես վերելքի ու ծաղկման, այնպես էլ անկման, լճացման շրջաններ: Նման դժվարին ժամանակահատված կարելի է համարել անցյալ դարի 70-ական, մասամբ՝ 80-ական թվականները, երբ հրատարակչական գործի ընդհանուր վատթարացման պայմաններում գրքի նկարագարդման և գեղարվեստական ձևավորման մշակույթը Հայաստանում ճգնաժամի առջև էր կանգնել: Թեև այդ տարիներին քիչ չէին ազգային գրքարվեստի բնագավառում հանդես եկող շնորհալի արվեստագետները, և լույս էին տեսնում գեղեցիկ ձևավորված, բարձրաճաշակ հրատարակություններ ևս, ընդհանուր մակարդակը հուսադրող չէր, և ընթերցողի դատին հանձնվող գրքերը մեծ մասամբ, իրոք, «ստեղծագործական ներշնչումից զուրկ, տառային և զարդանախշային միօրինակ, գորշ շտամպներով կնքված անփույթ, անճարտար տեսք ունեին»¹:

Այս հողվածի շրջանակներում մտադիր չենք անդրադառնալու այդ իրադրության պատճառներին ու մանրամասներին, մանավանդ որ դա հանգամանորեն արված է արվեստագիտության դոկտոր Ա. Աղասյանի՝ արդեն վկայաբերված մենագրության մեջ²: Մեզ համար ուշագրավ է այն արձագանքը, որն այս կապակցությամբ առաջացավ Հայաստանի գեղարվեստական կյանքում: Ինչպես վկայում է ժամանակի մամուլը, հայ գրքի ճակատագիրը, նրա ներկան և ապագան մեծապես մտահոգել էին շահագրգիռ հասարակայնությանը: Մասնավորապես, 1980-ական թվականներին այդ խնդրին վերաբերող մի շարք հողվածներ և նյութեր հրապարակվեցին Խորհրդային Հայաստանի գեղարվեստական գլխավոր պարբերականի՝ «Սովետական արվեստ» ամսագրի էջերում: Մտքերի փոխանակությունն ու ծավալված բանավեճը, որին մասնակից դարձան թե՛ գրքարվեստի անվանի վարպետներ, թե՛ գեղարվեստական քննադատներ և թե՛ պետության ու հանրության ներկայացուցիչներ,

¹ Ա. Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 168:

² Նույն տեղում, էջ 167-168:

գեղարվեստական կյանքի պատմության հիշարժան մի դրվագ են կազմում՝ միևնույն ժամանակ առնչվելով մեր օրերին:

Նշված հրապարակումների շարքում առաջինը թատերագետ Լևոն Խալաթյանի հոդվածն էր՝ նվիրված մանկական գրքի ձևավորման խնդիրներին³: Չնայած իր գործնական ուղղվածությանն ու ժանրային ձևաչափին՝ այն արժարժում էր տեսական, սկզբունքային բնույթի հարցեր, որոնք պետք է քննարկվեին հանդեսի հաջորդ համարներում նույնպես: Գրքի ստեղծման գործընթացում առանցքային դեր վերապահելով նկարչին, ըստ այդմ էլ նրան օժտելով բացառիկ պատասխանատվությամբ ընթերցողի առջև՝ հեղինակը կարևորում է գրական ու գեղարվեստական կերպարների փոխհարաբերության, տարիքային ընկալման առանձնահատկությունների, պլաստիկական ձևի խնդիրները: Գրքի ստեղծման պրոցեսը համեմատվում է ճարտարապետության հետ, որի համար էական են աշխատանքային յուրաքանչյուր փուլ ու կառուցվածքային տարր: Հիշեցնենք, որ այդ զուգահեռը դեռևս 1920-ական թվականներին իր հետևողական հիմնավորումն էր ստացել ռուս ականավոր գրաֆիկ, գրքի խոշոր տեսաբան Վլադիմիր Ֆավորսկու աշխատություններում, ով գիրքը դիտարկում էր իբրև գեղարվեստական միասնական օրգանիզմ: Հայ իրականության մեջ Ֆավորսկու հայեցակարգը փայլուն հետևողներ ունեցավ ի դեմս նկարիչներ Հակոբ Կոջոյանի, Տաճատ Խաչվանքյանի և ուրիշների, ովքեր ոչ միայն նկարագարողում էին գիրքը, այլև ամբողջությամբ մշակում դրա պլաստիկական համակարգը: Տրամաբանական է, որ հենց այդ շրջանին՝ 1920–1930-ական թվականների ազգային գրքարվեստը, այսպես կոչված չարենցյան գիրքը, հոդվածում մատնանշվում է որպես օրինակ, գեղարվեստական կատարելության չափանիշ: Չանտեսելով գրքարտադրության տեխնիկական կողմը՝ հեղինակը, այդուհանդերձ, առաջնություն է տալիս ստեղծագործական հղացմանն ու լուծմանը, արվեստագետի անձին, գրական երկի «շունչը, ռիթմը, ոգին» ըմբռնելու և կերպավորելու նրա կարողությանը:

Մեկ տարի անց՝ 1983-ին, «Սովետական արվեստ»-ի խմբագրությունը «կլոր սեղան» է հրավիրում՝ հայ գրքարվեստի ժամանակակից վիճակը համակողմանի քննարկելու, ոլորտի խնդիրներն ու հեռանկարները պարզելու, հանրության ուշադրությունը դրանց վրա հրավիրելու նպատակով: Քննարկմանը մասնակցում են արվեստաբան Նոնա Ստեփանյանը, նկարիչներ Գրի-

³ Տե՛ս Լ. Խալաթյան, Ինչպես են նկարագարում մանկական գիրքը // ՍՍ, 1982, № 7, էջ 15–24:

գոր Խանջյանը, Արա Բեքարյանը, Վահրամ Խաչիկյանը, Հենրիկ Մամյանը, Վարուժան Վարդանյանը և այլք, իսկ նյութերը «Եթե գրքի ձևավորումը արվեստ է...» բանավիճական վերնագրով տպագրվում են հանդեսում⁴:

Այս անգամ դժգոհությունն ուղղելով ոչ միայն ու ոչ այնքան գրքի ձևավորման ոլորտում ստեղծագործող նկարիչներին, որքան մասնագետներ պատրաստող և գրքարտադրությամբ զբաղվող կառույցներին ու պետական մարմիններին՝ քննարկման մասնակիցները շոշափում են հարցերի լայն շրջանակ, որի կենտրոնում նկարիչ–հրատարակիչ համագործակցության հիմնահարցն է: Ինչ խոսք, այն հանգամանքը, որ Հայաստանի գեղարվեստական միակ բուհի՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի, գրաֆիկայի ամբիոնը չէր գործել շուրջ երեք տասնամյակ (1956–1983 թթ.), վերաբացվելուց հետո էլ չուներ հրատարակչական մասնագիտացում, այսինքն՝ մասնագետների պակասը, հրատարակչությունների ոչ բավարար, նույնիսկ աղքատիկ նյութատեխնիկական բազան, տպագրության ցածր որակը տալիս էին արդարացի դժգոհության հիմք: Սակայն բանավեճի կազմակերպիչները ձգտում էին խոսակցությունը վերադարձնել ստեղծագործական ոլորտ՝ հասկանալու, նախ և առաջ, նկարիչների անելիքները գրքարտադրության բնագավառում, պարզելու նրանց մեղավորության չափն ու բաժինը: Ահա, օրինակ, ինչ է գրում այդ առիթով հանդեսի խմբագրությունը ներկայացնող Գ. Խանջյանը. «Այսօր մեզանում չկան իրար հաջորդող, իրար լրացնող ու զարգացնող նվաճումներ, չկա հարաճուն մի ընթացք, որ ապահովի մեր համընթաց քայլքը մարզի համաշխարհային առաջադիմության հետ: Ժամանակին Հակոբ Կոջոյանի, Տաճատ Խաչվանքյանի ձևավորումներն ու նկարազարդումները, ցավոք, չունեցան և գուցե չէին էլ կարող ունենալ իրենց վայել հրատարակություններ: Եվ, այնուամենայնիվ, մեզ համար օրինակելի են մնում «Գիրք ճանապարհի», «Սայաթ-Նովա», «Արա Գեղեցիկ» և ուրիշ գրքերի նրանց ձևավորումները՝ մեր հրաշալի վարպետների ինքնօրինակ այդ ստեղծագործությունները: Իսկ հիմա, երբ հնարավորություններն անհամեմատ մեծացել են, մենք չենք կարող թվարկել գրքի ձևավորմամբ, նկարազարդմամբ նույնպիսի հաջողությամբ զբաղվող նկարիչների, գրքի ինժեներների շատ անուններ»⁵:

Բնավ պատահական չէ, որ գրքի ինժեներներն այստեղ հիշատակվում են նկարիչների կողքին: Դա վկայում է գրքարվեստի որոշակի ըմբռնման,

⁴ Տե՛ս ՍՍ // 1983, № 12, էջ 16–23:

⁵ Նույն տեղում, էջ 17:

ստեղծագործական հայեցակարգի մասին: Գ. Խանջյանը ևս գիրքը դիտարկում է իբրև գեղարվեստական առումով միասնական երևույթ, որում հավասարապես կարևոր են կառուցվածքային բոլոր տարրերը, իսկ նախագծողը կամ այլ կերպ ասած՝ ինժեները և նկարիչը հաճախ նույն դեմքն է: Կրկնենք, որ գրքի գեղարվեստական նախագծման, գրքային դիզայնի հիմքում ընկած նման ըմբռնման կողմնակիցներ էին Հ. Կոջոյանն ու Տ. Խաչվանքյանը, որոնց ձևավորումներն օրինակելի են որակվում:

Զարմանալի կլիներ, եթե, արձանագրելով գրքարվեստի ասպարեզում եղած բացերը, քննարկման մասնակիցները չառաջարկեին գործնական քայլեր՝ հայրենական հրատարակությունների որակը բարելավելու, ստեղծագործական դժվարությունները հաղթահարելու և փակուղուց դուրս գալու համար: Առաջ են քաշվում, մասնավորապես, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում տպագրության բաժին հիմնելու, գրքերի նկարազարդման ու ձևավորման պարբերական ցուցահանդեսներ, ինչպես նաև մրցույթներ կազմակերպելու, միջմասնագիտական շփումներն ընդլայնելու՝ իրենց կենսունակությունն ամենուրեք ապացուցած գաղափարները:

Գրքի հիմնախնդիրներին նվիրված քննարկումը շարունակություն է ստանում ամսագրի հաջորդ տարվա՝ 1984 թվականի երկու համարներում: Խնդրո առարկայի և «կլոր սեղան»-ի արդյունքների վերաբերյալ իր նկատառումներն է հայտնում Հայաստանի հրատպետկոմի նախագահի առաջին տեղակալ Բակունց Անանիկյանը: Դիմելով վիճակագրական տվյալներին՝ նա պաշտպանության տակ է առնում հրատարակիչներին և առավել լավատեսական պատկեր ներկայացնում նախորդ բանախոսների համեմատությամբ: Դրա հետ մեկտեղ նա խոստովանում է, որ բանավեճի կողմերը յուրովի «պարտք են» միմյանց՝ նկարիչները գեղարվեստական, հրատարակիչները՝ տպագրական որակի համար, ուստի հայ գրքարվեստի «...վաղվա օրը կախված է հրատարակիչ-նկարիչ համագործակցությունից»⁶:

Մեզ հետաքրքրող հրապարակումների շարքում հարցադրումների ընդգրկմամբ աչքի է ընկնում լրագրող և գեղարվեստական քննադատ Կարեն Միքայելյանի հոդվածը՝ «Գրքի ձևավորման պարադոքսներից» վերտառությամբ⁷: Անմիջապես հաջորդելով խմբագրականին՝ այն բացում է հանդեսի հերթական համարը, ինչն ինքնին արդեն վկայում է թեմային տրվող կարևո-

⁶ Բ. Անանիկյան, Հայ գրչության և կերպարվեստի դաշինքը // ՍՍ, 1984, № 2, էջ 22:

⁷ ՍՍ, 1984, № 10, էջ 3-13:

րության մասին: Հեղինակը նոր հորիզոն է որոնում հիմնահարցն իմաստավորելու, նրա բուն էությանը մոտենալու համար: Նա վստահ է, որ գիրքը և հատկապես մանկական գիրքը ոչ միայն կարելի է, այլև հարկ է նկարագարել՝ հակառակ XX դարի առաջին կեսին տարածում գտած այլընտրանքային տեսակետների (սրանց ակունքներում հիշատակվում է ռուս գրող և գրակա-նագետ Յուրի Տինյանովի անունը): Նախքան պատկերագարում կամ ձևավորում իրականացնելը, սակայն, կոչ է արվում ուսումնասիրել գրքի հաս-ցեատիրոջը՝ ընթերցողին, որը, չգիտես ինչու, բոլորովին անտեսվել է թե՛ ժամանակակից հրատարակիչների և գրքարվեստով զբաղվող նկարիչների, թե՛ նախորդ բանախոսների կողմից: Շարադրանքում չի ճշգրտվում, թե ինչպես պետք է իրականացվի այդ ուսումնասիրությունը, բայց ընդգծվում է, որ «ընթերցողն է այն բևեռը, որտեղ ի մի են գալիս պորբլեմի բոլոր գծերը» (էջ 4):

Հեղինակի մյուս ինքնատիպ դրույթն այն է, որ յուրաքանչյուր ձևավորում պահանջում է ի՛ր մեկնաբանին, ի՛ր նկարչին, որի գեղարվեստական մտա-ծողությունը, ոճը համահունչ են տվյալ գրական աղբյուրին: Մինչդեռ հրատա-րակությունները, հողվածագրի համոզմամբ, հաճախ չեն էլ պատկերացնում, թե կոնկրետ ո՛ւմ պիտի պատվիրեն ձևավորումը՝ կատարելով պատահական, գեղագիտական տեսանկյունից չպատճառաբանված ընտրություն: Այստեղից բխում է այն միտքը, որ հրատարակիչները պետք է ճանաչեն գրաֆիկայի տվյալ բնագավառում հանդես եկող բոլոր քիչ թե շատ երևելի արվես-տագետներին, ճիշտ այնպես, ինչպես նկարիչը պետք է իմանա պատկերա-զարդվող կամ ձևավորվող գրական երկը: Դա է, որ, ըստ քննադատի, «...թույլ կտա հաղթահարել գեղարվեստական գրականության նկարագարդելու (ավե-լացնենք՝ նաև ձևավորելու – Ա. Ա.) ճգնաժամը, որ տևում է արդեն քանի-քանի տարի» (էջ 5):

Վերլուծության ենթարկելով ժամանակակից հայ գրքարվեստի մի շարք նմուշներ՝ հողվածագիրն առանձնակի ուշադրության է արժանացնում գրական սկզբնաղբյուրի և պատկերագարդման կերպարային ու ոճալեզվական ներ-դաշնակության, տառատեսակի ճիշտ ընտրության, շարվածքի, նկարների և լուսանցքների գրագետ հարաբերակցման, այսինքն՝ դարձյալ գրքի ամբողջա-կան գեղարվեստական կերպարի մշակման հարցերը: Նա շեշտում է, որ պլաստիկական համարժեք արդյունքը ծնվում է գրական երկը խորությամբ ընկալելու, մտքի կաղապարները հաղթահարելու ճանապարհին: Ընդ որում տպագրության որակին երկրորդական տեղ է տրվում: «Ի վերջո, – նկատում է

հեղինակը, – 20–30-ական թվականների դժվարին շրջանում հրատարակվում էին, չէ՞, թեև ոչ բարձր որակի, սակայն հիանալի ձևավորված գրքեր» (էջ 4):

Քննարկումն ամփոփվում էր Խնկո-Ապրո անվան հանրապետական մանկական գրադարանի աշխատակցուհիների՝ վերստին մանկական գրքին վերաբերող հարցազրույցով, որը, ըստ էության, ընթերցողի անունից արտահայտվելու հնարավորություն էր՝ ի համալրում մասնագետների հնչեցրած կարծիքների: Այսպիսով, «Սովետական արվեստ»-ի խմբագրությունը դիմում էր լայն լսարանի, և դա, անկասկած, հասարակական որոշակի պահանջմունքի արդյունք էր: Գրքարվեստի խնդիրներին նվիրված այս քննարկման ու բանավեճի մշակության համատեքստն առավել հստակ է ուրվագծվում, երբ հաշվի ես առնում, մի կողմից, 1980-ական թվականներին Հայաստանում լույս ընծայվող հրատարակությունների մեծ տպաքանակները, հասանելիությունը զանգվածային ընթերցողին, իսկ մյուս կողմից՝ հանդեսի ակտիվ, գործուն դերակատարությունը հանրապետության գեղարվեստական կյանքում: Անշուշտ, բարձրաձայնաձ խնդիրների մի մասն այժմ կորցրել է իր հրատապությունը, բայց մյուսներն արդիական են նաև մեր օրերում, երբ առկա տպագրական համակարգն ընձեռում է գրականությունն ու կերպարվեստը երկխոսության հրավիրելու նորանոր հնարավորություններ: Ժամանակակից հայ գրքի գեղարվեստական ակունքները, գիր-պատկեր գրաֆիկական հարաբերությունները, գիրքն իբրև միասնական պլաստիկական միավոր և մասնագիտական համագործակցության դաշտ. ահա այն հարցերից մի քանիսը, որոնք այսօր էլ արդիական ու հրատապ են:

ԱՄՓՈՓՈՒՄ

Անցյալ դարի 70-ական, մասամբ 80-ական թվականներին Խորհրդային Հայաստանում հրատարակչական գործի ընդհանուր վատթարացման պայմաններում գրքի նկարագարման և գեղարվեստական ձևավորման ասպարեզում նկատվեց ճգնաժամ: Իրավիճակն առաջ բերեց հասարակական լայն արձագանք, որը վերաճեց բանավեճի Հայաստանի գեղարվեստական գլխավոր պարբերականի՝ «Սովետական արվեստ» ամսագրի էջերում:

Հոդվածում քննության են առնվել այդ բանավեճի տեսական և գործնական որոշ ասպեկտներ:

Բանալի բաներ – գրքի նկարագարում, Խորհրդային Հայաստան, բանավեճ, «Սովետական արվեստ» ամսագիր:

СТРАНИЦА ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОГО СОВЕТСКОГО КНИЖНОГО ИСКУССТВА (1980-ЫЕ ГОДЫ)

АРТУР АВАКЯН

В 70-х, отчасти – 80-х годах прошлого столетия в искусстве книжного оформления Советской Армении наметился кризис, связанный с общим упадком издательского дела в республике. Ситуация вызвала широкий общественный резонанс, вылившийся в дискуссию на страницах главного печатного органа в художественной жизни Армении – журнала “Советакан арвест”.

В статье рассмотрены некоторые теоретические и практические аспекты данной дискуссии.

Ключевые слова – книжное оформление, Советская Армения, дискуссия, журнал “Советакан арвест”.

A PAGE FROM THE HISTORY OF SOVIET ARMENIA ON BOOK ART (1980S)

ARTHUR AVAKYAN

In the years of 1970s and some of the 1980s book design and illustration in Soviet Armenia entered a crisis as the conditions of its publishing industry in general worsened. The public interest in the issue was considerable. This led to various debates and discussions on the problem, which were published in «Sovetakan Arvest», the magazine covering art issues.

Avakian in this article considers certain theoretical and practical features of these discussions.

Key words – Book illustration, Soviet Armenia, debate, «Sovetakan Arvest» a monthly magazine.

СИМФОНИЧЕСКОЕ ТВОРЧЕСТВО ТИГРАНА ЧУХАДЖЯНА: «DANSE CARACTÉRISTIQUE, L'ORIENTALE»

МАРТУН КОСТАНДЯН

Одним из наиболее достоверных свидетельств того, что Тигран Чухаджян глубоко осознавал свое творческое и историческое предназначение в качестве первооткрывателя светской армянской профессиональной музыки, является партитура «Danse Caractéristique, L'orientale» (в перев. – Характерный танец), имеющая в названии еще и дополнение «L'orientale», что означает – «восточный». Уже в самом названии содержится мысль о том, что танец хоть и обладает признаками восточной мелодики, но все же представляет собой образец ориентального Востока, то есть такой, какой видится европейцам восточная музыкальная культура. По сути сам термин «ориентализм» является определением смысловой тенденции в музыкальном произведении – в данном случае само произведение является продуктом европейского мышления (оркестровый инструментарий, форма, система фиксации, ладовая структура в базисной основе, ряд кадансов и т. д.), но в метроритмике и интонационной графике есть признак привнесения в них восточной специфичности. Тот же факт, что композитор сам отметил эту направленность своего сочинения, является явным свидетельством художественных намерений композитора, а именно – в сферу привычных для него средств выразительности умышленно вводятся элементы восточной музыкальной атрибутики.

Великий Комитас шел к той же цели, но совершенно иным путем. Будучи священником, воспитанным на традициях древнейшей армянской монодической культуры, которая является основой армянской духовной музыки, он основывался на природе исконно армянской интонационности, которая, в свою очередь, откристаллизовалась в результате шестнадцати веков совершенствования в условиях развития храмовой литургии.

Таким образом, Комитас в своих творческих исканиях отталкивался от исконно армянских музыкальных истоков и, имея европейское образование, сумел переподчинить свои знания, ориентируясь на природу истинно армянской музыкальной культуры. Из европейской музыкальной культуры он почерпнул логику организации многоголосия, но вместе с тем перестроил

законы контрапункта и гармонии, спроецировав их на ладоинтонационные основы армянской народной и храмовой музыки.

В отличие от Комитаса Тигран Чухаджян был человеком светским, а по типологии мышления – абсолютным европейцем. Получив образование в Милане и являясь незаурядным пианистом, а также географически находясь хоть и в светской, но все же в восточной стране, он имел доступ лишь к той части армянского фольклора и храмовой музыки, которая была распространена в диаспоре. Вероятно, в светском Константинополе в те времена наблюдалось смешение западной и восточной культур. Что касается Востока, то не только армянская диаспора представляла свою культуру. Константинополь, находясь на стыке Европы и Азии, аккумулировал целый ряд различных культурных тенденций и обладал довольно-таки развитой инфраструктурой. Достаточно вспомнить, что в Константинополе был целый ряд армянских культурных учреждений, в том числе музыкальное общество «Բիւր» (Лира), театр «Արևիշի թատրոն» (Восточный театр), «Гусанергакан» и другие. Практически со всеми армянскими учреждениями Тигран Чухаджян сотрудничал, а в создании «Армянской труппы турецкой оперетты» сам принимал непосредственное участие.

Таким образом, интонационное мышление композитора формировалось в среде, где смешение культур было явлением обычным, несмотря на то, что армянская музыкальная культура была для него естественным источником, питавшим творческий комплекс знаний и навыков. Вместе с тем тенденции, в первую очередь европейская, а затем и иных восточных культур оставили в мышлении Чухаджяна следы своего влияния. Именно это качество художественного мышления проявилось в исследуемом нами произведении, названном «Характерный танец» с уточнением Ориентальный – то есть восточный вообще, а не имеющий признаков конкретного этнофольклорного пласта. А если учесть, что ориентализм в музыке второй половины 19-го века в Европе был чрезвычайно популярен¹, то и этот фактор способствовал обращению к образности, запечатленной в этой оркестровой пьесе.

¹ Целый ряд французских и русских композиторов обратили свой взор к культуре Востока. В симфонических картинах Клода Дебюсси «Море» ясно прослушиваются восточные мотивы. В «Шехеразаде» Николая Римского – Корсакова, в опере «Князь Игорь» Александра Бородина, в фортепианной пьесе Милия Балакирева – «Исламея» и во

Перейдем непосредственно к анализу партитуры. Интересен оркестровый состав, свидетельствующий о том, что пьеса эта предназначалась для театральной постановки. **Тигран Чухаджян, и это уже очевидно из предыдущих аналитических блоков, вводит в оркестр только те инструменты, которые ему необходимы для данной миниатюры.** То есть бытовавшие в те времена правила симфонического оркестрового письма, требующие введения в оркестр определенного числа и качества инструментов, определявшие принадлежность к симфоническому жанру, соблюдены не полностью, а в угоду образу, представленному в пьесе².

В группе деревянно-духовых по одному инструменту, но нет фагота; в медно-духовой группе – две валторны, но с переменными инструментами in F и in E. Две трубы in a тоже весьма специфический выбор – трубы in a использовались в 19 веке крайне редко, как и in E³, при малом числе деревянно – духовых в инструментарии пьесы присутствуют два тромбона и туба (Bombardone), что с точки зрения оркестрового баланса представляет некоторый динамический перевес в сторону меди. Ударная группа тоже необычна. Сочетание треугольника, большого барабана и тарелок для восточной музыки непривычно, а кастаньеты призваны скорее всего имитировать армяно – грузинский ударный инструмент - Timplipiti⁴.

Рассматривая эту партитуру, следует учесть, что данная оркестровая пьеса является жанровой, принадлежащей к танцевальному жанру, и, судя по темповым параметрам, характеру мелодического рисунка и пластики метроритмики адресована женскому хореографическому ансамблю, специализирующемуся на исполнении этнотанцевального репертуара.

многих других европейских музыкальных произведениях прослеживается обращение к восточным образам, что обогатило мировое музыкальное искусство.

² Уже в первой половине XX века многие композиторы перестали соблюдать правила полного симфонического состава. Например, в «Истории солдата» Игоря Стравинского, сочиненного во время второй мировой войны, состав оркестра более подобен ансамблю, поскольку композитор составил оркестр из музыкантов, которые не ушли на фронт. И несмотря на это партитура признается симфонической.

³ Эти инструменты использовались во времена, когда духовые не имели вентельного механизма, и звуковысотность регулировалась сменой крон.

⁴ Этот инструмент Газарос Сарьян использовал в своей замечательной сюите «Симфоническое панно Армения».

В первую очередь рассмотрим ритмоинтонационную структуру первого эпизода, несомненно играющего роль вступления.

Moderato

Это типично армянский ритм, часто встречающийся именно в женской национальной хореографии, например в танцах Энзели⁵ и Астваццна (танец Богородицы).

Подобные ритмы встречаются и в других восточных музыкальных этносах, однако интонационно мотивы данного танца ближе к армянской мелодической лексике.


Если оценить интонации вступления с позиций ладовой структуры, то очевидно сходство с уже встречавшейся нам ранее ладовостью: в рассмотренной нами «Mélodie» Тиграна Чухаджяна встречался подобный минорный лад с расщепленной IV ступенью. Приведем ладовую структуру начального эпизода «Характерного танца»:

расщепл. 4 ст.

Наиболее характерной армянской интонационной чертой является не само расщепление, а перенаправленность каждого из звуков расщепления в

⁵ Есть аналог в творчестве А. Спендиаряна.

связи с вектором тяготений: разрешение вниз идет от тона ре, а тон «dis» тяготеет в тон «е»:



4 ст.

Это наглядный пример, демонстрирующий некую общность подхода к мотивной интонационности в представлениях композитора о специфике армянского мелоса.

Вместе с тем тон «gis» – VII повышенная ступень a-moll, явно указывает на признак европейского мышления: в ладовой структуре этот тон проявился благодаря разрешению доминантовой функции в тонику в группе струнных. Иными словами исходным ладом в мышлении композитора является гармонический лад ля минор, в котором расщепление IV-ой ступени Чухаджяном видится как признак принадлежности мотивных оборотов к армянской мелодической традиции.

Ритмоорганизация в данном случае отнюдь не ориентальная – ритмофигуры танца типично армянские:

а)



б)



После вступления композитор проводит тематический материал очень необычно: первоначальное экспозиционирование темы начинается с мате-

риала, который более подобен продолжению подготовки к проведению темы. И этот эффект обеспечен не только повторным изложением уже известных слушателю интонационно – ритмических фигур, но и появившимся новым элементом фактуры: серией высоких (в деревянно – духовой группе) бурдонов, которые однозначно идентифицируются с армянской культурой «дам'а», неизменно встречающейся в храмовой музыке и народной – в особенности тогда, когда музыка звучит в исполнении двух или трех дудукистов. Заметим, что удвоение кларнета гобоем и подсветкой октавного обертона у флейты темброво близки звучанию дудука, принадлежность которого к армянской музыкальной культуре никто не смеет оспорить⁶.

Особенности первой темы танца состоят в том, что она построена на репетитивных повторах мотива, завершающего вступление, и, перейдя в фазу начала основной темы, сглаживают стык двух разделов – вступления и собственно темы.

Но и сама первая тема танца построена на репетитивной повторности подобных мотивов – в самом начале заимствованных во вступлении, а позже повторяющих хоть и не мотив, но, по сути, мелодический оборот, являющийся модификацией исходного интонационного зерна.

Тема скомпонована из четырех фрагментов, каждый из которых представляет собой репетитивные повторы абсолютно идентичных мотивных фигур. Первые два мотивных зерна ритмически одинаковы, и это свидетельствует о том, что композитор при создании темы ориентировался на принципы мотивного метаморфозиса – по сути, второй мотив является инвариантом первого – как по параметрам ритмоорганизации, так и по интонационному сходству: три средних звука обоих мотивов совершенно идентичны. Наиболее важным можно считать различия в завершении каждого из мотивов (назовем эту деталь мотива микрокадансом): в первом случае – разрешение на пол тона вверх не является утвердительным и требует продолжения, а во втором – мотив завершается полутоновым разрешением вниз, явной утвердительной музыкально – смысловой точкой.

Таким образом, игра в различное микрокадансирование определяет и

⁶ Аналогичные инструменты есть и у других народов – иракский тутак, например, но природу специфического тембра и приемов игры на дудуке сохранила именно армянская музыкальная культура. См. Энциклопедия «Музыкальные инструменты», Москва, 2008, стр. 208.

характер первых двух предложений, соответственно: вопросительный и утвердительный. Но при этом интонационное единство придает обоим предложениям качество музыкально – образного единства, единства эмоционального состояния.

Два следующих предложения несколько более развиты благодаря обильной, типично восточной и разнообразной мелизматике, а также эффекту эпизодических пролонгаций последних звуков каждого из мотивов. Этот эффект усилен еще и тем, что место, где последний звук мотива превращается в бурдон, невозможно предугадать – в процессуальности эти пролонгации возникают спорадически, внезапно, что является типично восточным средством преодоления квадратности. Оба мотива в микрокадансах разомкнуты, а пластика мелодического движения обладает гибкостью неквадратного строения формы. Происходит это благодаря интермедиям, которые расположены перед каждым из предложений, а их мелодическая графика тоже интонационно близка мотивным зернам.

Если же еще глубже заглянуть в строение формы темы, то выяснится, что качество развития музыкальной мысли при очевидной статичности мелодического движения придает тематизму тембровое и, в особенности, фактурно – гармоническое разнообразие.

Особый интерес вызывает наложение всех пластов музыкальной фактуры на бурдоны, аналоги армянского «дама», возникающие то в басах, то в высоких флейтах и струнных, то в педалях валторн.

Желание композитора имитировать звучание дудука особенно эффектно проявилось во второй половине темы, где гобой удваивает флейту – в унисон, а затем в октаву, а подключившиеся скрипки как бы усиливают эту тембровую иллюзию. Примечательно украшательство ритмики треугольником, наслаивающимся на «*pizzicato*» струнных.

Следует отметить еще одно важное обстоятельство: во втором разделе темы проявляется прием ладовой трансформации – расщепляется III-я ступень, что можно классифицировать как применение переменного лада – *a-moll* с известным нам расщеплением IV ступени, теперь лад *a-moll* обладает еще и краской мажоро – минорной переменности. То есть, базовая тональность *a-moll* обогащается ладовой краской одноименного мажора, что очень часто встречается в армянской музыкальной традиции.

Тема проводится репризно, дважды, и после второй вольты вводится средняя часть пьесы, но не сразу, а с помощью связующего построения – оркестровой интермедии.

Если во вступлении к первой теме Тигран Чухаджян использовал прием ее интонационной подготовки – своеобразная мотивная «подсказка», то в данной оркестровой интермедии применен тот же прием – заглавный мотив второй темы интермедии не только исполняет роль «подсказки», но и еще и снабжен авторским указанием об ускорении темпа «*Roso più mosso*».

Во второй теме мы вновь сталкиваемся с приемами репетитивности: подвижный мотив состоит из обыгрывания квинтового тона тоники a-moll, сопрягается с новым мотивом, ритмооснова которого заимствована из мотивного набора первой темы и материала вступления:



Одним из весьма заметных приемов гармонии является модуляция в тональность B-dur с помощью хроматического движения басов, сначала закрепляющих функцию второй ступени, а затем без участия доминанты – разрешением субдоминанты в тонику.

Эта плагальность в модуляционном процессе хоть и встречается в европейской музыке, но гораздо ближе музыке восточной, в том числе и армянской. Но главное, что в этом приеме считается намерение композитора приблизиться к истинным истокам национальной музыкальной культуры. Более того уже в рассмотренных нами приемах письма ощутимо это стремление – в сферах национального строя музыки, ритмики, организации музыкальной формы и даже в игре тембровых ассоциаций с армянским инструментарием. Нет сомнений в том, что в данной пьесе Тигран Чухаджян гораздо ближе подошел к стилистике армянской музыкальной традиции, чем в Интродукции к опере Аршак II и симфонической пьесе «*Mélo die*», в которых признаки национальной стилистики были явно ориентальными и в значительно большей степени смешаны с приемами европейской музыкальной культуры.

Однако полностью «освободиться» от европейского влияния Тиграну Чухаджяну в этой партитуре не удалось. В гармоническом языке достаточно рельефно проступают черты функциональных тяготений в пределах европейской мажоро – минорной системы. Особенно ярко прослушиваются доми-

нантовые тяготения, в то время, как в музыке востока, даже многоголосной внутрिलाдовые тяготения линейны и не являются результатом взаимодействия в аккордовых последовательностях.

Рассматриваемая нами сейчас подвижная тема представляет собой связующую – между первой развернутой темой и третьей – развитие которой заполняет средний раздел сложной трехчастной формы. Это классификационное определение формы заимствовано из классических европейских традиций строения композиции, и в определенном смысле для нашей техники анализа является условной. Вместе с тем, несмотря на множественные признаки присутствия в музыке восточных мотивов, композиция довольно точно соответствует европейским нормам формообразования.

Сочетание европейской модели формообразования с приемами классической гармонии, откристаллизовавшейся в традициях музыкального искусства Европы, в данном произведении достаточно органично увязано с пластикой восточного (а точнее приближенного к армянской интонационности) мелоса. Однако сам факт слияния различных по своей природе стилистических признаков – явление ориентальное, причем базовой его основой в данном случае все-таки служит европейская модель системного объединения элементов музыкальной композиции в единую формообразующую целостность.

Третья тема (а по нашим наблюдениям центральная и по месторасположению в форме, и по признакам более высокого уровня организации музыкального материала) весьма эффектно проводится в одноименном мажоре – A-dur, и если вспомнить, что в первом разделе был прецедент применения переменного лада (a-moll – A-dur), то очевидно, что эффект перемены ладовой основы с минорной на мажорную подготовлен композитором заранее. Чем же данная тема отличается от первой, а точнее насколько уровень ее композиционной организации превосходит предшествующий тематизм?

Самое важное заключено в ее формообразовании. Тема создана в простой трехчастной форме, где средняя часть контрастна крайним. В этом смысле эта центральная тема по параметрам формообразования представляет собой микромодель всей пьесы: целостная форма классифицирована нами как сложная трехчастная, а ее центральный эпизод – простая трехчастность. Осмелимся высказать предположение, что отчасти такая композиция подобна модели восточной литературной формы, которую когда-то метафорически сравнивали со «шкатулкой в шкатулке». Например, восточный образец лите-

ратуры «Тысяча одна ночь» выстроен по этому же принципу – в повествование вторгается иная история, которую рассказывает не автор произведения, а его персонаж, в рассказе которого тоже появляется новый рассказчик со своей историей и т. д. Во всяком случае в европейских трехчастных формах средний раздел чаще всего вторичен и служит контрастом к материалу крайних частей, носителей главной образности. В нашем же случае именно центральная часть – средоточие драматургии, а крайние – обрамляют ее.

Первым признаком более сложной организации является новая фактурная формула – она многослойна: на остигато повторяемый бас наслаивается фигурация струнных, обыгрывающих квинтовый тон тоники, валторны (теперь звучащие in E) также остигато повторяют «мятниковую» фигуру, балансирующую между тоникой и доминантой, постепенно подключается треугольник, который подчеркивает пульсацию метра 6/8, первый тромбон время от времени «включает» дам на тоне «е» (квинтовый тон тоники), который подготовлен повторами этого же тона у гобоя, высокие скрипки обыгрывают квинту и сексту лада (тоже важные подсветки вновь проявившейся мажорной краски). И над этой сложной фактурой в тембрах флейты, гобоя и трубы расположена мелодия темы, интонационно близкая материалу I – темы, но состоящая из двух мотивных элементов.

Завершается первый раздел темы выразительной мелодической модуляцией в тональность VI ступени – *fis-moll*. Но тут же, в следующем такте, приемом сопоставления возвращается *A-dur*, который далее, в развитии тематического материала, снова модулирует в *fis-moll*.

Весь средний раздел имеет, по крайней мере, признаки расширения периода и в первую очередь средствами гармонии, точнее, приемами модулирования: после модуляции в *fis-moll* следует возвратная модуляция в тональность *A-dur*, которая далее переосмысливается в функциональную опору субдоминанты и в кульминационной фазе переходит в доминантовый предыкт *E-dur*. В свою очередь *E-dur* тоже переосмысливается в доминанту главной для среднего раздела тональности *A-dur*, которая после репризного повтора и второй вольты возвращается вместе с изначальной темой второго раздела.

Продолжение этой версии темы тоже имеет расширение – при условии наполнения оркестровой ткани плотностью всей меди (тромбоны и трубы призваны быть мелодическим стержнем фрагмента).

В последней предыктовой фазе Т.Чухаджян осуществляет фактурную

разрядку в продолжительном «каскаде» секвенций, готовящих репризный возврат в тональность a-moll. Очень интересен прием нисходящей опорной линии, контрапунктом сопровождающей звеня секвенции. Этот прием в нисходящем (такты 21 – 23, 58 – 59) и восходящем (т. 81 – 82, 105 – 106) движениях не раз проявлялся в кратких версиях, однако на этот раз он растянулся на восемь тактов и подчеркнут тембровой переменностью: слившись с терцией гобоя и кларнета в пятом такте, нисходящий опорный стержень перешел в партию виолончели, а кларнет подключился к секвенционному движению.

Секвенционное нисхождение перед преддыктовой доминантой компенсировалось обыгрыванием звуков диссонирующей доминанты a-moll в чисто оркестровом приеме: обыгрывание гармонической основы последовательно прошло от струнных, через медно – духовые к группе деревянно – духовых, где высокая флейта остановилась на продолжительной трели «е» третьей октавы – приме доминантового септаккорда и квинте тонического трезвучия.

Весь описанный выше фрагмент представляет собой великолепный образец симфонического оркестрового мышления – и с позиции динамики звучаний – линейное плавное нисхождение в секвенциях компенсируется движением, восходящим через все оркестровые группы, направленным вверх, и в плоскости композиционной логики – восхождение к одному единственному тону «е» (общему звуку для доминанты и тоники), действенный прием, через который осуществлена модуляция в исходную тональность и которая, по сути, **является ярким оркестровым эффектом подготовки не только к возврату a-moll, но и к материалу репризы.** Эффект «зависшей» квинты тоже следует причислить к композиционному изыску – именно с ноты «е» начинается первая тема.

Так же, как и в экспозиции, проведению темы предшествует четырехтактная связка – «подсказка», состоящая из тематического зерна и ключевой ритмоформулы, определяющей интонационную индивидуальность тематического материала. Если же считать отсутствие некоторых удвоений, тема танца в репризе проводится точно, но без репрезирования, а завершает пьесу кода, в основе которой заложен материал второй темы – мы в начале анализа классифицировали ее как связующую. Применение ее материала в качестве основы для коды – еще одно подтверждение статуса темы: в обоих случаях ис-

полняет функцию второстепенную, прикладную – в первом случае это связка, а во втором – заключение.

В результате анализа стало очевидно, что Тигран Чухаджян не только проявил себя как композитор, мыслящий категориями симфонического жанра, но и отличился умением выстроить достаточно сложную форму, основываясь на закономерностях взаимодействия оркестровых тембров и инструментальных групп, а также продемонстрировал высочайшее композиторское мастерство.

С точки зрения особенностей стилистики данная пьеса более насыщена признаками армянской музыкальной традиции, чем «Sinfonia» и «Mélodie». Это качество музыки «Восточного Танца» уже не столько ориентальное, сколько максимально приближено к специфике армянской музыкальной традиции. И все-таки, наряду с этими качествами музыки «Восточного Танца» в его ладо-гармонической структуре явно ощутимо влияние европейской функциональности и даже IV повышенная ступень, которая в мелодической линии пьесы призвана быть признаком восточной интонационности, в гармонии почти всегда исполняет функцию двойной доминанты.

Сочетание европейской гармонии с восточным мелосом можно считать признаком стилизации явления типично ориентального. Так или иначе, само желание композитора устремлено к достижению благороднейшей цели, а именно – созданию истинно национального образца симфонического жанра.

РЕЗЮМЕ

В данной статье автор обращается к симфоническому творчеству Тиграна Чухаджяна (1837-1898). В частности, анализируется пьеса «Danse Caractéristique, L'oriental», написанная для симфонического оркестра, выявляются ее музыкально-стилевые и формообразующие особенности. Результаты анализа явствуют о том, что Т.Чухаджян не только проявил себя как композитор, мыслящий категориями симфонического жанра, но и отличился умением выстроить достаточно сложную форму, основываясь на закономерностях взаимодействия оркестровых тембров и инструментальных групп, а также продемонстрировал высочайшее композиторское мастерство.

Ключевые слова – Тигран Чухаджян, «Danse Caractéristique, L'oriental», симфоническое произведение, армянская симфоническая музыка, партитура.

**ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱԾՅԱՆԻ ՍԻՄՖՈՆԻԿ ԱՍԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
«DANSE CARACTÉRISTIQUE, L'ORIENTALE»**

ՄԱՐՏՈՒՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հեղինակն անդրադարձել է Տիգրան Չուխաճյանի (1837-1898) սիմֆոնիկ ստեղծագործությանը: Քննության է առնվել սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Danse Caractéristique, L'orientale» պիեսը, բացահայտվել են երաժշտական-ոճական և ձևակառուցման առանձնահատկությունները: Վերլուծության ընթացքում ակնհայտ դարձավ, որ Տ.Չուխաճյանը ոչ միայն իրեն դրսևորեց որպես սիմֆոնիկ ժանրի կատեգորիաներով մտածող կոմպոզիտոր, այլև աչքի ընկավ նվագախմբային տեմբրերի և գործիքային խմբերի փոխազդեցության օրինաչափությունների վրա հիմնված բավական բարդ ձևակառուցման ունակությամբ, ինչպես նաև դրսևորեց կոմպոզիտորական բարձրագույն վարպետություն:

Բանալի բաներ – Տիգրան Չուխաճյան, «Danse Caractéristique, L'orientale», սիմֆոնիկ ստեղծագործություն, հայկական սիմֆոնիկ երաժշտություն, պարտիտուր:

**SYMPHONIC WORKS OF DIKRAN TCHOUHADJIAN
«DANSE CARACTÉRISTIQUE, L'ORIENTALE»**

MARTUN KOSTANDYAN

The author has considered Dikran Tchouhadjian's (1837-1898) symphonic work «Danse Caractéristique, L'orientale», a piece written for the symphonic orchestra. The characteristic features of the musical structure and arrangement of the notes have been worked out as well. On reviewing the piece it became evident that Tchouhadjian is a composer whose thinking fits into symphonic categories. He has the capability of producing rather complex structural works out of the standardized group interaction of instruments and orchestral temperaments. He has established himself as an accomplished composer.

Key words – Dikran Tchouhadjian, «Danse Caractéristique, L'orientale», symphonic work, Armenian symphonic music, partita.

ԲԻՇԱՊՈՒՐ ՔԱՂԱՔԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ ԵՎ ԱՆԱՀԻՏԻ ՏԱՃԱՐԸ

ՎԱՀԴԱՏ ՅԱՐՄՈՀԱՄՄԱԴԻ (ԻՐԱՆ)

Սասանյան դինաստիայի կառավարման ժամանակաշրջանն Իրանի պատմության կարևորագույն փուլերից է (3-7-րդ դդ.): Այս ժամանակաշրջանում ուշադրության կենտրոնում էին զրադաշտական կրոնը, կրոնական հիմնահարցերն ու իրադարձությունները, թագավորների ռազմավարության կարևորագույն գործելաոճերն ու նպատակները, նրանց կրոնական դիրքորոշումները և այլն: Սասանյան գահակալներն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում քաղաքների կառուցմանը, շինությունների վերանորոգմանն ու վերականգնմանը: Սասանյան Շապուհ Ա(240/4-272թթ.) արքան համարվում է քաղաքների ու կառույցների ամենանշանավոր շինարար ու վերանորոգիչ տիրակալը: Նրա հրամանով 266թ. կառուցվում է իր անունը կրող Բիշապուր քաղաքը, որը հնագույն ժամանակների խոշոր քաղաքներից էր համարվում: Քաղաքի ավերակները հայտնաբերվել են Ֆարս նահանգի Քուհմարեհի բարձունքի լանջերին՝ Քազերուն քաղաքից 23 կմ դեպի արևմուտք՝ Շապուր գետի ափին: Բիշապուրը կառուցվել է հնագույն արքունի ճանապարհի վրա, որը երկրի առավել կարևոր ռազմավարական ճանապարհներից մեկն էր համարվում: Այն փոխած էր Շապուհ հարթավայրի երկայնքով՝ Քարեն դաշտավայրի կանաչ և ծաղկաշատ տարածքում, որտեղով հոսում էր Չեշմեհ Սասան գետը: Բիշապուրն իր կերպարային հորինվածքով մրցում էր այն ժամանակվա քաղաքակիրթ աշխարհի մյուս խոշորագույն քաղաքների հետ:

Առաջին անգամ քաղաքաշինության պատմության մեջ Սասանյան դարաշրջանում քաղաքները կառուցվել են ուղղանկյունաձև՝ ներառելով չորս ուղղություններով չորս դարպասներ: Բիշապուրի կենտրոնում խաչվում էին հիմնական երկու փողոցները, որոնք ձգվում էին հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք: Քաղաքն ուներ 1% թեքություն՝ արևելքից դեպի արևմուտք: Քաղաքը լավագույնս ուժեղացված պաշտպանություն է ունեցել՝ ի դեմս կանգնեցված պատնեշների, փորված խրամատների, անառիկ ամրոցների ու միջ-

¹ **Ghrishman, Roman**, Bishapour, Volume I, translated by: A. Karimi, cultural heritage press, First Edition, Tehran, 1994. p. 218.

նաբերդի: Բոլոր շինություններն ու բնակատեղիները շրջապատված են եղել այգիներով, կանաչ տարածքներով, որոնք քաղաքի կերպարին գեղեցիկ տեսք են հաղորդել: Քաղաքն ունեցել է կամուրջ և դարպասաշենք: Այստեղ տնտեսական ու բնակելի կառույցներից բացի, եղել են արքունի համալիրը կամ թագավորական դաստակերտը, պալատը, սուրբ կրակի ու Անահիտ աստվածուհու մեհյանները, հարակից զանազան շինություններ²:

Քաղաքի հատակագծային հորինվածքը շրջանաձև չէ: Պետական շինությունները հիմնադրվում էին հնագույն ամրոցների կենտրոնում՝ քաղաքի հյուսիսում, որոնք լավագույնս ընտրված տարածքներն էին: Այստեղ յուրաքանչյուր շինություն ինքնատիպ էր՝ ուրույն առանձնահատկություններով: Ընդարձակ կամարակապ սրահները, դահլիճները, գունեղ ու զարդանախշված հարդարանքները, հատակի աղյուսե սալիկները, գիպսե դեկորներն ու գունավոր նկարների կիրառումը կամարակապերում և առաստաղներին վկայում են Բիշապուրում առկա նոր ոճի մասին: Մինչև այսօր հայտնաբերված հուշարձանները՝ քաղաքի ամրոցի աշտարակը և պատվարը, հանդիսությունների սրահները, սյունազարդ սրահը, սրահի արևելյան և արևմտյան կողմերի աղյուսե սալիկները, ինչպես նաև այլ կառույցներ՝ Անահիտի ինքնատիպ տաճարը, բոլորը ցույց են տալիս, որ դեռևս սկզբնական շրջանում Սասանյան մշակույթն ու քաղաքակրթությունը կրել են իրենց նախորդող անցյալի ազդեցությունը՝ հետևելով Աքեմենյան դարաշրջանի արվեստի գործերին³:

Չնայած Սասանյան շրջանում երկրի պաշտոնական կրոնը զրադաշտականությունն էր, բայց Անահիտ աստվածուհին ևս մեծ կարևորություն է ունեցել նրանց շրջանում՝ լինելով ջրի պահապանը, որի համար էլ Բիշապուրի պալատի հյուսիսարևմտյան մասում կառուցվել է մի գեղեցիկ և ինքնատիպ մեհյան: Այն քառանկյուն հատակագծով կառույց է, որի պատերն ու հատակը ծածկված են եղել սրբատաշ քարերով: Պատերի բարձրությունը 17 մետր է: Շինության պատերի կեսն ավելի ցածր է, քան գետինը, քանի որ պատերն ընդամենը 7 մետրով են ավելի բարձր, քան հատակը: Այս շինությունը կառուցված է խոշոր և չոր կտրված քարերով, որոնք ամրացված են երկաթե գամերով: 17մ բարձրություն ունեցող պատերից միայն հյուսիսային պատն է պահպանվել: Պատի վերնամասում կան զույգ ցուլերի արձաններ, որոնց կրկնօրինակներն առկա են Պերսեպոլիսի և Շոշի պալատներում: Կան նաև

² Ghrishman , Roman, Bishapour, Volume I, translated by: A. Karimi, cultural heritage press, First Edition, Tehran, 1994. p. 223.

³ Նույն տեղում, էջ 189:

չորս ցուլերի քանդակային ձևեր: Այդ արձանները տեղադրված են ճշգրիտ հաշվարկված՝ թաղակամարների հանգուցամասերի ամրացման համար: Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ կառույցն առաստաղ չի ունեցել: Ըստ Սարֆարազի՝ այդ արձանները միայն դեկորատիվ բնույթ չեն կրել, նրանք տաճարի նշաններն ու խորհրդանիշներն են եղել: Այս հարթ, առանց ծածկի կառույցը հավանաբար գմբեթ չի ունեցել⁴:

Կառույցի կենտրոնական սրահը գտնվում է գետնից 25 քայլ ավելի ցածր, ունի չորս դարպասաշեմքեր՝ չորս ուղղություններով՝ յուրաքանչյուրը 3.75 մ բարձրությամբ և 1.6մ լայնությամբ: Այս մուտքերի միջոցով կարելի է մտնել միջանցք, որը շրջապատում է կառույցը⁵: Այդ միջանցքներն ունեն խաչվող առաստաղներ: Հյուսիսային անկյունի հետնամասում կա մի փոքրիկ սենյակ, որտեղ, ըստ Վանդենբերգի, սրբազան կրակն է պահպանվել⁶: Հատակն արված է քարե երկու շերտով. ավելի բարձր շերտը շրջանցում է պատերը, իսկ ավելի ցածր շերտը կենտրոնի ուղղանկյունն է կազմում: Անահիտ դիցուհու մեծանն ունեցել է չորս մուտքեր, որոնցից երեքը բացվում էին նրա երեք կողմերում գտնվող ստորգետնյա ջրանցքի մեջ, իսկ չորրորդ մուտքը բացվում էր դեպի վեր բարձրացող աստիճանները: Չորս մուտքերն էլ միանման են եղել: Դրանց վերնամասում տեղադրված են եղել ցուլերի գլուխներ: Մեծանի ավազանը ջրով է լցվել Շապուր գետից փորված 250 մետր երկարությամբ ստորգետնյա ջրանցքի միջոցով, որը, հոսելով դեպի մեծանը, նրա երեք մուտքերից լցվել է ավազանի մեջ: Այսպիսով, տաճարում հոսող ջրի համակարգը հուշում է այն միտքը, որ այն եղել է Անահիտին նվիրված տաճար, որտեղ երկրպագել են ջրերի պահապան աստվածուհուն:

Բիշապուրի շուրջ կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքի հիմնադրումը աղբյուրների մոտ կամ սուրբ լեռան ստորոտին (Թանգե Չոգան), կամ ականավոր հոգևորականների մահվան վայրերում (ըստ շրջանառվող տեղեկությունների՝ ենթադրվում է, որ Շապուր արքայի մարմինը և հավանաբար նրա հարազատներինը նույնպես ամփոփված են այս

⁴ **Godar, Andre**, Maxim Siro and others, *The masterpieces of Iran*, translated: B. Farah vashi, 2 volumes, Volume II, Scientific and Cultural Publication, Second Edition, Tehran, 1979, p. 67.

⁵ **Sarfaraz Ali Akbar**, *Bishapour in Iranian cities* (4 Volumes), Volume II, Tehran Jihad University press, Tehran, 1987, p.27.

⁶ **Vandenberghé, Louis**, *Archaeology of Ancient Persia*, translated by i. Behnam, Tehran University press, Second Edition, Tehran, 2000, p.55.

քարանձավում), վերջապես, ժողովրդի հավատալիքների ազդեցությունը նույնպես կարևորվել է հիշյալ քաղաքի ձևագոյացման գործում: Բիշապուրի գետի կիրճի կողքերը Շապուհը զարդարել է հսկայական պատմական ռելիեֆներով (որոնք լի են կրոնական խորհրդանիշներով)՝ ի հիշատակ Հռոմի դեմ տարած իր փառահեղ հաղթանակների: Բիշապուր քաղաքի հուշարձանային համալիրը կառուցվել է ի պատիվ Շապուհի, որի արձանը տեղակայված է եղել այս շինության առջև: Իսկ Բիշապուրի քառակուսի տարածքն իր ճարտարապետական հորինվածքի առանձնահատկություններով կառուցված է եղել Նահիդ աստվածուհու համար: Նշվում է, որ ջուրը մշտապես չէր հոսում այդ տարածքում, այն բաց էր թողնվում տարվա մեջ մեկ կամ մի քանի անգամ՝ աստվածուհու պատվին իրականացվող միջոցառումների ժամանակ: Զրադաշտականները բացում էին ջրատար ուղիներն ի նշան այդ սուրբ վայրի փառքի ու վեհության, որը հանդես էր գալիս իր ողջ գեղեցկությամբ⁷: Ծիսական արարողություններից և աղոթքներ հնչեցնելուց հետո զրադաշտականները փակում էին ջրատար ուղիները: Դիտարկելով այն հանգամանքը, որ եթե ջուրը հոսեր փակ տարածության մեջ ամբողջ տարվա ընթացքում, ապա, հավանաբար, պետք է լցված լիներ տհաճ հոտով լի լճացած ջրափոսերով: Զրադաշտական կրոնում՝ կապված ջրի երկրպագության հետ, մարդիկ տարբեր միջոցներով պահպանում էին ջուրն աղտոտումից:

Ամփոփելով հարկ է նշել, որ Անահիտի տաճարում առկա են մի շարք խորհրդանիշներ, որոնք վստահաբար հավաստում են, որ տաճարը պատկանել է Անահիտ աստվածուհուն: Դրանք են՝ ջրի առվակների գոյությունը տաճարի ներսում և շուրջը, ջրամատակարարման համակարգը, պատերի վրա ցուլերի պատկերների գոյությունը, լոտուս ծաղկի ձևով արված դեկորատիվ հարդարանքը, հանդիսությունների դահլիճը կամ պալատը (խաչաձև տարածք): Մենք գտնում ենք, որ հանդիսությունների դահլիճում միահյուսված տարրերը հիշեցնում են նորաստեղծ Սասանյան պետության փառավոր մեհյանների մասին՝ մի շարք հանգամանքներով պայմանավորված: Հանդիսությունների սրահում առկա կարևոր կրոնական խորհրդանիշները վկայում են տվյալ հուշարձանի՝ կրակին նվիրված տաճար լինելու փաստի մասին, որի համար հիմք են հանդիսանում զրադաշտականությունը խորհրդանշող չորս կրոնական տարրերը կամ տարերքները, այդ թվում՝ խաչաձև հատակագիծը,

⁷ Sarfaraz, Ali Akbar, the great temple of Anahita in Bishapour, the third annual report of archaeological excavations and research, Publishing Archaeology Center, Tehran, 1975, p.169.

պարագծային միջանցքների գոյությունը (կրակի պահպանման միջանցքը), հաստ սյունների օգտագործումը, չորս ուղղություններով ձգվող չորս լայն մուտքերը, գմբեթաձև առաստաղը, սվաստիկայի տեսքով կրոնական խորհրդանիշների հարդարանքը, որմնախորշերը, որտեղ տեղակայված էին խորհրդանիշները՝ աստվածների և աստվածուհիների, նախնիների և մեծամեծերի արձանները⁸: Վերոնշյալ մանրամասների ուսումնասիրության գործում՝ որպես պատմահնագիտական հարուստ նյութ դիտարկվել են զրադաշտական հին տեքստերը, Քաաբա Ջորոաստրիտի վիմագիր արձանագրությունն ու այլ արժեքավոր աղբյուրներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սասանյան Շապուհ Ա արքայի հրամանով 266թ. կառուցվել է Բիշապուր քաղաքը, որը հնագույն ժամանակների խոշոր քաղաքներից էր համարվում: Քաղաքում թագավորական, տնտեսական ու բնակելի կառույցներից բացի, եղել են սուրբ կրակի ու Անահիտ աստվածուհու մեհյանները, ինչպես նաև հարակից այլ շինություններ: Բիշապուրում ամենուրեք առկա են եղել կրոնական խորհրդանիշներ: Անահիտ կամ Նահիդ աստվածուհին մեծ կարևորություն է ունեցել՝ լինելով ջրի պահապան աստվածուհին, որի համար էլ Բիշապուրի պալատի հյուսիսարևմտյան մասում կառուցվել է մի գեղեցիկ և ինքնատիպ մեհյան՝ ճարտարապետական հորինվածքի հետաքրքիր առանձնահատկություններով:

Բանալի բաներ - Սասանյաններ, թագավոր, Բիշապուր քաղաք, կրոնական խորհրդանիշներ, կառույցներ, Անահիտ աստվածուհու տաճարը, ջրի պաշտամունք:

РЕЛИГИОЗНАЯ СИМВОЛИКА ХУДОЖЕСТВЕННОГО НАСЛЕДИЯ ГОРОДА БИШАПУР И ХРАМ АНАИТ

ВАХДАТ ЯРМОХАММАДИ

По приказу царя Шапуха А Сасаняна в 266 году был построен город Бишапур, который считался одним из крупных городов древности. В городе кроме царских, хозяйственных и жилых построек были возведены капища святого огня и богини Анаит. Имелись и смежные постройки. В Бишапуре повсюду присутствовала религиозная символика. Богиня Анаит или Нахид

⁸ Նույն տեղում, էջ 181:

была богиней-хранительницей воды, для нее в северо-западной части дворца Бишапура был построен красивый и оригинальный храм, отличавшийся интересными особенностями архитектурного стиля.

Ключевые слова - Сасаняны, царь, город Бишапур, религиозная символика, постройки, храм богини Анаит, культ воды.

RELIGIOUS SYMBOLS IN THE ARTISTIC HERITAGE OF THE CITY BISHAPUR AND THE TEMPLE OF ANAHIT

VAHADAT YARMOHAMMADI

The city Bishapour was founded in 266 AD by the second Sasanian king, Shapur I, which was considered to be one of the major cities of the period. In addition to royal, economic and urban buildings there were fire temples and a unique temple for the goddess Anahit as well as some other neighboring buildings near the Bishapur royal palace. Religious symbols were everywhere in Bishapour. A beautiful and unique temple, of an outstanding architectural and technological style was erected to the north-west of Bishapour castle for the goddess of great importance to Sasanians, Anahita or Nahid—the goddess and guardian of water.

Key words - Sassanians, king, constructions, the city of Bishapour, religious symbols, buildings, the temple of goddess Anahit, water worship.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱՆՍՅԱՆ Անի – «Գոթական գրականության» ավանդույթը Էդգար Ալլան Պոյի արձակում	3
ԳԱՄՊՈՐՅԱՆ Անգելինա – Ամերիկյան ազգային ինքնության խնդիրները Ս. Հանթինգտոնի «Ո՛վ ենք մենք. Ամերիկյան ազգային ինքնության մարտահրավերները» գրքում	11
ԴԱՐԱԲԻ Խոսրով – Ամերիկյան դրամայի զարգացումը 20-րդ դարի 30-60-ական թվականներին (Յուջին Օ՛Նիլ, Թեննեսի Ուիլյամս, Արթուր Միլլեր, Էդվարդ Օլբրի)	25
ԹԱՀԵՐԵԶԱԴԵՀՈՋԱԹԻ Ֆարնազ – Աբսուրդի և օտարացման խնդիրները Էժեն Իոնեսկոյի դրամատուրգիայում	32
ՄՈՀԱՄՄԱԴ ՄՈՆԹԱՐԻ ՇԱՀԱԶԻՌԱԴ – Կալվինիստական պրոֆիտանականության ազդեցությունն ամերիկյան գրականության վրա. Նաթանիել Հոթորն (1800/4-1864)	40

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Շուշանիկ – Խոսակցական լեզու	46
ՄԱՆՈՒԿՅԱՆ Անահիտ, ՍՈՂԻԿՅԱՆ Քրիստինե – Քաղաքական խոսույթի ռազմավարությունների իրացումը մամլո ասուլիսներում	54

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Անդրանիկ – ՆԱՏՕ-ի հետ ՀՀ զինված ուժերի համագործակցության հիմնական ուղղությունները	69
ԳՐԻԳՈՐՅԱՆ Սարգիս – «Ջիհադ» հասկացությունը իսլամի վաղ շրջանում (7-9-րդ դարեր)	79
ԶԱՏԻԿՅԱՆ Հովհաննես – Սփյուռքահայության ներգաղթը 1946-1948թթ.	88
ԽԱԶԱՏՐՅԱՆ Անահիտ – Կաթոլիկյան քարոզչությունը Հայաստանում և հայ կաթոլիկ եկեղեցու հիմնադրումը	107
ՀՈՎՀԱԼՆԻՄՅԱՆ Սերգեյ – Սրբավայրերի հարցը ֆրանս-ռուսական հարաբերություններում Ղրիմի պատերազմից հետո և Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը	116
ՂԱԶԱՐՅԱՆ Սարգիս – 1994թ. հորդանանախորայեյան խաղաղության համաձայնագիրը որպես քեմիդեոլոգիայի գործընթացի շարունակություն	125
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Գայանե – Մուհամմադ մարգարեին վերագրված և հայկական համայնքներին տրված պայմանագիրը	137

ՊՈՂՈՍՅԱՆ Լիլիթ – Վազգեն Ա Պալճյանը և Ռումինիայի «Հերկ» ամսագիրը (1937-1938 թթ.)	143
---	-----

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼԻԽԱԶ Յուլիա – Պետական ծառայության արդիականացման եվրոպական ուղենիշները Ուկրաինայում	151
ՂԵՎՈՆԴՅԱՆ Ռոբերտ – Էթնոսի անվտանգության ամրապնդման ցանցային բնույթը	161
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Արման – Էմպաթիան հաղորդակցության կարևոր բաղա- դրիչ (դիվանագիտական-հոգեբանական վերլուծություն)	171
ՇԻՐԱՆԻ Աֆսանեհ – Հակամարտության փոխակերպումը որպես հայ-թուր- քական հակամարտության այլընտրանք	180
ՍԱՐԳՍՅԱՆ Ալեքսանդր – Քաղաքական ընդդիմության հարցի շուրջ	191

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հասմիկ – Մտքի ոչ տիպորինակ ձևերի ըմբռնման շուրջ ..	201
ՇԱՀՔԱԶՅԱՆ Մարինե – Զանգվածային տեղեկատվական միջոցները որպես մանիպուլյացիոն հզոր գեներ	214

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՂԱԶԱՆԶՅԱՆ Լիլիթ – Անձի իրավաբանական պարտականությունների էությունն ու առանձնահատկությունները	222
ՎԱՀՐԱԴՅԱՆ Էդգար – Էֆթանագիայի իրավական կարգավորման հիմնա- խնդիրները	234

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՔԱԶՅԱՆ Աննա, ԳԱՐԱՍԵՖԵՐՅԱՆ Իրինա – Հայոց Մեծ եղեռնի խորհրդ- դանիշները Լևոն Թութունջյանի սյուրռեալիստական աշխատանքներում	241
ԱՎԱԳՅԱՆ Արթուր – Մեկ էջ խորհրդահայ գրքարվեստի պատմությունից (1980-ական թվականներ)	250
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Մարտուն – Տիգրան Չուխաճյանի սիմֆոնիկ ստեղծագոր- ծությունը. «Danse Caractéristique, L'orientale»	257
ՅԱՐՄՈՇԱՄՄԱԴԻ Վահրատ – Բիշապուր քաղաքի գեղարվեստական ժա- ռանգության կրոնական սիմվոլիկան և Անահիտ տաճարը	270

СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ГАЛСТЯН Ани – Традиции готической литературы в новеллах Эдгара Аллана По	3
ГАСПАРЯН Ангелина – Проблемы американской национальной идентичности в книге С. Хантингтона “Кто мы? – вызовы американской национальной идентичности”	11
ДАРАБИ Хосров – Развитие американской драмы в 30-60 годах 20 века (Ю. О’нил, Т. Уильямс, А. Миллер, Э. Олби)	25
ТАХЕРЕЗАДЕХОДЖАТИ Фарназ – Проблемы абсурда и отчуждения в драматургии Эжена Ионеско	32
МОГАММАД МОХТАР Шахбазирад – Влияние кальвинистского пуританизма на американскую литературу: Натаниэль Готорн	40

ЯЗЫКОЗНАНИЕ

ГЕВОРКЯН Шушаник – Разговорная речь	46
МАНУКЯН Анаит, СОГИКЯН Кристине – Реализация стратегий политического дискурса в пресс- конференциях	54

ИСТОРИОГРАФИЯ

ГРИГОРЯН Андраник – Основные направления сотрудничества вооруженных сил Армении с НАТО	69
ГРИГОРЯН Саркис – Понятие “джихад” в раннеисламский период (7-9-ые века.)	79
ЗАТИКЯН Ованес – Репатриация армянской диаспоры в 1946-1948 гг.	88
ХАЧАТРЯН Анаит – Католическая пропаганда в Армении и основание армянской католической церкви	107
ОГАНЕСЯН Сергей – Вопрос Святых мест во франко-русских отношениях после Крымской войны и армянский патриархат Иерусалима	116
КАЗАРЯН Саркис – Иордано-израильский мирный договор 1994 года как продолжение кэмп-дэвидского процесса	125
МКРТУМЯН Гаянэ – Договор, приписываемый пророку Магомету и данный армянским общинам	137
ПОГОСЯН Лилит – Вазген I Палчян и журнал “Герк”, издававшийся в Румынии (1937-1938)	143

ПОЛИТОЛОГИЯ

ЛИХАЧ Юлия – Европейские ориентиры модернизации государственной службы в Украине	151
ГЕВОНДЯН Роберт – Сетевая природа укрепления безопасности этноса	161
НАВАСАРДЯН Арман – Эмпатия – важный коммуникативный компонент (дипломатический-психологический анализ)	171
АФСАНЕ Ширани – Трансформация конфликта как альтернатива армяно-турецкого конфликта	180
САРГСЯН Александр – К вопросу о политической оппозиции	191

ФИЛОСОФИЯ

ОГАНИСЯН Асмик – К вопросу о восприятии нетипичных форм мысли	201
ШАХБАЗЯН Марине – Средства массовой информации как мощное орудие манипуляции	214

ЮРИСПРУДЕНЦИЯ

КАЗАНЧЯН Лилит – Сущность и особенности юридических обязанностей личности	222
ВАГРАДЯН Эдгар – Проблемы правового урегулирование эфтаназии	234

ИСКУССТВОВЗНАНИЕ

АБАЗЯН Анна, ГАРАСЕФЕРЯН Ирина – Символы геноцида армян в сюрреалистических работах Леона Тютюнджяна	241
АВАКЯН Артур – Страница из истории армянского советского книжного искусства (1980-е годы)	250
КОСТАНДЯН Мартун – Симфоническое творчество Тиграна Чухаджяна: «Danse Caractéristique, L'orientale»	257
ЯРМОХАММАДИ Вахдат – Религиозная символика художественного наследия города Бишапур и храм Анаит	270

ԿԱՆԹԵՂ
Գիտական հոդվածներ
КАНТЕХ
Научные труды
KANTEGH
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Ռուսերեն տեքստերի խմբագիր՝ Գայանե Հարությունյան
Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սիրարփի Կույումջյան
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am
Эл. почта: instart@sci.am
E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>
Официальный сайт: <http://Kantegh.am>
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում
Ֆորմատ՝ 60x84 ¹/₁₆, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 1) 54.49.82, 53 65 88, 62.38.63 (տպարան)
Էլ. փոստ՝ info@asoghik.am